- 26

# ԿՈՆԴՈՒԿՏ



Վ. Նաասարդ

Պետհրատ - Յերևան
1935

ՀՍԽՀ

ՊԵՏՀՐԱՏ

-СОРА
им. А. Мясникяна

Առաջին դասարանի աշակերտ
ԼԵՎ ԿԱՍՍԻԼ

891.71/5
Կ-26

-6 NOV 2011

ԼԵՎ ԿԱՍՍԻԼ

# Կ Ո Ն Դ Ո Ւ Ի Տ

## ՎԵՐՋԻՆ ՊԱՏՄՎԱԾՔԸ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ՉՈՐՐՈՐԴ ԼՐԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ
ԹԱՐԳՄԱՆԵՑ Պ. ՀՈՎՎՅԱՆ

ՆԿԱՐՆԵՐԸ ԿՈՒԿՐԻՆԻԿՍՆԵՐԻ

ГОС. П. БИБ-КА Арм. С. С. Р.
ОБМЕННЫЙ ФОНД
ИМ. А. МЯСНИКЯНА

1935
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

21 MAY 2013
3612

ՄԻՋԻՆ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատասխանատու խմբագիր Ա. Հայրյան
Լեզվական խմբագիր Ա. Առստամյան
Տեխնիկական խմբագիր Տեր-Դավթյան

ՀՍԽՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. ... библиотека
Ա. Մյասնիկյանի անվան
им. А. Мясникяна
5824
38
3957-84

Գլավլիտ № 8712(բ) Հրատարակություն № 2793. Տիրաժ 4000
Հանձնված է արտադրության. 14 I Ստոր. է տպելու 11|II-35 թ.
Սատաֆորմատ Բ6 125x176. Պատվեր № 259
Типография им. „Стачки 1902 г“. АЧКПТ Ростов н-Д

## ՀԱՐՑԵՐ ՎԻԿՏՈՐԻՆԱՅԻՑ

Յեթե հանրածանոթ վիկտորինա խաղում հանկարծ այսպիսի մի հարց առաջանար, թե՝ «Ի՞նչ բան է կոնդուիտը», հազիվ թե իմ պատանի ընթերցողներից մեկը կարողանար պատասխանել այդ հարցին։ Կարելի յե այդպիսի մի ամբողջ վիկտորինա հնարել։ Ի՞նչ բան է «կայսերական տոնը», «նորին մեծության մատակարարը», «զեմստվոյի պետը», «կոկարդը», «ուրյադնիկը» և այլն, այս արդեն մեռած բառերի վիկտորինայով վոչ վոք այլևս պարապ ժամանակը չի անցկացնում։ Հրաշալի ժամանակ ենք ապրում մենք։ Տղերք, թեպետ յես ձեզնից ընդամենը ութ-իննը տարով եմ մեծ, բայց գրանցվել կոնդուիտ կամ պատժված կանգնել եմ անկյունում, «առանց ճաշի» նստել եմ դասարանում։ «Կոնդուիտ» բառը լսելիս լեղապատառ եյինք լինում. իսկ դուք բախտավոր եք, վորովհետև այդ բառի մասին գաղափար էլ չունեք։ Յեթե ձեզ ասեն «կոնդուիտ», դուք իսկի բանի տեղ էլ չեք դնի։ Հա՛, բայց դրա փոխարեն դուք հարյուրավոր նոր ու ավելի կարևոր բառեր գիտեք՝ ՄՈՊՐ, հնգամյակ, հացամթերում, Ինտերնացիոնալ, Փորպոստ, Բելա Կուն և այլն և այլն։ Իսկ ինչ վերաբերում է կոնդուիտ բառին, այդ յես ձեզ կբացատրեմ։

Կոնդուիտ կամ կոնդուիտական ցուցակ հին դա-

քական գիմնազիայում կոչվում էր այն գիրքը, որի մեջ վերակացուն գրում էր աշակերտների վարքը, նրանց հանցանքները, չարությունները և այդ բոլորի համար տված պատիժները։ Զմեռը յեթե քեզ պատահում եյին փողոցում ժամը յոթից ուշ (իրավունք ունեյինք զբոսնելու մինչև ժամի յոթը) կամ տեսնում եյին վերարկուդ ուսերիդ գցած, ընը՛ խսկույն արձանագրում եյին կոնդուիտի մեջ։ Այդ բավական չէ, չորս ժամ թողնում եյին «առանց ճաշի», վարքիդ թվանշանը պակասեցնում եյին։ Մեր ամբողջ գիմնազիական կյանքը գրանցված էր կոնդուիտի մեջ։ Հեղափոխությունն էլ էր կոնդուիտի մեջ տուգանքներով արձանագրվում. «առանց ճաշի» թողնելով, հանդիմանություններով. բայց Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց և՛ կոնդուիտը և՛ հին գիմնազիան։ Յես ձեռք եմ բերել Պոկրովսկի գիմնազիայի կոնդուիտական ցուցակի մնացորդները, — վորտեղ յես սովորել եմ, — ընտրել ամենահետաքրքիր գրանցումները, դրանց շուրջը բացատրություններ տվել և պատմվածքների գրքի նման մի բան կազմել։ Այստեղ մտացածին վոչինչ չկա. ամեն ինչ ճշմարտություն է, յեղած բան է։ Ինչ ուզում ես հնարիր, բայց այն, ինչ վոր իրականում յեղել է, նրանից ավելի հետաքրքիր բան չես հնարի։ Այնպես չէ՞։

Այս գրքի նպատակն է պատմել, թե ինչպես կործանվեց հին փտած դպրոցը, ցույց տալ, թե ինչպես մենք ինքներս սովորեցինք այն ամենը, ինչ վոր չեյին ուզում մեզ բացատրել դասարանում։

Այս է գրքիս առաջադրած խնդիրը։ Դասը պատասխանում է Պոկրովսկի գիմնազիայի նախկին աշակերտ, ներկայումս հեղինակ Լեվ Կասիլը։

Իսկ գնահատական կտան ընթերցողները։





## «ԱՂԱՎՆԱԳԻՐՔ»

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ընդունելության քննությունը յես տվեցի գարնանը։ Մեր տանու ուսուցիչ Դիմիտրի Ալեքսեյեվիչն առավոտը վաղ յեկավ և ստիպեց ինձ կրկնել «յաթով* գրվող արմատական բառերը»։ Բժիշկ հայրս հիվանդանոց գնալուց առաջ իր խոշոր ձեռքը դրեց գլխիս, յետ դարձրեց ու հարցրեց.

— Հը, բան կա՞ գլխումդ։

Մայրիկիս հետ գնացինք գիմնազիա։ Մայրս ճանապարհին, հուզված ու հոգատար, նայելով ինձ, շարունակ կրկնում էր.

— Գլխավորն այն է, վոր չհուզվես. բարձր խոսիր և չշտապես։ Պատասխանելուց առաջ լավ մտածիր։

Դիմիտրի Ալեքսեյեվիչը գալիս էր հետներս և հարցնում բազմապատկման աղյուսակը՝ թե խառը և թե կարգով։ Հենց վերջացրի «ինն անգամ իննը» թե չէ, արդեն հասանք գիմնազիան։

Ամենուրեք աչքիս յերևում էր քերականություն։ Խունված շուկայում կարծես ածական ու թվական

* Ռուսաց լեզվի հին ուղղագրությամբ շատ բառերի մեջ գրվում էր «Ѣ» (յաթ) տառը, վորն այժմ վերացվել է։

անունները, մակբայներն եյին ցած թափվում. գիմնազիայի մոտով դեպի պահեստներն անցնող յերկաթագծի վրայով գնացող անշուշտ շոգեմեքենան ուզում եր ինձ մոլորեցնել. նա գոռում եր և շարժվում ինչպես շնչավոր: Հենց դռների մոտ Դիմիտրի Ալեքսեյեվիչը շատ խիստ կերպարանք ընդունեց, թեև ակնոցների միջից յերևում եյին նրա շատ բարի ու հրաշալի աչքերը:

— Դե հիմա ձեռքերդ ուղիղ ու ցած բռնիր, — ասաց նա, ու հանկարծ հարցրեց. — Հապա ասա շուտ, գիմնազիա, ինչ մասունք բանի յե:

— Հավաքական, անշուշտ գոյական անուն ե.–պատասխանեցի պարզ ու կտրուկ:

— Իսկ գիմնազիս:

— Շնչավոր...

Ես միջոցին գիմնազիայի դռնից դուրս եր գալիս մի խոշոր յերեխա գիմնազիական համազգեստով: Նա մռայլ ու արհամարող հայացքով նայեց իմ նավաստիական հագուստին և մռայլ ձայնով ել ասաց.

— Սխալվում ես, այ տղա. սուտ ես ասում: Գիմնազիստն անշուշտ արարած ե:

Այս գիտուն մարդու հասակն ու մռնչյունն այնպես տակն ու վրա արին ինձ, վոր բոլորովին գլուխս կորցրի:

Հուզմունքից մրսում եյի գիմնազիայի միջանցքում: Քիչ հետո անուն-անուն ներս կանչեցին: Այնտեղ դըրված եր կարմիր մահուդով ծածկած սեղան: Թելադրություն. «Գառն առնելու շուկա գնա, լավ պահիր, վոր գերանա, խոտ տուր, նա կմեծանա»:

Սրտիս զարկերը լսվում եյին ամբողջ դասարանում: Ուսուցիչը թելադրում եր բամբ ձայնով և ման գալիս սեղանների արանքում: Դասարանի դռնից նա-



յում եյին մայրերը: Նրանք հուզվում եյին, անհանգիստ նայում սեղանների վրա կռացած մեր դեմքերին և մտածում, թե արդյոք «շուկա», «նա», «գնա»,

«կմեծանա», «գերանա» բառերի վերջը «յ» կդնեն, թե վոչ*:

Յես գրեցի «յ»-ն վորտեղ հարկավոր եր, բայց հուզմունքից մոռացա ազգանունս գլխատառով գրել:

Հետո ավեցինք թվաբանության գրավոր քննությունը և մնացած բանավոր քննությունները: Մայրենի

* Հին ուղղագրությամբ «ա» ձայնավորով վերջացող բառերի վերջը դրվում եր «յ», բացի բայի հրամայական յեղանակից կամ դերանունից-որինակ՝ շուկայ, գերանայ. նա, գնա: Ծանոթ. թարգմ.

լեզվի քննության ժամանակ յես մի նախադասություն վերլուծեցի. յենթակա, ստորոգյալ և սրանց նման բաներ։ Մոռեցավ քահանան և գրաբար լեզվով ինչ վոր մի գիրք տվեց։ Ռուսաց լեզվի ուսուցիչը, վոր դանդուր և շեկ մազերով, մորուքավոր մի մարդ եր, անվստահ ասաց.

— Տեր-հայր, կարծեմ այդ դրանցից չի պահանջվում։ Հրյաներից... Ընդհանրապես այլադավաններից...

Յեվ նա, չգիտեմ ինչու, շատ շփոթվեց, կարծես թե մի վատ բան եր ասել։ Յես ել կարմրեցի։

— Ուրեմն ավելի՛ անհրաժեշտ է, — խստորեն ասաց տեր-հայրը. ահա՛, ա՛ռ, կա՛րդա։ Կա՛րդա։

Յես մի յերես կարդացի ու թարգմանեցի։

Մի քանի որից հետ արդեն հայտնի յեր, վոր յես ընդունվել եմ գիմնազիա։

## ԿՆԴԵՑԻ՛Ն
## ԿՈԿԵՑԻ՛Ն

Ամառը մենք անցկացրինք ամառանոցում— Խվալինսկի նահանգի Պոդլեսնոյե գյուղում. դեպի յեղևնու և լորենու անտառները տարա իմ գիմնազիստի կոչումը, վորն ինձ չափազանց պատվավոր եր թվում։ Այդ կոչումը հպարտությամբ կրում եյի Խվալինսկի կավճային լեռների գագաթներին, Տերեմշանի ձորերում և խիտ մոռուտներում, ուր բարձրանում եյինք կամացկամաց։

Այդ ժամանակ Ռուսաստանը, Յեվրոպան, — ամբողջ աշխարհն սկսել եյին պատերազմել։ Մենք Խվալինսկից շոգենավով եյինք գալիս։ Շոգենավի վրա տեղավորում եյին զորահավաքի յենթարկված զինվորներին։ Նավամատույցներում լրագրավաճառ յերեխաները աղաղակում եյին.



— Վերջին հեռագրե՛ր։ Յերեք հազար գերի՜։ Մեր պատերազմական ավա՛րը...

Նավամատույցներում շոգենավի տախտակամածի վրա խռնվում եյին լացող, գզգզված մազերով կանայք, վորոնք ճանապարհ եյին գնում զորահավաքի յենթարկված իրենց հայրերին, ամուսիններին, յեղբայրներին ու զավակներին։

Մեկնելու սուլոցները խլացնում եյին լաց ու կոծը, խ ա ռ ն ո ւ փ ն թ ո ր «ուռա»-ն, նվագախմբի աններդաշնակ նվագը։ Շոգենավը ջրի յերեսին փրփրալի մի մեծ աղեղ եր գծում, և հրաժեշտի շչակը յերկար ու ձիգ փչում։ Կարճ դադար և նորից բրարանցում... յերկա՛ր...

Առաջին կարգի ոթյակում մեքենայի ցնցումներին համաչափ զրնգում եյին ջահից կախված ապակե զարդարանքները։ Դաշնամուրը թնդում եր։ Վոլգայի ձըկնապուրի և դուխիների հոտ եր գալիս։ Տիկինները ծիծաղում եյին։ Սալոնի պատուհանից յերևում եր

փախչող, գահավեժ ափը։ Գետափով դեպի վեր նավամատույցից դանդաղ ու ծանր ձգվում եյին գյուղական յերկանիվ սայլերը։

Հայացքով ուղեկցում եյինք...

Մեր կայուտում իմ նոր պայուսակից գինվորի հոտ եր փչում։ Մի օր հետո պարապմունքներն սկսվելու եյին գիմնազիայում։ Տանն արդեն ինձ սպասում եր համազգեստս։ Սկսվում եյին գիմնազիական օրերը։ Մնա՜ք բարով ազատություն, բակ, փողոցի բարեկամներ։ Յես ինձ զգում եյի համարյա հարկադրաբար գործի կանչված։ Տանը գլուխս տակից խուզեցին. ինչպես հայրս ասաց, ինձ «կոկեցին»։

— Իսկը սալդաթ ա, — ասաց դերձակ Վիրկելը, յերբ պատրաստի համազգեստս հագցրել, փորձում եր վրաս։

## ԿՈՃԱԿՆԵՐ

Իմ ընդհանուր ինքնագիտակցության և բաց թողած յերկար անդրավարդիքիս հանդիսավոր օրերն եյին։ Փողոցում յերեխաները յետևիցս «գորշ աղավնի» եյին գոռում։ Այդ մականունով եյին ծաղրում գիմնազիստներին։ Յես հպարտանում եյի, վոր այժմ ինձ ել կարող եյին այդպես ծաղրել։

Արևը, արտացոլվելով կաշվե գոտուս արույրի թիթեղից, պսպղում եր փորիս վրա։ Այս թիթեղի վրա սև գույնով յերևում եյին «Պ. Գ.» տառերը — Պոկրովսկայա գիմնազիա։ Փայլուն, ուռուցիկ կոճակները, արծաթագույն տերևամիջատների պես, դուրս եյին պրծել իմ գորշ վերնաշապկի վրա։ Յեվ առաջին հանդիսավոր ու սարսափելի օրը, ոգոստոսի մի լուրջ ու ծանր օր, յես նոր կոշիկներով (ձախը քիչ սեղմում եր) մոտեցա գիմնազիայի դռներին։ Դռներից դուրս



մնացին Պոդլեսնոյեն, կավճային սարերը, ամառը, ազատությունը։

Ինձ դիմավորեց համազգեստով մի ծերուկ՝ մեդալը կախած։ Ինձ թվաց, թե նա լուրջ ե և բարկացած, ինչպես ամենքն եյին այդ օրը։ Հիշելով մորս ասածները, յես կոշկիս կրունկներն իրար խփեցի, խոր գլուխ տվի և վերցրի գլխարկս։

— Բարև՛, բարև՛, ասաց ծերուկը։ — Գլխարկդ դիր, ա՛յ, այնտեղ։ Հասկացա՞ր, ա՛յ, յերրորդը ձախ։

Յես խնամքով ու հարգանքով մի անգամ ել բարևեցի։

— Դեհ, գնա՛ գնա՛, հերիք ե բարևես — ծիծաղեց ծերուկը և գնաց միջանցքն ավլելու։

Դասարանում նստած եյին գլուխները խուզած խոշոր տղաներ։ Յես համարյա թե ամենից փոքրն եյի։ Դասարանում անց ու դարձ եյին անում մի քանի խոշոր տղաներ՝ պատռված վերնաշապիկներով կամ գույնը գցած համազգեստներով։ Դրանք յերկրորդ տարին մնացող աշակերտներ եյին։

Նրանցից մեկն ինձ մատով իր մոտ կանչեց։

— Նստի՛ կողքիս։ Ինձ մոտ տեղը հարգակ ա։ Ազգանունդ ինչ ա՞։ Իմը Ցյուտինդեյիչ-Տպրուտոիկովսկի-Զիմպարչիֆարեչեսալով-Ցիմին-Տրեպակովսկի-Պո-կոլենո-Սինե-մորե-Պերեխոդյաշչենսկի։ Կրկնի՛ր, առանց շունչ առնելու։

Յես կրկնել չկարողացա։

— Ոչինչ, — մխիթարում եր ինձ, — կվարժվես։ Գլխիդ դու ես տալիս, հա՞։ Ծխախոտ չունե՞ս... Չկա՞... Իսկ գյուղացին ինչպես եր ձու ծախում շուկայում — լսե՞լ ես։

Յես այդ պատմությունից տեղեկություն չունեյի։ Այս յերկրորդ տարվա աշակերտն ասաց, վոր յես ընդ-

հանրապես մի իսկական աբլա յեմ։ Այդ միջոցին մեր սեղանին մոտեցավ գզգզված մազերով մի դյուրաշարժ յերկրորդ տարվա աշակերտ։ Նա ուշադրությամբ նայեց ինձ, նստեց սեղանին և արագ հարցրեց.

— Դու բժշկի վորդին ես, հա՞։ Բժիշկը գնում է խոզին հեծած, բժշկիկին կռնակն առած։ Ես ո՞ւմ կոճակն է — ասաց ու բռնեց իմ վերնաշապկի թևին կպցրած փայլուն կոճակը։

— Իմն է, էլ ո՞ւմը պետք է լինի, — պատասխանեցի յես։

— Դե վոր քոնն է, բռնի։ Յեվ պոկելով կոճակը, ձեռքս կոխեց այն։

— Իսկ ե՞ս ումն է, — հարցրեց նա բռնելով հետևյալ կոճակը։

Իմ նախընթաց պատասխանի դառը փորձից խրատված, յես ասացի, թե չգիտեմ։

— Չգիտե՞ս, — գոռաց նա, — ուրեմն քոնը չէ։

Յեվ պոկելով յերկրորդ կոճակը, դցեց հատակին։ Դասարանը հրհռաց։ Հավանականաբար յես էլ վոչ մի կոճակ չէյի ունենա, յեթե չգար տեսուչը։ Ամենքը միանգամից միասին վոտքի կանգնեցին։ Այդ ինձ շատ դուր յեկավ։ Տեսուչն իր խորամանկ, ուրախ, աչքերը կկոցեց։ Նրա թավ մորուքը, վոր ծիծեռնակի պոչի պես յերկու կողմի վրա յեր սանրված, ավելում եր համազգեստի կրծքածալքի աստղերը։ Տեսուչն ուրախ ու սիրալիր ասաց.

— Հ՛ը, նորեկ անպիտաններ, կշտացա՞ք շալատանությունից, շա՞տ աղավնիներ վորսացիք։ Այ դուք թակից փախածներ... Ուղի՞ղ։ Գավրյա Ստեփան, թափանդ յետ տուր, փորդ պահիր պայուսակում։ Զզվելի արարած, յերկրորդ տարին նստած ես և կանգնել չգիտես։ Մի տես, բրդոտել ես։ Խուզիր մազերդ։



Հետո տեսուչը հանեց ցուցակը և անուն-անուն ստուգեց ամենքին։ Նա ազգանունները դիտմամբ ծիծաղելի կերպով աղավաղում եր։

— Տուֆելդ, — կանչում եր նա, Կուֆելդ ասելու փոխարեն։ Վարեկուխոնկո, — փոխանակ Կուխովարենկո։

Հերթն ինձ հասավ.

— Այստե՛ղ եմ, — խլացնող ձայնով թնդացի յես։

Տեսուչը զարմացավ։

— Փոքր է, բայց ձայնեղ։ Այ թե մռնչաց է։ Իզուր չէ, վոր Լեվ* ես կոչվում։ Քանի՞ տարեկան ես։

Վորպեսզի հաճոյանամ յերկրորդ տարվա աշակերտներին, յես վորոշեցի սրախոսություն անել.

— Տասի կեսը։

Դասարանը վրնջաց։

Տեսուչը հանգիստ ասաց.

— Գիտես, Առյուծ, գազանների թագավոր, անգամ, յես քեզ առանց ճաշի կթողնեմ մինչև տասի կեսը, են ժամանակ կիմանաս թե ինչպես պետք է սրախոսես։ Սպասի՛ր, սպասիր, գոռաց նա, կարծես թե յես ուզում եյի վորևե տեղ գնալ. — Սպասիր։ Եդ թևիդ ինչո՞ւ յե կոճակ կպցրած։ Համազգեստի ձևի համաձայն այդ ավելորդ է, ուրեմն իզուր է այդպիսի բաներ հնարելը։

Նա մոտեցավ և բռնեց թևս։ Հետո գրպանից մի ինչվոր տարօրինակ ունելիք հանեց և մի վայրկյանում պոկեց կանոնադրության համեմատ ավելորդ համարվող կոճակները։

Յես արդեն ամեն բանով համապատասխանում եյի կանոնադրությանը։

---

* Լեվ՝ հայերեն կնշանակի առյուծ

# «ՆԱՊՈԼԵՈՆԸ» ՅԵՎ ԿՈՆԴՈՒԻՏԸ

*Յես շատ շուտ ընկա կոնդուիտ։*

*Պետք է մի քանի դասագրքեր առնեյինք։ Մորս և փոքրիկ յեղբորս հետ գնացինք Սարատով։*

*Պարապմունքներն արդեն սկսվել եյին։ Գիմնազիական որատետրի առաջին եջը լցվել եր։ Արդեն շրջել եյինք դասագրքերի առաջին եջերը և շատ կարևոր ու հետաքրքիր տեղեկություններ ստացել։ Յես ինձ մեծ գիտնական եյի զգում։ «Կլեոպատրա» շոգենավը, վորով մենք գնում եյինք, անցնում եր վաղուց մեզ ծանոթ Ոսկորյա կղզու մոտով։ Բայց այժմ իմ առաջը լոկ մի կղզի չեր, այլ «ցամաքի մի կտորն՝ ամեն կողմից ջրով շրջապատված»...*

*Սարատովում դասագրքերն առնելուց հետո գնացինք նկարվելու։ Լուսանկարիչը անմահացրեց իմ դըպրոցական նշանը ճակատիս կպցրած և չծալվող գլխարկն ու նոր կոշիկներս։ Հետո մենք անցանք Գերմանական փողոցով։ Գլխարկս գլխիս այնպես եր կանգնած, ինչպես պսակը սրբերի գլխին։ Կոշիկներս որգանի* պես ճռճռում ու յերգում եյին։*

*Մենք մտանք «Ժան» սրճարանը։ Մայրիկս սուրճ պատվիրեց «Նապոլեոն» քաղցր կարկանդակով։ Սրճարանում զով եր և մի քիչ մութ։ Հայելու մեջ փայլում եյին գլխարկիս ճակատի դպրոցական նշանը և կոշիկներիս ծայրերը։ Մեր դիմացը նստած եր մի շատ ձիգ ու չոր պարոն գլխին համազգեստի գլխարկ։ Այդ պարոնը խոսում եր մի տիկնոջ հետ և նայում մեր կողմը։ Նա հանգած ու խամրած աչքեր ուներ, ինչպես խոհանոցի սեղանի վրա ընկած ձուկը։ Յես լավ նայեցի նրան, և... «Նապոլեոնը» մնաց բկումս, ասես*

* Նվագարան

5824
38

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.



3957-81

Ռուստամի ձեռքում։ Այդ մարդը մեր դիրեկտորն էր — Յուվենալ Բոգդանովիչ Սամոյլիցկին։

Ցես վեր թռա, շրթունքներս հուզմունքից ու կարկանդակից իրար կպած գլուխ խոնարհեցրի, նստեցի։ Ելի վեր կացա։ Դիրեկտորը գլխով արեց և շուռ յեկավ։

Մենք դուրս յեկանք։ Անցնելիս դռան մոտ յես ելի մեկ անգամ գլուխ խոնարհեցրի։ Որը թարս էր։ Նապոլեոնը փորումս բրրրյումերի 18-ի հեղաշրջումն առաջ բերեց...

Հետևյալ օրը մեծ դասամիջոցին դասարան մտավ մեր դաստիարակը։ Նա պահանջեց իմ օրատետրը և կոնդուիտական յերեսին գրեց.

«Միջնակարգ դպրոցների սաներն իրավունք չունեն արճարան հաճախելու, թեկուզ հենց ծնողների հետ»:

Ցերկրորդ տարվա աշակերտ Կուզմենկոն, տեսնելով գրած նկատողությունը, ասաց.

— Եհե, լավ է։ Համար չէ. արդեն կոնդուիտ ընկար։ Կեցցես ախպեր. գովում եմ քաջությունդ։

Պետք է խոստովանեմ, որ սկզբում շատ վախեցա. բայց այստեղ սիրտ առա և անտարբեր ուսերս վեր քաշեցի։

— Ե՛հ, ի՞նչ անեմ. ընկա՛ ելի։

Բայց այդ դեպքից հետո կոնդիտերսկիներին մենք ասում եյինք «կոնդուիտերսկիներ»։

Պ. Գ.

Պոկրովսկի տղայոց գիմնազիան նման էր բոլոր այլ տղայոց գիմնազիաներին։ Թաց սղոցվածքով լվացած, կաֆելից շինած սառը հատակներ, յերկար միջանցք, դասարաններ։ Միջանցքներում դասամիջոցներին կարճատև ալեկոծություն և հետո դասերի տեղատվություն։



Զանգ։ Նրա զրնգոցը յերկու արտահայտություն ուներ։

Մեկն ազդարարում էր դասի վերջը։

Ուրախ, հրճուացող, անհոգ զողանջ էր այն.

«Դուրս... կյանքն անհեթեթություն է»։

Մյուսը — դասի սկիզբն էր ազդարարում, յերբ վերջանում էր դասամիջոցը։

Փնթփնթացող, չարախինդ ռեխ էր այն.

«Ձեր կաշին պետք է պոկե՛լ, անպիտաններ»։

Դասեր։ Դասեր։ Դասեր։ Դասարանական մատյաններ։ Կոնդուիտ։ «Դուրս կորիր դասարանից»։ Կանգնի՛ր պատի մոտ»։

Աղոթքներ։ Մաղթանքներ։ Կայսերական տոներ։ Համազգեստներ։ Մաղթանքների դիպակազարդ լռություն։ Ուղիղ ցած ձգված ձեռքեր։ Յերկու ժամ անշարժ կանգնելուց և օդի պակասությունից առաջացած ուշագնացություններ։

Գորշ զինվորական վերարկուներ։ Գորշ ձանձրույթ։ Օրերը թերթվում եյին «օրագրի» էջերով։ Դասացուցակ։ Ի՞նչ նյութ է տված. Թվանշան — գնահատություն։ Շաբաթը վերջանում է դասարանական դաստիարակի ստորագրությամբ։ Շաբաթվա մեջ ամենակարճ օրը կիրակին էր, որ իր սյունյակը չուներ օրագրում։ Մնացած բոլորը ընդգծված էր «այստեղից մինչև այնտեղ»։

§ 18. Միջնակարգ դպրոցի սաները նոյեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը իրավունք չունեն յերեկոյան ժամի 7-ից հետո տնից դուրս գալու։

§ 20. Սաներն իրավունք չունեն թատրոն, կինո և այլ զվարճատեղիներ հաճախելու, առանց տեսչի հատուկ թույլտվության, ամեն անգամ առանձին։ Անպայման արգելվում է սրճարաններ ճաշարաններ, հանրային զվարճատեղիներ և այլն հաճախելը։

Ծանոթություն։ Պոկրովսկ քաղաքում այդպիսի տեղեր համարվում են՝ ժողովրդական այգին, Բազարնայա հրապարակը և յերկաթուղու պլատֆորմը։

Ահա այսպես էր գրված մեր գիմնազիական «ուստավներում»։ Կանոնադրության սրբությունը խախտող ամեն մի զանցառություն պատժվում էր կոնդուիտով։ Ասում են, թե բոլոր ճանապարհները Հռոմ են տանում։ Գիմնազիայում բոլոր ճանապարհները տանում եյին դեպի կոնդուիտ։ Ամեն մի «սիզյակի» (գիմնազիստի) կյանքը գրված էր կոնդուիտական ցուցակում։ Տուգանքներ, «անճաշ թողնել», հանդիմանություններ, գիմնազիայից հեռացնել... Դա մի սարսափելի գիրք էր։ Գաղտնի գիրք։ «Աղավնագիրք»։

Ավանդություն կա, թե շատ դարեր առաջ «Աղավնագիրքը» ընկել է յերկնքից։ Յեվ վորպես թե նրա մեջ գրված են յեղել աշխարհաստեղծության բոլոր գաղտնիքները։ Դա մի նշանավոր գիրք է յեղել. մոլորակների համար կոնդուիտի նման մի գիրք։ Յեվ իմաստուններից վոչ վոք չի կարողացել ամբողջովին կար-



դալ և հասկանալ։ Զափազանց խորն են յեղել նրա գաղտնի մտքերը։ Ահա մենք գիմնազիստներս կոնդուիտը այդպիսի մի «աղավնագիրք» եյինք համարում, վորովհետև վարչությունը սրբությամբ պահում էր նրա գաղտնիքները։ Վոչ վոք մտքովն անգամ չէր անցկացնում, թե կարող է կարդալ կոնդուիտի մեջ յեղած գրությունները։

## ՍԻԶՅԱԿ ԱՂԱՎՆԻՆԵՐ

Սիզյակ կոչվում են վայրի աղավնիները։ Մեզ ծաղրում եյին սիզյակ մականունով մեր գորշ զինվորական վերարկուների պատճառով, վորպիսին պարտավոր եյինք հագնել։ «Աղավնագրքում», կոնդուիտում, արձանագրված էր յերեք հարյուր «վայրի աղավնիների» կյանքը։ Յերեք հարյուր աղավնիներ տանջվում եյին աքսորում։

Պոկրովսկ քաղաքն առաջ քաղաքամերձ մի մեծ գյուղ էր՝ Պոկրովսկայա գյուղը։ Հարուստ գյուղ էր. ամբողջ Ռուսաստանում հացի առևտուր էր անում։ Վոլգայի ափին կանգնած եյին փայտե հինգհարկանի հսկայական ամբարներ՝ վերնատներով։ Միլիոն փթերով հացահատիկներ եյին պահվում այս փոքրիկ շտեմարան քաղաքում։ Աղավնիների ամպանման յերամները ծածկում եյին արևի յերեսը։ Հացահատիկները բարձում եյին բեռնանավերին. փոքրիկ շոգենավերը գետափի ծոցից դուրս եյին քաշում հսկայական բեռնանավեր, ինչպես կույր ման ածող յերեխան առաջ է տանում կույրին։

Պոկրովսկայա գյուղում ապրում եյին յերկրագործ ուկրաինցիներ, հարուստ ագարակատերեր, 15 նավավարներ, բեռնակիրներ, բանվորներ, սակավաթիվ ռուս գյուղացիներ և գերմանացի արհեստավորներ։ Ամառն

այրվում, սևանում էին դաշտավայրի արևից, ուղտեր էին պահում։ Գնում էին տեղեր գավթելու, տուրուդմփոց էին սարքում գետափին։ Նավակներով մրցում էին սարատովցիների հետ։ Ձմեռը կերուխումով էին անցկացնում, հարսանիքներ էին անում, պարում էին փողոցներում, բարեկամների տների առաջ։ Կիրակի օրերը զբոսնում էին «Բրեշկայում», արևածաղկի սերմ էին չրթում։ Հավաքվում էին գավառական վարչության մեջ ժողովի։ Յեվ յեթե նոր դպրոց շինելու, փողոցները սալահատակելու և նման խնդիրներ էին առաջ գալիս, գոռգոռոցով սովորական «յեզրափակումն» էին անում.

— Հարկավոր չէ։

Ծահիճներն ու ցեխը հեղեղում էին գյուղի փողոցները։ Գյուղում առաջ սաստիկ սրիկայություն կար։ «Ֆուլիգանները» (այստեղ խուլիգաններին այդպես էին ասում) ընտանիքի տեր, հասակն առած մարդիկ էին։ Գյուղում վոչ վոք հանգստություն չուներ նրանց խայտառակ արարքներից։ Վոստիկանությունը վախենում էր նրանց ձեռք տալ։ Նավավարները, վոսկրաղաց գործարանի, աղացարանների և յերկաթգծի արհեստանոցների բանվորները կազմեցին սրիկաների գլխավորների ցուցակը և մի գիշեր բոլորին կոտորեցին։ Ահա այսպես էին ապրում Սարատովից յոթը վերստ հեռու Պոկրովսկայա գյուղում։

Յեվ ահա այս սանձարձակ ամբոխի հասակավոր զավակներին, ագարակներից յեկած վայրենիներին, հաստատ գյուղացիների պնդակազմ, հանդուգն ու անճոռնի տղաներին նստեցրել էին Պոկրովսկայա գիմնազիայի նստարաններին, գլուխները կարճ խուզել, կոնդուիտ մտցրել և համազգեստի վերնաշապկում սեղմել։

Դժվար է, համարյա անկարելի յե նկարագրել այն



ամենը, ինչ վոր կատարվում էր Պոկրովսկայա գիմնազիայում։

Կռվում էին շարունակ։ Կռվում էին զույգ-զույգ և դասարան դասարանի հետ։ Բոլորովին պատռում էին վերարկուների փեշերը։ Մատները ջարդում էին ուրիշների դեմքերի վրա։ Կռվում էին վոտնասահնակներով, պայուսակներով, կապարով լցրած վեգերով, և գլուխ էր, վոր ջարդում էին։ Բարձր դասարանի աշակերտները (ո՛, այդ տիրող բարձր դասարանցիները) կռվում էին մեզ հետ, ստորին դասարանների աշակերտներիս հետ։ Պատահում էր, վոր մեզ փոքրերիս բռնում էին վոտքերից և մեր գլուխներով իրար ջարդում։ Բայց կային և այնպիսի առաջին դասարանցիներ, վորոնցից փախչում էին ութերորդ դասարանի ամենախոշոր տղաները։

Ինձ շատ սակավ էին ծեծում. վախենում էին, յեթե կմեռնեմ. յես շատ փոքր էի։ Բայց և այնպես յերեք անգամ պատահաբար անզգա ընկել եմ գետին։

Ազատ, ամայի տեղերում մի տեսակ «ֆուտբոլ» էին խաղում՝ գետնից հանած հեռագրասյուներով։ Աշխատում էին սյունը վոտքերով գլորել և թշնամու սահմանն անցկացնել։ Հաճախ սյունը գլորվում էր վայր ընկած խաղացողների վրա, ճզմում նրանց և հաշմանդամ դարձնում։

Արտագրում էին, դասերի ժամանակ հուշում անխիղճ կերպով և կատարելագործված։ Խորամանկ միջոցներ էին հնարում։ Բարդ գործիքներ էին ստեղծում։ Մեքենայացման էին յենթարկվում սեղանները, հատակները, գրատախտակները, ամբիոնները։ Կազմակերպել էին «շտապ պոստ», «հեռագիր»։ Գրավոր աշխատանքների ժամանակ հնար էին գտնում լուծումը ձեռք բերել բարձր դասարաններից։

այրվում, սևանում էին դաշտավայրի արևից, ուղտեր էին պահում։ Գնում էին տեղեր գավթելու, տուրուդմփոց էին սարքում գետափին։ Նավակներով մրցում էին սարատովցիների հետ։ Ձմեռը կերուխումով էին անցկացնում, հարսանիքներ էին անում, պարում էին փողոցներում, բարեկամների տների առաջ։ Կիրակի օրերը զբոսնում էին «Բրեշկայում», արևածաղկի սերմ էին չրթում։ Հավաքվում էին գավառական վարչության մեջ ժողովի։ Յեվ յեթե նոր դպրոց շինելու, փողոցները սալահատակելու և նման խնդիրներ էին առաջ գալիս, գուգուցով սովորական «յեզրափակումն» էին անում.

— Հարկավոր չէ։

Ճահիճներն ու ցեխը հեղեղում էին գյուղի փողոցները։ Գյուղում առաջ սաստիկ արիկայություն կար։ «Ֆուլիգանները» (այստեղ խուլիգաններին այդպես էին ասում) ընտանիքի տեր, հասակն առած մարդիկ էին։ Գյուղում վոչ վոք հանդգնություն չուներ նրանց խայտառակ արարքներից։ Վոստիկանությունը վախենում էր նրանց ձեռք տալ։ Նավավարները, վոսկրաղաց գործարանի, աղացարանների և յերկաթգծի արհեստանոցների բանվորները կազմեցին որիկաների գլխավորների ցուցակը և մի գիշեր բոլորին կոտորեցին։ Ահա այսպես էին ապրում Սարատովից յոթը վերստ հեռու Պոկրովսկայա գյուղում։

Յեվ ահա այս սանձարձակ ամբոխի հասակավոր զավակներին, ագարակներից յեկած վայրենիներին, հացառատ գյուղացիների պնդակազմ, հանդուգն ու անճոռնի տղաներին նստեցրել էին Պոկրովսկայա գիմնազիայի նստարաններին, գլուխները կարճ խուզել, կոնդուկտ մտցրել և համազգեստի վերնաշապկում սեղմել...

Դժվար է, համարյա անկարելի յե նկարագրել այն



ամենը, ինչ վոր կատարվում էր Պոկրովսկայա գիմնազիայում։

Կռվում էին շարունակ։ Կռվում էին զույգ-զույգ և դասարան դասարանի հետ։ Բոլորովին պատռում էին վերարկուների փեշերը։ Մատները ջարդում էին ուրիշների դեմքերի վրա։ Կռվում էին վոտնասահնակներով, պայուսակներով, կապարով լցրած վեգերով, և գլուխ էր, վոր ջարդում էին։ Բարձր դասարանի աշակերտները (ո՜, այդ տիրող բարձր դասարանցիները) կռվում էին մեզ հետ, ստորին դասարանների աշակերտներիս հետ։ Պատահում էր, վոր մեզ փոքրերիս բռնում էին վոտքերից և մեր գլուխներով իրար ջարդում։ Բայց կային և այնպիսի առաջին դասարանցիներ, վորոնցից փախչում էին ութերորդ դասարանի ամենախոշոր տղաները։

Ինձ շատ սակավ էին ծեծում. վախենում էին, յեթե կմեռնեմ. յես շատ փոքր էի։ Բայց և այնպես յերեք անգամ պատահաբար անզգա ընկել եմ գետին։

Ազատ, ամայի տեղերում մի տեսակ «փուտբոլ» էին խաղում՝ գետնից հանած հեռագրասյուներով։ Աշխատում էին սյունը վոտքերով գլորել և թշնամու սահմանն անցկացնել։ Հաճախ սյունը գլորվում էր վայր ընկած խաղացողների վրա, ճզմում նրանց և հաշմանդամ դարձնում։

Արտագրում էին, դասերի ժամանակ, հուշում անխիղճ կերպով և կատարելագործված։ Խորամանկ միջոցներ էին հնարում։ Բարդ գործիքներ էին ստեղծում։ Մեքենայացման էին ենթարկվում սեղանները, հատակները, գրատախտակները, ամբիոնները։ Կազմակերպել էին «շտապ պոստ», «հեռագիր»։ Գրավոր աշխատանքների ժամանակ հնար էին գտնում լուծումը ձեռք բերել բարձր դասարաններից։

«Ուսուցիչներին բարկացնելու համար» վոմանք դիտավորյալ կերպով մեջքից կռանում եյին։ Այսպես յերկտակված կանգնում եյին անկյունում, վորտեղ նրանց կանգնեցնում եյին՝ «շտկվելու համար»։ Իսկ տանը սրանք ձիգ ու հոյակապ տղաներ եյին։

Դասարանում կոպտոն եյին ծամում, թուղթ եյին խաղում, դանակներով մենամարտություն եյին վարժվում, փոխում եյին վեգերը, Նատա Պինկերտոն եյին կարդում։ Մի քանի դասերի ժամանակ դասարանի կեսը կանգնած եր լինում պատի մոտ, մի քառորդ մասը հանգստանում և ծխում եր արտաքնոցում, կամ դասարանից վռնդված եր լինում։ Սեղաններին այստեղ-այնտեղ յերևում եր մի քանի գլուխ։

Դասարանում ֆոսֆոր եյին այրում, վոր գարշահոտություն կանգնի։ Հարկավոր ե լինում դասարանի ոդը մաքրել, վորովհետև պարապել չեր լինում։

Ուսուցչական ամբիոնի տակ ամրացնում եյին ծվծվացող խաղալիք։ Դասի ժամանակ հենց վոր թելը քաշում եյին, խաղալիքը ծվում եր։ Ուսուցիչը վազվզում եր դասարանում, — ծվոց։ Ուսուցիչը խուզարկում եր սեղանները — ծվո՛ց։

— Վե՛ր կացեք և կանգնեցեք։

Դասարանը վոտքի յե կանգնել — ծվո՛ց։ Գալիս եր տեսուչը — ծվո՛ց։ Ամբողջ դասարանը մնում եր յերկու ժամ առանց ճաշի։

Ծվո՛ց...

Գիմնազիստները շուկայում գողություն եյին անում, բոլոր փողոցներում կռվում եյին տղաների հետ, ծեծում եյին վոստիկաններին։ Զաիրած ուսուցիչների առաջ դրած թանաքամանները լցնում եյին ամեն տեսակ աղտոտություններով։ Ճեղքած ու կոտրած գրչածայրը ցցում եյին սեղանին և դասի ժամանակ կամաց նվա-



գում։ Ճեղքված գրչածայրն անհաճո ձայն եր հանում, վոր ատամնացավի պես քոր եր ածում։

## ԴԻՐԵԿՏՈՐԸ

Դիրեկտոր Յուվենալ Բոգդանովիչ Ստոմոլիցկին նիհար եր, բարձրահասակ, ձիգ և բավական դանդաղաշարժ։ Նրա աչքերը կլոր եյին, ծանր, կարծես անագից շինած։ Հենց այս պատճառով ել նրա անունը դրել եյին «Զկան աչք»։

Զկան աչքը՝ իր զզվելի արարքներով հռչակված լուսավորության մինիստր Կասոյի հովանավորյալ պաշտոնյան եր։ Զկան աչքն աշխարհիս յերեսին ամենից շատ սիրում եր խստություն, լռություն և կարգապահություն։ Ամեն որ դասերը վերջանալուց հետո նա կանգնում եր հանդերձարանի մուտքի մոտ։ Հագնվելուց հետո մենք պետք ե անցնեյինք դիրեկտորի մոտով, պետք ե կանգնեյինք, վերցնեյինք գլխարկներս՝ ճակատներս ծածկող մասից բռնած (անպատճառ այդ մասից բռնած) և խոր գլուխ տայինք։

Մի անգամ յես տուն եյի շտապում և գլխարկս վերցրի վոչ թե առաջին մասից բռնած, այլ կողքից։

— Սպասիր, — ասաց՝ դիրեկտորը, — յետ գնա և մեկ ել անցիր. պետք ե գլուխ տալ ինչպես հարկն ե։

Նա յերբեք չեր աղաղակում։ Նրա ձայնն անգույն եր, մեռած, նման եր պահածոյի թիթեղյա ամանի ձայնի։ Յերբ մեկին հանդիմանում եր, ասում եր «զըզվելի յերեխա»։ Սա նրա բերանի ամենասարսափելի հայհոյանքն եր, վորից վարքը յերեք նշանակելու և ուրիշ անախորժությունների հոտ եր գալիս։

Ամեն տեղ, ուր նա յերևում եր, թե դասարանում, թե ուսուցչանոցում, խոսակցությունները դադարում եյին. մարդիկ կանգնում եյին և լարված լռում։ Շունչ

քաշել չէր լինում։ Մարդ ուզում էր օդանցքը բանալ և բարձրաձայն աղաղակել։

Ձկան աչքը սիրում էր հանկարծ, անսպասելի ներս մտնել դասարան դասի ժամանակ։ Դասարանը վոտքի յեր թռչում սեղանների գղրդյունով։ Ուսուցիչը կարմրում էր, խոսքը բերանում կիսատ հազում էր և շատ ծխած գիմնազիստի նմանվում։



Դիրեկտորը նստում էր ամբիոնի մոտ և հետեվում, վոր կանչված աշակերտները նախ իրեն գլուխ խոնարհեն, իսկ հետո արդեն դասատուին։ Իսկ յերբ մի անգամ յեկավ շրջանի հոգաբարձուն, վոր մի ալեվոր ծերուկ էր մեծ աստղանշանով, դիրեկտորը նրա հետ դասարան մտնելով աչքերով հասկացրեց վոր առաջ պետք է գլուխ խոնարհել հոգաբարձուին, հետո իրեն, իսկ վերջն արդեն ուսուցչին։

Կոնդուիտում դիրեկտորի վողորմածությամբ կային այսպիսի գրություններ.

«Գլո՛ւխին Անդրեյին պ. դիրեկտորը պատժել է վերարկուն ուսերին գցած։ Դասերից հետո չորս ժամ պահել դպրոցում»։

«Գավրյա Ստեփանին պ. դիրեկտորը տեսել է փողոցում անեղանագործ ոճիռով վերնաշապիկ հագած... դասերից հետո պահել վեց ժամ»։

«Ավդո՛տենկո Նիկոլային առանց թույլտվության նոյեմբերի 13-ի յեվ 14-ի պարապմունքներին չի հաճախել։ Պահել դասարանում 12 ժամ (յերկու տոն որ)»։

(Նոյեմբերի 13-ին մեռել էր Ավդոտենկո Նիկոլայի մորաքույրը, վորի մոտ նա ապրում էր)։

Շրջանից յեկած հոգաբարձուն գոհ մնաց դիրեկտորից։

— Վողորմած տեր — ասաց դիրեկտորին շվշվացող լեզվով. յես գոհ եմ, այստեղ օրինակելի կարգապահություն կա։

## ՈՒՍՈՒՑՉԱՆՈՑԸ

Ուսուցչանոցը գտնվում էր միջանցքի վերջում, դիրեկտորի առանձնասենյակից աջ։ Մայր ցամաքների և ովկիանոսների քարտեզները, կլոր փաթաթած, դարսված էյին պահարանի յետևը՝ անկյունում։ Յերկրի կիսագնդերի ահագին կլոր ակնոցները նայում էյին պատից։ Պահարանի ապակու մեջ արտացոլում էյին «մենք աստծո վողորմությամբն»-ն, յերկնագույն ժապավենը, տափակ թիթեղանման փոքրիկ մորուքը, դեպի յետ սանրած մազերի ճեղքը, շքանշանները, «Թագավոր Լեհաստանի և այլ և այլ»։ (Թագավորի պատկերը կախված էր դիմացը)։ Պահարանում դրված էր կոնդուիտը։ Պահարանի գլխին ծուռտիկ սկյուռն էր մազը թափած պոչն աստվածուհու քիթն էր խոթում։ Աստվածուհին հին էր, գիպսից շինած. անունը Վեներա յեր։ Յերբ պահարանը բաց էյին անում, աստվածուհին թեթև որորվում էր, կարծես թե պատրաստվում էր փախչելու։ Պահարանն այն ժամանակ էյին բաց անում, յերբ հարկավոր էր լի-

նում կոնդուիտը հանել։ Պահարանի բանալին պահում էր վերակացուն՝ Ցեզար Կարպիչը։ Մենք նրան անվանում էինք Ցապ-Ցարապիչ և հոգին հանում էինք։ Նա ծուռտիկ էր և մի աչքը ապակուց էր շինած։ Այս բանը Ցապ-Ցարապիչն ամեն կերպ աշխատում էր ծածկել։



Բայց հենց վոր շուռ էր գալիս և արհեստական աչքը մեր կողմը դարձնում, սկսում էինք ծամածռություններ անել, «քիթ» ցույց տալ, բութ ու կից յերկու մատներին անվայել ձև տալ և նման ավելի վատ բաներ։ Նոր ընդունվածները, վոր չգիտեյին, թե Ցապ-Ցարապիչն այդ աչքով չի տեսնում, խոնարհվում էին մեր հանդուգն քաջության առաջ։



## ԿՈՆԴՈՒԻՏԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Կոնդուիտի գրանցումներից կեսից ավելիի հեղինակը Ցապ-Ցարապիչն էր։ Նրա պարտականությունն էր հետևել աշակերտների վարք ու բարքին — թե գիմնազիայում և թե դուրսը։

Նա բռնում էր մեզ Բրեչկայում, վորտեղ գիմնազիստներն զբոսնելու իրավունք չունեյին։ Գիմնազիստներ էր վնտրում փողոցներում ժամի յոթից հետո։ Տուն էր գալիս ստուգելու, թե իսկապես հիվանդ է բացակայող աշակերտը։ «Զարթոնք» կինոյի մոտ հսկում էր գիմնազիստներին։ Նա որ-գիշեր վազվզում էր կոնդուիտի համար կերակուր գտնելու. բայց և այնպես գիմնազիստները հնար էին գտնում նրան ամենաանպատկառ ձևով խաբելու։

Որինակ, մի անգամ «Զարթոնք» կինոյում նա բռնեց վեցերորդ դասարանի գիմնազիստներից մի ամբողջ խումբ։ Գիմնազիստները թաքնվեցին ոթյակում և փակվեցին այնտեղ։ Ցապ-Ցարապիչը գնաց վոստիկանի յետևից։ Սկսեցին ոթյակի դուռը կոտրել։ Դահլիճում արդեն ներկայացումը սկսվել էր։ Այդ ժամանակ աշակերտներն ոթյակի վարագույրները պոկեցին, իրարից կապեցին և նրանով իջան դահլիճ։ Սկզբում էկրանի վրա ինչվոր շարժվող վոտներ յերևացին, իսկ հետո գիմնազիստներ թափվեցին ուղղակի հանդիսականների գլխին։ Հասարակությունն իրարանցման մեջ ընկավ, և այդ խառնաշփոթության միջոցին աշակերտները «ծլկվեցին» յետևի դռնով։

Ծխախոտի ծխի շղարշե շերտերը լողում էին ուսուցչանոցում, փաթաթվում գլոբուսին և թռչունների խրտվիլակներին։ Կոնդուիտի պահարանի կողքին դրած էր սեղան, վորի վրա դարսված էին դասարանա-

կան մասյանները՝ աշակերտների աշխատասիրության և ուշադրության միավորների ու հնգերի կոմպլեկտը։ Այդ մասյանները դասամիջոցներին սովորաբար աչքի յեր անցկացնում տեսուչը։

## ՏԵՍՈՒՉԸ

Տեսչին՝ Նիկոլայ Իլյիչ Ռոմաշովին գիմնազիստները համարյա թե սիրում եյին։ Նա մի գեղեցիկ, լիքը մարդ եր, ցից-ցից մազերով, մուգ կկոցված աչքերով։ Սակայն կոպտության հասնող սուր լեզու ուներ։

Նրա դաստիարակության մեթոդն աչքի յեր ընկնում վորոշ տարորինակությամբ։ Որինակ, յեթե վորևե դասարան կոլեկտիվ հանցանք եր գործում կամ չեր ուզում հանցավորներին հրապարակ բերել, Ռոմաշովը գալիս եր այնտեղ դասերից հետո։ Նա դանդաղ մըտնում եր դասարան և կանգնում ուղիղ ձգված գիմնազիստների առաջ. հետո գլուխը վեր եր անկում, նայում դասարանին։ Կարծես թե մորուքով մեր գլուխներն եր ավլում։

— Որապա՛հ,— հանդարտ ու չարագուշակ ասում եր տեսուչը,— որապա՛հ, ապա... դուռը փակիր։ Այդպե՛ս։

Որապահը պինդ փակում եր դուռը։ Հինգերորդ դասից հետո քաղցած ու հոգնած գիմնազիստներն անշարժ կանգնում եյին։ Ռոմաշովը շարունակում եր նայել դասարանին մորուքի արանքով. հետո գրպանից հանում եր գիրք, նստում ամբիոնի յետևը և խորասուզվում ընթերցանության մեջ։

Դասարանը մնում եր կանգնած։

Մի ժամ նստելուց հետո տեսուչը հանկարծ գիրքը մի կողմ եր դնում և ցած, բայց հնչուն բարիտոնով սկսում հանգիստ նախատել։



— Հապա, ախմարներ։ Վայրենացե՛լ եք, սրիկաներ, փչեր աղաձնապաններ։ Հե՛յ դուք գզգզված ակլորներ։ Ամբողջ մաքուր գիմնազիայում խայտառակ կանեմ ձեզ, հաստագլուխներ։ Փչացած, դատարկապորտ տղաներ։ Ե՛յ, եդ ո՞ւմ հիմար ծոծրակն է յերևում։ Հա՛, եդ քո՛նն է, Գավրյա։ Ցես հենց քո մասին եմ խոսում։ Ի՞նչ ես ունքդ շուռ տալիս, առաջնակարգ խուլիգան ցանցառ։ Հ՞ը, ի՞նչ է, ամաչո՞ւմ եք, սրիկաներ, համբակներ։ Ցես դեռ ձեզ կպատժեմ, անզգամներ։ Ա՛յ, նստած եք ամբողջ դասարանով առանց ճաշի։ Իսկ տանը ճաշն սպասում է. տաք ապուր, տապակած ոչխարի միս։ Հոտը գալիս է,— և տեսուչը լեզուն ծփծփացնում ու քիթը վեր եր քաշում։— Հ՞ը, ուզո՞ւմ եք խժրել։ Ինչպես չէ։ Տանն էլ հայրիկը քամակներդ կկարմրացնի։ Անպատճառ։ Ցես հատուկ նամակ կուղարկեմ, թե ձեր վորդու վարտիքը վեր քաշեցեք և լավ հասցրեք նրա յետևին։ Ծիծաղելու բան

չկա, տխմարներ, դատարկապորտներ․ մորդմ-սապմններ, ճաշից զրկվածներ. ամոթ:

Յեվ այսպես մի ժամի չափ խոսելուց հետո մեզ տուն էր ուղարկում մեկ-մեկ, մեկին մյուսից քիչ հետո: Մենք արդեն էլ վոտներիս վրա կանգնել չեյինք կարողանում:

## ԱՅԾԵՐՆ ՈՒ ԳԱՌՆԵՐՆ

Ոսմաշովը բոլոր գիմնազիստներին բաժանում էր գառների ու այծերի խմբի: Այսպես էլ ծանոթացնում էր նոր ուսուցչին դասարանի հետ:

— Նստեցեք, տխմարներ... Ահա, նայեք սրանց — դասարանի գառներն են, թութակի պես անգիր սերտողներ, հինգ ստացողներ: Իսկ այստեղ միավոր ստացողներն են, յերկու ստացողներ, յերկրորդ տարին մնացողներ, առանց ճաշի նստողներ, զռացողներ, պարապ քարշ յեկողներ: Կամչատկա, Սախալին, Ֆոլկլանդիա... Ալիֆերենկո: Փորդ ներս քաշիր: Դուրս է ցցվել:

Մեզ դասարանում տեղավորում էր ինքը տեսուչը, այնպես, վոր առաջին նստարաններին նստած եյին լինում ամենահանդուգն, ծույլ և փչացած աշակերտները: Իսկ պատերին ու պատուհաններին ավելի մոտիկ նստողների որատետրերում ու ցուցակներում ավելի շատ հինգեր կային: Բայց դասարանի — հետին ձախ «հնգանոց» և առաջի աջ «յերկուանոց» անկյունների մեջ անկյունագծով ամենամոտ բարեկամական հարաբերություններ գոյություն ունեյին հուշելու և արտագրության հիման վրա:

## ԱՆԻԾՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Գիմնազիայում «անիծված հարցերի» պատճառով շատ անհաջողության եյի հանդիպում: Որինակ՝ պատ-



մության դասին յես հետաքրքրվեցի, թե «Իվան Ահեղին ինչու բանտ չեն նստեցրել այնքան անմեղ մարդ սպանելու համար»:

— Ի՞նչ ես ասում,— զունատվեց պատմության դասատուն,— ամբողջ Ռուսաստանի թագավորին... հասկանում ես ասածդ:

— Ուրեմն, յեթե թագավորը կամենա, կարող է սպանել,— մեղմացրի յես:

— Դաժան որեր եյին,— կմկմաց պատմաբանը,— պետք է իմանալ, ժամանակի վարքերն եյին...

— Իսկ հիմա,— պատասխանեցի յես,— բայց պատմաբանը վեր թռավ այնպես կատաղած, վոր յես տեղն ու տեղը սառա:

Անախորժություն տեղի ունեցավ նաև ռուսաց լեզվի դասին: Պարապում եյինք արտահայտիչ ընթերցանությամբ: Դասարանում հերթով կարդում եյինք «Տարաս Բուլբան»: Յես պետք է կարդայի այն տեղը, վոր զապորոժցիները Դնեպրն են թափում բոլորովին անմեղ հրյաներին, և նրանք խեղդվում են:

Այնքան եյի խղճում, վոր լացս գալիս էր: Դժվարանում եյի կարդալ: Իսկ ամբողջ դասարանը լուռ դարձել էր ինձ, լսում էր, վոմանք դաժան հետաքրքրությամբ, վոմանք անպատկառ ծաղրով, վոմանք էլ հայտնի չարախնդությամբ: Զե՞ վոր յես էլ նրանցից եյի, վորոնց խեղդում եյին ուրախ ղազախները: Իսկ Գոգոլը, Գոգոլը այդպիսի լավ գրողը ղազախների հետ միասին զզվելի կերպով ծաղրում է ջրի մեջ թրպըրտացող հրեյական վոտքերը: Դասարանը հրհռում էր: Յեվ յես զգում եյի, վոր Դնեպրում խեղդվող հրյաների պես, խեղդվում եմ իմ սեփական արտասունքների մեջ:

— Յես... այլևս չեմ կարդա,— ասացի ուսուցչին՝

*Ոգերնիկովին, — չեմ կարդա։ Ուրիշ վոչինչ... Զզվելի յե։ Գոգոլին ամոթ է այսպիսի բաներ գրել։*

*— Դե՛, դե՛, — գոռաց կոպիտ Ոգերնիկովը, — քննադատությունը չորրորդ դասարանում կանցնենք, իսկ հիմա ձայնդ կտրի։*

*Յեվ յես ձայնս կտրեցի։ Հասկացա, վոր գիմնազիական գիտությունը մեր, ինչպես այն ժամանակ ասում եյին, հոգևոր հարցերին բավարարություն տալու համար չեր։*

## ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԱՖՈՆԱՑԻ ՌԵԿՐՈՒՏԻ ՄԱՍԻՆ

*Կոնդուիտական ցուցակում պահված կա ութ անհասկանալի գրանցում։ Ութ միատեսակ հանելուկային գրանցում, նշանակված միևնույն օրը։ Ահա թե ինչ է գրված կոնդուիտում ութ անգամ.*

«...Այսինչ աշակերտին խիստ հանդիմանություն է արված վերջին նախազգուշացումով, չարամիտ արհկայական արարքների համար: Վարքի յեռամսյա թվանշանը նշանակել 4— (4-ից հանած): 24 ժամ զրկել արձակուրդից: Նախազգուշացրել նրա ծնողներին: Դասարանական դաստիարակ այս ինչ (ստորագրություն): Վերակացու այս ինչ (ստորագրություն)»:

*Այս ութ գրանցումներն իրենց մեջ պահում են մի խայտառակ և վողբերգական պատմություն, վորը ժամանակին տակն ու վրա յեր արել ամբողջ քաղաքը։ Բայց վոչ վոքի հայտնի չի այս պատմության հանգույցի լուծումը, նրա վերջավորությունը և իսկական մասնակցողները։ Կոնդուիտում վոչ մի խոսք չկա փառավոր Կոզոդավի, Աֆոնացի Ռեկրուտի և տիկին Կոլենկորովայի շալմանական պալատի մասին։ Գիմնազիայի ծառան, հանգուցյալ Մոկեյիչն ինձ հաղորդեց կոնդուիտի գաղտնիքը, վորն և ուզում եմ ձեզ պատմել։*



## ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ

*Տասնութ տարի առաջ քաղաքում ելեկտրական զանգեր չկային։ Տան փոքրիկ դռներից կախված եյին յերկաթալարերից շինած կոթեր, այն ձևով, ինչ տեսակ լինում են արտաքնոցներում։ Այդ կոթերից բռնում, քաշում եյին։*

*Բայց գյուղը (Պոկրովսկն այն ժամանակ դեռ Պոկրովսկայա գյուղն եր) յեկավ մի նոր բժիշկ, վորի համար ասում եյին, թե շատ է սիրում գիտություն և տեխնիկա։ Յեվ իրոք բժիշկը «Նիվա»* բերել տվեց և իր բնակարանում զանգեր սարքեց ելեկտրական մարտկոցներով։ Դռան վրա այցետոմսի կողքին դուրս եր ցցված զանգի կոճակի սպիտակ պտուկը։ Հենց վոր յեկող հիվանդները հուպ եյին տալիս կոճակը, նախասենյակում ձայնեղ զանգը կենդանանում եր։ Այս բանն ամենքն էլ շատ հավանում եյին։ Բժիշկը մեծ քանակությամբ հաճախորդներ ձեռք բերեց, իսկ գյուղում համատարած սովորություն դարձավ գլխավոր մուտքի դռանն ելեկտրական զանգ ունենալը։*

* Ռուսական ժուռնալի անուն

Հինգ տարի հետո համարյա թե ել փոքրիկ գյուղում մի տուն չկար, վորի վրա ելեկտրական զանգի կոճակ չլիներ։ Զանգերը հնչում եյին զանազան ձայներով։ Մի քանիսը ճրռռում եյին, մի քանիսը զնգզնգում, շատերը վզզում, շատերն ուղղակի զնգում։ Միքանի կոճակների կողքին կախված եյին բացատրական հայտարարություններ. «խնդրում եմ մուրկը չը թակել, այլ մատով ճխտել զանգի պորտին»։

Պոկրովսկի բնակիչները պարծենում եյին իրենց «հնչյուն կուլտուրայով»։

Զանգերի մասին խոսում եյին շատ քնքշաբար և հրապուրանքով։ Պատահելիս իրար հարցնում եյին զանգի առողջության մասին։

— Հարգանքներս Պյոտր Ստեպանովիչին... Եհ, ինչ դրության մեջ ե ձեր նորությունը։ Վարպետը շտկե՞ց արդյոք։

— Շնորհակալ եմ, շտկեց։ Հիանալի զանգ ե։ Շնորհ արեք լսելու, իսկական դեղձանիկ ե։

Խնամիները, հարսնացուին գովելով,— պարծենում եյին.

— Տուն են տալիս աղջկա հետ, մուտքի վրա «ելեկտրական» զանգ կա։

Իսկ գյուղի հարուստներից Մլինարն իր տանը յոթ զանազան զանգեր սարքեց՝ շաբաթվա բոլոր օրերի համար։ Ամենից ուրախը զնգզնգում եր կիրակի օրերին։ Պաս օրերին ղողանջում եյին ամենամռայլ տեմբր ունեցող մեծ զանգերը։

Յեթե հանկարծ զանգերից վորևե մեկը չեր հնչում, տերն իսկույն մարդ եր ուղարկում Աֆոնացի Ռեկրուտի յետևից։

Ռեկրուտը բժշկում եր հին զանգերը, սարքում նորերը և գյուղում համարվում «զանգերի ամենալավ



վարպետը»։ Նրա հռչակը մեծ եր։ Այդ գյուղի տարեգրության մեջ նա նույնքան պատվավոր տեղ եր բռնում, վորքան Սպասայեվո լիճը, վոր մինչև այսոր ել համարվում ե ամենալավ ճահիճը Պոկրովսկում, ինչպես Լազարը, վոր այժմ ել կենդանի յե՝ համարվում ե ամենալավ կառապանը, ինչպես ամբարների հրդեհը՝ հրդեհներից ամենալավը։

## ՇԱԼՄԱՆ

Աֆոնացի Ռեկրուտն ապրում եր շուկայում, մսավաճառների շարքում, վորտեղից արյան հոտ եր գալիս. ապրում եր մի շալմանում։ Այսպես եյին անվանում այդտեղի բնակիչներն իրենց կեղտոտ ու անհարմար բնակարանը։ Շալմանի կողքին մի մեծ փոս կար, վորի հատակին շարունակ հոտած փոսեր եյին լինում կանգնած, և շները քաշքշում եյին աղիքների կճկուռներ, կանաչ-վոսկեգույն ճանճերով փաթաթված թափանի կտորներ։ Մի քիչ հեռու յերկաթավաճառների շարքն եր, վորտեղից շարունակ զրնգոց ու թրխկոց եր լսվում։

Աֆոնացի Ռեկրուտն ապրում եր շալմանում։ Վո՞րտեղից եր յեկել, ինչո՞ւ եյին դրան այդպես անվանում, ինչ ցեղի մարդ եր, վոչ վոք վոչինչ չգիտեր։ Բայց նրան ամենքը ճանաչում եյին։ Նա պնդակազմ եր և թուխ, ինչպես բոված ընկույզ, նիհար եր, ճկուն, շարժուն, ինչպես վիմպել։* Ձախ ականջից կախված եր մի ահագին կլոր օղ։ Սապատավոր քթի տակից յերևում եյին յերկար սև բեխերը։ Ձախ բեխը դեպի վեր եր վոլորվում, աջը՝ դեպի ցած, և դրա բեխերը նմանվում եյին լվացարանի ծորակի։ Սպիտակ ատամները միշտ պսպղում եյին ժպտալիս։ Նրա ձեռքերը միշտ

* ժապավինաձև դրոշակ։

զբաղված եյին լինում վորևէ գործով։ Յեվ նա, ինչպես ասում են, վոսկի ձեռք ուներ։ Նա ամեն բան կարողանում եր աներ։ Մեխանիկ եր, վարսավիր եր, ձեռնածու, ելեկտրալարեր անցկացնող, ատաղձագործ, կոշկակար, նավաստի, լարախաղաց, ժամացույց շինող վարպետ և ել ուրիշ, ինչ վոր ասեք։

Նա շալմանում ամենահարգված մարդն եր։ Ամենքը նրա ասածները լսում եյին և սիրում նրան։ Վոչ վոք նրան բարկացած չեր տեսել։ Մինչև անգամ, յերբ շալմանում կռիվ եր ծագում և դանակներ եյին մերկացնում, այդ ժամանակ ել Ռեկրուտ Աֆոնացու ժըպիտը դանակներից ավելի յեր փայլում։ Կարծես թե գետնի տակից եր բսնում և կանգնում կռվողների արանքում, բաժանում նրանց և բալագանի սատանայի նման բարձրանում թախտը ու գոռում.

— Հարգելի ժողովուրդ։ Կիլյալյա՛։ Վերջին նորագույն ֆոկուս-պոկուսը սև, սպիտակ բծերով շերտավոր ձեռնածուի․ տիկիններ, պարոններ և ջենտլմեններ։ Ստանդե՛ մի քիչ։ Գյալյի խի բին դեմանստրե ֆոկո՛ւս-պոկո՛ւս։ Ամե՛րիկ։ Ալլյուրա-շկի՛ դլա։

Նրա գրպանից դուրս եյին թռչում տուփեր, գընդակներ և պտտվում գլխավերևը։ Գլխարկը նստում եր ձեռնափայտի գլխին․ ծխախոտները վառվում եյին թևքերից։ Փորը յերգում եր կանացի ձայնով։ Իսկ պատռված կոշիկը բերանը բաց եր անում և ասում մերսի…

Յեվ այսպես մոռանում եյին կռիվը շալմանում։

Շալմանում տնտեսությունը վարում եր կիսախելագար Դունկա Կոլենկորովան։ Նրա սիրելին խենթուկ Կոստիա Գոնչարն եր։ Կոստիան մի անմեղ սովորություն ուներ՝ իր վրայից կախում եր ամեն տեսակ փայլուն իրեր։ Նա քաղաքում ման եր գալիս



ցնցոտիներով, վորոնցից կախված եյին լինում «Նիվա»-ից կտրած պատկերներ, թեյի արկղերի խուփեր, «Թիլթեռ» և «Յու-Յու» ծխախոտների ռեկլամներ, ուլունքներ, թղթե ծաղիկներ, խաղաթղթեր, ձիու սարքի կտորներ, կոտրած գդալներ։ Քաղաքում նրան սիրում եյին վորպես խենթի և զանազան անպետք փայլուն իրեր նվիրում։ Մինչև այսոր ել, յեթե Պոկրովսկում մեկը խիստ գունավոր և խայտաբղետ շոր է հագնում, ասում են․



— Վա՜հ, Կոստիա Գոնչարի պես է զարդարվել։

Սիրում եր յերբեմն այդ շալմանը մտնել շուկայի կարգապահության հսկող վոստիկան «փարավոն» Կոզոդավը։ Կոզոդավն ուներ այն ամենը, ինչ վոր հարկավոր է որինակելի վոստիկանին՝ սարսափելի բեխեր, գոտկաթիթեղ, սուլիչ, թուր, խուպոտ ու ճայթող բամբ ձայն, դամբիլ քիթ, մեդալ և կարմիր թելից վոլորած ուսադիրներ, վորը Կոստիայի նախանձի առարկան եր։ Փարավոնը մըտնում եր շալման Կոլենկորովի մոտ կոնծելու, քիչ

իրեն թղթախաղի տալու և «կյանքից» խուսելու իմաստուն կոմմիվոյաժոր Յուսիֆ Պուկիսի հետ։

— Լսի՛ր, դու, Պաղեստինի ազնվական, — մռնչում էր նա, — դու են դեղագործ Պուկիսին ազգական չե՞ս, վոր հերու դեղատունը մաքրագործեց։

— Լսեցե՛ք, — ասաց Յուսիֆը, — դուք ճանաչո՞ւմ եք կոշկակար Ռոմանովին, վորն ապրում է անկյունում։ Շատ հասարակ կոշկակար է։ Բայց Պետերբուրգում էլ ապրում է մի Ռոմանով և բավական մեծ պաշտոն ունի... Դա Նիկոլայ յերկրորդն է։ Հիմա յես քեզ եմ հարցնում, կոշկակար Ռոմանովը պատասխանատո՞ւ յե այդ Ռոմանովի տեղ։

Շալմանում ապրում էին նաև վոսկերիչ Լեոնտի Աբրամկինը, յերգեհոն նվագող գերմանացի Գերշտան իր թութակով, վորը բախտի տոմսակներ էր դուրս քաշում, թոքախտավոր չինացի Ջի Սուն-չան և յերկու բարեկամներ, գողեր Շիբարշան և Կրիվոպատրիան։

## ՍԱՏԱՆԱՆ ՈՒ «ՅԵՐԵԽԱՆԵՐԸ»

Յերեկոները գիմնազիստները շալման էին մըտնում։ Այստեղ կարելի յեր կոպտոն ծամել, հանգստանալ լավ հասարակության մեջ, մոռանալ կարճ ժամանակ գիմնազիական չափած-ձևած կյանքը, ուսուցիչներին հայհոյել, ծխել, յերկյուղ չունենալով, թե Ցապ-Ցարապկինին կհանդիպեն, «աչկո» խաղալ, մի գավաթ սպիրտ կոնծել։ Այստեղ վոչ վոք չէր հարցնում, թե յեռամսյակին ինչ թվանշան կունենանք» արդյոք վաղվա դասերը պատրաստ են, թե վոչ։ Մենք այստեղ ցանկալի հյուրեր էինք։ Շալմանի բնակիչները մեզ հետ միասին խիստ վրդովում էին գիմնազիական կարգերի վրա և շատերը նույն իսկ պատրաստ էին ծեծել լատիներենի դասատուին՝ անար-



դար միավորի պատճառով։ Մանավանդ շատ վրդովում էր ընդհանրապես իրեն հանգիստ պահող Ջի Սուն-չան։

— Ի՞նչ չալ է լատինը, — ասում էր նա, գունավոր թղթերից ժանյակներ կտրտելով, — վոչ լավ է, էլ ինչո՞ւ միավոր։

Մենք շալման էինք բերում հետաքրքիր գրքեր, վերջին նորությունները, մեր գիմնազիական նախաճաշիկները, անպետք իրեր Կոստիա Գոնչարի համար։ Դրա փոխարեն մենք հետաքրքիր տեղեկություններ և ունակություններ էինք ստանում, թղթից ամրոցներ կտրտելու, արտաքնոցներ մաքրելու և Ոդեսայի ջիու-ջիտսուի հնարների մասին։

Թեկլուտ Աֆոնացին սիրում էր վիճել կարդացած գրքի մասին և մեզ էլ գրավում էր վիճելու։ Սկզբում խնդում էինք նրա վրա՝ թե սատանան ընկել է «յերեխաների» հետ, բայց շուտով մեր վեճերին սկսեցին մասնակցել շալմանի՝ համարյա բոլոր բնակիչները։ Բացի դրանից «յերեխաներից» մեկը, Վասկա Գորբին այնպես հասցրեց Շերարշին, վոր այնուհետև սկսեցին գիմնազիստներին մեծ հարգանքով վերաբերվել։

Սկզբում թեթև գրքեր էինք կարդում։ Այսպես մենք լողալով անցանք «80,000 վերստ ջրի տակը», գտանք «Գրանտ նավապետի յերեխաներին», քիչ մնաց, վոր մենք էլ գլուխներս կորցնենք «Անգլուխ ասպետ»-ի հետ։ Հետո Ստյոպկա Գավրիլան, վորի մականունը Ատլանտիդա յեր, փեշի տակը ուրիշ գրքեր էլ բերեց։ Շալմանի բնակիչները շունչները կտրած լսում էին Փարիզի կոմունարների մասին. և շուտով կատակով մեր մեջ շալմանն անվանում էինք շալմանյան կոմմունա։ Գիմնազիստներն այս այցելությունները խիստ գաղտնի էին պահում։

Մինչև անգամ դասարաններում շատերը չգիտեին,

թե վորտեղ է ժամանակ անցկացնում, այսպես կոչված, Բինդյուգի խումբը։ Յերբ Կոզոդաևն անակնկալ շալման եր մտնում, իսկույն գրքերը թագցնում եյին, իսկ «փարավոնին» գավաթն եյին համեցեք անում։ Ապշած փարավոնը խորհրդավոր կերպով ասում եր․

— Լսեք, գիմնազյորներ, կես ժամից շուտ դուրս չթափվեք․ ձեր Ցապ-Ցարապկինը Բրեշկոում դես ու դեն է ընկնում։ Հենց վոր ժամանակը լինի, յես կասեմ ձեզ։

## ԱՅԳՈՒՄ ԹԵ...

Սեպտեմբերին Ժողովրդական այգու ծառերի տերևները նոսրացել եյին, ծառուղիները ցանկապատող խոտը մուգ գույն եր ստացել։ Այգին նմանում եր հին մուշտակի մաշված ոձիքի։ Սեպտեմբերին գիմնազիստները գլխավոր ծառուղու վրա տղաների հետ կռվի բռնվեցին։ Հինգերորդ դասարանի աշակերտ Վանկա Մախասը գբոսնում եր մի գիմնազիստուհու հետ։ Նստարանին նստած Բերեժնայա փողոցի տղաներն սկսեցին անվայել ու մութ ակնարկներ անել։

— Ե՜յ, սիգյակ, դու մեր փողոցի աղջկերանց ձեռք մի տա։

Մախասը գիմնազիստուհուն տարավ աղբյուրի մոտ և ասաց։

— Ներողություն եմ խնդրում․ մի րոպե սպասեք․ յես իսկույն վերջացնեմ հաշիվս։

Հետո վերադարձավ ծառուղին, մոտեցավ այդ տղաներից մեկին և լուռ խփեց նրա բերանին։ Այդ տղան նստարանից գլորվեց ծառուղին ցանկապատող յերկաթալարի վրա։ Իսկ նրա ընկերը յերկաթե գավազանով ջարդեց Մախասի գլուխը։ Մախասը ոգնության կանչեց իրենց տղաներին և թրմփաց ծառուղու ավազի վրա։ Յեվ իսկույն ամբողջ ծառուղին լցվեց կռվողնե-



րով։ Կռվում եյին լուռ, վորովհետև հարևան ծառուղում նստած եյին ուսուցիչները։ Տղաներն այդ հասկանում եյին և անազնվություն եյին համարում գոռալ և այդպիսով անհարմար դրության մեջ դնել հակառակորդներին։

Անցնող պահապանները կռվողներին բաժանեցին։ Ցապ-Ցարապկինի յերևալը վերջնականապես տուրուդմփոցին վերջ դրեց։ Մախասին վերարկուի վրա պառկեցրած տարան հիվանդանոց.

Այդ դեպքից հետո քաղաքային դուման խնդրեց դիրեկտորին — Ժողովրդական այգին ևս մտցնել գիմնազիստների համար արգելված վայրերի ցուցակը։ Դիրեկտորն ամենայն պատրաստակամությամբ համաձայնվեց։ Գիմնազիստները զրկվեցին զբոսնելու վերջին տեղից։ Նրանք փորձեցին բողոքել, բայց ծնողական կոմիտեն հավանություն տվեց դիրեկտորի հրամանին։

## ԳԱԼԻՍ ԵՆՔ ՁԵՐ ԴԵՄ

Այդ որը շալմանում արտակարգ և գաղտնի խորհրդակցություն տեղի ունեցավ։ Գիմնազիստներից ներկա եյին միայն Բինդյուգը և Ատլանտիդան։

Ատլանտիդան բարկությունից իրեն կորցրել եր։

— Չե, — հուզված ասում եր նա, — սա ուղղակի մի այլանդակ բան է։ Կատաղե՞լ են, ինչ է։ Առանց այն ել չեն թողնում մի տեղ վոտք դնենք, հիմա ել այս․․ Սրանից հետո կթքեմ յես ամբողջ Պոկրովկի վրա։

— Գիտե՞ք ինչ եմ ուզում առաջարկել, — ասաց Յոսկան, — հոգաբարձուին հեռագիր ուղարկեցեք, պատասխանի վճարն ել տվեք։ Հո չի կարելի լռել։ Սա ուղղակի կարծես թե գիմնազիստների բնակության համար նախատեսված սահմանափակված մի

տեղ է։ Այստեղ չի կարելի, այնտեղ չի կարելի. ապա վո՞րտեղ, յես ինչ գիտեմ։

— Ալլյուրա-շկինդլա։ Տո՛, ինչ հեռագիր եդ գեվերին, — ընդհատեց նրան Ռեկրուտը։ Ձե՛, պետք է մի քիչ գլխին զոռ տալ։ Ի՛նա։

— Պետք է քիթ ու պռունգները ջարդել, ուրիշ վոչինչ, — ուրախ խորհուրդ եր տալիս Թախտից Կրիվոպատրիան։ Նա պառկել եր կախ ընկած և զգուշությամբ աշխատում եր թքել ողակաձև բռնած մատների միջով։

— Ձե՛, — վճռականապես ասաց Ատլանտիդյան, — այս խաղը չի հաջողի նրանց, այս դեպքում պետք է մեղադրել ամբողջ քաղաքը, անշուշտ նրանք ամենքն էլ մեղավոր են և՛, դուման, և՛ կոմիտեն։ Իշի մութներ... Բայց չլինի թե մենք փորձանքի մեջ ընկնենք։ Այնպես կշպրտեն գիմնազիայից, վո՛ր... ա՛յ, պետք է այս մասին մտածել։

— Մեր տղաները միաբան են, — ավելացրեց Բինդյուգը, — յերբ խմբովին վրա տանք, թող դիմանան։

Տիրեց լռություն։ Դավադիրները ընկան մտածմունքի մեջ։ Տանիքը կաթում եր։

Հանկարծ Յոսկան վեր թռավ, անխնա խփեց ճակատին և բացականչեց։

— Եվրիկա՛, եվրիկա՛, — վոր հունարեն նշանակում է — գտա-գտա։ — Փայլուն միտք ծագեց գլխումս... Ի՞նչ։

— Դեհ, էլ մի յերկարացնի, ի սեր աստուծո Ասա, վերջացրու էլի։

— Ես ինչ սարսափելի աղմուկ է։ Վո՞րտեղ եք գտնվում, գիմնազիայում, թե մի որինավոր շալմանում։

— Ասո՛ւմ ես, թե՛ չե։ Ի՞նչ ես ձգձգում, գրողը քեզ տանի...



— Մ՛սս, խնդրում եմ լռություն պահեք։ Իմ իդեան իդեա ֆիկսս է։ Նա մեզ բոլորիս համար միայն ունի լավ կողմեր և վոչ մի վատ կողմ։ Դեհ ուրեմն, լսեցեք... թե ինչի մեջ է բացառում իմ կայացած... այսինքն, հակառակը, թե ինչի մեջ է կայանում իմ բացառիկ իդեան։ Դուք պետք է այսպես անեք...

Յեվ Յոսկան իր հաստ մատներով սկսեց օդը կտրել մկրատի պես։ Այսպես կտրեց նա օդը մի քանի րոպե, հետո ժպտուն հայացքով նայեց ամենքին և հանդիսավոր շշնջյունով ասաց.

— Զանգերը...

## «ՄԱՆԻՖԵՍՏ»

«Զանգերը կտրելու» կամպանիան անցկացնելու համար Բինդյուգը բոլոր դասարաններից ութը ընտիր տղաներ նշանակեց։ Դրա համար այսպիսի մանիֆեստ պատրաստեցին.

«Տղերք, մեզ արգելեցին քարշ գալ ժողովրդական այգում։ (Նայի՛ր, հո վոչ վոք չի նայում քեզ)։ Մեր դեմ եյին Ջկան աչքը, Դուման, ծնողական խորհուրդը։ Յերևում է, վոր ամբողջ քաղաքը մեր դեմ է։ Դրա համար դրանց բոլորին պետք է այնպես ուտեցնել, վոր մի տարի հետո էլ... ամբողջ Պոկրովսկը չմոռնա այդ։

Պոկրովսկում մերոնք բոլորն էլ այնպես են զբաղվում իրենց զանգերով, ինչպես սրբություն։ Տղե՛րք, մենք Կավի ու Վրեժխնդրության կոմիտեն ենք, վորոշել ենք քաղաքում կտրել բոլոր զանգերը։ Մեզանից ամեն մեկն առաջուց վորոշված որը պետք է կտրի իրենց դռների զանգը։ Մեր ծնողները դիրեկտորին կողմնակից են։ Շատ էլ բանի տեղ մի դնեք հայրիկներին ու մայրիկներին. կտրեցեք նրանց զանգերը։

Այն տներում, վորտեղ գիմնազիստներ չեն ապրում, զանգերը կկտրեն թաղերում ապրող տղաները, վորոնց հատկապես կհանձնարարի Կռվի և Վրեժխնդրության Կոմիտեն։ Մենք «Բարդուղիմեոսյան գիշեր» կկատարենք զանգերի գլխին։ Տղերք, կտրեցեք անխնա։ Մեզ հասցրին այդ աստիճանին։ Մեզ զրկեցին վերջին զբոսանքից ու բնության ծոցում հանգստանալուց և զվարճությունից,

Կռվի և Վրեժխնդրության Կոմիտեն ամեն մի դասարանում՝ մեկին նշանակում է ավագ։ Պարոններ, լսեցեք նրանց։ (Ինկատի ունենալով դուրս շպրտելու վտանգը մականուններ ենք դնում այդ ավագներին).

1 դասարան . . . Մարուսիան («Դոնդեր-Շիշ»)
2 » . . . . . . . . . . . . «Սվիշչ»
3 » . . . . . . . . . . . . «Ատլանտիդա»
4 » . . . . . . . . . . . . «Կոբել»
5 » . . . . . . . . . . . . «Ցիբուլյա»
6 » «Սատրապ» («Համլետի հոր ուրվականը»)
7 » . . . . Մոտնիա («Յես բնակիչ եմ»)
8 » . . . . . . . . . «Հուդայի թագավոր»
Գլխավոր . . . . . . . . . «Բինդյուգ»։ *

Կտրված զանգերը պետք է հանձնել դասարանի ավագին։ Նա Կոմիտեյի միջոցով տալիս է վորևէ հաշմանդամի, վորը դրա փոխարեն մեզ կտա վառոդ, փամփուշտ, խաղատարճանակներ և այլ իրեր։ «Բարդուղիմեոսյան գիշերի» օրը հայտարարելու համար դա-

* Համարյա բոլոր գիմնազիստներն ունեյին իրենց մականունները։ Մի քանիսը մինչև անգամ մի քանի մականուն ունեյին։ Օրինակ՝ «Մոտնիան» կոչվում էր նաև «Յես բնակիչ եմ»։ Այս մականունը նրան դրեցին այն պատճառով, վոր լատինական լեզվի գրավոր աշխատանքի մեջ «Ինկոլո» (բնակեցնել) բայը՝ շփոթել էր «Ինկոլա» (բնակիչ) բառի հետ և ռուսերեն թարգմանել էր ամեն տեղ «յես բնակիչ եմ, դու բնակիչ ես, նա բնակիչ է...»



սարանների ավագներն ազդանշան կտան սպիտակ յերանկյունու ձևով, վոր կպցրած կլինի պատուհանի ապակուն։

Ուսուցչանոցի մեծ զանգը չպետք է կտրել, թե չէ կիմանան ով է արել։ Ով վոր ծպտուն է հանել այս մասին, նրա բերանը կխցենք... Կտրեցեք զանգերը։

Մեկն ամենքի համար։
Ամենքը մեկի համար։
Կեցցե Կռիվն ու Վրեժխնդրությունը։

Ստորագրել, տուր մյուսներին, բացի Լիզարսկույից և Բալդուց։

«Մանիֆեստն» արդեն պտտվում է ամբողջ գիմնազիայում հուշող շշնջյուններով, դասամիջոցներին, ծխախոտի հոտով լի արտաքնոցներում։ Յերկու հարյուր վաթսուն ութ վերարկու յեր կախված հանդերձարանում։ Յերկու հարյուր վաթսուն ութ ստորագրություն հավաքեց «մանիֆեստը»։

«Մանիֆեստը» չտվեցին թաղապետ վոստիկանի վորդուն՝ Լիզարսկույին և նրա ընկեր Բալդային։

Պատերազմը հայտարարված էր։

## ԸՆԴՀԱՏՎԱԾ ԶԱՅՆԵՐ

Հինգ օրից հետո ղեկավարներն ուշ յերեկոյան հավաքվեցին շալմանում։ Չնայելով, վոր ուշ էր, նրանք բոլորն էլ յեկան ծանր պայուսակները մեջքներին։ Պայուսակներում, ուր առաջ լինում եյին ջրալի «Սավոդնիկը» և թվերով փորն ուռցրած «Կիսելյովը», տեղավորված եյին կտրված զանգերի կոճակները։ Սպի-

* «Սավոդնիկը» և «Կիսելյովը» դասագրքեր են - առաջինը՝ գրականության, յերկրորդը՝ մաթեմատիկայի, — վորոնք գործ եյին ածում նախկին գիմնազիայում։

տակ, սև, գորշ, սադափե, եմալե, դեղին, պիրկ և պինդ նստած կոճակները (մի անգամ սեղմում ես, զանգահարում է անվերջ) յերևում էյին փայտե, մետաղե շրջանակներից, փոքրիկ քառակուսիներից, ձվածիրներից, ծաղկաձև շրջանակներից, կաղնու և ընկուզենու գույնով ներկած, ժանգոտած, փայլ տված։ Կտրատած լարերը կախ էյին ընկած, ինչպես պոկած մատների ջիլեր։



Ամբողջ քաղաքը հերթի գրվեց Ռեկրուտ Աֆոնացու մոտ։ Յերկու շաբաթ առավոտից իրիկուն Ռեկրուտը նոր զանգեր եր ամրացնում, կամ ինչպես նա սիրում եր կատակով ասել, նորոգում եր կտրված ձայները։ Յերբ Ռեկրուտը վերջին զանգակոճակն էլ ամրացրեց վերջացրեց, Բինդյուգին ասաց.

— Մի շաբաթ հետո վրա տվեք էլի։

Շաբաթ որը ցեխ եր։ Կրկնակոշիկներ էյին, վոր փոսերի մեջ ջրով լցվեցին, ռետինե կոշիկներ, վոր թաղվեցին Պոկրովսկի գլխավոր փողոցում։ Իսկ յերբ



պոկրովսկացիք յեկեղեցուց տուն վերադարձան կրկնակոշիկները չխփխփացնելով, ճանապարհն ու ուժերը կորցրած, նրանք յերկար ժամանակ մթության մեջ դռների առաջ բան էյին վնտրում, լուցկի էյին վառում և քամուց ձեռքի ափով պաշտպանում։ Զանգակոճակները չկային։

Գիշերն արդեն ամբողջ քաղաքը գիտեր, վոր նոր զանգերը կտրատել էյին։

— Սա ինչ բան է։ Հետևյալ որը հուզվում էյին յեկեղեցում պատարագին, փողոցների անկյուններում, դռների առաջ, հողաթմբերի վրա։ — Տե՜ր աստված, որը ցերեկով... կողոպտել։ Յերևի ամբողջ շայկայով են կտրատում։

— Ինարկե։ Ցես խմոր արի, հետո դուրս յեկա մի քիչ հարևանիս Բալանդինայի հետ զրույց անելու։ Իսկ խրճիթում մեծ տղաս՝ Գրինկան, կարծեմ, դաս էր սովորում։ Մի քիչ զրից արի, հետ դարձա, ուզում եմ դուռը բաց անել... Վա՜հ։ Տեսնում եմ՝ զանգ չկա... վոչ վոք էլ չկար մոտերքը...

Ցեվ չգիտեր խեղճ կինը, վոր հենց իր վորդին, հինգերորդ դասարանի աշակերտ այդ պաճո Գրինկան էր զանգը կտրել...

## ՇՐՋԱՆԱՊԵՏՆ ՈՒ ԻՐ ՎՈՐԴԻՆ

Այդ փոքրիկ քաղաքում տիրում եր ընդհանուր լքում։ Նոր զանգակոճակներ չեյին սարքում։

Գիմնազիստները տոնում էյին իրենց հաղթանակը։ Բոլորի դռների վրա էլ յերևում էյին զանգակոճակների դատարկ, դեռ արևից չխամրած բաց գույնի շրջանակները և հանած մեխերի տեղերը։

Միայն շրջանապետը կանչեց Ռեկրուտ Աֆոնյացուն։

— Նոր զանգ սարքիր, — ասաց նա, — Սարքիր,

սրիկա։ Բայց ամուր։ Լավ եմ ճանաչում ձեզ, աֆոնացի սատանաներին։ Ձեր բոլոր ոյինբազությունները գիտեմ։

Շրջանապետն սպառնաց մատով։

Ռեկրուտն ականջները սրեց։

Բոլորովին զուր ես միամիտ ձևանում. գիտե՛մ։ Կաշխատես այնպես սարքել, վոր ձեռաց պոկվի, վորպեսզի սրիկաների գործը հեշտացնես։ Դո՛ւք, անպիտաններ, միայն ձեր ոգուտն եք փնտրում։ Նրանք կորչում են, իսկ դու, սև՛ սրիկա, փող ես աշխատում։ Բայց այս անգամ, կներե՛ս. յես վոստիկան կկանգնեցնեմ. ամբողջ որով հերթապահ կնշանակեմ։

Ռեկրուտը նոր զանգը պնդացրեց և վազեց դեպի շալման, վորտեղ գիմնազիստները նրան սպասում եյին։

Ռեկրուտը հայտարարեց.

— Շրջանապետի համար նոր բլթակ կպցրի. կտրել չի կարելի, փարավոնը պետք ե հավնի։

— Թքե՛լ եմ բոլոր փարավոնների վրա ել,— ինքնավստահ տոնով գոռաց վարչապետի վորդին գիմնազիստ Վենկա Ռազումովը՝ Սատրապ մականունով։

Պնդակազմ եր, համառ և շատ նմանում եր հորը (դրանից եր առաջ յեկել նրա յերկրորդ մականունը— «Յուր հոր, Համլետի ուրվականը»)։

— Լսեցե՛ք, քաջարի տղա,— ասաց Յոսկան,— շատ մեծ-մեծ եք խոսում, չլինի՞ թե զանգի փոխարեն, ա՛յ, այդ գերբով գլխարկդ պոկ տաս։ Ինչո՞ւ աքացել խթանին։ Զգուշությունն ամեն բանից լավ ե։

— Ճիշտ ե ասում, Սատրապիկ, զգույշ կաց... յեթե հիմարությունից խրվես, ա՛յ, տեսնո՞ւմ ես, կուտես հա՜...

Յեվ Բինդյուգը Սատրապի քթին մոտեցրեց թակի նման իր հսկայական բռունցքը։



Ինչպես և միշտ, սկսեցին բռունցքի մասին խնամքով ու սիրով դատողություններ անել։ Ամենքն ել բռնում եյին բռունցքը և հիանում։

— Ա՛յ թե խոշոր բռունցք ե։ Իմից շատ ավելի մեծ ե։

— Մեր ժամանակը լավ բռունցքն անպետք գլխից լավ ե,— փիլիսոփայություն արեց Յոսկան։

— Լա՛վ բռունցք ե — հիանում եր Չի-Սուն-չան,— այդպիսի բռունցք շոգենավի ավագ նավաստին ունի։ Ե՛հ, ատամներ չի՛ մնա։

— Բայց և այնպես զանգը յես կկտրեմ,— համառաբար մռմռթաց շրջանապետի վորդին։

## ՀԱՄԱՐՅԱ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԿ ՄԻ ԳԼՈՒԽ Ե ԱՅՍ, ՎՈՐՏԵՂ ԸՆԹԵՐՑՈՂԸ ՎԵՐԵՎԸ ՎՈՏՔԵՐ ՏԵՍՆԵԼՈՎ, ԻՍԿ ՆԵՐՔԵՎԸ ԳԼՈՒԽ, ԿԱՐՈՂ Ե ԱՂԱՂԱԿԵԼ ՀԵՂԻՆԱԿԻՆ՝ „ՇՐՋԱՆԱԿԸ“։

Խավար ե։ Յերբ աչքներս մթությանը սովորեց, տեսանք դուռը, վրան մի փոքրիկ տախտակ հետևյալ մակագրությամբ.

«Շրջանի պետ Գեննադի Բենիամինովիչ Ռազումովը»։ Մոտն յերևում ե նոր զանգակոճակ։

Յերկրորդ հարկի փոքրիկ հրապարակն ե։ Սանդուխքի մի մասը։ Ներքևում յերևում ե յերկար բեխերով և հաստ քթով մի գլուխ։ Ջինանշանով գլխարկ կա գլխին։ Սա կոզոդավն ե։ Նա մրսում ե. կուչ ե յեկել։ Աչքերը փակվում են։ Կոզոդավի քունը տանում ե։

Շրջանապետի սեղանատան ժամացույցը ժամի յերկուսն ե ցույց տալիս։ Սեղանի վրա դրված ե մի բաժակ կաթ ու մի կտոր հաց ու պանիր։ Սանդուխքով վոտքեր են բարձրանում։ Ռետինե կրկնակոշիկները ցեխոտ են։ Մի վոտքը սայթաքում ե աստիճանի վրա։

— Թյո՛ւ, գրո՜ղը տանի։ Մութն է, ինչպես նեգրի կռնատակը։

Լույսի չե՛ վառվում։ Գեղեցիկ ձեռնոց հագած մի ձեռք լույսին մոտեցնում է զանգին։

— Չէ՛, ես անգամ Ռեկրուտը լավ է աշխատել։

Ներքևը յերևում է կոզոդավի գլուխը, վերևը՝ ռետինե կրկնակոշիկներով վոտքեր։ Թանձրամարմին կոզոդավը, վոր մի րոպե քնել էր, ուշքի գալով, վեր է վազում։

— Ը՞ը, բռնվեցի՞ր։

Թշերն ուռցրած, բեխերը ցցած, սկսեց սուլել։ Մյուս ձեռքով բռնեց անծանոթ մարդու վզից։ Սուլում է։

— Հասե՜ք... բռնե՜լ եմ։

Անծանոթը հանգիստ շուռ է գալիս, վոստիկանի

ձեռքը տիրաբար հեռացնում իրենից։ Շրջանապետի վորդին եմ, Վենկա Ռազուդանովը։ Յեվ բարկանում է.

— Ի՞նչ բանի յես, հիմար։ Խելքդ կորցրե՜լ ես, հա՞։ Հիմարին վոր բանի դնես...

— Ներողությո՜ւն։ Մութն էր, չճանաչեցի։ Բարի



յեղեք, հանցավոր եմ։ Մտածեցի, թե զանգի համար են յեկել...

Դուռը բացվում է։ Շրջանապետը կնոջ վերնաշապիկով, յերկփողանի հրացանը ձեռքին դուրս է պրծնում դեպի փոքրիկ հրապարակը, իսկ նրա յետևից յերևում են կնոջ, քենու և աղախնի վախեցած ու քնաթաթախ դեմքերը։



— Ի՞նչ է պատահել։

Կոզոդավը կանգնած էր ձիգ, ձեռքը գլխարկին դրած։ Վենկան բացատրություն էր տալիս։

— Հայրիկ, ես հիմարը քնեքուն ինձ յերևի ավազակի տեղ դրեց։ Իսկ զանգն էլ կտրել են, նա քնած է յեղել։

Ամենքը նայում են դռանը։ Այնտեղ, ուր քիչ առաջ զանգ կար, հիմա յերևում էին կտրված լարերի ծայրերը և մեխերի տեղերը։ Բոլորը նայում են կոզոդավին։ Կոզոդավը մոտենում է դռներին, չի հավատում աչքերին, շոշափում է զանգի տեղը, հետո ուսերը վեր քաշում։ Շրջանապետը թափահարում է նրան՝ օձիքից բռնած։

— Դուրս կորիր, սրիկա։ Քնել ես։

Վենկան ցույց եր տալիս, թե վիրավորված ե ու վրդոված։

— Մայրիկ, ենպես հոգնած եմ որ... Շարունակ պարապում եյի... Ես եր պակաս...

Ե՞հ, արդեն ընտանեկան տեսարաններ են սկսվում. համբույրներ, գրկախառնում, մի խոսքով այս գլխի վերջավորությունը։

Վենկինի վերարկուի գրպանից կախ եյին ընկած կտրված լարերը, և համառորեն փայլում եր զանգակոճակը։

## ՓԱՐԱՎՈՆԸ ԿԱՆՉՈՒՄ Ե ՀՈՎՍԵՓԻՆ

Թաղական վոստիկանապետն ասաց Կոզոդավլին.

— Անպատճառ պետք ե բռնել եդ զանգ կտրողներին։ Իմացա՞ր։ Գրողը տանի քեզ, ամբողջ քաղաքում խայտառակվեցինք։ Յեթե բռնեցիր, հիսուն ռուբլի նվեր կստանաս, իսկ յեթե վոչ, արտաքնոցի առաջը քաշ կգաս ու կհսկես։

Փարավոնը յեռանդով սկսեց իր հետախուզությունը։ Նա անցնում եր շուկայով։ Վոչ թե անցնում եր, այլ լողում եր։ Ուսադիրների կարմիր թելերը վեր-վեր եյին թռչում նրա դյուցազնական ուսերին, ինչպես թիակներ՝ շուկայի մարդկային ծովում։ Շուկայում Կոզոդավը պատահեց Կոստիա Գոնչարին, շլմանի յերջանիկ մարդուն, նախշուն Կոստիային։ Կոստիան ծննդյան տոնածառի պես զարդարված թափառում եր շուկայում։ Նրա փորի վրա յերկու նոր մասունքներ եյին ճառագայթում «Յեռանկյունի» *) կրկնակոշկի հայտարարությունը և... մի մեծ ծաղկենկար շրջանակ

*) «Յեռանկյունին» ցարական Ռուսաստանում հայտնի ռետինի գործարանի անունն եր։



զանգի կոճակով։ Փարավոնը տեսնելով զանգը, շտապեց դեպի Կոստիան։ Նա խոստացավ Կոստիային նվիրել կարմիր ուսադիրներ, վոսկեզոծ բոժոժներ և



ուրիշ ինչ ել վոր ուզենա, յեթե միայն ասի, թե վորտեղից ե վերցրել այդ զանգը։ Կոստիան ժպտալով պատմեց ամեն ինչ։ Պատմեց, թե ինչպես ե գողացել զանգը Ռեկրուտի Թախտի տակից։

— Ռեկրուտը պահել էր, յես մի քիչ կատակ արի և վերցրի... Ո՜հ, այնտեղ այնքան կա... Տասը, քսան... ելի՜... ելի՜...

Կոզոզավը խոստացավ ելի ուրիշ հազար ու մի փայլուն իրեր։ Կոստիան բերեց նրա համար «Կռիվ ու վրեժխնդրություն» «Մանիֆեստի» մի պատռված կտորը։ Ղեկավարներն արդեն նրա ձեռքումն էյին։ Վորպեսզի բռնի նաև մնացածներին, փարավոնը վճռեց Յոսկային գայթակղեցնել։ Նա գնաց շախման և նըստեց Յոսկայի թախտի վրա ու դիպլոմատիկ ձևով հազաց։

— Ե՜, պարոն ավագ վոստիկան,— վողջունեց նրան Յոսկան, դուք ինձ հետ գործ ունեք։ Ի՞նչ եք կամենում, պատրաստ եմ։

Փարավոնն ավելի մոտեցավ, նայեց շուրջը և արմունկով կողքին խթեց։

— Ո՜հ, Յոսկա, ինչպես տեսնում եմ, շատ խորամանկն ես։ Հապա մի պատմիր, թե Ռեկրուտի հետ ինչպես էյիք զանգերը կտրում։ Յես վոչ վոքի վոչինչ չեմ ասի։ Ուզում եմ լսել։ Դե՜հ, ավելորդ է նազ անելը։

— Յես ձեզ ամենևին չեմ հասկանում,— ասաց Յոսկան հանգիստ ու զարմացած դեմքով։— Թեպետև յես Հովսեփն եմ, իսկ դուք փարավոնը, բայց և այնպես չեմ կարողանում հասկանալ, թե ինչ յերազ եք տեսել։

Կոզոզավը հանեց քսակը և ծիածանագույն թղթերը խշխշացրեց։ Յոսկան հանգիստ շարունակեց.

— Թող վիրավորանք չհամարվի ձեզ համար, յեթե ասեմ, վոր ինձ թվում է, թե դուք, պարոն ավագ վոստիկան, դուք ավագ սրիկա յեք։

Կոզոզավը սպառնաց բռունցքով, դուռը շրխկացրեց և դուրս յեկավ։ Ճանապարհին նա կանգ առավ, հանեց «մանիֆեստը»։ Սկիզբը և վերջը պատռված էր,



բայց դասարանի ավագների ցուցակը մնացել էր։ Կոզոզավը, լավ մտածելուց հետո «մանիֆեստից» կտրեց շրջանապետի վորդու Սարապի անունը։ «Շրջանապետը այս թղթի կտորի համար հնգանոց կտա,— վորոշեց վոստիկանը,— այլապես նրա վորդուն ել կվռնդեն»։ Գլխարկն ուղղելով, փարավոնը գնաց վոստիկանատուն, իսկ այնտեղից ել՝ գիմնազիա դիրեկտորի մոտ։

## ՄԻՋԱՆՑՔՈՒՄ ՔԱՅԼԵՐԻ ՁԱՅՆ

Տաղտկալի քամին սառցնում էր փոսերը, ինչպես պնակի մեջ ածած թեյը։ Հեռախոսի լարերը զընգզընդում էյին։ Ժամի տասին հեռախոսատան ծառայող օրիորդը քամուց զրնգացող լարերով միացրեց թաղական վոստիկանությունը ուսուցչանոցի յետևը գտնվող կանաչ առանձնասենյակի հետ։ Դիրեկտորը, իր առանձնասենյակի պաստառի նման կանաչ ու թելադրության պես դանդաղ ու ձանձրալի շուռ տվեց հեռախոսի բռնակը, հետ ձգվեց բազկաթոռի վրա, վերցրեց հեռախոսափողը և մոտեցրեց ականջին։

— Հա՛,— ասաց նա,— լսում եմ։

Գիմնազիայում դասերը շարունակվում էյին։ Կես ժամից հետո բոլոր դասարաններում լսեցին, որ միջանցքով յերկու հոգի անցան։ Ծանր, անծանոթ ու չարագուշակ քայլեր էյին։ Դրանցից մեկը ոտքերը փոխում էր ծանր ու դանդաղ, կոշիկները ճռճռում էյին։ Մյուսն ամեն մի քայլափոխում մի ինչ որ բանով զնգզնգացնում էր։ Դասարաններում սկսեցին ականջ դնել։ Գլխները բարձրացրին տետրերից, գաղտնի հուշող թղթի կտորներից, սեղանի յերեսի ճեղքերից, արգելված գրքույկներից և թղթախաղի վալետից։ Ականջները սրած, հայացքները գցեցին դռներին։

## ՀԱՆԳՈՒՅՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Յերրորդ դասարանում մաթեմատիկայից գրավոր աշխատանք եյին կատարում։ Միջանցքում ելի լռություն տիրեց։ Գրչածայրերը ճզճզում եյին։ Բինդյուգը խնդրի լուծման ընթացքում ինչ վոր բան շփոթեց. պատասխանը չեր ստացվում։ Իսկ միջանցքում լսվող քայլերի ձայնից նա բոլորովին խելքը կորցրեց։ Սոյոպկա Ատլանտիդայի սիրտն սկսեց բաբախել՝ տեսնելով բարեկամին դժվար վիճակում ու մի փոքրիկ գրություն ուղարկեց.

### «Խոզը չի մատնի, դիրեկտորը չի ուտի»:

Բայց խոզը մատնել եր. դասարանի դուռը բացվեց։ Սեղանների դղրդյունը բարձրացավ։ Ցապ-Ցարապինը ներս մտավ լիրբ-հրճվանքով. ձեռքին խաղացնում եր մի փոքրիկ բանալի։ Սա այն պահարանի բանալին եր, վորի մեջ պահում եյին կոնդուկտը։ Ցապ-Ցարապինը դուրս կանչեց.

— Գավրիա, գնացեք դիրեկտորի մոտ։

Ատլանտիդան շփոթված վեր բարձրացավ նստարանից։ Ցապ-Ցարապինը շտապեցրեց.

— Դե՛հ, շո՛ւտ, շուտ յեկ։ Գրքերդ հետդ տար...

Դասարանը հուզված աղմկեց։ Գրքերը հե՛տը... Ուրեմն բոլորովին։ Ել չի վերադառնա...

Բինդյուգը, կարծես թե գլուխը խոնարհած հարվածի առաջ, սպասում եր, բայց Ցապ-Ցարապինը լուռ եր։ Կոզոդավը՝ վախենալով Բինդյուգի բռունցքներից, նրա անունն ել եր կտրել ցուցակից։

Ատլանտիդան դողդոջյուն ձեռքերով հավաքեց գրքերը, վերցրեց պայուսակը և ուղղվեց դեպի դուռը։ Անցնելիս նա աննկատելի կերպով խողովակաձև կո-



լոլած թուղթ թավեց Բինդյուգին։ Դռան մոտ Ատլանտիդան կանգնեց և ինչ վոր բան եր ուզում ասել, բայց Ցապ-Ցարապինը նրան դռնից դուրս հրեց։ Դասարանում ճնշող լռություն եր տիրում։ Մաթեմատիկայի ուսուցիչը նյարդայնորեն սրբում եր ակնոցների քրտնած ապակիները...

Բինդյուգը Ատլանտիդայի տված թուղթը հարթեց. թղթի վրա գրված եր խնդրի ամբողջ լուծումը, վոր չեր կարողանում նա լուծել։ Սոյոպկան վերջին րոպեյին էլ չմոռացավ ընկերոջը, ոգնեց նրան։ Մի րոպե Բինդյուգը նստած եր անշարժ, գլուխը կախ գցած և աչքերը հառած մի կետի. Հետո հանկարծ վեր կացավ, որորվեց նստարանի առաջ, իր ամբողջ լայն կրծքով ոդ ներս շնչեց և վճռական ձայնով ասաց.

— Կարելի՞ յե դուրս գնալ։

— Դասը վերջանալուն տաս րոպե յե մնացել,— ասաց ուսուցիչը։

— Կարելի՞ յե դուրս գնալ,—համառորեն արտաշնչեց Բինդյուգը ու քայլեց դեպի միջանցքը։

— Գնա, յեթե այդքան շատ նեղվում եք։ Գնացեք։

Ճնշված դասարանը տեսավ, վոր Բինդյուգը հավաքեց գրքերը, շտապով ճխտեց պայուսակի մեջ և բեռնավորված ուղղվեց դեպի դուռը։ Անսովոր լռություն տիրեց յերրորդ դասարանում։

Վոչ մի կողմ չնայելով, Բինդյուգը դուրս յեկավ միջանցք. Դատարկ միջանցքում նա իրեն զգաց փոքրացած ու դատապարտված։ Յեվ նա լսեց, թե ինչպես դռան յետևը սարսափելի լռության մեջ թողած դասարանում սուր հրհռոց բարձրացավ, տարածվեց նստարանների, թանաքամանների, ամբիոնի վրա և վերջը փոխվեց խեղդող վռնոցի։ Պատճառը առաջին նստարանի վրա նստող փոքրիկ Պետկա Յաչմեննին

ներ, որ չկարողանալով տանել, բռնվել էր հիստերիկայով... Բինդյուգը ուսերը ձգեց և քայլեց դեպի դիրեկտորի առանձնասենյակը։

## ՈՒԹԸ

Կոզողավը մրթմրթում էր։ Մրթմրթում էր և մատով ցույց տալիս առջևը կանգնած գիմնազիստներին։

— Այո, ճիշտ այդպես։ Այ, սա Սվիշչն է. իսկ սա Ատալանտիդան։ Դրանց մականուններն են։

Մի ուրիշն աթոռի մեջքին հենված, կրնգացնում էր կոշկախթանները, որորվում և վոլորում սև փոքրիկ բեխերը։

— Այդպե՛ս ուրեմն, այդպե՛ս... Լա՛վ գաղտնի կազմակերպություն է... Այդպե՛ս ուրեմն, յերիտասարդներ։

Յոթ հոգի կանգնած եյին սեղանի առաջը. միայն յոթ հոգի, վորովհետև վարչապետի վորդին չկար նրանց մեջ։ Տխրության և հուսահատության կնիքը տպավորվել էր նրանց դեմքերին։

— Լա՛վ. Շատ բարի,— ասաց դիրեկտորը խիստ ու չոր ձայնով, կարծես փայտի կտոր ճաքեց,— շնորհակալ եմ ձեզանից։ Եհ, զզվելի յերեխաներ, ինչ ունեք ասելու։ Ամո՛թ, խայտառակությո՛ւն, անպատվությո՛ւն։ Եվ ո՞վ կար ձեզ հետ։ Ձե՞ք ասում, զզվելի գարշելի յերեխաներ։ Ձեզ բոլորիդ կարձակենք գիմնազիայից, դուք արատավորում եք դպրոցի դերը։ Խոսելն ավելորդ է. ուղարկեցեք այստեղ ձեր ծնողներին. շատ եմ խղճում նրանց։ Շատ մեծ վիշտ է ծնողական սրտի համար այսպիսի զավակներ ունենալը։

Յոթ հոգին էլ աչքերը վեր բարձրացրին և ծանր հառաչեցին։ Ծնողները... Այո... Շուտով տանը կտեսնեն մայրական արցունքներ։ Հայհոյանք։ Հայրը դըրը-



դյունով աթոռը հետ կքաշի։ Գուցե և ապտակ էլ կհասցնի։ Ճաշը կսառչի։ «Ջրկիր կդառնաս, էշ...» Առաջներս պարապ. որեր են գալիս։

Հրեյից թագավորը կոպիտ կերպով ասաց.

— Յուվենալ Բուղդանիչ, լավ է մեր ծնողներին չխառնենք.

— Լռիր, զզվելի յերեխա։ Ուզում ես պարսավատո՞մս ունենալ, ինչ է։

Այդ միջոցին ներս մտավ Բինդյուգը. նա հենվեց սեղանի ծայրին. սեղանը ճռճռաց։ Բինդյուգը ծանր-ծանր շարժելով ծնոտները հանգիստ հայտնեց։

— Յյուվենալ Բուղդանիչ, յես էլ դրանցից եմ... Յես դրանց ղեկավարն եմ

— Ե՛հ, լավ։ Կարող ես քեզ ազատ համարել։ Դու էլ ես արձակված։

Հանդերձարանում ութ վերարկու պակասեց։ Ութը հոգի առաջ եյին գնում հրապարակով ցեխի մեջ թաղվելով, պայուսակների ու դժբախտության ծանրության տակ կռացած։

Վերջին անգամ նայեցին գիմնազիայի կողմը, և դրանցից մեկը, Բինդյուգը, վորին դասարանի պատուհանից տեսան, բարկացած սպառնաց բռունցքով։ Դասարաններում ամենքն էլ, ովքեր տեսան դրանց, ուզում եյին աղաղակել, բռունցքներով սեղանները կոտրատել, ամբիոնը շուռ տալ, հասնել գնացողների յետևից... Բայց դասարաններում նստած եյին գիմնազիստները, իսկ գիմնազիստներն իրավունք չունեյին աղաղակել և ընկերներ լինել, քանի դեռ այդ թույլտվությունը չեր տվել զանգը, վոր չափում է ազատության բաժինը։

Գրչածայրերը ճզճզում եյին ու թանաքը շաղ տալիս։

ծեր, վոր չկարողանալով տանել, բռնվել էր հիստերիկայով... Բինդյուգը ուսերը ձգեց և քայլեց դեպի դիրեկտորի առանձնասենյակը։

## ՈՒԹԸ

Կոզոդավը մրթմրթում էր։ Մրթմրթում էր և մատով ցույց տալիս առջևը կանգնած գիմնազիստներին։

— Այո, ճիշտ այդպես։ Այ, սա Սվիշչն է. իսկ սա Սալանտիդան։ Դրանց մականուններն են։

Մի ուրիշն աթոռի մեջքին հենված, պրնգացնում էր կոշկախիթանները, որորվում և վոլորում սև փոքրիկ բեխերը։

— Այդպե՛ս ուրեմն, այդպե՛ս... Լա՛վ գաղտնի կազմակերպություն է... Այդպե՛ս ուրեմն, յերիտասարդներ։

Յոթ հոգի կանգնած էյին սեղանի առաջը. միայն յոթ հոգի, վորովհետև վարչապետի վորդին չկար նրանց մեջ։ Տխրության և հուսահատության կնիքը տպավորվել էր նրանց դեմքերին։

— Լա՛վ. Շատ բարի,—ասաց դիրեկտորը խիստ ու չոր ձայնով, կարծես փայտի կտոր ճաքեց,—շնորհակալ եմ ձեզանից։ Ե՞հ, զզվելի յերեխաներ, ի՞նչ ունեք ասելու։ Ամո՛թ, խայտառակությո՛ւն, անպատվությո՛ւն։ Ել ո՞վ կար ձեզ հետ։ Ձե՞ք ասում, զզվելի գարշելի յերեխաներ։ Ձեզ բոլորիդ կարձակենք գիմնազիայից, դուք արատավորում եք դպրոցի գերբը։ Խոսելն ավելորդ է. ուղարկեցեք այստեղ ձեր ծնողներին. շատ եմ խղճում նրանց։ Շատ մեծ վիշտ է ծնողական սրտի համար այսպիսի զավակներ ունենալը։

Յոթ հոգին էլ աչքերը վեր բարձրացրին և ծանր հառաչեցին։ Ծնողները... Այո... Շուտով տանը կտեսնեն մայրական արցունքներ։ Հայհոյանք։ Հայրը դղր-



դյունով աթոռը հետ կքաշի։ Գուցե և ապտակ էլ կհասցնի։ Ճաշը կսառչի։ «Զրկիր կդառնաս, էշ...» Առաջներս պարապ. որեր են գալիս։

Հրեյից թագավորը կոպիտ կերպով ասաց.

— Յուվենալ Բուդդանիչ, լավ է մեր ծնողներին չխառնենք.

— Լռի՛ր, զզվե՛լի յերեխա։ Ուզում ես պարսավատո՞ւմս ունենալ, ինչ է։

Այդ միջոցին ներս մտավ Բինդյուգը. նա հենվեց սեղանի ծայրին. սեղանը ճռճռաց։ Բինդյուգը ծանր-ծանր շարժելով ծնոտները հանգիստ հայտնեց։

— Յյուվենալ Բուդդանիչ, յես էլ դրանցից եմ... Յես դրանց ղեկավարն եմ

— Ե՞հ, լավ։ Կարող ես քեզ ազատ համարել։ Դու էլ ես արձակված։

Հանդերձարանում ութ վերարկու պակասեց։ Ութը հոգի առաջ էյին գնում հրապարակով ցեխի մեջ թաղվելով, պայուսակների ու դժբախտության ծանրության տակ կռացած։

Վերջին անգամ նայեցին գիմնազիայի կողմը, և դրանցից մեկը, Բինդյուգը, վորին դասարանի պատուհանից տեսան, բարկացած սպառնաց բռունցքով։ Դասարաններում ամենքն էլ, ովքեր տեսան դրանց, ուզում էյին ազատվել, բռունցքներով սեղանները կոտրատել, ամբիոնը շուռ տալ, հասնել գնացողների յետևից... Բայց դասարաններում նստած էյին գիմնազիստները, իսկ գիմնազիստներն իրավունք չունեյին ազատվել և ընկերներ լինել, քանի դեռ այդ թույլտվությունը չէր տվել զանգը, վոր չափում է ազատության բաժինը։

Գրչածայրերը ճզճզում էյին ու թանաքը շաղ տալիս։

Հինգերորդ դասի կեսին լուրջ Յոսկան մտավ լուռ միջանցքը։ Ծառան, Մոկեյիչը սղոցվածքով սրբում էր հատակը։ Յոսկան քաղաքավարի բարևեց և շողոքորթելով ասաց.

— Պարոն ավագ դռնապահ, շատ եմ ուզում պարոն դիրեկտորին տեսնել։ Մահվան և կյանքի խնդիր կա։

Դիրեկտորը Յոսկային ընդունեց ուսուցչանոցում. նա շտապում էր։

— Եհ, ինչ եք կամենում... Հը՜-հը՜... խնդրում եմ ինձ յերկար չզբաղեցնեք։

— Պարոն բարձրագույն դիրեկտոր,— սկսեց Յոսկան,— յես հին թափառական հրյան եմ, և ընտանեկան յերջանկություն եմ տեսնում ձեր դեմքին։ Գրազ կգամ, վոր ձեր յերեխաները յերբեք մերկ ու բոբիկ ման չեն գա։

— Կարճ կտրեցեք,— չոր կերպով ընդհատեց դիրեկտորը,— յես յերեխաներ չունեմ, և բացի դրանից ժամանակ չունեմ...

— Բայց և այնպես մի վարկյան սպասեցեք, պարոն դիրեկտոր։ Դուք այսոր ութ տղա յեք արձակել։ Ինչու՞ համար եք արձակել նրանց, հարցնում եմ ձեզ։ Իսկ յես իրավունք ունե՞մ հարցնելու։ Վո՜չ։ Յեվ հազար անգամ վոչ։ Բայց յես շատ փափուկ սիրտ ունեմ։ Իսկ մարդ յեթե փափուկ սիրտ ունի, լռել չի կարող։ Յես շատ եմ խղճում այդ յերեխաներին, բայց ավելի շատ խղճում եմ նրանց ծնողներին, վորոնք պահել, մեծացրել են այդ յերեխաներին։ Պարոն դիրեկտոր, դուք յերեխաներ չունեք, աստված տա, վոր ունենաք։ Դուք չգիտեք, թե ինչպիսի վիշտ է,— ո՜հ-ո՜հ-ո՜հ, յերբ ձեր յերեխան գալիս է և...



— Բավական է,— տեղից վեր կացավ դիրեկտորը,— ապարդյուն խոսակցություն է։ Փողոց դուրս գալու ճանապարհը, այ, այն դուռն է։

— Մի կարճ րոպե էլ,— աղաչակեց Յոսկան, բռնելով դիրեկտորի թևը։— Իսկ դուք գիտեք, վոր այդ անիծված զանգերը կտրտել են ձեր բոլոր յերեխաները։ Քանի՞ հոգի յեն սովորում բոլորն այստեղ։

— Մինչև այսոր սովորում եյին յերկու հարյուր յոթանասուն հոգի,— մեքենայորեն պատասխանեց դիրեկտորը։

— Դրանցից ամենաքիչը յերկու հարյուր վաթսուն հոգին կտրտել են զանգերը։ Հապա ինչ ունեք ասելու այս մասին։ Իսկ յեթե ասեմ, վոր ձեր լավագույն աշակերտը, պարոն շրջանապետի վորդին, աստված նրան առողջություն տա, կտրտել է, և շատերից ավելի լա՛վ է կտրտել։ Վոստիկանությունը ձեզ միայն մի մասն է ցույց տվել։

Յեվ Յոսկան հանեց լրիվ «մանիֆեստը» ու ցույց տվեց դիրեկտորին։ Դիրեկտորը գունատվեց։ Բոլոր ութ դասարանի ստորագրությունն էլ «մանիֆեստի» տակ կար։ Դիրեկտորը գգվելով ձեռքը մեկնեց Յոսկային։

— Նստեցեք... Խնդրում եմ...

Այդ ժամանակ Յոսկան առաջարկեց իր ծրագիրը։ Յերեխաներին պետք է նորից ընդունել գիմնազիա։ Վոստիկանությունը խուզարկում է շալմանը և գտնում է զանգերը։ Ռեկրուտ Աֆոնացին առժամանակ թագնվում է։ Նրա հետ արդեն պայմանագրություն կա։ Ամենքն էլ կկարծեն, թե զանգերը կտրտել են շալմանի դատարկաշրջիկները. այսպիսով գիմնազիստները կարդարանան։ Խայտառակությունը կծածկվի։ Իսկ յեթե դիրեկտորը յերեխաներին հետ չընդունի, ամ-

բողջ քաղաքը, ամբողջ նահանգը, ամբողջ ուսումնական շրջանը վաղը կիմանան, թե ինչ կարգեր գոյություն ունեն Պոկրովսկի գիմնազիայում և թե ինչ վարկի տեր են շրջանի պետերի յերեխաները...

— Լավ, — ստիպված ասաց դիրեկտորը, — նրանց հետ կընդունենք. միայն թե կոնդուիտ կմտցնենք։

Յեվ նա հանեց քսակը։

— Վո՞րքան պետք է վճարեմ սրա համար, — հարցրեց դիրեկտորը, — սրա համար և էլի նրա համար, վոր յոթ։ Յոսկան վեր թռավ։ Յոսկան կռացավ սեղանի վրա։ Յոսկան ասաց.

— Պարո՛ն դիրեկտոր։ Դուք ինձ վճարելու ոչինչ չունեք, պարոն դիրեկտոր... Բայց յերդվում եմ մորս հիշատակով, հավերժ հանգիստ նրա վոսկորներին, վոր կգա այնպիսի ժամանակ, վոր ձեզ կվճարեն և՛ յես, և մենք, և այն ութ հոգին, վոր գնացին վռնդված շների պես... և կվճարեն լավ տոկոսներով։

Ահա այսպես է վերջանում Ռեկրուտ Աֆոնացու մասին յեղած ավանդությունը։

## ԿՌՈՒՆԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԱՊՆԵՐԸ

Զանգերի խայտառակ պատմությունից հետո կարծես թե գիմնազիան առժամանակ քիչ խաղաղվեց։ Քիթ ու պռունգ արնոտելը, գողությունները, տուրուդմփոցները քչացել էին։ Բայց գիմնազիայում ռեժիմն ավելի յեր խստացել։ Ցապ-Ցարապինն ամեն անգամ կոնդուիտի պահարանը բանալիս ցնցում էր անտիկ գեղարվեստի գիպսե հիմքերը և անհանգստացնում տարիքով Վեներային։

Խիստ կերպով արգելված էր կայարանի առաջն ու ժողովրդական այգում զբոսնելը։ Միօրինակ ձանձրալի տաղտկությունն որեցոր քամվում էր մեր որատետրերի



մեջ էջ առ էջ։ Ուսուցիչները կատաղել էին։ Դասերի ժամանակ պատժվածները շարքերով կանգնում էին պատի առաջ։ Ցուցակներում քթավոր միավորների սյունակները շարվում էին աշնան կռունկների պես։ Կարապների պես լողում էին յերկուսները։

## ՅԵՐԵՔ „Ե“ ՅԵՎ „ՏԱՐԱԿԱՆԻՈՒՍ“

Առանձնապես յեռանդուն կերպով կռունկներ ու կարապներ էր բազմացնում լատիներեն լեզվի ուսուցիչ Բենիամին Վիտալիյեվիչ Պուստինինը, վորին վեր ցցված վիլհելմյան բեխերի համար «Տարականի Ուս» էին անվանում, կամ լատինացրած — «Տարականիուս»*։

Նա մի ուրիշ մականուն էլ ուներ, վոր շատ տարածված էր մեր դասարանում, ասում էին «Դլիննոշեեե»**։

Տարականիուսը շատ նիհար էր, քնթեղ և նման էր միավորի։ Նրա վիզը շատ յերկար էր, ուղտի վզի պես որորվում էր ոսլայած սուր անկյունավոր ոձիքի միջից։ Մի անգամ Գավրիլան ուզեց դասի ժամանակ դասարանը ծիծաղեցնել, և Տարականիուսին հարցրեց.

— Բենիամին Վիտալիչ, թեպետ այժմ ռուսաց լեզվի դաս չէ, բայց խնդրում եմ բացատրեցեք, կա՞ արդյոք այնպիսի բառ, վոր վերջանա յերեք «ե» ով։

— Կա՛, կա՛, — պատասխանեց Տարականիուսը, առանց վորևե կասկած տանելու, — դլիննոշեեե բառը...

Դասարանը փոթկաց։ Գավրիլան նպատակին հասած, նստեց տեղը։ Այդ օրվանից Տարականիուսը դասարանում ու ամեն տեղ տեսնում էր յերեք հսկայական «ե» տառերը։ Տեսնում էր գրատախտակի վրա, ամբիոնի, իր աթոռի նստատեղի, բնակարանի դռան

* Տարականը հոթխուն է, տարականի ուս — հոթխունի բեխ։
** Յերկարավիզ։

վրա, մուշտակի մեջքին։ Ջնջում էյին այդ տառերը, բայց հետևյալ օրն էլի նորից յերևում էյին։

Տարականխուսը գունատվում էր, նիհարում և միավորներ շարում տետրակներում և օրատետրերում։



Նա առանձնապես սիրում էր փոքրիկ տետրակներ, վորոնց մեջ գրում էյինք լատիներեն բառերը։ Յերբ դասի ժամանակ աշակերտին դուրս էր կանչում, նա ամեն անգամ էլ պահանջում էր, վոր այդ փոքրիկ տետրակը ձեռքին ունենա։

— Հմ-մ,—ասում էր նա,—տեսնում եմ, վոր դասդ յուրացրել ես. հապա մի տուր տետրակդ։ Տեսնեմ ինչ ես արել... Ի՞նչ. մոռացել ես տանը, թողե՞լ։ Յեվ համարձակվեցիր առանց տետրի դուրս գալ ինձ դաս պատասխանե՞լ։ Նստի՛ր։ Միավո՛ր։

Վոչ մի խնդիր, վոչ մի աղաչանք չէր ազատում միավորից։

Մեր դասարանում կային յերկու աշակերտ. Ալեքսեյենկոն և Ալեֆերենկոն։ Մեկ անգամ Ալեքսեյեն-



կոն մոռացել էր տխրահռչակ տետրակը։ Տարականխուսը մտավ դասարան, բարձրացավ ամբիոն, ակնոցները դրեց քթին և ցած ձայնով կանչեց.

— Ալե...ֆերենկո։

Ալեֆերենկոն, վոր նստած էր Ալեքսեյենկոյի յետևը, մոտեցավ ամբիոնին։ Ալեքսեյենկոն, վորին վախից թվաց թե իրեն են կանչում, վեր թռավ և բամբ ձայնով ասաց վհատված.

— Յես տետրս մոռացել եմ, Բենիամին Վիտալիչ... Խոսքը բերանում... սարսափից քար կտրեց։ Ամբիոնին մոտենում էր Ալեֆերենկոն...

— Այ հիմար... Անունները խառնեց...

Տարականխուսը գրիչը անվրդով թաթախեց թանաքի մեջ։

— Հա՛, իսկապես յես քեզ չկանչեցի, այլ Ալեֆերենկոյին. բայց քանի վոր ինքդ խոստովանվում ես, ստացիր ըստ արժանույն։

Յեվ նրան միավոր դրեց։

## ՊԱՏՄԱԿԱՆ ԳՎԱՐԴԻԱՆ

Զանգը խփեցին։ Դասամիջոցը վերջացավ։ Դասարանում աղմուկը դադարեց։

Գա՛լիս է։

Բոլորն էլ միասին մի անգամից վեր թռան նստարաններից։

Մտնում է պատմաբանը։ Բաց խարտյաշ փափուկ մազերը սանրված են մեջ տեղից։ Նիհար է, շատ յերիտասարդ, գունատ դեմքով։ Խոշոր կապույտ աչքեր ունի։ Գլուխը քնքշորեն թեթև թեքում է մի կողքի վրա։ Օձիքը փայլում է սպիտակությունից։ Կիրիլ Միխայիլովիչ Ուխովը մրրկի պես դասարան է սլա-

նում և դասարանական մատյանը շպրտում ամբիոնի վրա։ Դասարանը վոտքի յե կանգնած։

Կիրիլ Միխայլովիչը նայում է դասարանին, արագ ամբիոն բարձրանում, նստում ծալապատիկ։ Հանկարծ կապույտ աչքերը փայլատակում են։ Բարձր ձայնով ճչում է

— Եղ ո՞վ եր... այդտե՞ղ... համարձակվե՞ց.. Նստե՛լ։ Յես դեռ չեմ ասել... «Նստեցեք»... Վե՛ր կացեք և կանգնեցեք։ Ե՛յ, դուք այդտե՞ղ։ Դուք ե՛լ։ Դուք ե՛լ։ Անպիտաններ։ Մնացածները նստեն։ Ձեռներդ սեղանների վրա։ Յերկուսը միասին։ Ո՞ւր է ձեռքդ։ Վեր կացեք և կանգնեցեք։ Իսկ դուք կանգնեցե՛ք պատի մոտ։ Ուղի՛ղ։ Դե՛հ... Լռությո՛ւն։ Ո՞վ է այդտեղ ճռռում։ Շայֆե՞րովը։ Վերկացեք և կանգնեցեք։ Ձայն չլինի։

Տասնչորս հոգի կանգնած են ամբողջ դասի ընթացքում։ Պատմաբանը պատմում է հին թագավորների և թագակիր ձիերի մասին։ Ամեն րոպե ուղղում է փոխկապը, մազերը, ոսլայած բազպանները։ Ձախ թևի բազպանի տակից փայլում է վոսկե ապարանջան, վորն ինչ վոր մի առասպելական յերկրպագու կնոջ նվեր է։

Տասնչորս հոգի կանգնած են։ Դասը շատ ձանձրալի ու յերկար է թվում։ Վոտներից ջուր է կաթում։ Վերջապես ուսուցիչը նայում է ժամացույցին։ Զրըխկում է ժամացույցի վոսկե կափարիչը։ Կանգնածներն անհամարձակ հազում են։

— Մրսեցի՞ք,--հոգատար կերպով հարցնում է պատմաբանը։—Հերթապա՛հ, փակեցեք բոլոր ոդանցքները. քամի յե փչում։

Հերթապահը փակում է բոլոր ոդանցքները։ Դասը շարունակվում է։ Պատժվածները կանգնած են կամ



մեկ կամ մյուս վոտքի վրա։ Ելի մի յերկու անգամ ժամացույցին նայելուց հետո, պատմաբանը հանկարծ ասում է.

— Ե՛հ, գվարդիա, նստեցեք...

Սովորաբար այսպիսի դեպքերում ուղիղ մեկ րոպեյից հետո զանգը տալիս եյին։

## ԹԱՓԱՌՈՂ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԵՋՏԵՂԸ

Մեր ֆրանսուհու անուն-ազգանունը Մատրյոնա Մարտինովնա Բադեյկինա յեր. բայց նա պահանջում եր վոր իրեն ասենք Մատրոնա կամ Մատրոնա Մարտինովնա։ Մենք չեյինք հակառակում։

Մինչև յերրորդ դասարան նա մեզ անվանում եր, «ճուտիկներ»։ Յերրորդից մինչև վեցերորդ դասարանը՝ «աղամնյակներ»։ իսկ հետո արդեն «պարոններ»։ Ճուտիկներից նա պարզապես վախենում եր։ Ճուտիկներից մի քանիսն աղբածակի առաջ բսած քոլախոտի պես թավ բեխեր ունեյին, իսկ նրանց բամբ ձայնն այնքան կոպիտ եր, վոր փողոցում վախենում եյին ուղտերը և հենց ինքը փարավոն Կոզոդավը։ Բացի դրանից, յերբ դաս եյին պատասխանում ամբիոնի մոտ, ճուտիկներից այնպիսի ծխախոտի հոտ եր գալիս, վոր քիչ եր մնում խեղճ Մատրյոնի սիրտը խառներ։

— Հեռո՛ւ կանգնեցեք,—ճղճղում եր նա--պարդոն, ձեզանից հոտ է գալիս։

— Մորմով կարկանդակ եմ կերել,—քաղաքավարի բացատրում եր ճուտիկը,—բղկալուցս է հոտ գալիս։

Ա՛խ, մոն դյո՛, ինչ մորմով կարկանդակ, ձեզանից ամբողջապես ծխախոտի հոտ է գալիս։

— Ի՞նչ եք ասում Մատրյո... փո՛ւհ, Մատրյոնա Մարտինովնա, յես ծխող չեմ։ Յեվ հետո խնդրում եմ... պի-իժկլիտե լա կլասս։

Մատրյոնան այսպիսի դեպքերում հիանում էր։ Բավական էր ֆրանսերեն թույլտվություն խնդրեյիր դուրս գնալու համար, Մատրյոնան յերջանկությունից թուլանում էր։ Բայց ընդհանրապես նա, ինչպես վոր մենք էյինք կարծում, խիստ դյուրազգաց էր։ Յեթե ֆրանսերեն լեզվով մի կեղտոտ բան էյինք գրում գրատախտակի վրա կամ շորը մեխում ամբիոնից, կամ սատկած մուկ խցկում թանաքամանի մեջ, կամ թե նման մի ուրիշ կատակ անում, նա իսկույն վիրավորվում էր։ Նկատողություն էր գրում մատյանում, վիրավորվում, ձեռքերով ծածկում յերեսը և նստում ամբիոնի վրա։

Լուռ նստում էր։

Մենք էլ էյինք լռում։

Հետո Բինդյուգի հրամանով նստարաններն սկսում էյին կիսաշրջանաձև դանդաղորեն առաջ գալ դեպի ամբիոնը։ Մենք կարողանում էյինք շատ ճարպիկ կերպով շրջել նստարաններով. ծնկներս դեմ էյինք տալիս նստարանի գլխացին, իսկ վոտքերս հատակին։ Յերբ ամբողջ դասարանն արդեն ամբիոնի մոտ էր լինում, սկսում էյին



խմբով կամաց խոսել ու սարսափելի ծամածռություններ անել.

— Ժե-վու-զեմ... ժե-վու-զեմ... ժե-վու-զեմ...

Մատրյոնա Մարտինովնան աչքերը բաց էր անում և իրեն տեսնում շրջապատված ամեն կողմից մոտ յեկած նստարաններով։ Իսկ Բինդյուգը վեր էր կենում և իր բամբ ձայնով սրտաշարժ ու վայելուչ կերպով ասում.

— Հիմա արդեն դուք մեզ պարդոն, Մատրյոնա Մարտինովնա։ Մի բարկանաք ձեր ճուտիկների վրա... Ջնջեցեք մատյանում, թե չէ չենք թողնի...

Մատրյոնան խղճում էր և ջնջում։

Դասարանը նստարանների վրա հաղթական թըմբկահարություն էր կատարում։ «Կամչատկան» նահանջի յեղանակ էր նվագում։ Նստարանները նահանջում էյին։

Շուտով արդեն ձանձրացանք մեր «ֆրանգելի» հետ ունեցած սիրո բացատրություններից, և «Ժե-վու-զեմ»-ի փոխարեն սկսեցինք գործածել «Նովոուզենսկ»։ Ժե-վու-զեմ և Նովոուզենսկ բառերն իրար շատ նման են։ Յեթե խմբով ասենք, դժվար է տարբերել։ Յեվ խեղճ Մատրյոնան շարունակ յերևակայում էր, թե մենք խմբով սիրում ենք նրան, այն ինչ մենք կրկնում էյինք մոտիկ գտնվող մի քաղաքի անունը։

Սեղանները շարժելու արհեստում մենք շատ մեծ հաջողությունների հասանք։ Որինակ նկարչության դասերին դասարանը լիքն էր լինում թափառող նստարաններով։ Իսկ Ստյոպկա Գավրիլան, վորի մականունը Ատլանտիդա յեր, մեկ անգամ օգտվելով աղմուկից, հնար գտավ մինչև անգամ դուրս գնալ նստարանով։ Հինգ րոպե հետո ելի նույն ճանապարհով հաղթական ձևով ներս մտավ դասարան և նկարչու-



թյան ապշած ուսուցչուհուն բացատրեց, թե ջրանկարի համար ջուր բերելու յեր գնացել։ Իսկ ջրի ամանը, ինչպես նա բացատրում եր, պինդ կախված ե նստարանից, այդ պատճառով ել առանց նստարանի չեր կարող ջրի գնալ...

Մեր այս «շարժողություններով» զվարճությունը վողբալի վախճան ունեցավ։ Նստարաններից հետո ճանապարհորդելու տենդով բռնվեցին և ուրիշ առարկաներ։ Այսպես օրինակ մի անգամ միջանցքով ճանապարհորդեց մեծ պահարանը, ուսուցչանոցից գնացին Ցապ-Ցարապկինի կրկնակոշիկները։ Յեվ յերբ մի անգամ ել դասի ժամանակ ամբիոնը ծառս յեղավ և թռավ, վորի վրա բազմած եր «Ֆրանգել» Մատրյոնան, իսկ տակը նստած եր Բինդյուգն իր ընկերոջ հետ, այդ ժամանակ սեղանախաղի գործին խառնվեց դիրեկտորի վոգին և հերոսները մտան կոնդուիտ։ Ամբողջ դասարանն ել յերկու ժամ նստած եր առանց ճաշի։

## ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏՈՆ

Առավոտվանից պատուհանից յերևում եր սպիտակ, կապույտ ու կարմիր գույներից կազմված փողփողացող դրոշակը։

Որացույցի մեջ կարմիր տառերով գրված ե.

«Անվանակոչություն Նորին Մեծության...»

Պողոս-Պետրոս յեկեղեցու առաջ կախված ե աղմկող զանգը.

— Ան-դրո՜ն... Ան-դրո՜ն... Ան-դրո՜ն...

— Տի-լի-լի՜նկ փոքրիկ... տի-լի-լի՜նկ փոքրիկ...

Տասնմեկին մոտ գնում ենք գիմնազիա։

Մաղթանք կա։

Միջանցքում զույգ-զույգ կանգնած են դասարանի աշակերտները։ Մեր համազգեստների արծաթերից

կոշտ ոձիքները քերում են վիզներս։ Լռություն է։ Խնկի հոտը կանգնել է։ Օդը ծանրացել է։ Տեր հայրը, որ կրոնի դասերին ավետարանի կազմով խփում է գիմնազիստների գլխին և ասում «կանգնիր փայտի պես, տխմա՛ր», այսօր փառահեղ շուրջառով շատ հանդիսավոր կերպով քթում յերգում է։ Խումբը յերգում է։ Մի մազակալած փոքրիկ ռեգենտ անհանգիստ այս ու այն կողմն է վազվզում։

Յերկու ժամ ձիգ կանգնած ենք։

Դասարանները կանգնած են անշարժ։

Քիթները քոր է գալիս։

Չի կարելի քորել։ Ձեռքերը պետք է բռնել ուղիղ ու ձիգ։ Լռություն է։ Շոգ է. դժվար է շնչել...

— «Յերկար կյա՛նք։ Յեր-կա՛ր կյանք...։»

— Նիկոլայ Իլյիչ... Բոժենովի սիրտը խառնում է...

— Մ՛-մ՛-մ՛... կամաց։ Յես դրան կխփռնե՛մ...

— Յերկար կյա-ա՛-նք։

— Նիկոլա՛յ Իլյիչ... ասված է վկա, նա չի կարող դիմանալ... Նա արդեն սիրտը թափում է։

— Մ՛-մ՛-մ՛։

Լռություն է։ Օդը ծանր է։ Քիթը քոր է գալիս։ Կարգապահություն։ Ձեռները ուղիղ ու ձիգ։ Ժամի յերկուսը վերջանում է։

— «Տեր, պահյա՛ զկայսր մեր»։

Դիրեկտորն առաջ է անցնում և կարծես յերեխայական տարճանակով կարճ արձակում է։

— Ուռա՛։

— Ուռռռա-ա՛-ա՛-ա՛։

Միջանցքը դողում է։ Դիրեկտորը մեկ էլ է գոռում։

— Ուռա՛

— Ուռռռա՛ա՛ա՛ա՛։



Մեկ էլ... եհ մեկ անգամ, ել՛ մեկ անգամ...

— Ուռա՜ա՜

— Նիկոլայ Ի՛լյիչ, Բոժենովը արդեն փսխում է հատակին։

— ... Տե՛ր, պահյա՛ զկայսր մեր»...

Բոժենովին տանում են։ Ուշագնաց է յեղել։ Մաղթանքը վերջացել է։ Կարելի յե այժմ քիթ քորել և ոձիքի մի կոճակը բաց անել։

## ՑԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

# ՏՈՒԳԱՆՎԱԾ ՔԱՋՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԸ

*Մեր տանը պատերամ տեղի ունի։ Հյուրասենյակը դարձրել ենք պատերազմի դաշտ։ Գերլին տեղավորել ենք մութ նախասենյակում։*

*Ես վորպես ավագ, հարձակում եմ գործում, պաշտպանվելով բազկաթոռով ֆիկուսի ու մրտավարդի թփերով (ռոդոդենդրոնի)։ Փոքրիկ յեղբայրս՝ Ոսկան խրամատ եր մտել սեղանատան շեմքի յետևը։ Նա գոռում ե.*

*— Բում։ Պու... պու... Լեյի՜... Ես քեզ տեսնում եմ ու արդեն յերկու անգամ սպանել եմ... Բայց դու ելի սողում ես։ Արի խաղաղադադար անենք։*

*— Վոչ թե խաղաղադադար, այլ զինադադար, — բարկացած ուղղում եմ յես, — և հետո դու ինձ չես սպանել մինչև մահ, այլ վիրավորել ես, գնդակով ծակել ես ինձ։*

*Նախասենյակում գերիության մեջ տանջվում եր Կլավդյուշկան՝ մեր բակի յերեխաներից մեկը։ Նրան հրավիրել ենք խաղին մասնակցելու հատկապես գերու դեր կատարելու։*

*— Ինձ շուտով կազատեն գերությունից, — յերկ-*



*չոտությամբ հարցնում ե Կլավդյուշկան, վորն արդեն սկսել եր ձանձրանալ մթության մեջ անգործ նստելուց։*

*— Դիմացի՛ր, — պատասխանում եմ անողոք կերպով։ — Թշնամու գերազանց ուժերի ճնշման առաջ մեր քաջարի զորքը կատարյալ կարգապահությամբ նահանջել ե դեպի առաջուց պատրաստված դիրքերը։*

*Այս արտահայտությունը յես վերցրել եյի լրագրերից։ Պատերազմի ճակատից յեկող ամենօրյա հաղորդագրությունները լիքն են գեղեցիկ ու մշուշապատ խոսքերով, վորոնք սքողում են պատերազմական զանազան անախորժությունները, կորուստները, պարտությունները, զորքի փախուստ։ Յեվ այս բոլորը քաղցրահնչյուն և հանդիսավոր կերպով անվանում են պատերազմի դաշտ։*

*«Նիվա»-ի շքեղ պատկերներում պճնամոլ զորքերը նազանքով անց են կացնում գեղարվեստական պատերազմը։ Գեներալների հաղթ ուսերին փռված են վոսկեզօծ ուսադիրներ, իսկ համազգեստի վրա յերեվում են շքանշանների համաստեղությունները։ Որացույցներում, ծխախոտի տուփերի վրա, բաց նամակներում, քաղցրեղենների տուփերի վրա Կոզմա Կրյուչկով քաջ ղազախն անվերջ բազմազան ե դարձնում իր քաջագործությունները։ Կողքանց դրած գլխարկի տակից զանգուրը դուրս հանած, նա հաշիվ ե տեսնում գերմանացիների հեծյալ պահակախմբի, եսկադրոնի, ամբողջ բանակի հետ։ Գիմնազիական մաղթանքների ժամանակ «յերկար կյանք» են ցանկանում աստվածասեր զինվորականության համար։ Մենք գիմնազիստներս, յեռագույն շարֆերով փաթաթված, փողոցներում դաշնակից պետությունների դրոշակներն ենք վաճառում։ «Սպիտակ մարգարտածաղկի» վաճառքից*

ծխացած պղնձե դրամները գլնգում են տուփերում։ Մենք հպարտությամբ ցույց էինք տալիս մեր առավելությունը բարեկամ սպաների համեմատությամբ։

Պատերազմի ճակատում ավար ենք վերցրել... Գերիներ... «Դեհ, յերաշտություն, հաղթանակը բարձր նվագեցեք։ Մենք հաղթել ենք, և թշնամին փախչում է, փախչում...» Կոչեր, մանիֆեստներ... «Այսպես ի սեր Թագավորի, ի սեր Ռուսիայի, ի սեր մեր հավատի...»

Իսկականի վրա նորին կայսերական մեծությունն ինքնագիր ստորագրել է. «Նիկոլայ»։

Աշխարհում ամեն տեղ պատերազմ է։

Մեծ, գեղեցիկ, հանդիսավոր պատերազմը զբաղեցնում է մեր մտքերը, խոսակցությունները, յերազներն ու խաղերը։ Մենք միայն պատերազմ ենք խաղում։

... Զինադադարը վերջացավ։ Իմ զորքերը կռվում են նախասենյակի մոտերքը, բայց անսպասելի կերպով պատերազմի դահլիճն է մտնում չեզոք Անուշկան և պահանջում անմիջապես Կլավդիային ազատել գերությունից։ Նրա մայրն սպասում է խոհանոցում։

Հայտարարվում է խաղադադար, այսինքն զինադադար։ Մենք խոհանոց ենք վազում։ Կլավդիայի մայրը՝ հարևանի խոհարարուհին, որ մշտապես փքված դեմքով մի կին էր, նստած է սեղանի մոտ։ Մի գորշ ծրար դրած է առաջը։ Նա խոսում է մեզ հետ և զգուշությամբ վերցնում է նամակը։

— Կլավդյուշկա, — ասում է նա և շփոթված պտտում ծրարը, — Պետրուշենկան է ուղարկել։ Խնդրիր այդ յերիտասարդին՝ բարձր կարդա։ Ինչպես է նա այնտեղ ապր... Տեր աստված...

Տեսնում եմ ծրարի վրա «Պատերազմող բանակից»



սրբազան կնիքը։ Յես հարգանքով առնում եմ նամակը։ Անհուն հարգանք ու վոգևորություն եմ զգում մատներիս ծայրերին։ Նամակն այնտեղից է։ Նամակ պատերազմից... «Առա՜ջ դեպի մարտ, ընկերնե՛ր, սև հուսարներ...» «Իսկականի վրա Նորին մեծությունն ինքնագիր...»

Յեվ ես ուրախ կարդում եմ բարձրաձայն.

«...Հա՛, հետո, թանկագին մայրիկ Յեվդոկիա Կոնստանտինովնա, շտապում եմ հաղորդել ձեզ, վոր այս նամակի տակ յես իմ ձեռքով չեմ ստորագրում, վորովհետև պատերազմում սաստիկ վիրավորվեցի, հիվանդանոցում կուռս արմունկից վեր կտրեցին բոլորովին...»

Սարսափած յես էլ չեմ շարունակում... Կլավդիայի մայրն ուժասպառ աղաղակում է, հանկարծ գզգզված գլուխը դնում սեղանին։

Կամեցա մի կերպ մխիթարել թե նրան և թե նաև ինձ, վորովհետև զգում էյի, վոր պատերազմի հուշակը թաթախված է մոտիկ արյունով, յես անվճռականորեն ասում եմ.

— Հավանականաբար նա շքանշան կստանա... արծաթե, նա Գեորգևսկի ասպետ կլինի...

Կարծեմ, շատ մեծ հիմարություն դուրս տվի։

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՍԱՐԱՆԸ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ

Դասարանում հանրահաշվի դաս էր։ Մաթեմատիկայի ուսուցիչը՝ Կաուլիչը հիվանդ էր։ Նրան ժամանակավորապես փոխարինում էր Սամլիկով Գեննադիի Ալեքսեյևիչը, վորը զորահավաքից թագնված մի շատ ձանձրալի ակցիզի պաշտոնյա էր։

Գիմնազիայի առաջ հրապարակի վրա զինավարժություն էր կատարվում — 214-րդ գնդի ռազմա-

կան պարապմունքներն եյին։ Դասարանների բաց ու-անցքներից ներս եյին խուժում յերգերն ու զինվորական հրամանները և խառնիփնթորում հանրահաշվական ֆորմուլները։

— Ախ ցո՜ւմբա, ցո՜ւմբա, ցո՜ւմբա, Մադրիդ և Լիսաբոն...

Ուղի՜ղ... Առաջին, յերկրորդ... հաշվել...

— Ռասկուդրյա-կուդրյա-կուդրյա կու-ռասկուդրյավայա։

— Մե՜-յերկու։ Մե՜-յերկու... ձախը... քայլդ համասարացրու...

— Տղե՜րք, միասին արշավանքի պատրաստվե՜լ։

— Ջուբարիկի-չուբչիկը...

— Ինչպես ես կանգնած, սատանա՜։ Ուղղվե՜լ։

— Արծիվների պես վե՜ր ճախրեցեք, բազեներ։

— Առաջ մխի՜ր, յետև մխի՜ր, առաջ խփիր հրացանի կոթով։

— Վազե՜լ միասին... առա՜ջ...

...Ռա-ա՜-ա-ա՜-ա-ա՜-ա-ա՜-ա։

Լայն բացված բերաններից, հոգնած կոկորդներից խզխզոցով դուրս է գալիս ուժասպառ ուռան։ Սվիններն անախորժ մտնում են խրտվիլակների մեջ։ Վոլորված ծղոտներն աղեքների նման դուրս են թափվում պարկի պատռված փորից։

— Եդ ո՞վ է պատուհանից դուրս նայում։ Մարտինենկո, հապա մի կրկնեցեք, թե յես հենց նոր ի՞նչ ասացի։

Բինդյուգ մականունով վիթխարի Մարտինենկոն աչքերը հեռացնում է պատուհանից և ծանր վեր թըռչում։

— Դե՜հ, ասա տեսնեմ ես րոպեյիս ի՞նչ բացատրեցի, — հոգին հանում է Գնեդոյ Ալեքսյովը։ —

Զլեցիր հա՜... Պատուհանից հետաքրքրվո՞ւմ եյիր... Դե՜հ, ասա ինչի՞ն են հավասար յերկու քանակությունների գումարի քառակուսիները։

— Կլինի... հավասար է... փնթփնթում է Մարտինենկոն և հանկարծ աչքով անում.—հավասար է աջ... մեկ, յերկու... Դասարանը հռհռում է։

— Ցես ձեզ միավոր եմ դնում, անբա՜ն։ Կանգնի՛ր պատի մոտ։

— Լսո՜ւմ եմ,—ասում է Մարտինենկոն և զինվորական կարգով փետանում պատի առաջ։

Դասարանն շատ է ուրախացել։ Գրչածայրերը յերգում են։

— Մարտինե՜նկո, դո՛ւրս կորեք դասարանից,— հրամայում է մանկավարժը։

Մարտինենկոն ինքն իրեն հրամայում է զինվորական կարգով.

— Դեպ հանդիսավո՜ր... ամբիոնի ուղղությա՛մբ... Միջանցքո՛վ... մա՛րշ։

Այս ի՞նչ լրբություն է, տեղից վեր է թռչում ուսուցիչը։— Ցես ձեզ մատյանում նկատողություն կգրեմ։ Դասերից հետո կմնաք դասարանում։

— Զուբարիկի-չուբչիկ...—լսվում է ոդանցքից։— Ինչպե՜ս ես կանգնած, սատանա։ Ցերեք ժամ կկանգնես հրացանն ուսիդ... Զուբարիկի-չուբչիկ...

## ՓՌՇՏՈՑԻ ԱՌԱՋԻՆ ԹՆԴԱՆՈԹԸ

Թռ՜ախկ... Գրատախտակի յետևը վառարանում պայթյուն լսվեց... Թռ՜ախկ... Տա-տա... Մեզանից մեկը իմանալով, որ Սամլիկովը հրացանի պայթյուն չի սիրում, հոլանդական վառարանի մեջ փամփուշտներ էր դրել։ Ուսուցիչը գունատված վեր է թռչում։ Դասարանը լցվում է վառոդի հոտով և ծխով։ Ուսուցիչը



վազում է գրատախտակի յետևը։ Ճանապարհին վոտքը դնում է մի հաստարակ թղթի կտորի վրա։ Դասարանը պապանձվում է։ Թրո՜մփ... Թղթի կտորը ճայթյունով պայթում է։ Մանկավարժը վեր է թռչում։ Հազիվ նա իր մյուս վոտքը դնում է հատակին, նոր պայթյուն է առաջ գալիս վոտքի տակ։ Աշակերտները լուռ ծիծաղից թուլացած, նստարաններից ցած են սողում սեղանների տակ։ Կատաղած ուսուցիչը շուռ է գալիս դեպի դասարան։ Բայց նստարանների վրա վոչ վոք չկա. դասարանը ամայի յե։ Նստարանների տակ մենք ծիծաղից փորներս բռնած գալարվում ենք։

— Լրբե՜ր,—գոռում է ուսուցիչը գլուխը կորցրած.— բոլորիդ նկատողություն կգրեմ։

Ցեվ նա վոտների ծայրերով զգուշությամբ մոտենում է ամբիոնին։ Նրա կոշկատակերից ծուխ է բարձրանում։ Նա ամբիոնի գզրոցից հանում է ծխախոտամանը, որ ծանր րոպեներին նրա համար հուսալի մխիթարություն էր։ Բայց առաջուց մենք արդեն ծխախոտամանը վառոդ և ծեծած տաքտեղ էյինք ածել։ Վրդոված Գնեդոյ Ալեքսյոժը քթածակերով մի պտղունց վեր է քաշում այդ սարսափելի խառնուրդից. հետո նա մնում է տեղն ու տեղը սառած, բերաննաբաց և աչքերը ճակատը թռած.

Սարսափելի, գրգռող փռշտոցները նրան ցնցում են ամբողջապես։

Դասարանում նորից յերևում են աշակերտները։ Նստարաններն անգամ ծիծաղից շարժվում են։ Մարտինենկոն, ձեռքը բարձրացրած, հրաման է արձակում զինվորական կարգով։

— Ցերկրորդ թնդանոթը թող արձակի՜։

— Հա՛-փռ՜շա,—մռնչում է խեղճ Սամլիկովը։

— Ցերրո՛րդ թնդանոթը...

*— Փառ՛շտ... ո՛հ...*

*Հանկարծ դասարանի դուռը բացվում է։ Մենք կանգնում ենք։*

*Մտնում է դիրեկտորը։ Դասարանում տեղի ունեցող հրացանաձգությունը, հրհռոցը և մանկավարժի թնդանոթի պես փռշտոցը գրավել էին դիրեկտորի ուշադրությունը։*

*— Եվ ինչ է տեղի ունենում այստեղ, — սաստ հարցնում է դիրեկտորը, նայում է կարմրած մանկավարժին և ձիգ կանգնած գիմնազիստների «մեծ պասի» պես այլանդակ սփաթներին։*

*— Ս ր ա՛ ն ք... Ո՛հ... ա՛հ... նվաղած խոսում է Գնեդոյ Ալեքսյովը։*

*— Փ ռ ի՛ հ շ... Ո՛հ... փռռ՛շտ...*

*Որապահն ուզում է բացատրել դիրեկտորին։*

*— Յուվենալ Բոգդանիչ, դա շարունակ փռշտում է և զկռտում...*

*— Քեզ խոսեցնող չկա, — ասում է դիրեկտորը, վոր արդեն գլխի յեր ընկել. — անպիտան յերեխաներ... Գեննադի Ալեքսեյեվիչ, խնդրում եմ, ներողություն կրեք գալ ինձ մոտ՝ առանձնասենյակ։*



*Դիրեկտորի յետևից փռշտալով, Ալեքսյովը քայլում է Սոռմոլիցկու հետքերով։*

*Նա այլևս արդեն դասարան չի վերադառնում։*

*Մենք ազատվեցինք Գնեդոյ Ալեքսյովից։*

## ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ՅԵՎ ՎԱՇՏԻ ՂԵԿԱՎԱՐԸ

*— Ժամանակից վառոդի հոտ է գալիս, — ասում են հասակավորները և սրտաբեկ որորում գլուխները։*

*Վառոդի հոտով հագեցած է գիմնազիան։ Հրակից վտանգ է սպառնում դասարաններին։ Ամեն մի նստարան վառոդի պահեստ է, զինանոց, ռազմամթերանոց։ Ամեն որ կոնդուիտում նշանակում են.*

«4-րդ դասարանի աշակերտ Տակյանով Վիտալիան փորձում էր փախչել «պատերազմի դաշտ»․ դասարանի պարոն դաստիարակը նրան նավամատույցում բռնելիս, ձեռքից առել է «Սմիտ յեվ Վեսսոն» սիստեմի մի ատրճանակ փամփուշտներով հին իրեր վաճառողից յեվ գողացած մի թեյաման, վորը նա ճանաչեց: Կանչել ծնողներին:

«2-րդ դասարանի աշակերտ Շչերբինինա Նիկոլայի մոտ ննջարանում գտել են մի սպայական ուսադիր, թրից կախվող մի փոկ, վառոդով լի մի քսակ յեվ մի մետաղե դատարկ խողովակ, վոր հայտնի չէ, թե ինչ բանի համար է: Հանել են պայուսակից՝ սվինի մի կտոր, «խաղալիք» ատրճանակ, խթաններ, գինվորի քսակ, ճակատանիշ, պարսատիկ յեվ ձեռքի ռումբ (դատարկ): Պատժված է յերկու որ դասերից հետո 3 ժամ»:

«Աշակերտ Տերենտիի Մարշուտինը, վորպես թե վոչ դիտավորյալ կերպով, դասարանում դասի ժամանակ ինքնահնար թնդանոթ է արձակում, ջարդում ապա-

կիները յեվ ոդն ապականում: Մի շաբաթ զրկված է պարապմունքներին հաճախելու իրավունքից»:

*Գիմնազիստներից, ման գալիս, զրնկոց է լսվում, գրպանները լիքն են հրացանի սնամեջ փամփուշտներով: Մենք այդ հավաքում եյինք գերեզմանատնից դենը գտնվող հրացանաձգության վայրում: Բլրակի յետևից յերևում են քամաղացների նապաստակաքըն-չերը: Նրանք բոլորը զարդարում են իրենց թևերը Գեորգևսկի խաչերի նման շքանշաններով, և հորիզոնը նմանում է հերոսի կրծքի: Փոքրիկ բարձրության վրա տխուր փռված է ռազմական փոքրիկ քաղաքը: Նրա տախտակե բուրակներում տեղավորված էր 214-րդ հետևակ գունդը: Ռազմական քաղաքի փշալար ցանկապատի վրայով մեր տված զանազան կերակրեղենների, վարունգների, յեփած խնձորի և ուրիշ ուտելեղենների փոխարեն, մենք ստանում եյինք մեր ցանկացած զինվորական առարկաները՝ դատարկ փամփուշտակալներ, ճարմանտներ, ճակատանիշներ, պատռված ուսադիրներ: Առանձնապես թանկ արժեյին սպայական ուսադիրները: Կրտսեր վաշտապետի՝ կեղտոտ կորած մի հատ ուսադրի համար մեր կապտենարմուս Սիդոր Դոլբանովն ինձանից ստացավ յերկու կտոր հաց՝ ապխտած խոզի մսով, մի կտոր «Գալա-Պետեր» շոկոլատ և հինգ հատ էլ նորս «Տրիումֆ» ծխախոտներից:*

*— Եժան տվեցի, իհարկե,—ասաց Սիդոր Դոլբանովը,—ծանոթության պատճառով, ինչ արած: Իմ դատողությամբ, դուք, գիմնազիստներդ, նույնպես ծառայության մեջ եք,—միևնույնն է, ինչպես մեր զինվոր տղերքը... և՛ համազգեստը, և ուսումը: Ուղիղ չեմ ասում:*

*Սիդոր Դոլբանովը սիրում է լուսավորության մասին խոսել:*



*— Միայն թե, տղերք, զինվորական գիտությունը խորը մտածողություն է պահանջում,— փելիսոփայություն է անում նա, խմրելով մեր տված յերշիկը.— ձեր ուսումը չի կարելի մերինի հետ համեմատել: Ե՜հ, ինչ բան է արիֆմետիկա-ալգեբրան և նման բաները... Ա՜յ, հասկանում եմ, հապա մի ասա տեսնեմ, թե ուսում առած մարդ ես, ի՞նչ կոչում ունի գնդապետը, պետք է ասել ձերդ ազնվություն, թե՞ ձերդ բարձր բարեծննդություն:*

*— Մենք դեռևս ուսման այդ մասը չենք անցել,— շփոթված արդարանում եմ յես:*

*— Իսկ ձեր դասարանական հրամանատարը, տղերք, շատ չար մարդ է,—հետաքրքրվում է Դոլբանովը:*

*— Խիստ է,—պատասխանում եմ,—ամեն մի դատարկ բանի համար կանգնեցնում է պատի մոտ, կոնդուիտ է մտցնում և անճաշ թողնում: Գրո՛ղ է:*

*— Տեսնո՞ւմ ես, այդ հրեշը,—կարեկցեց մեզ Սիդոր Դոլբանովը.—Ուրեմն եդ գրողը մեր վաշտապետի պես մի մարդ է...*

*— Իսկ դուք էլ ունեք վաշտի ղեկավար,—հարցնում եմ յես:*

*— Ղեկավար չէ, այլ հրամանատար, կատուն ուտի նրան,—լուրջ կերպով ուղղում է Դոլբանովը:—Մեր վաշտի հրամանատարը նորին ազնվություն, անիծյալ սատանա կրտսեր սպա Սամլիկով Գեննադիի Ալեքսեյիչն է:*

*— Գենադոյ Ալեքսյո՜վ:*

## ՄԵՐ ԶԻՆՎՈՐ ՑԵՂԲԱՅՐՆԵՐԸ

*Բարձր դասարանների գիմնազիստուհիները Բրեշկայում զբոսնում եյին կրտսեր սպաների հետ: Թեպետ դա խանգարում էր կարգը, բայց և այնպես քաջարի*

սպայության համար բացառություն էին անում։ Զինվորները պատվի էին առնում, գիմնազիստուհիները նազանքով քաթանի թելեր էին գզգզում վերքերի համար։ Մենք նախանձում էինք։

Մեկ անգամ, դասի ժամանակ ուսուցչը մտավ դասարան։ Նրա մորուքը զգացմունք ու հարգանք էր ներշնչում։

— Քաղաք են հասել կռվող բանակից առաջին վիրավորները,— ասաց ուսուցչը,— պետք է ընդառաջ գնանք նրանց... Ե՛յ, «Կամչատկա», ո՛ւմ հետ եմ խոսում։ Տյուտին։ Դու, անտա՛շ, անկոտրում, մի ժամ կմնաս, սրիկա։ Հա, ա՛յ, ասում եմ, գնանք ամբողջ գիմնազիայով և ընդունենք մեր փառավոր զինվորներին, վորոնք այսպես ասած... հա... տանջվել են հայրենիքի, թագավորի և ուղղափառ հավատի համար... Մի խոսքով, շուտով զույգ-զույգ կանգնեցե՛ք։ Միայն թե պետք է փողոցում ձեզ պահեք այնպես, ինչպես վայել է... Լսո՞ւմ եք։ Թե չէ յես ձեզ ցույց կտամ... Բաշիբոզուկնե՛ր, դատարկապորտնե՛ր, փուչ տղաներ, թոկից փախածնե՛ր։

Փողոցները լիքը մարդ էր։ Յեռագույն դրոշակները կախված էին։

Վիրավորվածներից ամեն մեկին առանձին տանում էին քաղաքի հարուստների զարդարված կառքերով։ Յուրաքանչյուր զինվորի թևից բռնած ուղեկցում էր բարեգործական կազմակերպությունից մի տիկին՝ վողորմած քույրերի զգեստով։ Այս ամենը նման էր հարսանեկան հանդեսի։ Վոստիկանները զինվորական պատիվ էին տալիս։ Վիրավորներին տեղավորեցին նոր հիվանդանոցում—նախկին ծխական դպրոցում։ Այսպես տնորինում էին տիկինները՝ հազիվ շունչ քաշելով։ Հենց այնտեղ մի մեծ սենյակում կազմակերպեցին հանդիսավոր համերգ։ Պատերազմի ճակատից յե-

կածները — լվացված, ածիլված, բուրալից բարձերի և քաղցրեղենների տուփերի մեջ կորած, շվարած — հայրենասիրական ճառեր էին լսում։ Վոմանց ձեռքին կային ժապավեններով զարդարված հենափայտեր։ Մեծ մասը շատ թեթև վիրավորներ էին։ Տիկինները մինչև անգամ վրդովվում էին։

— Չէ՛, ինչպես վոր վրդովվելու բան է, — հիասթափված շշնջում էին նրանք, — թեթև քերծվածներ են միայն... Գոնե մի հոգի լիներ ծանր վիրավոր։ Ա՛յ, Սարատովը յերեք, համարյա, անհուսալի վիրավորներ է ձեռք բերել։ Մղձավա՜նջ է։ Մղձավա՜նջ։

Չորրորդ դասարանի աշակերտներից Շվեցովը արտասանեց «Բելգիական յերեխաները» բանաստեղծությունը։ Նրա քամակին կարգով կանգնել էին վեց հոգի յերկրորդ դասարանի աշակերտներից և մարմնամարզական շարժումներով հետևում էին ընթերցանությանը։ Գիմնազիստուհի Ռադուտանովան՝ շրջանապետի աղջիկը դաշնամուրով՝ Գլինկայի «արտուտ»-ն էր նվագում։ Ամենից վերջը հրապարակ յեկավ մասնավոր դեղատան մի դեղագործ, վոր բանաստեղծ էր և տենոր։ Սրանից հետո մահճակալի վրայից բարձրացավ մի բարձրահասակ սպիտակավուն զինվոր և քաշվելով հազաց։

— Խնդրում ենք, խնդրում, — աղաղակեցին ամենքը ծափահարելով։

Յերբ լռություն տիրեց, վիրավորն ասաց.

— Թույլ տվեք մի քանի խոսք ասեմ... պարոն բժիշկ և հարգելի պարոններ, տիկիններ, քույրեր և ուրիշներ։ Մենք ուրեմն, այս ամենի համար... Ձեր բարեգործության համար շատ և շատ շնորհակալ ենք։ Միայն թե... ներողություն, ներեցեք, մենք քնել ենք ուզում, ճանապարհին յերեք որ չենք քնել։



## ԱՄԲՈԽԸ ՔԻՉ Է, ԲԱՅՑ...

Բարակներում զինվորներին ծեծում էին։ Սպաների ակումբում մի ինչ վոր յենթասպա մի ուրիշին հայի մռութ անվանեց։ Վիրավորանք կրողը տեղն ու տեղը ատրճանակով սպանեց իրեն վիրավորողին։

Վիրավորներին բերում էին կռվի ճակատից, ինչպես էլ վոր պատահում էր, և տեղավորում ուր վոր լիներ։

Հետո Պերեմիշլը վերցրին։ Կրասնյավկա արվարձանից ինչ վոր մարդիկ՝ նպարավաճառներ և պաշտոնյաներից վոմանք շրջեցին փողոցները, առաջից տանելով թագավորի նկարը սրբի պատկերի պես։ Նրանք ոդն ապականում էին վայնասուններով, յեռագույն փալասներով և վառված սպիրտի հոտով։ Կարծես հանդեսը տաքացնում էին սպիրտաբոցի վրա։

Տեսուչն էլի ման յեկավ դասարանները։ Նա փառավոր կերպով տանում էր իր հանդիսավոր, հաղթական և խաչվառի պես յերկսի բաժանված մորուքը։ Մենք դուրս յեկանք գիմնազիայի սանդուխքների վերին հրապարակը, վոր վողջունենք մանիֆեստանտներին։ Տեսչի տված նշանով մենք «ուռա» գոչեցինք։

Բայց ինչ վոր վատ բան կար այս աղմկող, սանձարձակ ամբոխի մեջ։ Թվում էր, թե վորտեղ վորե կգան պատուհանները ջարդելու, մարդկանց սպանելու։ Մի ինչ վոր բութ, խեղդող, անհաղթելի ույժ շարժվում էր դեպի մեզ և ճնշում մեր գիտակցությունը։ Սա նման էր այն զգացողությանը, վոր ունենում է ամենից տակն ընկածը, յերբ իրեն՝ այդ անոգնականին՝ ճզմում է վրան ծանրացած խեղդողը և ինքը հնարավորություն անգամ չի ունենում ծպտուն հանելու։

Բայց և այնպես ամեն բան անցավ։ Միայն դի-

*շերը հորս՝ բժշկին կանչեցին սպիրտով թունավորված ինչ վոր մի հայրենասերի փրկելու։*

*Մանիֆեստացիան զորեղ տպավորություն եր թողել Ոսկայի վրա։ Ոսկան շատ խռովարար, ուրիշին ընդօրինակող և յերևակայությամբ ապրող տղա յեր։ Յուրաքանչյուր տարիքի համար նա գտնում եր բոլորովին մի նոր նպատակ։ Նա տեսնում եր իրերի յերկրորդ հոգին։ Այդ օրերին, ինչպես հիմա ասում են, հետզհետե կատարելագործում եր իր խաղը... արտաքնոցի կտրած նստատեղի միջոցով։ Սկզբում նա վառարանի խողովակը անցկացրեց նստատեղու անցքով և ստացվեց «մաքսիմ» գնդացիր՝ փոքրիկ վահանով։ Հետո այդ նստատեղին անցկացրեց փայտե ձիու գլուխը, և դարձավ ձիու լուծ։ Այս բոլորը, թեև վայելուչ բաներ չեյին, բայց և այնպես կարելի յեր հաշտ աչքով նայել... Բայց Ոսկան մանիֆեստացիայից հետո յերկրորդ որը բակում մի կատարյալ սրբապիղծ հերթ կազմակերպեց։ Կլավդյուշկան հատակ ավլելու խոզանակով տանում եր ինչ վոր մեկի վարտիքը կախ ընկած ծոպերով, վորպես խաչվառ։ Իսկ Ոսկան տանում եր տխրահռչակ նստատեղին, վորի մեջտեղը յերևում եր «Նիվայից» կտրած Ռուսիայի միապետի Նիկոլայ յերկրորդ կայսեր պատկերը։*

*Բարկացած դռանապանը մանիֆեստանտներին բերեց հորս մոտ։ Նա սպառնում եր, թե «կգանգատվի» վոստիկանությանը։ Բայց հորս տված փոքրիկ նվերը գրպանը կոխելով, շուտով հանգստացավ։*

## ԹՇՆԱՄԻՆ ՊՈԿՐՈՎՍԿՈՒՄ

*Ապրիլին Պոկրովսկի բերին գերիների առաջին խըմբերը։ Սրանք ավստրիացիներ եյին։ Գորշ գլխարկներ ունեյին, վոտքներին սռնապաններ և չտեսված հաստ*

կոշիկներ․ նրանք պատռված և վախեցած խմբվում էին շրջանի վարչության առաջ։ Հետաքրքրվող խռնված ամբոխը անոխակալ նայում էր նրանց։ Յերեխաները գոռում էին «ավստրիացինե՛ր»։ Տեսուչը մեզ տարավ զվարճանալու պարտված և գերված թշնամու այդ տեսարանով։ Տեսչի ռազմիկ մորուքը ճեղքեց ամբոխը․ մենք առաջ անցանք։ Քաղցած, թուխ դեմքերով հնազանդ նայում էին մեզ։ Սա մեր «թշնամին» էր, իսկական, վոչ թե նկարված, այլ կենդանի թշնամին, հենց այն թշնամին, վորի գերազանց ուժերի ճնշման տակ, ինչպես գրում էին լրագրերում, նահանջում էինք և այլն։ Մի քանի վարկյան դեռ հպարտանում էինք, արհեստական կերպով ճնշելով մեր ատելությունը, բայց իսկույն և յեթ թողեցինք այդ փորձերը։ Բացի հետաքրքրությունից, ուրիշ վոչ մի բան չմնաց մեր մեջ դեպի այդ գերիները․ մաջարներ, վենգերացիք, չեխեր…

Տեսուչը սահուն ու վստահ տոնով, գազանանոցի վերահսկիչի պես, շրջապատողներին պատմում էր Ավստրիայի մասին, նրա կենդանիների ու բուսականության մասին… Հանկարծ գերիներից մեկը քաղաքավարությամբ դարձավ նրան և ասաց ռուսաց լեզվով, բայց ինչ վոր տարորինակ արտասանությամբ․

— Ներողություն եմ խնդրում պանից,— կակազեց նա,— մեզանում վայրի ցուլեր չեն բազմանում…

Տեսուչը շփոթվեց։

— Հա՛, ինչ ասեմ, բայց և այնպես յերբեմն պատահում են,— ասաց տեսուչը զիջողաբար։

— Գազանանոցում,— մեղմորեն ասաց գերին։

Այդ միջոցին տեսչի յետևը Ստյոպկա Գավրիան ժամանակ գտավ սպիտակ հացն ու ձուկը փոխելու մի զույգ ավստրիական ուսադիրների հետ։ Թունդ առև-



տուր սկսվեց։ Տեսուչը հետ նայելով, հրամայեց դադարեցնել այդ անվայել առևտուրը, ակնարկելով, թե թշնամու հետ հարաբերություն ունենալու պատճառով կարող են կոնդուիտ ընկնել։

## ԺԱՄԱՆԱԿԻ ՎՈԳԻՆ

Պատմության դասին ուսուցիչն ասում է․

— Տաճիկները, ինչպես և բոլոր մուսուլմանները, աչքի յեն ընկնում իրենց անգթությամբ, վայրագությամբ, գազանությամբ և արյունարբու բնավորությամբ։ Նրանց սուրբ գիրքը, ղորանը, պատվիրում է սպանել քրիստոնյաներին առանց խղճահարվելու, վորովհետև տաճիկը վորքան շատ «անհավատ» քրիստոնյա սպանի, նրա մեղքերն այնքան էլ ավելի կներվեն։ Բայց ներկա պատերազմում քա-դա-քա-կիրթ գերմանացիները գերազանցեցին տաճիկներին։ Գերմանացիները բարբարոսաբար ավերեցին…։

Դասարանը շուռ է գալիս, Նախատական հայացքով նայում է Կուֆելդին։ Կուֆելդը գերմանացի յէ։ Դասարանը վրդոված նայում է Ռեկլինին։ Ռեկլինն էլ գերմանացի յէ։ Դասարանը կատաղած նայում է Կրեյբերգին, Վիրկելին, Ֆրիցլերին… Կրեյբերգը, Վիրկելը և Ֆրիցլերը գերմանացիներ են։ Դրանք դասարանում հակառակորդնե՛ր են, թշնամի՛։

— Իսկ հրյանե՞րը,— հանկարծ հարցնում է խոռամանկ Գիշկա Կրեյբերգը։— Հրյաներն էլ, ասում են, արյունարբու յեն, ճի՞շտ է Կիրիլ Միխալիչ։ Յեվ Ռուսաստանը ծախում են…

Հիմա յէլ ամբողջ դասարանն ինձ է նայում։ Յես այնպես սաստիկ կարմրում եմ, վոր ինձ թվում է, թե յերեսիս հավաքված արյունն արդեն այտերիս կաշվից դուրս է հոսում։

— Այդ խնդիրը մեր դասին չի վերաբերում,— պատասխանում ե ուսուցիչը։ Այսոր մենք նրանց մասին չենք խոսում։

Դասամիջոցին գրատախտակը, որ դասարանի սև տրիբունան ու համայնական ժողովի հրավիրող զանգն եր, ծածկվեց խոշոր մակագրություններով. «Ջարդեցե՛ք գերմաններին», «Ֆրեյբերգը գերմանացի յե, յերշիկ ե...» «Բոլոր ջհուդները դավաճաններ են»։

Հետևյալ դասը կրոն ե։ Զանգից հետո գալիս ե տեսուչը, ինչպես միշտ անում ե այս առարկայի դասից առաջ. նա մոտենում ե իմ սեղանին։

— Հեթանոսներ, դո՛ւրս — գոռում ե տեսուչը։ — Հերթապա՛հ, անորեններին վռնդի՛ր տաճարից։

Ցես գերմանացիների հետ դուրս եմ գալիս դասարանից։

Գերմանացիներին չընդունեցին մեր պատերազմի մեջ։ Թույլ չտվին, որ նրանք գիմնազիական զորքը մտնեն։ Գիմնազիան պատերազմում ե քաղաքականների դպրոցի հետ։ Մենք մեր զորքն ունենք, նրանք իրենցը։ Կռիվը տեղի յեր ունենում շաբաթական յերեք անգամ։ Սպասայեվի բաց հրապարակում։ Ցերկու կողմն ել ուներ իր հողաթմբերը, ամրությունները, խրամատները, նավատորմիղը, որ ազատ լողում եր Սպասայեվոյի փոսի վրա, ուներ վառոդով լիքը փայտե գլաններ, պարսատիկներ և փայտե սրեր։ Մարտինենկո-Բինդյուգը մեր գլխավոր հրամանատարն եր։ Գերմանացիները մինչև անգամ իսկական Վիլհելմ ունեյին. դա Վիլկա Ֆիրտելն եր, մի գլխարկ կարողի որդի։ Լճի վրա կատաղի ճակատամարտներ են տեղի ունենում։ Մենք մոլեգնաբար մեծ արյունհեղություն ենք խաղում։ Ասենք իսկական թշնամություն եր և իսկական ել արյուն։ Մեր վարչությունը տեղեկություն



ուներ այդ պատերազմի մասին, բայց տակտիկաբար ուշադրություն չեր դարձնում։

— Գիտե՛ք, յերեխաները շատ հեշտությամբ են յուրացնում ժամանակի ոգին,— խորիմաստ կերպով պնդում եյին հասակավորները։

Ժամանակի ոգին, այդ շատ ծանր ոգին համակել եր ամբողջ գիմնազիան։

## ՄԵԶ ՎԱՐԺԵՑՆՈՒՄ ԵՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Ձմեռը որիորդաց գիմնազիայի հետ միասին մեզ տանում եյին ռազմական փոքրիկ քաղաքը՝ փորձնական ճակատամարտ ցույց տալու համար։ Մեր շուրջը ցուրտ եր և սպիտակ։ Գնդապետը բարեգործական կազմակերպությունից յեկած տիկիններին բացատրում եր ճակատամարտը։ Տիկինները ձեռքները տաքացնում եյին ձեռնամուշտակներում ու հիանում, իսկ հրացանաձգության ժամանակ ականջները փակում։ Համենայն դեպս կռիվը շատ անդուրեկան բան եր և ամենևին այն չեր, ինչպես պատկերացնում եյին «Նիվայում»։ Սև գլխարկները սողում եյին դաշտի վրայով, ծխի քուլաները բարձրանում եյին և ամպի նման կանգնում։ Ինչ որ կրակներ եյին վառվում։ Մեզ բացատրում եյին, թե դրանք ազդանշաններ են։ Հեռվից յեկող հրացանաձգության ձայնը նման եր քամուց շարժվող յերկար դրոշակի տրաքտրաքոցի։ Խրամատներից գարշելի հոտ եր գալիս։

Գնդապետն ասաց։

— Արշավում են։

Դիմքեր վազեցին, յեռանդով «ուռա» գոռալով։

— Վերջացավ,— ասաց գնդապետը։

— Ուրեմն ո՞վ հաղթեց,— հետաքրքրվում եր հասարակությունը՝ բան չհասկանալով։

Գնդապետը մտածեց և ասաց.

— Նրանք հաղթեցին։

Հետո գնդապետը վեր նայելով, նախազգուշացրեց.

— Այս րոպեյիս ռմբաձիգը կարձակի։

Եվ իսկապես ռմբաձիգն արձակեց և շատ ուժեղ։ Տիկինները վախեցան։ Կառապանների ձիերը խրտնեցին։ Կառապանները դեպի յերկինք նայելով հայհոյեցին։ Կռիվը վերջացավ։

Փորձնական ճակատամարտին մասնակցող վաշտն անցավ հյուրերի առջևով։ Վաշտն առաջնորդում եր մի խուլամանկ յենթասպա։ Զինվորները յեռանդով շվշվացնում եյին և սառած կոկորդները լարելով յերգում.

ու, ախ, յեթե գիմնազիստուհիներն ոդի միջով թռչեյին։

Գիմնազիստուհիներն իրար յերեսի նայեցին։ Գիմնազիստները վրնջացին։ Ուսուցիչներից մեկը հազաց, հաստամարմին տեսչուհին անհանգստացավ։

— Յենթասպա,— գոռաց գնդապետը,— ես ի՞նչ բա... բալա-գան ե։ Դադարեցնել։

Ամենից վերջը գնում եր մի կարճահասակ, վտիտ զինվոր՝ ահագին կոշիկներով և զինվորական վերարկուի մեջ խճճված։ Նա աշխատում եր մյուսների քայլերին հասնել, արագ փոխում եր քայլերը, թռչում, բայց յետ եր մնում։ Գիմնազիստները ճանաչեցին նրան, նա իմ դասընկեր Կարլուշկա Վիրկելի հայրըն եր։

— Ա՜յ թե կռվողներ են,— աղաղակում եյին գիմնազիստները,— դրա վորդին մեր դասարանումն ե սովորում. Ա՛յ, այնտեղ կանգնած ե, գերմանացու ճուտիկ ե։

Յերիտասարդ յեֆրեյտորը ձայն տվեց յետ մնացող Վիրկելին.



— Ե՜յ, Ֆրանց, հավաքի՛ր շվանցդ։

Բոլորը ծիծաղեցին։ Վիրկելը ձեռքերով վերարկուի փեշերը հետևից վեր հավաքեց և թռչկոտելով, վիզը գողգոջուն յերկարացնելով ձգտում եր հասնել իր վաշտին։ Հասարակությունը ծիծաղում եր։ Կարլուշկան կանգնել եր գլուխը քարշ գցած։ Կարմիր բծեր եյին սողում նրա յերեսով։

— Անճոռնի մարդիկ են եդ գերմանացիները,— ասաց որիորդաց գիմնազիայի հաստամարմին տեսչուհին.— Հայրդ գերմանացի յե, չե՞,— հարցրեց նա Կարլուշկին։

— Հայրս ռուսական զինվոր ե,— ասաց Կարլուշկան։

— Սո՛ւտ ե ասում,— գոռացին գիմնազիստները,— Նա գերմանացի յե։

— Քո հայրը գերմանացի յե, բայց զինվորական ծառայության ե կանչված ռուսական բանակում,— լուրջ կերպով ուղղեց տեսչուհին։

---

## ԿԼՈՐ ՅԵՐԿՐԱԳՆԴԻ, ՄԵԾ ԶԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈՔՐ ԾՈՎԻ ՄԱՍԻՆ

Հայրս ու մայրս հյուր են գնացել: Տան դուռը ճռնչաց, և հակառակ քամուց ամբողջ տան բոլոր դռները իրար սուրհանդակ ուղարկեցին:

Աննուշկան հյուրասենյակում լույսը հանգցրեց — լավեց թե ինչպես չրխկաց կոճակը — գնաց խոհանոց: Տանը տիրեց թեթև սարսուռ ազդող դատարկություն: Սեղանատանը ժամացույցը տկտկում է: Բամբին զարկվում է պատուհանների ապակիներին: Յես նստում եմ սեղանի առաջ և այնպես եմ ցույց տալիս, թե դասերս եմ սովորում: Փոքրիկ յեղբայրս շոգենավեր է նկարում, շատ շոգենավեր, բոլորի ծխնելույզներից էլ ծուխ է բարձրանում: Յես առնում եմ նրանից կարմիր-կապույտ մատիտը և սկսում դասագրքում ներկել լատինական դերանունները: Բոլոր ձայնավոր տառերը ներկում եմ կարմիր գույնով, իսկ բաղաձայները՝ կապույտով: Շատ գեղեցիկ բան է ստացվում:

Հանկարծ Ոսիան հարցնում է.

— Լելիա, ինչի՞ց գիտեն, թե յերկիրը կլոր է:

Յես այդ գիտեմ: Այդ մասին գրված է աշխարհագրության դասագրքի առաջին յերեսին: Յես Ոսիային յերկար պատմում եմ այն նավի մասին, որ հեռանում է ծովի վրայով հեռու — հեռու. հետո ծածկվում է հորիզոնում. էլ չի յերևում: Ուրեմն յերկիրը կլոր է:

Բայց Ոսիան չի բավարարվում:

— Իսկ յեթե այդ նավը խորտակվի՞, — ասում է նա: Հ՞ը, Լելիա, ինչ կասես:

— Հոգիս մի հանիր, խնդրում եմ: Տեսնում ես՝ դասերս եմ սովորում:

Շարունակում եմ դերանունները ներկել: Լռություն է տիրում:

— Յես գիտեմ, թե ինչից են իմանում, որ յերկիրը կլոր է, — նորից ասում է Ոսիան:

— Են, գիտես, իմացի՛ր:

— Գիտեմ: Վորովհետև գլոբուսը կլոր է… ինչ, ա՛յ:

— Այ դու բոլորովին հիմար ես, ահա, թե ինչ:

Ոսիայի շրթունքներն ուռչում են: Վեճի վտանգ կա: Բայց… այդ միջոցին հորս առանձնասենյակում հեռախոսն ուժեղ զանգահարում է: Իրար առաջ կտրելով սլանում ենք առանձնասենյակը: Այնտեղ դատարկություն է, մութ է և սարսափ ազդող: Բայց յես պտտում եմ ելեկտրականության կոճակը, և սենյակը միանգամից փոխվում է, ինչպես լուսանկարչության պարզված ապակին: Պատուհանները, որ լույս եյին՝ սևացան, շրջանակները, որ սև եյին, լուսավորվեցին: Իսկ գլխավորն այն էր, որ այլևս սարսափ չկար, յես վերցնում եմ հեռախոսի խողովակը և հորս ձայնով լուրջ խոսում:

— Լսում եմ, ինչ եք կամենում:

Յերևաց, որ զանգահարում են Սարատովից: Զանգահարում էր մեր սիրելի քեռին՝ Լյոշան: Նա շատ վաղուց մեզ մոտ չէր յեղել: Մայրս մեզ ասում էր,

թե նա հեռու տեղ ե գնացել: Բայց մենք մի անգամ Ոսկայի հետ միասին ծածուկ լսեցինք, վոր նա նըստած ե բանտում, վորովհետև դեմ ե թագավորին և պատերազմին: Իսկ այժմ, ուրեմն, նրան ազատել են: Ի՞նչ լավ ե: Յեվ մենք յերկուսս միասին գոռում ենք խողովակի մեջ.

— Քեռի ջա՛ն:

— Լա՛վ, լա՛վ, — հեռախոսով լսվում ե նրա ծիծաղը: — Լելիա, չմոռանաս, ասա հայրիկին, մայրիկին, յերբ վոր կգան, վոր յես զանգահարեցի և ասացի, վոր Ռուսաստանում հեղափոխություն ե սկսվել... Ժամանակավոր կառավարություն կա... Թագավորը հրաժարվել ե գահից... Կրկնի՛ր: Քեռուս ձայնը ինչվոր տարորինակ եր, ուրախ:

— Քեռի՛, — գոռում եմ յես: Եդ ինչպես պատահեց:

— Դու դեռ փոքր ես, չես հասկանա:

— Չե՛, կհասկանամ, — վիրավորվեցի յես, կհասկանամ: Յես արդեն յերրորդ դասարանումն եմ:

Յեվ քեռիս Սարատովից, Վոլգայի հեռավոր ափերից, հեռախոսով պատմում ե պատերազմի, բանվորների գնդակահարության, հրեյական ջարդերի, հեղափոխության, հավասարության, յեղբայրության մասին...

— Դուք վերջացրի՞ք, — լսվում ե խողովակի մեջ մի ուրիշ ձայն, — ժամանակը լրացավ:

Կրրրմփ: Մեզ բաժանեցին: Յես կանգնած եմ, կարծես միանգամից յերեք տարով մեծացել եմ: Յես կանգնած եմ և պատրաստ եմ պայթելու այն ամենից, ինչ վոր լսեցի քեռուցս:

Բայց այդ միջոցին հայացքս ընկնում ե Ոսկայի վրա: Նա կանգնած ե շփոթված...



— Ե՛յ, եդ ինչ ես արել, — վրդովվում եմ յես, —
սրան նայեք, դեռ պարծենում ել ե, վոր գիտի, թե
ինչու յերկիրը կլոր ե: Ամոթ չե՞: Տակդ թրջել ես:
— Յես համբերեցի-համբերեցի, մինչև դու վեր-
ջացնես հեռախոսով խոսելը և չնկատեցի, վոր...
Վազեցի խոհանոց: Խոհանոցում Աննուշկան հյուր
ուներ, նրա ծանոթ վիրավոր զինվորն եր. թուխ ու
մռայլ մի մարդ, իսկ կրծքին արծաթե Գեորգևսկի խաչ
կար: Վոգևորված գոռում եմ.
— Աննո՛ւշկա... Առաջինը, այժմ հեղափոխություն
ե սկսվել, — ազատություն ե... և առանց թագավորի...
Իսկ յերկրորդը... պետք ե Ոսկայի վարտիքը փոխեք
և առանձնասենյակը մաքրեք... թրջել ե...
Յեվ շնչասպառ լինելով պատմում եմ այն ամենը,
ինչ վոր լսեցի քեռուցս: Հանկարծ Աննուշկայի զին-
վորը վեր ե կենում: Նրա ձախ ձեռքը փաթաթված ե:
Աջով գրկում ե ինձ: Յես վախենում եմ: Զինվորն ինձ
պինդ սեղմում ե կրծքին:
— Ո՛, սիրելիս: Վորքան եմ հարգում: Շնորհակա-
լություն: Մի՞թե այդ ճշմարիտ ե: Յեվ նա իր խոշոր
բռունցքով չորս պատուհանից ել սպառնում ե, չգի-
տեմ՝ ում: Հիմա, կտեսնե՛ս, սպասի՛ր: Արժանա-
ցանք...
Յես նայում եմ պատուհաններին, բայց այնտեղ
վոչ վոք չկա: Իսկ զինվորը ներողություն ե խնդրում.
— Ներեցեք ինձ, յերիտասարդ... Դուք ինձ չա-
փազանց ուրախացրիք... Ահա թե ինչ... Ասված իմ..
սա մեր յերեք տարվա թափած արյան վարձատ-
րությունն ե... Շատ շնորհակալ եմ... Իսկական
տոն ե:
Նրա քիթը տարորինակ կերպով կնճռոտվում ե:
Յերևի կփռշտա:

## ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԿԻ ԳԾՈՎ

Սեղանատանը յես բարձրանում եմ աթոռի վրա և ծեծում ոդանցքը։ Սա հեռախոսի նման է։ Վերևն ապրում են Նյուրա և Վերա ժիվիլսկիները։ Նրանք ել ոդանցք ունեն։ Մեզ մոտ վոր ծեծում ես, վերևը լսում են։ Ոդանցքում լսում եմ Նյուրայի ձայնը։

— Լսո՜ւմ եմ։

— Բարև՛ ձեզ։ (Ընդհանրապես մենք դու-ով ենք խոսում իրար հետ, բայց հեռախոսով պետք է ասել «դուք») բարև, Նյուրա։ Մեծ նորություններ կան։ Հեղափոխություն է և մեզ մոտ զինվոր կա նըստած։

— Ո՛, յես ի՞նչ անեմ, — ասում է Նյուրան, — ապա իմացեք։

— Չլինի՞ ելի մի տեղ հեղափոխություն կա։

— Չ՛է, կնքամայրս ինձ ամանեղեններ է ընծայել, մինչև անգամ կաթնաման ել կա։

Յես վայր եմ դնում խողը... Ներողությո՜ւն, աղմուկով փակում եմ ոդանցքը։ Նրանք կարո՞ղ են հասկանալ։ Հագնվում եմ, վազում հարևան ընկերջս մոտ, վոր ուրախացնեմ նրան։ Իսկ լատիներեն դասս այդպես ել մնաց առանց սովորելու։

## ՑԱՊ-ՑԱՐԱՊԻՉԸ ՎԱԶՈՒՄ Է ԼՈՒՍՆԻ ՅԵՏԵՎԻՑ, — ԿԱՄ Ի՞ՆՉ ԱՍԱՑ ԿՈՆԴՈՒԻՏՆ ԱՅԴ ՄԱՍԻՆ

Փողոցում զգացվում է գարնան տաքություն։ Յերկինքը ծածկված է աստղերով, ինչպես տեսչական համազգեստի կոճկատեղերը։ Յես սլանում եմ դատարկ փողոցով, իսկ կողքիցս վազում է լուսինը և շան պես հերթով կանգ առնում բոլոր սյուների մոտ։ Տների լուսամուտների փեղկերը ծածկված են։





Ինչպե՞ս կարելի յե հիմա այդպես խոր քնել։ Չէ՞ վոր հեղափոխություն է։ Ուզում եմ գոռալ...

Անկյունից մեր հանդեպ յերկու շարք փայլուն կոճակներ են առաջ շարժվում... Ցապ-Ցարապիչն է։ Մենք հավատարիմ լուսնի ընկերակցությամբ յետ ենք փախչում։ Լուսինը թագնվում է սյուների և ցանկապատերի յետևը։ Յես փախչում եմ և թագնվում դրանց ստվերում։ Բայց Ցապ-Ցարապիչն արդեն նկատել է։

— Կա՛նգնիր, կա՛նգնիր անզգա՛մ, — գոռում է նա։— Վոստիկա՛ն։

Բայց ազգանունս չի գոռում. ուրեմն չի ճանաչել։ Յես առաջ եմ սլանում։ Լուսինը և Ցապ-Ցարապիչը հետևում են ինձ։

Ցապ - Ցարապիչը թշնամին է։

Լուսինն իմ կողմնակիցն է։

Ահա. վորպեսզի ինձ չմատնի, նա չքանում է տանիքի յետևը... Յես սխալվում եյի։ Ցապ-Ցարապիչն ինձ ճանա-



չեց։ Հետևյալ օրը կոնդուիտում իմ եջում յերևաց հետևյալ նկատողությունը (սա հեղափոխության առաջին կոնդուիտական նկատողությունն եր)։

«Մարտի 4-ին վերակացուն տեսել է փողոցում ժամի 7-ից հետո։ Չնայելով նրան, վոր հրամայել է կանգնել, նա փախել է...»

Լուսինը կոնդուիտ չեր ընկել։

## „ԱԶԱՏ ԵՔ", ԱՍՈՒՄ Է ԶԻՆՎՈՐԸ

Հյուրասենյակ ենք քաշ տալիս Աննուշկային և նրա զինվորին։ Ավելից կախել ենք Աննուշկայի կարմիր գլխաշորը և քայլում ենք գորգի վրա։

Զինվորի ձեռքն ենք տվել Ոսկայի փոքրիկ հրացանը։ Նա ցույց է տալիս, թե ինչպես պետք է պատերազմենք։ Մենք ամենքս էլ յերգում ենք.

Կովկասյան լեռներում
Գիմնազիստ է զբոսնում.
«Կորչի ցարը» — գոռում է նա,
Կարմիր դրոշն է ծածանում։

Հյուրասենյակում կոշիկների սաստիկ հոտ է կանգնած։ Մենք շատ մոտ բարեկամացել ենք զինվորի հետ, և նա հերթով մեզ է տալիս լեզվով թքոտելու ու կպցնելու իր «շան վոտը»*։

Իսկ Ոսկան նստած է նրա ծնկներին, վեր-վեր է թռչում ու հարցնում։

— Կարո՞ղ ես ասել... Յեթե կետ ձուկը հանկարծ փղի մեջքը բարձրանա, վո՞րը վորին կհաղթի, ապա իմացի՛ր։

— Չգիտեմ, — ասում է զինվորը։ Ապա դու ասա, վո՞րը վորին.

* Հասարակ թղթից շինած ծխախոտ, վոր շան վոտի նման ծռում են։



— Յես էլ չգիտեմ, — ասում է Ոսխան, — հայրիկս էլ չի իմանում, քեռիս էլ։ Վոչ վոք։

Կետի և փղի մասին յերկար վիճում ենք։ Մենք ու զինվորը փղի կողմնակիցն ենք, Աննուշկան, դիտումամբ, կետի կողմնակիցն է։ Զինվորը նստում է դաշնամուրի առաջ։ Մատը դնում է մի կլավիշի վրա և փորձում «Մարսելիոզ» յերգելու։ Աննուշկան հանկարծ հիշում է, վոր արդեն ուշ է և մեր քնելու ժամանակն է։

— Ազատ եք, — ասում է զինվորը, և մենք գնում ենք քնելու։

## ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ

Մանկանոցի հատակին մեծ-մեծ քառակուսիներ են գծած։ Մի վոտքով ազատ կարող ես թռչկոտել նրանց վրայով։ Մենք պառկած ենք մեր փոքրիկ մահճակալների վրա և խոսում ենք հեղափոխության մասին։ Յես Ոսխային պատմում եմ ինչ վոր լսել եյի քեռուցս կամ լրագրերում կարդացել պատերազմի, բանվորների, թագավորի, ջարդերի մասին...

Հանկարծ Ոսխան հարցնում է.

— Լե՛լյա, լսի՛ր, Լե՛լյա։ Դու ասում ես հրյաները։ Իսկ ի՞նչ բան է հրյան։

— Մի տեսակ ժողովուրդ է, էլի... Զանազան ազգեր կան։ Որինակ ռուսները, գերմանացիք, ֆրանսիացիք։ Կան և հրյաներ։ Հայրիկը հրյա յե, դու հրյա յես...

— Մի՞թե մենք հրյանե՞ր ենք, — զարմանում է Ոսկան, — իսկապե՞ս, թե իբր թե։ Ասա, ազնիվ խոսք, մենք հրյաներ ենք»։

— Ազնիվ խոսք, մենք հրյաներ ենք։

Ոսկան ապշել եր այդ հայտնությունից։ Յերկար

ժամանակ շուռ ու մուռ եր գալիս անկողնում։ Յեվ արդեն կիսաքուն, լսում եմ, թե ինչպես շշնջյունով, վոր չզարթեցնի ինձ, հարցնում ե.

— Լեʹլի՞ա։

— Հ՞ը․

— Մայրի՞կն էլ ե հրյա։

— Հա՛, քնիր։

Յես քնում եմ, պատկերացնելով, թե ինչպես վաղը դասարանում կասեմ լատիներենի ուսուցչին. «Բավական ե, վորքան հին ռեժիմով առաջնորդեցիք և կանգնեցրիք պատի մոտ... Դուք ամենևին իրավունք չունեք»։

Քնած ենք։ Գիշերը հայրս ու մայրս վերադառնում են հյուրատեղից։ Յես զարթնում եմ։ Ինչպես և ամենքը, հյուրասիրությունից, թատրոնից հետո նրանք հոգնած են և գրգռված։

— Հրաշալի կարկանդակ եր, — ասում ե հայրս, — մենք այդպիսի բան յերբեք չենք կարող պատրաստել։ Ա՛յ թե փողերն ինչի վրա յեն ծախսվում։

Լսում եմ, թե ինչպես մայրս զարմանում ե, դաշնամուրի մոմակալի մեջ թերատ ծխած «շան վոտք» տեսնելով։ Հայրս գնում ե կոկորդը վողողելու։ Ջրամանի ապակե խցանը զրնգում ե։ Հանկարծ հայրս շտապ ու շատ բարձր ձայնով, թեև ուշ գիշեր ե, կանչում ե մորս։ Մայրս ինչվոր բան ե հարցնում։ Հայրս խոսում ե ուրախ ու բարձր։ Նրանք գտնում են իմ գրած թուղթը, վոր մեծ նորություն եր հայտնում։ Յես քնելուցս առաջ գրել և կախել եյի ջրամանի խցանի տակ։

Հայրս մորս հետ վոտների ծայրերով մտնում են մանկանոց։ Հայրս նստում ե անկողնիս, գրկում ինձ և ասում.



— Հեղափոխությունը գրվում ե «ե» տառով և վոչ թե «յե»-ով։ Ապա՛... և մատով խփում ե քթիս։

Այս միջոցին Ոսիան զարթնում ե։ Ինչպես յերևում եր, նա շարունակ, մինչև անգամ քնած ժամանակ, մտածում եր իր նոր արած հայտնության մասին։

— Մա՛յրիկ... Սկսում ե Ոսիան։

— Դու ինչո՞ւ զարթնեցիր։ Քնիր։

— Մայրիկ, — հարցնում ե Ոսիան, վորն արդեն նստել եր անկողնում, — մայրիկ մեր կառա՞ն էլ ե հրյա։

## „ՏԵ՛Ր, ՊԱՀՅԱ ՋԿԱՑՍՐ, ՏՈՒՐ ՀԱՋՈՐԴԻՆ“

Աննուշկան առավոտյան մեզ վարթեցնում ե նոր ձևով. նա յերգում ե.

— Վե՛ր կաց, վոտքի՛ յել, աշխատավոր ժողովուրդ։ Ժամանակ ե գիմնազիա գնալու։

Աշխատավոր ժողովուրդը (յես և Ոսկան) վեր ե թռչում։ Նախաճաշի ժամանակ հիշում եմ, վոր լատիներեն դերանունները չեմ սովորել՝ «խիկ, խեկ, խոկ...»

Ոսկայի հետ միասին դուրս ենք գալիս։ Տաք ե։ Գարնան տաքություն։ Բեռնատար ձիերը շարժում են իրենց գլխի պարկերը։ Ոսկան, ինչպես միշտ, յերևակայում ե, թե այս ձիերը գլխով վողջունում են իրեն։ Ոսիան շատ քաղաքավարի յերեխա յե։ Նա կանգնում ե յուրաքանչյուր ձիու առաջ և գլխով վողջունելով, ասում ե.

— Բա՛րև ձեզ, ձի։

Ձիերը լուռ են։ Կառապանները, վորոնք արդեն ճանաչում են Ոսկային, գոռում են ձիերի տեղ։ Ձիերից մեկը դույլից ջուր ե խմում։ Ոսկան հարցնում ե կառապանին.

ժամանակ շուռ ու մուռ եր գալիս անկողնում։ Յեվ արդեն կիսաքուն, լսում եմ, թե ինչպես շշնջյունով, վոր չզարթեցնի ինձ, հարցնում ե.

— Լե՛լիա։

— Հ՞ը.

— Մայրի՞կն էլ ե հրյա։

— Հա՛, քնիր։

Յես քնում եմ, պատկերացնելով, թե ինչպես վաղը դասարանում կասեմ լատիներենի ուսուցչին. «Բավական ե, վորքան հին ռեժիմով առաջնորդվեցիք և կանգնեցրիք պատի մոտ... Դուք ամենևին իրավունք չունեք»։

Քնած ենք։ Գիշերը հայրս ու մայրս վերադառնում են հյուրատեղից։ Յես զարթնում եմ։ Ինչպես և ամենքը, հյուրասիրությունից, թատրոնից հետո նրանք հոգնած են և գրգռված։

— Հրաշալի կարկանդակ եր, — ասում ե հայրս, — մենք այդպիսի բան յերբեք չենք կարող պատրաստել։ Ա՛յ թե փողերն ինչի վրա յեն ծախսվում։

Լսում եմ, թե ինչպես մայրս զարմանում ե, դաշնամուրի մոմակալի մեջ թերատ ծխած «շան վոտք» տեսնելով։ Հայրս գնում ե կոկորդը վողողելու։ Ջրամանի ապակե խցանը զրնգում ե։ Հանկարծ հայրս շտապ ու շատ բարձր ձայնով, թեև ուշ գիշեր ե, կանչում ե մորս։ Մայրս ինչվոր բան ե հարցնում։ Հայրս խոսում ե ուրախ ու բարձր։ Նրանք գտնում են իմ գրած թուղթը, վոր մեծ նորություն եր հայտնում։ Յես քնելուցս առաջ գրել և կախել եյի ջրամանի խցանի տակ։

Հայրս մորս հետ վոտների ծայրերով մտնում են մանկանոց։ Հայրս նստում ե անկողնիս, գրկում ինձ և ասում.



— Հեղափոխությունը գրվում ե «ե» տառով և վոչ թե «յե»-ով։ Այա՛... և մատով խփում ե քթիս։

Այս միջոցին Ոսիան զարթնում ե։ Ինչպես յերեվում եր, նա շարունակ, մինչև անգամ քնած ժամանակ, մտածում եր իր նոր արած հայտնության մասին։

— Մա՛յրիկ... Սկսում ե Ոսիան։

— Դու ինչո՞ւ զարթնեցիր։ Քնի՛ր։

— Մայրիկ, — հարցնում ե Ոսիան, վորն արդեն նստել եր անկողնում, — մայրիկ մեր կատո՞ւն էլ ե հրյա։

## ,,ՏԵ՛Ր, ՊԱՀՅԱ ՋԿԱՑՍՐ, ՏՈՒՐ ՀԱՋՈՐԴԻՆ“

Աննուշկան առավոտյան մեզ զարթեցնում ե նոր ձևով. նա յերգում ե.

— Վե՛ր կաց, վոտքի՛ յել, աշխատավոր ժողովուրդ։ Ժամանակ ե գիմնազիա գնալու։

Աշխատավոր ժողովուրդը (յես և Ոսկան) վեր ե թռչում։ Նախաճաշի ժամանակ հիշում եմ, վոր լատինական դերանունները չեմ սովորել՝ «խիկ, խեկ, խոկ...»

Ոսկայի հետ միասին դուրս ենք գալիս։ Տաք ե։ Գարնան տաքություն։ Բեռնատար ձիերը շարժում են իրենց գլխի պարկերը։ Ոսկան, ինչպես միշտ, յերեվակայում ե, թե այս ձիերը գլխով վողջունում են իրեն։ Ոսիան շատ քաղաքավարի յերեխա յե։ Նա կանգնում ե յուրաքանչյուր ձիու առաջ և գլխով վողջունելով, ասում ե.

— Բա՛րև ձեզ, ձի։

Ձիերը լուռ են։ Կառապանները, վորոնք արդեն ճանաչում են Ոսկային, գոռում են ձիերի տեղ։ Ձիերից մեկը դույլից ջուր ե խմում։ Ոսկան հարցնում ե կառապանին.

— Ջի՜ն էլ է կակաո խմում, հա՛։

Վազում եմ, սլանում գիմնազիա։ Չե՞ վոր նրանք դեռ չգիտեն։ Ցես եմ առաջինը։ Վերարկուս հանելով, թռչում եմ դասարան և պայուսակս՝ փոկերից բռնած, շարժում եմ օդի մեջ ու գոռում.

— Տղե՜րք, թագավորին գահնկեց են արել!!!։

— !!!!!

Ցապ-Ցարապկինը, վորին յես չեյի նկատել, հագալով ու կարմրած, աղաղակում է.

— Ի՞նչ ես դուրս տալիս. գժվե՞լ ես։ Ցես քեզ ցույց կտամ։ Դե՜հ, շուտ։ Աղոթքի՛։ Կանգնեցե՛ք զույգ-զույգ։

Բայց ինձ շրջապատում են, ինձ բոթբոթում են, հարցուփորձ են անում։

Նախասենյակը լցվում է քայլվածքի համաչափ ձայներով։ Դասարաններն աղոթքի յեն կանգնում։

Դիրեկտորը չոր, ձիգ ու հանդիսավոր, ինչպես միշտ, չափում է միջանցքը ձիգ վոտքերով։ Գոտիների արույրե թիթեղները ծլնգծլնգացին։ Ամենքը լռեցին։

Տերտերը, վոր սև եր, ինչպես գեղագրության մեջ թանաքի բիծը, հագավ փորուրարը։ Աղոթքն սկսվեց։

Մենք կանգնած ենք և փսփսում ենք։ Գորշ շարքերն* անհանգիստ են, շշնջյուն է լսվում.

— Բայց Պիտերում հեղափոխություն է տեղի ունենում։

— Դա վերև՞ է, վորտեղ Բալտիկ ծովը լայնանում է։

— Հա՛, բավական մեծ տարածություն է. համրերի համար կազմած քարտեզի վրա էլ կարելի յե իսկույն գտնել։

— Պատմաբանը պատմում եր, թե Պետրոս Մեծի

* Գորշ մահուդից գիմնազիստների համար համազգեստ եյին կարում։



արձանն այնտեղ է՝ ձիու վրա, թե խոշոր տներ կան, յեկեղեցուց ավելի մեծ։

Բայց հետաքրքիր է, թե ի՞նչ է հեղափողությունը։

— Ա՛յ, ինչպես վոր յեղավ հինգ թվին։ Այն ժամանակ պատերազմում եյինք ճապոնացիների դեմ։ Ժողովուրդն ու ուսանողները շրջում եյին փողոցներում կարմիր դրոշակներով, իսկ ղազախները մտրակներով հալածում եյին նրանց։ Հրացան էլ եյին կրակում։

— Այ սրիկանե՜ր։

— Ո՛, գրողը տանի, այսօր գրավոր աշխատանք ունենք... Էլի յերկուսը կկպցնի։ Թքել եմ վրան։ Բա վոր հեղափոխությո՞ւն է։

— «...Վորպես հերկինս և հերկրի»*։

— Ա՛յ քեզ թագավոր... Վռնդեցին։ Հենց այդպես էլ հարկավոր եր։ Ինչո՞ւ պատերազմ սարքեց։

— Նա չեր։ Վիլհելմն եր մեղավորը։

— Վիլհելմին էլ պետք է այդպես անել։

— Բայց պատերազմը հետաքրքիր բան է։

— Հեռվից ամեն բան հետաքրքիր է, բայց վոր ընկար այնտեղ, շատ շուտով վարդիկդ կը...

— Ցո՜ւ...

— Կամա՛ց։ Իսկ սրանից հետո դաս քի՞չ կտան։

— «...Հավիտյանս հավիտենից, ամեն...»*

— Թագաժառանգը վո՞ր դասարանում է սովորում։ Ցերևի բոլոր առարկաներից հինգ ունի... Նրան ինչ կա վոր։ Ուսուցիչները բծախնդիր չեն լինի։

— Բայց հիմա էլ առաջվանը չի լինի։ Ցերկուսներ կստանա, կիմանա։

— Սպասի՛ր։ Ի՞նչպես կլինի գեներիվ պլյուրալը...** Ե՛հ, հե՛րիք է. կարտագրենք։

* «Հայր մեր»-ից է.

** Գերմաներեն է, կնշանակե սեռական հոլով.

— Շարքերով մի գրություն շրջեց։ Այդ գրությունը շարադրել եր Ստյոպկա Ատլանտիդան (հետո այս գրությունն Ատլանտիդայի հետ միասին կոնդուխտ մտավ)։ Թղթի վրա գրված եր.

«Թագավորի ճռճուռլ ճաճեղ եճ. մի՛ յերգիր «տե՛ր, պաճյա զկայսր». տուր ճաչորդիճ»:

«...Սրբո ավետարանիս Հիսուսի-քրիստոսի, որ ըստ Ղուկասու...»

Յերրորդ դասարանի պենպեննոտ դեմքով մի վախկոտ աշակերտ կակազելով կարդաց առակը։ Տեսուչը նրա ուսի վրայից նայելով գրքին, հուշում եր.

Վերջին աղոթքը.

— «...Ի մխիթարություն ծնողաց, ի շահ յեկեղեցվո և հայրենյաց...»—Իսկույն, իսկույն։ Մենք ականջներս սրեցինք... «Տիրապետող դասարանները» հագացին։ Հ՛մ, հա։

Տրոյիցկի յեկեղեցուց յեկած կարճահասակ, յերկարամազ խմբապետը խնչում եր յերկար ու հանդիսավոր կերպով։ Նրա ճլորած վզովը, անձրևավորդի պես, մի գորշ-կարմրավուն յերակ եր վոլորվում։ Մեզ թվում եր, թե վորտեղ վոր ե կտրաքվի այն։ Խմբապետը ձախ ձեռքով իր գունավոր թաշկինակը կոխեց հնությունից փայլող շորի յետևի փեշի գրպանը։ Աջ ձեռքով բարձրացրեց կամերտոնը։ Նուրբ մետաղի զրնգյունը տարածվեց միջանցքի խեղդող օդի մեջ։ Խմբապետն ուղղեց յուղոտած ոսլայած օձիքը, բարակ, փետած վիզը դուրս ձգեց, հոնքերը հավաքեց իրար և հալից ընկած կիսաձայն տոն տվեց.

— Լյա-ա-ա... Լյա...ա...ա...

Մենք սպասում ենք։ Խմբապետը ձգվում ե վոտների ծայրերի վրա։ Ձեռքերը վեր ու վեր են շարժվում օդի մեջ։ Դողդացող ձայնով, վոր կարծես մառը պատուհանի ապակուն ե քսում, յերգում ե։





Տե՛ր, պահյա զկայսր…*

Գիմնազիստները լուռ են։ Մի յերկու-յերեք անվստահ ձայներ փորձեցին ձայնակցել։ Հետևից Բինդյուգը, կարծես հիշողության մեջ պահելու համար, ասաց հանգիստ.

— Ա՛յդ-պես…

— Դիսկանտներն իրենց կորցրին։

Իսկ խմբապետը կատաղած շարժում է ձեռքերը լուռ խմբի առաջ։ Կանիֆոլով հագեցրած ձայնը ճռնչում է կոմբզայի** նման։

— …Հզոր, միահեծան, Թագավորիր***…

Մենք արդեն այլևս չկարողացանք մեզ զսպել։ Հետզհետե աճող ծիծաղը շնչասպառ էր անում մեզ։ Ուսուցիչները ծիծաղից խեղդվում էին։

Մի վարկյան հետո ամբողջ միջանցքում միայն հրհռոց էր լսվում։ Միջանցքը թնդում էր։ Ծիծաղում էր տեսուչը։ Ցնցում էր Ցապ-Ցարապիչի փորը։ Ծիծաղից թուլանում էին առաջին դասարանի աշակերտները։ Հոնդում էին մեծ տղաները։ Խրխռում էր Պյոտր ծառան։

— Հա՛-ա… Հի-հի… Ոհ-ոհ… Հե-հե-հե… Ահ-հահա-հա…

Միայն դիրեկտորն է խիստ հայացքով ու ուղիղ, ինչպես միշտ. բայց ավելի գունատ է։

— Հանգի՛ստ, — վոտքով դոփում է դիրեկտորը։ Նրա կրնկի տակ ամեն ինչ լռում է։

Այդ ժամանակ բարձր դասարանների աշակերտների ղեկավարը, ութերորդ դասարանի աշակերտ Միտկա Լամբերգն էլ է աղաղակում.

* Ցարական հիմն։

** Մի տեսակ պարզ յերաժշտական գործիք է։

*** Ցարական հիմն



— Հանգի՛ստ։ Իմ ձայնը թույլ է։

Յեվ յերգում է «Մարսելյոզը»։

## ԲԱՐԻԿԱԴՆԵՐԻ ՎՐԱ

Յես սեղանի վրա կանգնած ճառաբանում էի։ Վառարանի յետևից՝ «Սախալինից» վերկացան յերկու հոգի՝ նպարավաճառ Բալդինը և Թաղական վոստիկանի վորդին — Լիզարսկին։ Նրանք միշտ յերկսով էին լինում, ինչպես շոգենավը և նրան կպած ապրանքատար նավը։ Առաջը կանգնած էր լայնաթիկունք, կարճահասակ Լիզարսկին, վոր ման գալիս թևերը շարժում էր նավի թիակների պես։ Սրա յետևը կանգնած էր, ինչպես ապրանքատար, յերկար ու սև Բալդինը։ Լիզարսկին մոտեցավ նստարանին և բռնեց օձիքիցս։

— Դու ինչ ես այստեղ թնդում, ջհուդի մուռթ, — ասաց նա և ձեռքը բարձրացրեց։

Հսկա Մարտինենկո-Բինդյուգը մոտեցավ Լիզարսկուն և ուսով յետ հրեց նրան.

— Իսկ դու ո՞ւր ես խցկվում։ Յերևի ուզում ես՝ ռեխդ ջարդեմ։ Միապետակա՛ն…

— Քեզ ինչ։ Բա՛լդա, մի հասցրու դրան։

Բալդան անտարբեր՝ արևածաղկի սերմ էր կրծում։ Մեկը յետևից վոգևորված յերգեց.

Շոգենավը նավ է տանում,
Տե՛ր աստված.
Նավը սերմ է կրծում,
Ով աստված։

Բալդինն ուսով խփեց Բինդյուգի կրծքին։ Սովորական վոչ բարձրաձայն խոսակցություն տեղի ունեցավ։

— Դեհ, խելոք կաց։

— Յես խելոք եմ։ Ինչ մեծ մարդ ես։
— Դու քեզ պահիր, թե չէ ենպես կհասցնեմ գըլխիդ, վոր...
— Ապա՛, հասցրու...
Յերևի Բալդինի աչքերից դուրս թռած կայծերից էր, վոր կռիվը բռնկվեց։ Դասարանում ուրիշ «միապետականներ» էլ յերևացին, և մի վարկյանից կռվում էին ամենքը։ Միայն հերթապահի աղաղակը, թե «Ֆրանցելը գալիս է՝» հարկադրեց ախոյաններին ցըրվել դեպի նստարանները։ Զինադադար հայտարարվեց մինչև մեծ դասամիջոցը։

## ՄԵԾ ԴԱՍԱՄԻՋՈՑԸ

Հրաշալի օր էր։ Յեղանակը տաքացել էր։ Ցամաքած մայթերի վրա յերեխաներն արդեն վեգ էին խաղում։ Գիմնազիայի ուղիղ հանդեպ արևի տակ, ցանկապատի վրա իրեն քորում էր միահագին չալ խոզ։ Սև բծերն այնպես էին տարածված նրա վրա, ինչպես թանաքի կաթիլներն սպիտակ ծծողական թղթի վրա։
Մենք դուրս թափվեցինք բակը։ Տաք արև էր։ Վոչ մի վոստիկան չկար։
— Ով թագավորին դեմ է, այս կողմն անցնի,— աղաղակեց Ստյոպկա Գավրիլան, վորին Ատլանտիդա էին ասում։— Ե՛յ, միապետականներ։ Դուք, չորացածներ, քանիսդ եք մի ֆունտ կշռում։
— Իսկ ովքեր թագավորի կողմն են, մեզ մոտ յեկեք։ Ջարդեցեք գերմանացիներին և ջհուդներին։
Այսպես մռնչաց Լիզարսկին։ Իսկույն էլ յերևացին ձնագնդերը։
Սկսվեց իսկական ճակատամարտը։ Շուտով աչքիս այնպիսի պինդ ձնագունդ խփեցին, վոր գլուխս պտըտվեց և աչքերիցս կանաչ ու մանուշակագույն կայծեր



փայլատակեցին... բայց մենք արդեն հաղթում էինք։ «Միապետականներին» քշեցինք մինչև բակի դռները։
— Անձնատուր յեղեք,— գոռում էինք մենք նրանց։ Բայց և այնպես նրանք հնար գտան փողոց նետվելու։ Վոգևորված, մենք վազեցինք նրանց յետևից և ընկանք վորոգայթի մեջ։
Գիմնազիայի մոտ գտնվում էր բարձր տարրական դպրոցը։ Այս դպրոցի աշակերտների հետ մենք վաղուց էինք կռվում։ Նրանք մեզ բարկացնում էին «գորշ աղավնի» անունով և ամեն մի հարմար առիթի ծեծում էին (պետք է ասել, վոր մենք էլ պարտական չէինք մնում)։ Յեվ ահա մեր «միապետականները», այդ դավաճաններն անցան այդ դպրոցի աշակերտների կողմը և նրանց հետ միասին հարձակվեցին մեզ վրա։
— Ջարդեցեք «գորշ աղավնիներին», քշեցեք աղավնիներին,— աղաղակեց այդ ամբոխը, և մեզ «գործի դրին»։
— Սպասե՛ք,— հանկարծ գոռաց Ստյոպկա Ատլանտիդան,— սպասե՛ք։
Ամենքն էլ կանգ առան։ Ստյոպկան բարձրացավ մի ձնակույտի վրա, ընկավ, նորից բարձրացավ և գլխարկը վերցրեց։
— Տղերք,— ասաց նա,— բավական է վորքան կռվեցինք։ Ջարդվեցինք· դե՛հ հերիք է։ Չէ՞ վոր հիմա... Նյոլկա... ինչպես ասեմ... նույնությո՞ւն... չէ... հավասարություն կլինի։ Բոլորիս համար, տղե՛րք։ Յեվ պատերազմ էլ չի լինի։ Բա՛ղդ եմ ասում։ Հիմա մենք միասին ենք։— Նա քիչ լռեց, չիմանալով ինչ ասի։ Հետո թռավ ձնակույտից և վճռական կերպով մոտեցավ տարրական դպրոցի աշակերտներից մեկին։— Յեկեք հաշտվենք,— ասաց նա և պինդ սեղմեց նրա ձեռքը։

— Ուռա՛,— գոռացի ես անսպասելի ինձ համար և ինքս էլ վախեցա։ Բայց բոլորն էլ աղաղակեցին «ուռա» և ծիծաղեցին։ Մենք խառնվեցինք դպրոցականների հետ։

Այդ միջոցին զանգն ուժեղ հնչեց։

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

— Տարականիուսը գալիս է,— գոռաց հերթապահը և վազեց իր տեղը։

Դուռը բացվեց։ Դասարանը դղրդյունով ոտքի կանգնեց։ Միջանցքի դատարկությունից իր հետ լռություն բերելով, մտավ լատիներենի ուսուցիչը։ Չոր ու մաղձոտ նա ամբիոն բարձրացավ և դեպի վեր ոլորեց իր բարակ բեխերը։ Ոսկե ակնոցները քթին տնկելով արագ նայեց ամբողջ դասարանին։ Նրա հայացքը կանգ առավ իմ ուռած այտոսկրի գունավորության վրա։

— Այդ ի՞նչ զարդարանք է։

Բարակ մատը դեպի ինձ ուղղեց։ Ես կանգնեցի։ Վհատված ու ճնշված ձայնով պատասխանեցի.

— Ջարդել եմ, Բենիամին Վիտալիևիչ։ Վայր ընկա։

— Ընկե՞լ ես. Ե՛դ....պես՛... Խե՛դճ։ Ասա՛, պարոն հեղափոխական, համեցեք այստեղ։ Եդպե՛ս։ Գեղեցիկ է։ Հիացեք, պարոններ։ Ասա, ասա՛, տեսնեմ, ինչ է մեր այսօրվա դասը։

Ես ձիգ կանգնել էի ամբիոնի առաջ. լուռ էի։ Տարականիուսը մատներով սկսեց թակել սեղանի երեսը։ Ես լուռ կանգնած էի հուսահատ և ճնշված։

— Եդ-պե՛ս,— ասաց Տարականիուսը,— չես իմանում։ Ժամանակ չես ունեցել։ Հեղափոխություն էիր սարքում։ Նստիր, միավոր։ Տուր օրատետրդ։

Դասարանը հուզված շշնջյուն բարձրացրեց։ Գրիչը



թանաք վերցնելով, բազեի նման վեր բարձրացավ ամբիոնի վրա, դիտեց վերևից, գտավ ցուցակում իմ անունը և...

Այս տարվա յեռամսյակին
Քառակուսի վանդակում դրած
Մեծ միավորը մանկավարժի
Նմանում է յերաշտահավի։

Վառարանի յետևը՝ «Սախալինում» միապետականները չարախնդաց հռհռում էին։ Սա արդեն անտանելի էր։ Ես բարձրաձայն հեկեկացի։ Դասարանի աշակերտները՛ որպես ցույց, շարժում էին ոտները։ Տարականիուսը ոսկրոտ մատներով սկսեց թակել ամբիոնի ծածկոցը։

— Հանգիստ։ Սա ի՞նչ բան է։ Ելի՞ ուզում եք կոնդուիտ մտնել։ Կաշներդ կարե՛լ եք։

Հանգստություն տիրեց։ Այդ ժամանակ ես համառորեն և արտասունքն աչքերիս ասացի.

— Բայց և այնպես թագավորին գահընկեց արին...

## „ՆԻԿՈԼԱ՛Յ ՌՈՄԱՆՈՎ, ԴՈՒՐՍ ԿՈՐԻ ԴԱՍԱՐԱՆԻՑ“

Այդ օրը վերջին դասը բնագիտություն էր։ Այդ առարկան մեզ դաս էր տալիս մեր ամենասիրելի ուսուցիչը՝ յերկարաբեխ ուրախ Նիկիտա Պավլովիչ Կամիշովը։ Նրա դասերը շատ ուրախ ու հետաքրքիր էին անցնում։ Նիկիտա Պա՛վլովիչն աշխույժ տրամադրությամբ դասարան մտավ, ձեռքով նշան արեց, որ նստենք, և ծիծաղելով ասաց.

— Եհ, աղավնիներս, այ թե ինչ յեղավ։ Հը՞։ Հեղափոխություն է։ Լա՛վ է։

Մենք ուրախացանք և աղմուկ բարձրացրինք։

— Պատմեցեք մեզ այդ մասին, թագավորի մասին։

— Ցի՛ց, աղաչիններս,— մատը բարձրացրեց Նիկիտա Պավլովիչը, ցի՛ց։ Թեև հեղափոխություն է, բայց ամենից առաջ պետք է լռություն լինի դասարանում։ Ս.յ-ն։ Ցեվ հետո, թեև մենք այժմ ուսումնասիրում ենք միակճղակ կենդանիներին, բայց և այնպես դեռ վաղաժամ է թագավորի մասին խոսելը։

Ստյոպկա Ստեփանիդան ձեռքը բարձրացրեց։ Ամենքն էլ սսկվեցին, սպասում էին մի չարության։

— Ի՞նչ ես ուզում Գավրիա,—հարցրեց ուսուցիչը։

— Նիկիտա Պավլովիչ, դասարանում ծխում են։

— Եդ վո՞ր ժամանակից ես զրպարտող դարձել,— զարմացավ Նիկիտա Պավլովիչը։— Ո՞վ է համարձակվել դասարանում ծխել։

— Թագավորը,—հանգիստ ու հանդուգն հայտարարեց Ստյոպկան։

— Ո՞վ, ո՞վ։

— Թագավորն է ծխում։ Նիկոլայ յերկրորդը։

Ցեվ իսկապես այդպես էր։ Դասարանում կախված էր թագավորի պատկերը։ Մերոնցից մեկը—յերևի Ստյոպկան—թագավորի բերանը ծակել էր և վառած ծխախոտը դրել այնտեղ։ Թագավորը ծխում էր։ Մենք ամենքս էլ հրհռացինք։ Նիկիտա Պավլովիչն էլ։ Հանկարծ նա անսովոր լրջությամբ ձեռքը բարձրացրեց։ Մենք սսկվեցինք։

— Նիկոլայ Ռոմանով,—բացականչեց ուսուցիչը հանդիսավոր կերպով—դուրս կորեք դասարանից։

Թագավորին դուրս շպրտեցինք։

## ՍՏՅՈՊԿԱՆ ԱԳԻՏԱՏՈՐ

Որխորդաց գիմնազիայի բակը մերինից բաժանված էր բարձր ցանկապատով։ Ցանկապատը ճեղքեր ուներ, վորոնց միջով դասամիջոցներին նամակներ եյինք

տալիս գիմնազիստուհիներին։ Ուսուցիչները շատ խիստ հետևում էին, որ ոչ ոք չմոտենա ցանկապատին։ Բայց չէին կարողանում արգելել։ Այդ բակերի հարաբերությունը շարունակվում էր տարիներով։ Մի անգամ բարձր դասարանի չարաճճի աշակերտներն ինձ բռնեցին դասամիջոցին, ճոճեցին և ցանկապատի գլխով գցեցին օրիորդաց բակը։ Աղջիկները շրջապատեցին ինձ և պատրաստ էին շփոթմունքից լաց լինելու, սկսեցին քաշքշել։ Յերեք րոպեյից հետո գիմնազիայի տեսչուհին ձեռքիցս բռնած հանդիսավոր կերպով ներս տարավ մեր ուսուցչանոցը։ Յես բավական գեղարվեստական տեսք ունեի, ինչպես Կոստիա Գոնչարը։ Գրպանիցս ծաղիկներ էին յերևում. շրթունքներս շոկոլադոտ էին, գլխարկիս շրջանակն էին կոխել «Գալյա-Պետեր» շոկոլադի պսպղուն թուղթ։ Ճակատանիշիս վրա աղավնու փետուր էին ամրացրել։ Մեջքիցս կախել էին թղթից շինած սատանա։ Անդրավարտիքիս մի տոտը ներքևից խնամքով կապված էր վարդագույն ժապավենով և հանգույցով... Ամբողջ գիմնազիան, մինչև անգամ ուսուցիչները, քիչ էր մնում ծիծաղից տրաքվեյին։ Այդ օրվանից յես վախենում էի ցանկապատին մոտենալ։ Այս պատճառով էլ, յերբ տղաներն ինձ պատգամավոր ընտրեցին օրիորդաց բակի համար, յես հիշեցի «Գալյա-Պետերը», տեսուչհուն, վարդագույն ժապավենի հանգույցը և հրաժարվեցի։

— Իզուր,—ասաց Ստյոպկա Ասլանտիդան,—իզուր, դու մեր մեջ ամենից հարմարն ես աղջկերանց համար։ Քաղաքավարի յես։ Լավ, ոչինչ։ Յես եմ գնում։ Շատ հարկավոր է։ Նրանց էլ պետք է հասկացնել։

Ստյոպկան անցավ ցանկապատով։ Մենք դեմքներս կպցրինք ճեղքերին։ Գիմնազիստուհիներ վազվզում



էին բակում, խաղում, ճվճվում և հնչյուն ձայնով ծիծաղում. Ստյոպկան թռավ ցանկապատից։ «Այ», ճչացին աղջիկները, մի րոպե կանգ առան. իսկ հետո վազեցին դեպի ցանկապատը և շրջապատեցին Ստյոպկային, ինչպես ճտերը կչկչացող թխսին։ Ստյոպկան պատիվ բռնեց ձեռքով և հետո ծանոթացրեց իրեն։

— Ասլանտիդա, Ստեփան,—ասաց նա, մի րոպե ձեռքը հեռացրեց ճակատից, որ քիթը սրբի,—կարող եք և Գավրիա ասել։ Բայց ավելի լավ է Ստյոպկա կանչեք։

— Ցանկապատո՞վ է անցնում,—լուրջ կերպով շրթունքներն իրար սեղմեց Աղվեսիկ մականունով մի փոքրիկ գիմնազիստուհի։ Ֆուլիգան։

— Յես ֆուլիգան չեմ, այլ ընտրված հեղափոխական,—վիրավորվեց Ստյոպկան։ Հա՛։ Յերևի թագավորի կողմն ես։ Էյ, դուք միապետականներ։—Յեվ Ստյոպկան խոր շունչ քաշելով, սկսեց ճառաբնել, աշխատելով «քաղաքավարի» բառեր գործ ածել.

— Աղջկերք... այսինքն օրիորդներ, յերեկ հեղափոխություն տեղի ունեցավ և թագավորին դուրս արին, այսինքն վռնդեցին, մենք մինչև անգամ աղոթքի ժամանակ «տեր, պահյա զկայսր» չերգեցինք. մենք ամենքս հեղափոխության կողմնակից ենք, այսինքն ազատության կողմնակից։ Մենք ուզում ենք դիրեկտորին էլ սատանաների բաժին անել... այսինքն ուզում էի ասել—աստծու բաժին անել։ Դուք ի՞նչ եք մտածում, ազատության կողմնակի՞ց եք, թե ոչ։

— Բայց ի՞նչ է նշանակում ազատություն,—հարցրեց Աղվեսիկը։

— Այ, այդ այն է նշանակում, որ թագավոր չի լինի, դիրեկտոր չի լինի, պատի մոտ չեն կանգնեցնի, մենք կընտրենք ղեկավարներ և նրանց կլսենք։ Մի

խոսքով շատ լավ ե, այսինքն հաջող ե, այսինքն ուզում եյի ասել հիանալի յե: Բրեչկայում ել կարելի կլինի պտտվել, այսինքն քաշ գալ:

— Յես, կարծես թե ազատության կողմնակից եմ... մտածկոտ յերկարացրեց Ալվեսիկը:—Իսկ դո՞ւք, աղջկերք:

Բայց աղջիկները հանկարծ վախեցած նայեցին շուրջները, շշնջացին.

— Վագրիկը գալիս ե, Վագրի՛կը: Վեր բարձրացեք շուտով, վերադարձեք: Կուժեք:

## ՎԱԳՐԻԿԸ

Գիմնազիայից արագ բակը իջավ կնճռոտած դասարանական դաստիարակչուհին, «Վագրիկը», վոր ամենևին նման չեր ջունգլաների հզոր տիրապետողին. այդպես եյին անվանում նրան գիմնազիստուհիները, վորովհետև սովորություն ուներ շարունակ քթի տակ մի ինչ վոր տաքարյուն Վագրիկի մասին անմիտ յերգ մրմռալու—«Իմ տաքարյուն Վագրիկ...» հենց հիմա ել նա մրմռում եր այդ յերգը: Յեվ հանկարծ լռեց: Լռեցին գիմնազիստուհիները: Սսկվեցինք և մենք ցանկապատի յետևը:

— Ես ինչ ե: Ես ով ե: Ի՞նչ ե շինում այստեղ: Ա՛յ-մյ-մյ-մյ,—ճվճվաց Վագրիկը:—Հապա խնդրում եմ ինձ հետ յեկեք, անամոթ յերիտասարդ: Ա՛յ-մյ-մյ-մյ:

Յեվ այստեղ մի այնպիսի բան պատահեց, վորի մասին հետո ամբողջ տարին հիացմունքով խոսում եյին յերկու գիմնազիաների միջանցքներում, վորի մասին պատմում են կոնդուկտի ազդու տողերը: Մայոպկան լուրջ հետաքրքրությամբ նայեց դիվահարված դաստիարակչուհուն այն ձևով, ինչպես վոր



սովոր եր իրենց ագարակում նայելու ծառս յեղող լծված ձիուն: Հետո հանկարծ նրա աչքերը հանդըգնությամբ փայլեցին: Նա ժպտաց, վերարկվի փեշը բարձրացրեց, անդրավարտիքի գրպանից «Յու-Յու»-ի տուփը հանեց, թըխկթխկացրեց, բաց արեց և անվրդով մեկնեց դաստիարակչուհուն:

— Ծխե՞նք:

Մենք և գիմնազիստուհիները նվաղեցինք վոգևորության և քաղցր սարսափի մեջ:

Վագրիկը ուզում եր ինչ վոր բան ասել, բերանը բաց արեց և հենց այդպես ել մնաց: Նրա թոշնած այտը գորտի թաթի պես ցընցվեց: Մայոպկան ծխախոտը վառեց, լուցկին հանգցրեց, տուփն ել յետ գրպանը դրեց, թռավ ցանկապատի վրա և կարեկցաբար նայելով քարացած դաստիարակչուհուն, ասաց.

— Տիկի՛ն Վագրիկ, չե վոր թագավորին... ֆյո՛ւթ, և ցույց տվեց ծնկով:

Գիմնազիստները հիմա արդեն բոլորն «ազատության կողմնակիցներ» էին։

## ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ուշ յերեկոյան Ստյոպկա Ատլանտիդան յեկավ մեզ մոտ յետևի դռնով և խորհրդավոր կերպով ինձ կանչեց խոհանոց։ Աննուշկան ընգգնգացնելով մաքրում էր թաց բաժակները։ Ստյոպկան աննկատելի խեթեց նրան և հաղորդեց.

— Գիտե՞ս, ուսուցիչներն ուզում են Զկան Աչքին վռնդել, աստված վկա։ Ես ինքս լսեցի այս բոլշևիկ-պատմաբանը խոսում էր Տարականիուսի հետ, իսկ ես գնում էի յետևներիցը։ Մենք, ասում էին, կգրենք նրա մասին կոմիտեյին և գործը տարած ենք։ Ազնիվ խոսք։ Լսի՛ր, վաղը հենց որ դուրս կգանք... ինչպես են ասում... մանիֆեստացիայի, հենց որ ես ձեռքով նշան կանեմ, բոլորդ էլ կգոռաք. «Կորչի՛ դիրեկտորը»։ Դեհ պատրաստ կլինես. հասկացա՞ր։ Իսկ ես շտապում եմ. դեռ Լաբզայի և Շուրկի մոտ էլ պետք է գնամ։ Հոգիս դուրս յեկավ։ Դե՛հ, ռեզերվում՛ր։

Դոների մոտ նա սպառնալի շուռ յեկավ։

— Իսկ յեթե Լիզարսկին էլի մռռա, ես նրա քիթ ու պռունգը ջարդ ու փշուր կանեմ։ Շուն կորեմ, թե չանեմ։ Շատ է փքվել։

## ԲՐԵՇԿԱՅՈՒՄ

Հետևյալ օրը պարապմունք չկար։ Յերկու գիմնազիաները, տղայոց և օրիորդաց, դուրս յեկան քաղաքում կազմակերպված ցույցի։ Դիրեկտորը զանգահարեց, թե չի կարող գալ. հիվանդ է, մրսել է... հե՜-հե՜-հե՜։



Ցույցի ժամանակ ամեն ինչ կատարելապես նորություն էր, հետաքրքիր և անսովոր։ Ուսուցիչները ձեռք էին տալիս, բարևում բարձր դասարանի աշակերտներին, կատակներ անում, բարեկամաբար խոսակցում։ Գործակատարների ակումբի նվագախումբը փորոտում էր, անկարգ շարքերով գնում էր քաղաքի հասարակության «աղը», իզուր էին ճգնում համաչափ քայլերով առաջ գնալ ակցիզի լուրջ պաշտոնյաները, հարկերի տեսուչը, յերկաթուղու ծառայողները, հեռագրատան բարակավոտ պաշտոնյաները, բանկի և փոստի ծառայողները։

Գլխարկներ, ճակատանիշներ, համազգեստի յերիզներ, զարդարուն կոճկատեղեր, կոճակներ։

Բոլորի ձեռքին էլ տպված թերթիկներ կային հեղափոխական յերգերով, որ չգիտես, վորտեղից էին լույս ընկել։ Պաշտոնյաներն ակնոցները դնելով, խորասուզված նայում էին այդ թղթերին, ինչպես կնայեյին շրջաբերականներին և կենտրոնացած անմխիթար ձայներով յեզրակացնում էին։

...Հնչիր ժողովրդական վրեժի կոչ...
Հառա՜ջ, հառա՜ջ... հառա՜ջ, հառա՜ջ, հառա՜ջ։

Վիճակային վարչության առաջ դուրս յեկավ արդեն պաշտոնազուրկ քաղաքագլուխը։ Նա հագել էր սպիտակ ու կարմիր նախշերով թաղիքե վոտնամաններ և ռետինե կրկնակոշիկներ։ Քաղաքագլուխը վերցնելով փափախը հանդիսավոր ու խռպոտ ձայնով ասաց.

— Պարոններ, Պետրոգրադի միջումը ու վողջ Ռուսիթումը հեղափոխութին ա. Նորին կայսերական բարձրությունը... արյունոտ բռնակալը... հրաժարվել ա գահից։ Իշխանությունը ժամանակավոր կառավարությինին ա տված։ Կեցցե՜։ Յես ասում եմ ուռա՜.

— Ուռա՛,— աղաղակեց ամբոխը։
Իսկ Ալյանտիրդան իսկույն ավելացրեց.
— Կորչի և դիրեկտորը։

Բայց բան դուրս չեկավ։ Դիրեկտորը չեր յեկել և Ստյոպկայի ծրագիրը քանդվեց։

Բրեշկայի անկյունում մի խումբ ուսուցիչներ

տեսչի գլխավորությամբ տաք-տաք վիճում եյին ինչ վոր մի խնդրի մասին։ Ստյոպկան ականջ դրեց։

Հնչում եր տեսչի համոզիչ ձայնը։

— Քաղաքային խորհրդի կոմիտեն այսոր յերեկոյան քննության կառնի մեր միջնորդությունը. յենթադրում եմ, մեզ համար նպաստավոր իմաստով, և այն ժամանակ մենք պարոն Ստոմոլիցկուն ցույց



կտանք դուռը։ Անհոգի ձևականության ժամանակն անցել է։ Այո՛։

Ստյոպկան թռավ ընկերների մոտ։ Մի անգամից նրան ամեն բան ուրախ եր թվում։ Յեվ տեսուչն էլ այնպես լավ ու սիրալի յերևաց, վոր կարծես թե յերբեք Ստյոպկայի մասին կոնդուիտում չեր գրել։

Իսկ ժողովուրդն ավելի ու ավելի յեր շատանում։ Գալիս եյին տոնական զգեստներով աղացարանի, տպարանի բանվորները, դեպոյի յերկաթագործները, փափլիկ հացթուխները, լայնաթիկունք բեռնակիրները, նավավարները, հացով հարուստ միրուքավոր գյուղացիները։

Ամբարների թաղամասում թմբուկի արձագանքը թընդում էր։ Ուժեղ «ուռա՜ն» արագ սահում էր, ինչպես սահնակը պուրակներում։ Գիմնազիստուհիները քաղցր ժպտում եյին։ Տաք քամին «Մարսելյոզի» ակկորդները նվագում էր հեռագրաթելերի վրա։ Յեվ վորքա՜ն լավ էր, տեր աստված. վորքան ուրախ ու թեթև եյինք շնչում ամեն տեսակ կանոնների դեմ ազատ բաց արած մեր վերարկուների մեջ։

## ԴԻՐԵԿՏՈՐԻ ԿՐԿՆԱԿՈՇԻԿՆԵՐԸ

Միջանցքում վաղուց էր խփել ժամի ինը, սակայն դասերը չեյին սկսվել։ Դասարաններն աղմկում եյին, մռնչում։ Ընդհանուր աղմուկի մեջ առանձին ձայներ ճչում եյին և տրաքվում փուչիկների պես։ Ցապ-Ցարապիչը ման էր գալիս միջանցքում և աշակերտներին դասարան քշում։ Ուսուցչանոցի պատի վրա, վեր բերած պատկերի տեղը, դեռ չխունացած բիծը յերևում էր ինչպես կույր աչքի հատ։ Լուռ ու ծխելով նյարդայնացած ման եյին գալիս մանկավարժները։

Վերջապես ամեն տեղ մտնող Ատլանտիդան վորոշեց իմանալ բանի եյությունը և գնաց ուսուցչանոց, վորպես թե քարտեզ վերցնելու։ Բայց յերեք րոպե չանցած նա իրեն կորցրած ներս ընկավ դասարան, յերկու անգամ գլխիվայր կանգնեց. Թռավ ամբիոնի վրա, կանգնեց գլխիվայր և վոտքերը օդի մեջ ճոճելով, խլացրեց մեզ անբացատրելի ուրախ մռնչյունով.

— Սատանանե՜ր։ Դևե՜ր։ Կոմիտեն վռնդել է դիրեկտոր-ի՜ն-ի՜ն-ի՜ն։

Բարձրացավ սեղանների կատաղի ճայթյուն, վայրենի աղաղակ, աներևակայելի ժխոր, վոգևորություն։ Բինդյուգը, ուրախությունից գժված, «Յերկրաչափու-



թյան» դասագրքով անխնա խփում էր հարևանի գըլխին և կրկնում.

— Վռնդե՜լ են։ Վռնդե՜լ են։ Վռնդե՜լ են։ Լսո՞ւմ ես։ Վռնդել են։

Այդ ժամանակ միջանցքի վերջում, վորտեղ դասարաններից դուրս էր հոսում ուրախ աղաղակը և տարածվում, բացվեցին ծանր դռները և դիրեկտորը ձիգ վոտներով, մաքուր կոշիկները հագին հանգիստ ներս մտավ ուսուցչանոց։ Ուսուցիչները դիրեկտորին ընդունեցին վոչ սովորական վողջույններով։

Ստոմոլիցկին ուշադրությունը լարեց։

— Ը՛-ը, սա ինչ բան է, պարոններ։

— Յուվենալ Բոգդանիչ, ա՛յ թե ինչ բան է, — մեղմ շարժեց մորուքը տեսուչը, — վոր դուք... Հա՛, ահավասիկ, խնդրում եմ կարդացեք։

Նա կանոնավոր կերպով թուղթը տվեց նրան, կարծես թե տալիս էր ստորագրելու համար։ Դիրեկտորի աչքովն ընկավ այն խիստ արտահայտությունը.

## «Հեռացնել»

Բայց նա չուզեց անձնատուր լինել։

— Ե... ե... ինձ այստեղ նշանակել է շրջանը — ասաց
նա սառը կերպով, — և յես միայն նրան եմ հպատակ-
վում։ Այ-ո... յես անպայման կհաղորդեմ շրջանին այս
անկարգության մասին։ Իսկ այժմ առաջարկում եմ
անմիջապես պարապմունքն սկսեք. Նա չխկոցով փա-
կեց վոսկե ժամացույցի խուփը։

— Ինչպե՞ս թե, — բռնկեց պատմաբան Կիրիլ Մի-
խայլովիչ Ուխովը, գազազած ձգձգելով փողկապը։
Դուք... Դուք հեռացված եք։ Մենք այդ եյինք պա-
հանջում, և վոչ մի խոսակցություն չի կարող լինել
այլևս։ Պարոններ, ինչ եք լռել։ Սա ինչ բան է։

Դռան մոտ լուռ հետաքրքրությամբ խռնվել եյին գիմնազիստները։ Յետև կանգնածները սեղմում եյին, վրա եյին պառկում։ Առաջ կանգնողներն ստիպված դռնից ներս եյին խցկվում, մտնում եյին ուսուցչանոց, շփոթված ուղղում եյին վերնաշապիկները, գոտիները։ Ստյոպկա Գավրիլան արմունկներով ճանապարհ բացեց, առաջ անցավ, հանդուգն հայացքը սևեռեց պատմաբանի դեմքին և ել չկարողացավ իրեն զսպել։

— Ճի՛շտ ե, Կիրիլ Միխայիլովի՛չ,— և ամբողջապես առաջ ձգվելով հարձակվեց Սոտմոլեցկու վրա։

— Կորչի՛ դիրեկտորը։

Տիրեց մեռելային լռություն։ Յեվ հանկարծ վորոտ ու հեղեղ բացվեց ուսուցչանոցի գլխին, ամեն ինչ տակովն արեց։

— Կորե՛ր, կործանվե՛ր։ Կո՜-րե՜-րե՜ր։ Ուռա՜։ Գրողի բաժին յեղիր։

Միջանցքը տնքաց։ Պատուհանները դղրդացին։ Ապակիները զրնգզրնգացին։ Ամբողջ գիմնազիան վոտքի վրա յեր, դողում եր վայրագ աղմուկից, խենթ դղրդոցից, մռնչյունից և ավերող դոփյուններից։

Դիրեկտորն իր կյանքում առաջին անգամ կռացավ, կուչ յեկավ։ Մինչև անգամ նրա արդուկած անդրավարտիքի վրա ծալքեր յերևացին։ Տեսուչը խորամանկությամբ անհանգստություն ցույց տվեց և քաղաքավարի աչքերը դեպի դուռը կկոցեց։

— Յուվենալ Բոգդանովի՛չ, լավ կանեք հեռանաք այստեղից, մենք չենք կարող յերաշխավորել։

— Դեռ հետո կտեսնենք, պարոններ, ատամները կրճտացրեց դիրեկտորը և դուրս վազեց․ շորի փեշն ընկավ յերկաթի կապովը։ Նա ներս ընկավ առանձնասենյակը, գլխարկը դրեց գլխին, դուրս գալիս մուշ-



տակը հագավ, վորի թևը չեր գտնում և փողոց դուրս նետվեց։ Նրա յետևից դուրս յեկավ ծառան Մոկեյիչը։

— Յուվենալ Բոգդանովիչ, կրկնակոշիկներդ մոռացաք, կրկնակոշիկներդ։

Դիրեկտորը շուռ յեկավ, փայլփլող կոշիկներով կոխոտում եր ձյունը և բարակ վոտքերով թռչկոտում պղտոր փոսերի վրայից։ Մոկեյիչը կրկնակոշիկները ձեռքին բռնած խորիմաստ կերպով ծփծփացնում եր լեզուն․

— Ծե՜,-ծե՜,-ծե՜։ Ե-եհ։ Տեր աստված։ Ա՜յ քեզ հեղափոխություն․ դիրեկտորը գիմնազիայից առանց կրկնակոշիկների յե փախչում։

Յեվ հանկարծ ծիծաղեց․

— Տես ինչպես ե գնում: Իսկական ընձուղտ ե։ Վահ, վահ։ Ի՞նչ ծիծաղելի յե․ մեղա քեզ, տե՛ր։ Վազի՛ր, վազի՛ր։ Հե՜-հե՜։ Ջայլամ ե։

Գիմնազիստներն աղմուկով ու հռհռոցով դուրս թափվեցին։

— Ո՜ւ, վո՜նց ե ճղում։ Հ՜րս, հ՜րս, բռնի՜։ Ուռա՜։ Փառամո՜լ։ Ձկան ա՜չք։

— Ո՜ւ-ու՜։ Ապա ելի քո եշը քշի՜։ Հոգեհան դաստիարակ։ Գրաֆ Կասսոն։ Ջո՜ւկ։

Շունչը կտրվում եր։ Դիրեկտորը, ինքը դիրեկտորը, վորի առաջ դեռ յերեկ ձգվում եյին լարի պես, դողում եյին, գլխարկները վերցնում եյին ճակատանոցից բռնած, անպատճառ ճակատանոցից, վորի առանձնասենյակի առաջից անցնում եյին վոտի մատների ծայրերով, այդ դիրեկտորը փախչում եր ամոթահար, անոգնական և առանց կրկնակոշիկների։

Պատուհաններից ինքնաբավական դեմքերով նայում եյին մանկավարժները։ Մոկեյիչը հանդիմանում եր․

— Բավական է ինչքան անկարգություն արիք։ Լավ չե։ Եվ ձեզ գիտուն եք համարում։

Ատլանտիդան թաքուն մոտեցավ նրան յետևից, ձեռքից խլեց դիրեկտորի կրկնակոշիկները և ընդհանուր հրհռոցի մեջ շպրտեց Ստամոլիցկու յետևից։ Հետո յերկու մատը բերանը կոխեց և սուր, խլացնող վայրենի սուլոց բարձրացրեց։ Այսպես շվացնել կարողանում են միայն աղավնապահները։ Իսկ Ստյոպկայի աղավնիներն ամբողջ Պոկրովսկում հռչակված եյին իրենց ոդային խաղերով։

Երբ մենք աղմուկով, տաքացած վերադարձանք մեր դասարանները, ուսուցիչները կիսաբերան մեզ հանդիմանում եյին.

— Պարոններ, լավ չեք անում։ Բայց և այնպես դա խուլիգանություն է։ Մի՞թե կարելի յե։

Բայց զգում եյինք, վոր այդ ասում են հենց այնպես, իրենց պարտականությունը կատարած լինելու համար։

Դիրեկտորի կրկնակոշիկները մենք կախեցինք արտաքնոցում՝ լապտերից, վորպես ավար։ Մեր բոլոր գաղտնի ժողովները տեղի եյին ունենում այս վոչ բուրալից տեղում։ Եվ այդ որվանից մեր հավաքույթները «կրկնակոշկի ասպետների որդեն» անունն ստացան։

## ԵՐԲԵՄՆ ԻՆՉ ԲԱՆԻ ԵՆ ՊԵՏՔ ԳԱԼԻՍ ԿՈՏՐԱԾ ԽԵՑԱՄԱՆՆԵՐԸ

Դասերից հետո բակում՝ չորացած գերանների վրա մենք արտակարգ ժողով կայացրինք։ Հավաքվել եյին ութ դասարանի բոլոր գիմնազիստները։ Պետք է պատգամավորներ ընտրեյինք, վորոնք մասնակցելու եյին մանկավարժական խորհրդին՝ ծնողական կոմիտեյի



հետ միասին, գիմնազիայի դիրեկտորին պաշտոնից հեռացնելու խնդրի առթիվ։

Նախագահում եր մեծ աշակերտների ղեկավար ութերորդ դասարանի աշակերտ Միտկա Լամբերգը, վորին հեռացրել եյին Սարատովի գիմնազիայից՝ կրոնի մասին արտահայտած անվայել կարծիքի համար։

Միտկան լուրջ նստած եր գերանների վրա և թխկթխկացնում եր կոտրած խեցամանը։

Այդ խեցամանը գտան գերանների յետևը՝ աղբանոցում։ Դա ծառայում եր վորպես նախագահական զանգակ։

— Ուրեմն, պարոննե՛ր, այժմ թեկնածուներ առաջարկեցեք։

— Բակի՞ց առաջարկենք դրանց, ինչ է։ Կարող ենք։

— Հա՛,-հա՛-հա՛։ Իսկույն

— Պարոննե՛ր, թեկնածուներ առաջարկեցեք։

— Մարգինե՛նկո։ Ներկայացրու նրան։ Հա՛-հա՛։

— Պարոննե՛ր, անզգամներ, — վրդովվում եր Լամբերգը և խեցամանը թակում։ — Հանգի՛ստ։ Կրթված գիմնազիստներ եք, բայց ձեզ պահում եք «բարձր տարրական դպրոցի» աշակերտների նման։ Եվ այն էլ այսպիսի մոմենտին... Հա՛ն-գի՛ստ։

— Վերջ դրեք, տղերք։ Փոքր յերեխանե՞ր եք, ինչ է։

Գիմնազիստները հանգստացան։ Ընտրությունները սկսվեցին։ Ընտրեցին Միտկա Լամբերգին, Ստյոպկա Ատլանտիդային և չորրորդ դասարանի աշակերտ Շուրկա Գվոզդիլոյին։

— Կա՞ն ուրիշ խնդիրներ։

— Կա՛, — Ատլանտիդան վեր մագլցեց գերանների վրա։

— Տղե՛րք, ահա, թե ինչ եմ ասում։ Լուրջ խնդիր է։ Սա իշուկ խաղալ չե, կամ կոպտոն խժրել։ Այո՛...

Մենք պետք է ավելի պինդ հուպ տանք։ Ջկան Աչքին չպետք է խնայել, թող ջհաննամը կորչի։ Բացի դրանից, այ էլ ինչ եմ առաջարկում։ Ընդհանրապես դիրեկտոր հարկավոր չէ։ Պետք է լինեն մեզանից և նրանցից ընտրված մարդիկ. ուրիշ ոչինչ... Թե ազատություն է, թող ազատություն լինի։ Վերջացավ։

— Ճիշտ է, Սոյոպկա։ Պահանջիր ընտրվածներ։ Վեր-վեր թոցրեք ընտրվածներին... Վեր-վեր թոցնել։

Սոյոպկայի գրպաններից շաղ յեկան խաղալիք ատրճանակի խցաններ, փամփուշտներ, կոպտոնի կտորներ, մեխեր, սատկած մուկ և «Նատ Պինկերտոնի» մի գրքույկ։ Լամբերդը թակում էր խեցամանը, որն այժմ թմբուկի տեղ էր ծառայում։ Ընտրվածներին ձեռքերի վրա տարան մինչև բակի դռները։

— Ուռռռ-ա՜-ա՜։

Արեգակն ամբողջ օրը սեպաձև վերելքով դեպի յերկինք բարձրանալուց հոգնած, նստեց գիմնազիայի տանիքին հանգստանալու։ Տանիքը նստած ձյունից թաց էր, փայլուն և սլկուն։ Արեգակը սահեց, բոցավառեց դիմացի պատուհանները, ճղպաց մեծ փոսի մեջ և այն տեղից ծիածանի գույներով աչքով արեց ուրախ գիմնազիստներին։

## Ի ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻ

Վիրավորված դիրեկտորը վորոշեց դիմել վերջին միջոցին. գնաց պաշտպանություն գտնելու ծնողական կոմիտեյի կողմից։ Շատ ծանր էր նրա համար գնալ պաշտպանություն գտնելու ծնողներից։ Նա ծնողներին պետության թշնամիներ էր համարում և ուսուցիչներին արգելում էր մոտիկ հարաբերություն ունենալ նրանց հետ. Նրա համար աշակերտների ծնողները գոյություն ունեյին վորպես վորոշ մարդկանց հասցե-



ներ, վորոնց ուղարկում էր իր գրած տոմսակները հիշեցնելու, վոր ուսման վարձը վճարեն, կամ թե հայտնում էր վորդու վատ վարքի մասին։ Նրանց ամեն մի միջամտությունը գիմնազիական գործերին նա համարում էր գիմնազիական սրբության անարգանք։ Յեթե նա իրավունք ունենար, հավանականաբար գիմնազիական ամենօրյա աղոթքից կջնջեր «ի մխիթարություն ծնողաց» տողը։

Բայց այժմ այդ բոլորը չէր կարող հաշվի չառնել։ Նա քաշ էր գալիս ծնողական կոմիտեյի նախագահի յետևից։ Կոմիտեյի նախագահն անասնաբույժ Շալֆերովն էր, վորին քաղաքում կենդանիների բժիշկ եյին ասում։

## ԱՆԱՍՆԱԲՈՒԺԻ ՄՈՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Դիրեկտորը գնաց Շալֆերովի մոտ ընդունելության ժամանակ։ Կենդանիների բժիշկը տեսնելով դիրեկտորին՝ այնքան զարմացավ, վոր մոռացավ նրան նստելու հրավիրել։ Նա ձեռքերն շտապով մաքրեց անդուրեկան բծերով ծածկված կանաչավուն վերնաշորով և մեկնեց դիրեկտորին։ Դիրեկտորը պճնասեր ու մաքրասեր էր, իսկ բժշկի ձեռքից թարմ կաթի, ախոռի և էլի ինչ վոր անդուրեկան ծանր հոտ էր գալիս։ Դիրեկտորի սիրտը խառնում էր, բայց ամենայն պատրաստակամությամբ պինդ սեղմեց նրա մեկնած ձեռքը։

Այսպես նրանք խոսում եյին կանգնած ցուրտ նախասենյակում, վորտեղ շարված եյին բիտոններ, շշեր, թառամած ծաղկեթփեր և ծաղկամաններ։ Մի անկյունում կատուն ավազով լիքը արկղի մեջ փոս էր փորում։ Չէր գիտակցում, վոր ինքը պատմական խոշոր դեպքերի և դիրեկտորի մեծ անկման վկան է. Նա պոչը բարձրացրել և փայտի նման դքել էր։

Անասնաբույժը լսեց գունատված դիրեկտորին և խոստացավ պաշտպանել։ Նվաստացած դիրեկտորը շնորհակալություն հայտնեց։ Բժիշկը շատ էր զբաղված։ Բակում մի կով բառաչում էր։ Հարկավոր էր միջոց գործ դնել նրա փորկապության դեմ, մաքրել ստամոքսը։ Շալֆերովը դիրեկտորին խորհուրդ տվեց տեսնել նաև կոմիտեյի քարտուղարին։

## ԴԻՐԵԿՏՈՐՆ ՈՒ ՈՍԿԱՆ

Կոմիտեյի քարտուղարը հայրս էր։ Դիրեկտորը շատ անհարմար էր զգում դիմել նրան և խնդրել։ Մոտիկ անցյալում հայրս խնդիր էր ներկայացրել, որ գիմնազիական բժշկի ազատ պաշտոնն իրեն հանձնեն։ Դիրեկտորը խնդրի վրա մակագրել էր. «Ցանկալի չէ, որ բժիշկը հրյա չլինի»։

Հայրս հենց նոր էր վերադարձել հիվանդանոցից՝ անդամահատությունը վերջացնելուց հետո։ Նա լվացվում էր և կոկորդը ողողում։ Ջուրը նրա կոկորդում կլկլում ու ղլղլում էր։ Թվում էր, թե հայրս յեռ է գալիս։

Դիրեկտորն սպասում էր հյուրասենյակում։ Փոքրիկ ավազանում լողում էին ձկները, դեպի հատակը քաշ տալով իրենց յերկար պոչերի թափանցիկ թաղանթը։ Մի ձուկ, որի դունչը նման էր ողագնացի և սաղավարտի (այնքան մեծ-մեծ ու ուռուցիկ էին նրա աչքերը), լողաց ապակուն մոտ։ Ձկան հանդուգն աչքերը շեշտակի նայում էին դիրեկտորին։ Դիրեկտորը հիշելով իր գիմնազիական վիրավորական մականունը, բարկացած յերեսը շուռ տվեց։ Այս միջոցին հյուրասենյակի դուռը բացվեց և Ոսկան ներս մտավ։ Սանձից բռնած նա բերում էր մի մեծ ու մռայլատես ձի, որը վաղուց կորցրել էր թե յերիտասարդությունը և թե պոչը։ Ձին դեմ ընկավ դռներում և քիչ էր մնում բոլորովին ջարդվեր։ Ոսկան այստեղ տեսավ դիրեկտորին։ Նա կանգնեց, ընկավ մտածողության մեջ, ավելի մոտ յեկավ և հարցրեց.





— Դուք յերևի յեկել եք ընդունելության։ Հա՞։

— Վո՛չ,— լուրջ և մռայլ պատասխանեց դիրեկտորը։— Յես գործ ունեմ։

— Հա՜,— բացականչեց Ոսկան։— Գիտեմ, դուք ով եք։ Դուք ձիու բժիշկ եք։ Ձեզանից այդպիսի հոտ է գալիս։ Հա՞։ դուք բժշկում եք և կովերին և կատուներին և շներին,— բոլորին։ Յես գիտեմ... Իսկ իմ ձին կբժշկե՞ք... Նրա փորում փոքրիկ շոգեմեքենա կա։ Մտավ այնտեղ և էլ չի կարողանում դուրս գալ։

— Ա՛յ տղա, դա սխալմունք է,— վիրավորված ընդհատեց նրան Ստոմոլիցկին։— Յես անասնաբույժ չեմ։ Յես դիրեկտոր եմ, գիմնազիայի դիրեկտորը։

— Վա՜հ… հարգանքով հառաչեց Ոսկան և ուշադրությամբ նայեց դիրեկտորին։ — Դուք դիրեկտո՞րն եք։ Յես մինչև անգամ վախեցա։ Լեյլան ասում է, թե դուք խիստ եք… Ձեզանից ամենքը, մինչև անգամ ուսուցիչները վախենում են։ Իսկ ինչպես է ձեր անունը՝ Ձկան… չէ… ձկնային… հիշեցի, հիշեցի… Տառեխի Աչք։

— Իմ անունս Յուվենալ Բոգդանիչ է, — սառնությամբ ասաց դիրեկտորը։ — Իսկ քո անունն ի՞նչ է, տղա՛։

— Իմ անունը Ոսիա յէ։ Բայց ինչո՞ւ յեն ձեզ Տառեխի Աչք ասում։

— Ոսիա, հիմար հարցեր մի՛ տա։ Ավելի լավ է պատասխանիր… ըմ… հըմ… հա… այ օրինակ… Վոլգան վո՞րտեղ է թափվում, գիտե՞ս։

— Գիտե՛մ, — վստահ պատասխանեց Ոսիան, — Վոլգան թափվում է Սարատով։ Ապա դուք էլ իմացեք, — յեթե փիղը բարձրանա կետ ձկան վրա, վո՞րը վորին կհաղթի։

— Չգիտեմ, — ամոթահար խոստովանվեց դիրեկտորը։

— Վոչ վոք չի իմանում, — մխիթարեց նաև Ոսիան, — վոչ հայրս, վոչ զինվորը, վոչ վոք… Իսկ Տառեխի Աչք վոր ասում են ձեզ, դա ձեր հայրանունն է, թե ձեզ այդպես եյին անվանում, յերբ դեռ փոքր եյիք։

— Հերի՛ք է, վե՛րջ տուր, Ոսիա, ավելի լավ է, ասա, թե քո ձիու անունն ի՞նչ է։

— Յերփվար… Ուրիշ էլ ի՞նչ կարող է լինել… Ձիերն ազգանուն չեն ունենում։

— Սխալվո՛ւմ ես, — լրջությամբ բացատրեց դիրեկտորը։ — Օրինակ Ալեքսանդր Մակեդոնացու ձիուն Բուցեֆալ եյին ասում։



— Իսկ ձեզ ասում են Ձկան Աչք։ Հա՛։ Յեվ վոչ թե տառեխի… Յես շփոթեցի։ Այդպե՞ս է, չէ՞։

Հայրս ներս մտավ։

— Ինչքան զարգացած և խելոք յերեխա յե ձեր վորդին, — հրեշտակային ժպտով ասաց կորացած դիրեկտորը։

## ՀԱՅՐԵՐԸ, ՀԱՅՐԻԿՆԵՐԸ, ԾՆՈՂՆԵՐԸ

Ու-ու-դըրրժ-ըրժըժժ…

Ուսուցչանոցի պատուհանի վրա խոշոր ճանճի նման դզզում էր ոդանցքը։ Տաք ուսուցչանոցում շոգից կարելի յեր նվաղել։ Դատարկ մութ դասարաններում յերբեմն ճաքում եյին նստարանները։ Բարձրաձայն տկտկում էր ժամացույցը։

— Թույլ տվեք ծնողական կոմիտեյի և մանկավարժական խորհրդի միացյալ նիստը բացված հայտարարել։

Խնդրում եմ…

Մեծ սեղանի շուրջը նստած էր ծնողական կոմիտեն։ Խիտ շարքով նստեցին և ուսուցիչները։ Մի քիչ հեռու անկյունում սրանց մոտ նստած եյին Միտկա Լամբերգը և Շուրկա Գվոզդիկոնը։ Փոքրիկ Շուրկան վախեցած էր յերևում։ Լուրջ Լամբերգը իրեն պահում էր։

Տեսուչն Ստյոպկա Ատլանտիդային ժողովի չթողեց։

— Այս թոկից փախածից ամեն բան կարելի յե սպասել, — հայտնեց տեսուչը։ — Ենպիսի մի բան կհնարի…

Ստյոպկան շատ վիրավորվեց։

— Դուք գիտեք, — ասաց նա գնալիս, — հետո ինձանից վոչինչ չպահանջեք, յեթե չկարողանանք բան շինել։ Ռեզերվուար։ Ադիո՛։

Հենց ժողովի սկզբին լույսը հանգավ։ Էլեկտրոկայանում մի բան կոտրվել էր, ինչպես միշտ։ Ուսուցչանոցը խավարի մեջ թաղվեց։ Լամբերգը վազեց լուցկու յետևից, բայց մտածեց, որ չծխող գիմնազիստը լուցկի չի ունենա։ Մոկեյիչ ծառան բերեց կլոր, կանաչ լուսամփոփով մի ճրագ, որ պարաշյուտի յեր նմանում։ Ճրագը կախ տվին վերևից։ Նա օրորվում էր։ Ստվերները տարուբերվում եյին և նստածների քթերը մեկ յերկարում, մեկ կարճանում եյին։

Սկզբում խոսեց տեսուչը։ Նա խոսում էր սահուն, շատ էր խայթում և նրա յերկսի բաժանված մորուքը խորամանկ կերպով դես-դեն էր քծնում սեղանի վրա։ Մորուքը նման էր խայթոցի։

Հացաշատ գյուղացի-հայրերը փնչոցով ու թմրած լսում եյին Ռոմաշովին, իսկ յերկարամազ քահանան մազերը մատներով հարթելով դեպի ականջի յետևը ուշադրությամբ լսում էր նրան։

Ակցիզի պաշտոնյան ծանր ու բարակ մաքրեց ակնոցները, կարծես թե պատրաստվում էր տեսչի ամեն մի խոսքին նայել նրանով։ Խանութպանը խորիմաստ կերպով տեսչական խոսքերի տակտով ծալում էր փափլիկ մատները։

Քաղաքային խորհրդի անդամներից հացաշատ գյուղացի հաստափոր Դուդնիկն սկսեց պաշտպանել դիրեկտորին։

— Պարոն մանկավարժներ, ինչպե՜ս կարող եք ինքնագլուխ այդպիսի բան անել։ Սրանք անտեղի խոսակցություններ են։ Այդպես չի կարելի։ Նախ պետք է շրջանի վարչությանը հարցնել... Յուվենալ Բոգդանիչն օրենքն իրագործում էր կատարելապես։ Մենք գիտենք, որ նրա օրով օրինակելի կարգապահություն կար։ Ուրեմն, թող նա յել մնա։ Ժամանակն



էլ յեռուն ժամանակ է, կրակոտ։ Տղաները կսկսեն և հետևանքը լավ չի լինի։

Ծնողները հավանությամբ գլուխներն օրորում եյին։ Հայրերը վախենում եյին իրենց զավակների ազատությունից։ Սանձերը բաց կթողնեն, դեհ, արի այնուհետև ու այդ անհրեսներին, թոկից փախածներին ու յերկու ստացողներին կառավարիր։

## ԴԻՐԵԿՏՈՐԻ ԿՈՆԴՈՒԻՏԸ

Աշխարհագրության և բնագիտության ուսուցիչ Նիկիտա Պավլովիչ Կամիշովը հուզված վեր թռավ։ Լամբերգը և Շուրկան հուսալի նայեցին իրենց սիրելի ուսուցչի գունատված դեմքին։ Նիկիտա Պավլովիչն սկսեց տաքացած խոսել, նրա ամեն մի արտահայտությունը Ջկան Աչքի կոնդուիտի չգրված մի եջն էր։

— Պարոններ, սա ինչ բան է։ Թագավորին գահընկեց արին... Իսկ մենք... չենք կարող դիրեկտորին... Դուք, ծնողներ, ձեր յերեխաները, ձեր որդիքը յեկել են կրթություն, դաստիարակություն ստանալու այստեղ, ներկայումս այս զզվելի հարկի տակ։ Իսկ ինչ կարող են նրանք ձեռք բերել այստեղ։ Ձեզ եմ հարցնում, ինչ կարող են ձեռք բերել նրանք, յերեխաները... յերբ մենք հասկավորներս, մանկավարժներս խեղդվում ենք։ Շունչ քաշել անհնար էր լինում։ Խայտառակություն։ Զորանոց։ Վերնաշապկիդ օձիքը ասեղնակար է, ութը ժամ առանց ճաշի մնա... Յեթե գլխարկդ ճակատանոցից բռնած չես վերցնում, հանդիմանություն։ Տեր աստված... Հիմա յերբ ամբողջ Ռուսաստանում օդը պարզվել է, մենք այստեղ վախենում ենք օդանցքը բանալ, որ օդը մաքրվի։

Նա իր յերկար կախ ընկած բեխի ծայրը քաշեց և շնչասպառ դուրս վազեց ուսուցչանոցից։

Սենյակում տիրեց խիստ լռություն։

Դիրեկտորը, վոր աննկատելի նստած եր մի ան-կյունում, լռությունը խզեց իր տափակ ձայնով։ Նա կատաղությունից և լուսամփոփի գույնից կանաչել եր։ Նա արդարանալ եր ուզում։

— Անձնական հաշիվներ են, — ասում եր նա, — որենք... կարգապահություն... պաշտոն... շրջան։

Նրան ընդհատեց խոշոր ու սև մեքենավար Ռոբիլ-կոն, վոր յերկարահասակ եր ապրանքատար գնացքների պես։ Մեքենավարը բռունցքով խփեց սեղանին։

— Ի՞նչ ավելորդ խոսակցություն ե։ Թե հեղափո-խություն ե, թող հեղափոխություն լինի։ Առաջ քշիր անընդհատ։ Պարոն դիրեկտորից, բացի վատ բանից, վոչ մի լավ բան չենք տեսել։ Վերջապես պետք ե տղաներին էլ հարցնենք։ Այ, թող նրանց ներկայացու-ցիչներն իրենց վորոշումն ասեն, թե չե էլ ինչո՞ւ հա-մար են ընտրված։

Միտկա Լամբերգը համարձակ և ազդու սաստ ան-գիր սովորած ճառը։

— Իսկ դուք ի՞նչ կարող եք ասել, — դարձավ նա-խագահը Շուրկա Կվոզդիլովին։

Շուրկային շատ դուր յեկավ, վոր իրեն հետ «դուք»-ով են խոսում։ Նա վեր թռավ ձեռքերն ուղիղ ու ձիգ, ինչպես կանգնում եյին ամբիոնի առաջ։

Դիրեկտորի ձգան աչքերը զզվելի կերպով նայում եյին նրան։

Շուրկան զգուշությամբ կողքից նայեց Սոոմոլից-կուն։ Ո՞վ ե իմանում, հանկարծ վոր մնա — վրեժխըն-դիր կլինի։ Նա լսելի ձայնով թուքը կուլ տվեց. վա-խից լեզուպատառ յեղավ։ Բայց Լամբերգն այդ միջո-ցին սեղանի տակ կոշկի կրունկներով այնպես սեղմեց Շուրկի վոտքը և ցավացրեց, վոր ուշքը գլուխն եկավ։



— Կաշիդ կմաշկեմ, անիծված, — շշնջած Լամ-բերգը։

Շուրկան գլուխը թափ տվեց, նորից ոդ կուլ տվեց և հանկարծ վոգևորվեց։

— Մենք բոլորս վորոշել ենք հեռացնել դիրեկ-տորին, — արագ արտասանեց նա։

## ՄԻ ԴԵՊՔ ՄԱԴԱԳԱՍԿԱՐ ԿՂԶՈՒ ՎՐԱ

...Հնդկական օվկիանոսի վրա հանկարծ փոթորիկ բարձրացավ, վոր պարզապես ստորերկրյա ծագում ու-ներ։ Կապույտ հարթությունն ալեկոծվեց։ Սահարայի մեծ անապատը յերկրաշարժի ցնցումների մեջ տարու-բերվում եր։ Ամեն ինչ սարսափելի կերպով շարժվում եր Աֆրիկայի ահագին քարտեզն որորվեց և ճայթյու-նով ընկավ հատակին։ Իսկ ուղղակի Մադագասկար կղ-զու վրա փռվեց Ատլանտիդան։ Յերբ ժողովի սկզբին լույսը հանգավ, նա մթության մեջ թագնվեց քարտեզի յետևը և տեղավորվեց պատի վորմախորշում։ Ան-սպասելի նա վայր ընկավ իր ապահով ընից։ Սայոպ-կայի աչքերը պղպղում եյին։ Ճակատին բարձրացրել եր մի մեծ ուռուցք։ Ցերևում եր, վոր Մադագաս-կարի հողը չափազանց կարծր ե։

— Գավրիա, դուրս կորիր այստեղից, — գոռաց տեսուչը։

— Ցես հանգիստ կգնամ, Նիկոլայ Իլյիչ։

— Մոկեյիչ, դուրս տար դրան այստեղից։

— Դե՛հ, դե՛հ, դուրս ցանվիր, սիրելիս, — հրում եր Մոկեյիչը գլուխը կորցրած Սայոպկային։ — Ցեվ դեռ ընտրված ե... Անկարգ։

Այդ իրարանցման մեջ դիպել եյին ճրագին և նա ճռճռում եր։ Ստվերներն ելի շարժվեցին ամեն տեղից. նրանք հանդիմանորեն որորում եյին գլուխները։

Քթերը մեծանում ու կորչում էին։ Ամենից յերկարը դիրեկտորի տխուր քիթն էր։

## ՎՈԳՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Յերկար, մինչև ուշ գիշեր շարունակվեց ժողովը։ Վերջապես վորոշեցին.

«...Գիմնազիայի դիրեկտոր Յուվենալ Բոգդանովիչ Սամոյլիցկուն հեռացնել պաշտոնից։ Դիրեկտորի պաշտոնը ժամանակավորապես հանձնել գիմնազիայի ուսուչ Նիկոլայ Իլյիչ Ռոմաշովին, մինչև շրջանի վարչությունը կհաստատի նրան»։

Նախկին դիրեկտորը հեռացավ ժողովից։ Նա գնաց լուռ ու վոչ վոքի հետ բարև չասաց։ Ռոմաշովը հաղթական տեսքով հարթում էր մորուքը։ Նոր դիրեկտորի գոհ մորուքն այժմ արդեն խայթոցի չէր նմանում։ Ավելի շուտ նման էր մեջտեղը կերած կալաչի մեծ փափուկ կտորի։

Սրտապնդված Տուրկան կմկմաց ընտրովի վարչություն հիմնելու մասին։ Ընդհանուր ծիծաղից ճրագի բոցը վեր թռավ։ Մինչև անգամ Տուրկայի ուսին ձեռքով խփեցին։

— Եհ, ջահելություն, ջահելություն. տաքարյուն։

— Առաջին դասարանի խլնքոտներից կազմված ընտրովի վարչություն... հա-հա-հա. թուլացանք, թուլացանք ծիծաղից։

Տուրկան ամոթահար քիթը վեր էր քաշում և ձեռքով շփում գոտու թիթեղը։

Ժողովն անցավ մի ուրիշ հարցի։ Ծնողները հորանջում էին և բերանները ծածկում ձեռքի ափերով։ Տուրկայի աչքերը փակվում էին։ Ճրագի կանաչ պարաշյուտը սավառնում էր սեղանի վրա։ Նրա բոցը փոքրիկ ու սուր ճառագայթներ էր գցում։ Ապակու



վրայից ալիքներով տաքություն էր տարածվում։ Բոլորի քունը սաստիկ տանում էր, իսկ ողանցքը պտըտվում էր։

— Ուջժ-ուրրրժ-ուու-ու...

Դիրեկտորին վռնդեցին, և Տուրկան իր պարտականությունը կատարած էր համարում։ Բայց այդտեղ նստած էին ուսուցիչները, ծնողները, վերջապես նոր դիրեկտորը, և վեր կենալ ու ուղղակի գնալ, նրան թվում էր, վոր անկարելի յէ։ Յեվ Տուրկան պատրաստեց մի յերկար, պատճառաբանված նախադասություն՝ թե նրա ներկայությունն այլ ևս հարկավոր չէ, և նա հնարավոր է համարում թողնել ժողովը։ Տուրկան վեր կացավ։ Նա բերանը բաց արեց, վոր պատրաստածն ասի և հանկարծ հենց առաջին բառը մոռացավ։ Սկսեց այդ բառը փնտրել, բայց մյուսներն էլ մոռացավ։ Կարծես թե ուրախացած բառերը դուրս էին թռել Տուրկայի քնակոլոլ գլխից և թռչկոտում էին նրա քնաթաթախ աչքերի առաջ։ Իսկ ամենադժվար և ամենայերկար «ներկայություն» բառը հագել էր վոսկե կոճակներով համազգեստ և հանդգնաբար լապտերի ապակու մեջ մտել։ Բոցը լեզու յեր հանում Տուրկայի վրա, իսկ «ներկայություն» բառն իր «ն» տառի գլուխը նետում էր Տուրկայի վրա։ Այդ «ն» տառը ամրացրած էր երկար ռետինի կտորի վրա։ Ռետինը յետ էր թռչում Տուրկայի գլխից այն թղթե գնդակների նման, վոր չինացի Զի-Սուն-չան վաճառում էր շուկայում։

— Ի՞նչ եք կամենում ասել,— հարցրեց նախագահը։

Ամենքն էլ դարձան դեպի Տուրկան։

Տուրկան հուսահատ ձգձգեց վերնաշապկի փեշերը և վճռականապես ասաց։

— Թույլ տվեք դուրս գնամ։

## ՑԱՊ-ՑԱՐԱՊԻՉԸ ՎԵՐՋԱԿԵՏ Է ԴՆՈՒՄ

Շուրկան փողոց դուրս յեկավ։ Յերկինքը գրատախտակի պես սև էր։ Ամպերը ջնջել էյին յերկնքի յերեսից աստղանկարները։ Քաղաքը թաղվել էր խավար լռության մեջ։ Շուրկան ուսուցչանոցից դուրս գալուց հետո առաջին րոպեներին այս ու այն կողմն էր ընկնում այս թանձր խավարի մեջ, ինչպես ճանճը թանաքի կաթիլի մեջ։ Հետո իր առաջ տեսավ մի մութ կերպարանք։

— Շո՛ւրկա, դո՞ւ յես։ Ինչքան ժամանակ է քեզ եմ սպասում... Շան պես փետացել եմ։

— Ո՞հ, Ատլանտիդա,—ճանաչեց Շուրկան։

— Հը՛, ասա, ի՞նչ արիք։ Պատմի՛ր։

Բառերն էֆեկտով յերկարացնելով, Շուրկան ասաց.

— Էլ ի՞նչ պատմեմ։ Ի հարկե, մենք մեր նպատակին հասանք։ Ջկան Աչքի վզակոթին տվեցինք, իսկ նրա տեղն առայժմ նշանակեցինք տեսչին։ Բայց դու ի՜նչ լավ գլորվեցիր։

— Սպասի՛ր, իսկ ընտրովի վարչություն ունենալու մասին ի՞նչ արեցիք։

— Ընտրովի վարչությո՜ւն, ընտրովի վարչությո՜ւն... Ա՛յ քեզ ընտրովի վարչություն։ Առ, կեր։ Ծիծաղեցին վրաս քո ընտրովի վարչության պատճառով։

— Ոհո՜, լա՛վ է։ Ի՞նչ եք արել վոր։ Հասե՛լ ենք մեր նպատակին... հասե՛լ ենք... Սա հեղափոխությո՜ւն է։ Դիրեկտորին հեռացրել եք, իսկ նրա տեղը տեսչին եք նշանակել։ Ե՞հ...

— Ստյոպկան անհետացավ մթության մեջ։ Գվոզդիլոն ուսերը լուրջ կերպով վեր քաշեց և տուն գնաց։



Շուտով մութ հրապարակի վրա յերևացին ուսուցիչներն ու ծնողները։

Վերջին գնացողը Ցապ-Ցարապկինն էր։ Նա յետ մնաց, վոր կոնդուկտի մեջ արձանագրի Ստյոպկա Ատլանտիդայի նոր հանցանքը։ Կոնդուկտի մեջ Գավրիա Ստեփանի էջում Ցապ-Ցարապկինի ձեռքով մանրամասն գրվեց Ատլանտիդայի արկածները Մադագասկար կղզու վրա։ Այսպես այդ նշանավոր որը վերջացավ կոնդուկտով Ցապ-Ցարապկինի պոչավոր ստորագրությամբ։

## ՄԻԱՎՈՐԻ ՌԵՖՈՐՄԸ

Ուսուցչանոցում նոր պատկեր կախեցին. դա Ալեքսանդր Ֆեոդորովիչ Կերենսկին էր, մազերը բիզ-բիզ, կանգնած օձիքի անկյունները Քերովբե հրեշտակի թևերի պես հետ ծալված։

Մի հատուկ մաղթանքով ուսուցիչները յերդվեցին հավատարիմ լինել Նոր կառավարությանը։ Բոլոր դասարանների ընդհանուր աղոթքը վերացրին։ Առավոտները, դասերից առաջ, հենց դասարանում մի կարճ աղոթք էյին ասում։ Հետո մեր ազատամիտ նոր դիրեկտորը վորոշեց մի համարձակ քայլ անել—նա վերացրեց թվանշանները։

— Այդ բոլոր միավորները, յերկուսները, մինուսով հինգերը հակամանկավարժական են,—պնդում էր Ռոմաշովը ծնողական կոմիտեյի առաջ։—Սա հիվանդոտ մրցում է առաջ բերում աշակերտների մեջ, վատ սպորտ է ստեղծում, ընկնում են թվանշանների յետևից։

Դրանից հետո ուսուցիչները մեր որատետրերում և տետրերում այլևս միավորներ և հինգեր չեյին գրում։ Միավորի տեղ գրում էյին «վատ»։ Յերկուսի փոխարեն՝ «անբավարար»։ Յերեքին փոխարինում էր «բա-

վարար»-ը։ «Լավ»-ը նշանակում էր առաջվա չորսը։ Իսկ «գերազանց»-ը հավասար էր հինգին։ Հետո, վորպեսզի առաջվա մինուսն ու պլյուսը իրենց նշանակությունը չկորցնեն, սկսեցին գրել «շատ լավ», «վոչ լրովին բավարար», «համարյա գերազանց» և այլն։ Իսկ լատիներենի ուսուցիչ Տարականիուսը, վոր շատ դժգոհ էր այս ռեֆորմից, մի անգամ Բինդյուգին գրավոր աշխատանքի համար գրել էր մի ինչ վոր անբացատրելի գնահատական «բոլորովին վատ, յերկու մինուսով»։ Այդպես էլ նշանակել էր յեռամյա գնահատականը։

Բինդյուգն այսպես էր հաշվում.

— Յեթե «վատը» ընդունենք միավոր, ապա լատիներեն լեզվի իմ յեռամյա թվանշանը հասարակ աչքով չես էլ տեսնի։ Սատանան գիտե, թե ինչի յե հավասար այն։ Լավ է, յեթե գոնե զերո լինի, իսկ յեթե ավելի պակաս լինի...

## ԿԱՆԱՆՑ ԿՈՄԻՏԵՅԻ ՀՈՎԱՆԱՎՈՐԱԾԸ

Մեր բնակված տան բակը պատկանում էր հացի առևտրով պարապող մի մեծ բանկի։ Ծածկի տակ շարունակ լսվում էր քամհար մեքենայի ձայնը։ Վոսկեգույն ցորենի թմբեր էյին բարձրանում կտավի վրա,



իսկ լայնաթիկունք կշեռքը իր յերկաթե ուսերը ձըգձգում էր այն մարդու պես, վորն ուզում է մեջքը քորել աննկատելի կերպով։ Ամբողջ օրը կանայք բակում յերկար ասեղներով պարկեր էյին կարկատում։ Նրանք շատ տխուր յերգեր էյին յերգում սիրո և բաժանման մասին։

Պարկ կարկատողներից մեկը խոհարարուհու պաշտոնով ծառայության մտավ բանկի ծառայողներից մեկի մոտ։ Այդ խոհարարուհին մի վորդի ուներ Արկաշա անունով։ Արկաշան ցածրահասակ էր և պեպենոտ։ Նրա դեմքը նման էր վրան ցորեն շաղ տված կտավի։ Նա շատ ընդունակ յերեխա յեր և սովորելու խիստ ցանկություն ուներ։ Քաղաքում կանանց բարեգործական կոմիտե կար։ Արկաշի մոր տանտիրուհին այս կոմիտեյի անդամ էր։ Նրա առաջարկությամբ կոմիտեն ուշադրության առավ այս ընդունակ յերեխային, և Արկաշա Պորտյանկին, շատ հաջող քննություն տալով, ընդունվեց մեր դասարանը վորպես ձրիավարժ աշակերտ։

Յես շատ մոտ բարեկամացա լուրջ և խոհեմ Արկաշայի հետ։ Նա սուս ու փուս տղա չէր, բայց նրա բոլոր անմեղ չարությունները, ուրախ կատակները խիստ տարբերվում էյին նրա դասընկերների վայրենի կոպտություններից։ Նա շատ լավ էր սովորում և ամեն յեռամսյակին խոհանոց էր բերում և մորը տալիս հինգերով լիքը վկայականը։ Ամեն մի քառակուսու մեջ նստած էյին իրար նման հինգեր։ Մինչև անգամ բաց թողած դասերի թիվն էլ սովորաբար հինգ էր լինում։ Վկայականի տակը գրված էր. «Ծնողների ստորագրությունը»։ Խոհարարուհին յուղոտ մատներով, վկայականը կեղտոտելով և առանձին հպարտությամբ ստորագրում էր. «Պերասկովիա Պորտյանկ», վերջաս-

նելուց նա դողդոջուն ձեռքով կետ եր դնում այնպես, վոր կարծես թե մոմ եր վառում սրբի պատկերի առաջ։

## ՊԼՅՈՒՍ ՄԻՆՈՒՍ ԼՅՈՒՍԻԱ

Ամբողջ դասարանը գիտեր, վոր Արկաշա Պորտյանկին սիրահարված ե։ Գրատախտակի վրա գրում եյին նրա սիրո անհերքելի ֆորմուլը. «Արկաշան + Լյուսիան = !!»։ Լյուսիան կանանց կոմիտեյի հարուստ նախագահուհու աղջիկն եր։ Արկաշայի մայրն իմանալով այս, գլուխն օրորում եր.

— Տեսնո՞ւմ ես, ինչպիսի սիմպատիա յե գաել... Կիվալեր... Իսկական պատիժ։

Բայց Լյուսիան շատ եր հավանում Արկաշային։ Նա գալիս եր պարտեզի զրուցարանը, և նրանք այնտեղ յերկուսով հետաքրքիր գրքեր եյին կարդում։ Արեը թափանցելով տերևների արանքներից, նրանց ծածկում եր իր տաք կլոր բծերով։ Մի անգամ Արկաշան Լյուսիայի համար շուշանի մի փունջ բերեց։

Ծննդյան տոներին Լյուսիան տոնածառ ուներ։ Լյուսիան, առանց մորը հարցնելու, հրավիրել եր Արկաշային։ Արկաշկան մաքրեց, արդուկեց իր համազգեստը և գնաց տոնածառ։ Նա մտավ խիստ լուսավորված մուտքը և արդեն յերևակայությամբ վայելում եր այդ յերեկույթի ուրախությունները, վոր հանկարծ Լյուսիայի մայրը, բարձրահասակ մի տիկին, ահաբեկված, մետաքսե շորերը խշխշացնելով, կանգնեց նրա առաջ։ Նա շատ անհանգստացավ, յերբ խոհարարուհու վորդուն տեսավ իր պարահանդեսին։

— Տղա՛ս, մի ուրիշ անգամ յեկ,— ասաց նա քաղցր ձայնով,— և յեկ բակի կողմից։ Լյուսիան այժմ զբաղված ե. հյուրեր ունի։ Ահա՛, վերցրու, թե՛ քեզ և թե՛ մորդ համար քաղցրեղեն։





Այդ օրվանից Արկաշան այլ ևս Լյուսիային չտեսավ։ Նա շատ էր տխրում։ Նիհարեց և լավ էլ չէր սովորում։

Հետո, փետրվար ամսին Տրոյիցկի հրապարակի վրա լավ մուշտակ հագած մի գեր պարոն տաքացած ասում էր հավաքված ժողովրդին, թե այժմ այլևս աղաներ, պարոններ ու ստրուկներ չկան, ամենքը հավասար են։ Արկաշան հավատաց նրան, մտածելով, թե քանի վոր հենց ինքը պարոնն է ասում թե պարոններ չկան, ուրեմն այդ ճիշտ է։ Յեվ Արկաշկան վորոշեց Լյուսիային նամակ գրել։ Ահավասիկ այդ նամակը, վոր մի քանի տարի հետո գտել եմ կոնդուիտում շուշանի չորացած ցողունների հետ միասին։

## ՆԱՄԱԿԸ

«Հարգելի, թանկագին, սիրելի Լյուսիա.

Ինկատի ունենալով, վոր այժմ ցարական ռեժիմի հեղաշրջում տեղի ունեցավ, այդ պատճառով էլ ամենքը հավասար են և ազատություն է։ Աղաներ և պարոններ այլ ևս չկան, և վոչ վոք ամենևին իրավունք չունի տոնածառից վզից տալով դուրս անել և վիրավորել ինձ, ինչպես առաջին որը։ Իսկ յես շատ տխուր եմ քո պատճառով, այնպես վոր նիհարել եմ, մինչև անգամ մայրիկս էլ է ասում։ Յեվ սահելու էլ չեմ գալիս, վորովհետև չեմ ուզում, և վոչ թե այն պատճառով, ինչպես վոր Լիզարսկին է ասում, թե իբր չեմ գալիս, վորովհետև վիրավորվում եմ, յերբ տեսնում եմ նրան Լյուսիայի հետ սահելիս։ Ասում է, դատա՞րկ նստեց։ Տեսա՞վ գլուխն յեկածը։ Ե՛հ, թող դուրս... (ջնջված է) սատկի։ Ամենևին, մազաչափ անգամ չեմ նախանձում։ Նրան լավ ուտացրին, ինչպես միապետականի (այսինքն թագավորի կողմնակցի)



այդ պատճառով էլ բարկանում է։ Իսկ այժմ, սիրելի Լյուսիա, յես և դու կարող ենք լինել ինչպես քույր ու յեղբայր, ինչպես յեթե կամենում եք։ Հեղափոխությունը նրա համար է, վոր այժմ մենք հավասար մարդիկ ենք։ Թեպետ դուք, ինչպես, հարյուրապատիկ լավ եք։ Չեմ կարող ասել, թե վորքան ծանր է իմ դրությունն առանց ձեզ։ Ազնիվ խոսք եմ ասում, գուցե չհավատաք։ Այ, նստած դաս եմ անգիր անում, բայց շարունակ ձեր մասին եմ մտածում և մինչև անգամ յերազումս էլ եմ տեսնում։ Ասածս պարզ ճըշմարտություն է։ Իսկ դուք շարունակ Պետկա Լիզարսկու հետ եք լինում, վորն ինձանից ամբողջ խնդիրն արտագրեց և հետո սկսեց պարծենալ։ Յեվ նա ձեզ հետ թևանցուկ է ման գալիս։ Թեպետ յես չեմ նախանձում, բայց մի փոքր բավական տարօրինակ է, վոր դուք Լյուսիա, խելոք, գեղեցիկ, լավ ու զարգացած աղջիկ եք և թևանցուկ ման եք գալիս միապետականի հետ։ Չէ՞ վոր այժմ ազատություն է, հավասարություն և յեղբայրություն, և ձեզ ինձ հետ տեսնելիս չեն նախատի։ Իսկ Պետկայի պատճառով յես ձեզ վրա չեմ բարկանում, վորովհետև այն ժամանակ թագավոր կար և յերեք հարյուր տարվա միապետություն։ Յես կյանքումս վոչ մի լավ բան չեմ տեսել մորս հետ, և ահա հեղաշրջումը և մեկ էլ դուք, սիրելի Լյուսիա... կյանքումս յերբեք այնպես լաց չեմ յեղել, ինչպես այն որը։

Յես չկարողացա դիմանալ և նամակ գրեցի, թեպետ սա իմ հպարտությանը դեմ է։ Յեթե դուք ինձ չեք մոռացել և ուզում եք վերանորոգել սկզբից, մի տոմսակ գրեցեք։ Յես ուրախությունից յերկինք կթռչեմ։

Ձեզ շուշան եմ ուղարկում, դա այն փնջից է, վոր...

Ձեր Ա.րկադի Պուտյանկո, աշակերտ III դասարանի։ Ներեցեք ջնջված տեղերի համար։ Խնդրում եմ այս նամակը պատռեցեք»։

## ՈՒՐԱԽ ՄՈՆՈԽՈՐԴՈՎԸ

Հանրահաշվի ուսուցիչը տարօրինակ ազգանուն ուներ—նրան Մոնոխորդով էյին ասում։ Նա աննկարագրելի չեկ մազեր և բեհեմոտի հաստ այտեր ուներ։ Մենք նրան «Շիկահեր բարգամոտ» էյինք անվանում։ Մոնոխորդովի աչքի յեր ընկնում իր անհասկանալի, չարագուշակ և անջնջելի ուրախ բնավորությամբ։ Նա շարունակ հրհռում էր։

— Հի-հի-հի,—բարձր ծիծաղում էր բարակ ձայնով,—հի-հի-հի... Դուք վոչինչ չգիտեք։ Այստեղ, հի-հի-հի... պլյուս պետք է լինի և վոչ թե մինուս... հի-հի... ահա յես ձեզ... հի-հի-հի... միավոր... հի-հի-հի.. դրեցի։

Հանրահաշվի դասի ժամանակ Արկաշան նամակը սեղանի տակ թագցրած մեկ անգամ ել էր կարդում։ Այնքան էր տարվել, վոր չնկատեց, թե ինչպես Մոնոխորդովը թագուն մոտեցավ և ձեռքը սեղանի տակ կոխեց։ Արկաշան հետ քաշվեց, բայց արդեն ուշ էր—չեկ մազերով ծածկված հաստ մատներն արդեն գավթել էյին նամակը։

— Հմ-հմ-հմ...—վոգևորվել էր շիկահեր մանկավարժը,—նամակ։ Հի-հի... տեսնենք ինչ է գրված... Ինչով եք զբաղված իմ... հի-հի... դասերին։

— Խնդրում եմ, նամակս տվեք—գոռաց Արկաշան, ամբողջ մարմնով դողալով։

— Ձե... հի-հի... ներեցեք։ Սա... հի... իմ ավարն է...

Նրա չեկ հրհռոցով լցվել էր դասարանը։ Մոնոխորդովը բարձրացավ ամբիոն։ Ամբիոնի փայտեղեն



պլպլուն հորիզոնի վրա չեկ արև բարձրացավ։ Մոնոխորդովը խորասուզված կարդում էր։ Գրատախտակի մոտ կանգնած կավճոտ մատներով մոռացված աշակերտը ձանձրանում էր։ Մի անկյունում կանգնած էր մի պատժված աշակերտ և ծամածություններ էր անում։ Մանկավարժը կարդում էր։

— Հի-հի-հի... ուշագրավ է... հրհռաց նա բարձրաձայն, ընթերցումը վերջացնելուց հետո։ —Հետաքրքիր է... նամակ... հի-հի... իր հոգու հատորին։ Վորպես խրատ... հի-հի-հի... կարող եմ բարձր ձայնով կարդալ։

— Կարդացեք, կարդացեք — մունչաց ուրախացած խլացնելով գունատված Արկաշայի խնդիրները։

Ցեվ Մոնոխորդովը քիչ կանգ առավ, վոր կուշտ

հրհռա ու ամբիոնից բարձր ձայնով կարդաց Լյուսիային գրած նամակը։ Սկզբից մինչև վերջը։ Դասարանը հրհռում էր։ Արկաշան մեռած նստած էր ինչպես անարգված։

## ՇՈՒՇԱՆՆԵՐԸ ԿՈՆԴՈՒԻՏՈՒՄ

— Վաղ ես սկսում, Պորտյանկո, — ծիծաղում էր ուսուցիչը — Հի-հի... Վա՛ղ է, վա՛ղ։

Արկաշան գիտեր, վոր միևնույն է, արդեն էլ չի կարելի այդ ապականված նամակն ուղարկել։ Բոլոր այն մեծ-մեծ խոսքերը, վոր այժմ ծաղրի էյին յենթարկել, նրան իրեն էլ իսկապես հիմար բաներ էյին թվում։ Բայց տանջող վիրավորանքը նրան համարձակություն տվեց։

— Կիրյակ Գալակտիոնովիչ, խնդրում եմ, նամակը տվեք ինձ, — կամացուկ ասաց նա նվաղած ձայնով։ Դասարանը միանգամից դադարեց ծիծաղել։

— Վոչ, — ժպտում էր Մոնոխորդովը, — Այս մենք կոնդուիտական ցուցակ... հի-հի...

Այդ ժամանակ Արկաշան սկսեց աղմուկ բարձրացնել։

— Դուք չեք համարձակվի, ճչաց նա վոտքերը դոփելով, — չեք համարձակվի... Ուրիշի նամակը... Միևնույն է, թե գողացել եք...

— Դուրս կորիր դասարանից, — գոռաց Մոնոխորդովը՝ ուռած այտերը ցնցելով։ — Մի մոռանա, վոր դու ձրի յես սովորում։ Դուրս կշպրտեն... հի-հի... ինչպես ոդապարիկ։

Զորացած շուշանը հեշտությամբ ճրթճրթաց ծածկված մատյանում։ Դիրեկտոր Ռոմաշովը յերկար նախատում էր Արկաշային։

— Արիկա, — մեղմ ու քնքույշ ասում էր նա, —



ինչպես ես համարձակվում մեծերի հետ այդպես խոսել։ Ցես քեզ կվռնդեմ, փուչ կենդանի։ Տաժանակիր աշխատանքի կերթաս, անպիտան... Խելքիդ ինչ է փչել, հանդուգն. հ՞ը։

Արկաշկին հիշեցնում էյին, վոր նա ձրի չէ սովորում, սովորում է բարի մարդկանց վողորմությամբ, վոր հեղափոխությունն այստեղ գործ չունի։ Ամեն բանից առաջ պետք է կարգապահություն լինի, և յեթե կարգապահությունը խանգարվի, Արկաշկան հենց առաջինը դուրս կշպրտվի։ Արկաշկայի մասին գրեցին կոնդուիտում։ Դասերից հետո յերկու ժամ նրատած էր առանց ճաշի։ Այս բոլորից հետո Արկաշկան հասկացավ միայն այն, վոր աշխարհը դեռ էլի առաջվա պես բաժանված է յերկու խմբի՝ ձրի և վճարովի։

հրհռա ու ամբիոնից բարձր ձայնով կարդաց Լյուսյա-յին գրած նամակը: Սկզբից մինչև վերջը: Դասարանը հրհռում էր: Արկաշան մնացած նստած էր ինչպես անարգված:

## ՇՈՒՇԱՆՆԵՐԸ ԿՈՆԴՈՒԻՏՈՒՄ

— Վաղ ես սկսում, Պորտյանկո, — ծիծաղում էր ուսուցիչը — Հի-հի... Վաղ է, վաղ:

Արկաշան գիտեր, որ միևնույն է, արդեն էլ չի կարելի այդ ապականված նամակն ուղարկել: Բոլոր այն մեծ-մեծ խոսքերը, որ այժմ ծաղրի էյին յենթարկել, նրան իրեն էլ իսկապես հիմար բաներ էյին թվում: Բայց տանջող վիրավորանքը նրան համարձակություն տվեց:

— Կիրյակ Գալակտիոնովիչ, խնդրում եմ, նամակը տվեք ինձ, — կամացուկ ասաց նա նվաղած ձայնով: Դասարանը միանգամից դադարեց ծիծաղել:

— Վոչ, — ժպտում էր Մոնոխորդովը, — Այս մենք կոնդուիտական ցուցակ... հի-հի...

Այդ ժամանակ Արկաշան սկսեց աղմուկ բարձրացնել:

— Դուք չեք համարձակվի, ճչաց նա վոտքերը դոփելով, — չեք համարձակվի... Ուրիշի նամակը... Միևնույն է, թե գողացել եք...

— Դուրս կորիր դասարանից, — գոռաց Մոնոխորդովը՝ ուռած այտերը ցնցելով: — Մի մոռանա, որ դու ձրի յես սովորում: Դուրս կշպրտեն... հի-հի... ինչպես ոդապարիկ:

Զորացած շուշանը հեշտությամբ ճրթճրթաց ծածկված մատյանում: Դիրեկտոր Ռոմաշովը յերկար նախատում էր Արկաշային:

— Արիկա, — մեղմ ու քնքույշ ասում էր նա, —



ինչպես ես համարձակվում մեծերի հետ այդպես խոսել: Ես քեզ կվռնդեմ, փուչ կենդանի: Տաժանակիր աշխատանքի կերթաս, անպիտան... Խելքիդ ինչ է փչել, հանդուգն. հը՞:

Արկաշկին հիշեցնում էյին, որ նա ձրի չի սովորում, սովորում է բարի մարդկանց վողորմությամբ, որ հեղափոխությունն այստեղ գործ չունի: Ամեն բանից առաջ պետք է կարգապահություն լինի, և յեթե կարգապահությունը խանգարվի, Արկաշկան հենց առաջինը դուրս կշպրտվի: Արկաշկայի մասին գրեցին կոնդուիտում: Դասերից հետո յերկու ժամ նըստած էր առանց ճաշի: Այս բոլորից հետո Արկաշկան հասկացավ միայն այն, որ աշխարհը դեռ էլ առաջվա պես բաժանված է յերկու խմբի՝ ձրի և վճարովի:

---

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

# ԿՈՆԴՈՒԻՏԻ ՎԵՐՋԸ

## ՈՒԶՈՒՄ ԵՄ ԺՈՂՈՎԻ ՆՍՏԵԼ

*Ամեն տեղ ժողովներ, նիստեր, միտինգներ էյին լինում: Բոլոր հասակավորները քաղաքականությամբ էյին զբաղված: Մինչև անգամ մայրիկս էլ էր պատգամավորների խորհրդի անդամ ընտրվել կանանց շրջանից: Իսկ հայրս նոր դումայի նախագահի ընկերն էր: Դուման կռվում էր խորհրդի հետ, այդ պատճառով էլ հայրիկս կռվում էր մայրիկիս հետ: Քաղաքական գործունեության ձգտումը տանջում էր ինձ: Յես էլ էյի ուզում ժողովներին մասնակցեմ, դուրս գամ ճառելու, ընտրեմ: Այս միջոցին Սարատովից իմ բարեկամ Վիտյա Եքսպրոմովից մի նամակ ստացա: Վիտյան մեծ հափշտակությամբ նկարագրում էր բոյսկաուտների այն ջոկատը, վորի անդամներից էր և ինքը:*

*Յես էլ վորոշեցի գիմնազիստներից բոյսկաուտների մի ջոկատ կազմակերպել:*

*Յես շատ գրքեր ձեռք բերեցի «սկաուտինգի» սիստեմի մասին, կարդացի և մի անգամ դասերից հետո, մինչև վոր աշակերտները կկապեյին իրենց պայուսակները, վեր մագլցեցի ամբիոն և դարձա ընկերներիս մեծ ճառով:*



*— Պարոննե՛ր, — ճառաբանում էյի յես, — բավական է, վորքան դասամիջոցներին ջարդվեցինք, թռչկոտեցինք և մնացինք ջոկ-ջոկ առանձնացած: Մենք պետք է ամենքս էլ միասին լինենք, այսինքն միանանք: Յեկեք մի այսպիսի կամպանիա, մի համերաշխ ջոկատ, մի խմբակ կազմակերպենք: Սուտ չխոսենք, չծխենք, չհայհոյենք... Կանոնավոր քայլել կսովորենք խմբովին, ակումբ կսարքենք, ժողովներ կանենք, բոյառաջնորդ կընտրենք, պատանի խուզարկուներ, բոյսկաուտներ կդառնանք: Ի՞նչ եք կարծում... Ո՞վ է ուզում բոյսկաուտ լինել:*

*Համարյա թե ամբողջ դասարանը կամեցավ բոյսկաուտ գրվել: Անտանելի աղմուկ բարձրացավ: Յեկավ Նիկոլայ Իլյիչը: Իմանալով աղմուկի պատճառը, նա հայտարարեց, թե յեթե աղմուկը կշարունակվի, այդ դեպքում սկաուտ գրվելուց առաջ գրված կլինենք կոնդուիտում:*

## ՅԵՐԵՔ ՄԱՍԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԿՈՄԲԻՆԱՑԻԱ

*Հետևյալ կիրակի որը հարևան դպրոցում կայացավ բոյսկաուտների առաջին ժողովը: Զարմացա, վոր շատ գիմնազիստներ էյին յեկել և՛ ուրիշ դասարաններից, և՛ մինչև անգամ մի քանի հոգի էլ բարձր դասարանի աշակերտներից:*

*Մենք ժողովի էյինք նստած իսկական հասակավորների նման: Ճառեր էյին ասում, արձանագրություն կազմում:*

*Կազմակերպվեց յերկու ջոկատ:*

*Գլխավոր շտաբի հրամանատար ինձ ընտրեցին: Անասնաբուժի վորդուն՝ Շալֆերովին ընտրեցին գանձապահ: Նա ամենաազնիվ տղան էր համարվում մեր մեջ:*

*Կանոնադրությունն ընդունվեց. արգելվում էր*

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

# ԿՈՆԴՈՒԻՏԻ ՎԵՐՋԸ

## ՈՒԶՈՒՄ ԵՄ ԺՈՂՈՎԻ ՆՍՏԵԼ

Ամեն տեղ ժողովներ, նիստեր, միտինգներ եյին լինում։ Բոլոր հասակավորները քաղաքականությամբ եյին զբաղված։ Մինչև անգամ մայրիկս ել եր պատգամավորների խորհրդի անդամ ընտրվել կանանց շրջանից։ Իսկ հայրս նոր դումայի նախագահի ընկերն եր։ Դուման կռվում եր խորհրդի հետ, այդ պատճառով ել հայրիկս կռվում եր մայրիկիս հետ։ Քաղաքական գործունեության ձգտումը տանջում եր ինձ։ Յես ել եյի ուզում ժողովներին մասնակցեմ, դուրս գամ ճառելու, ընտրեմ։ Այս միջոցին Սարատովից իմ բարեկամ Վիտյա Եքսպլոմովից մի նամակ ստացա։ Վիտյան մեծ հափշտակությամբ նկարագրում եր Բոյսկաուտների այն ջոկատը, վորի անդամներից եր և ինքը։

Յես ել վորոշեցի գիմնազիստներից բոյսկաուտների մի ջոկատ կազմակերպել։

Յես շատ գրքեր ձեռք բերեցի «սկաուտինգի» սիստեմի մասին, կարդացի և մի անգամ դասերից հետո, մինչև վոր աշակերտները կկապեյին իրենց պայուսակները, վեր մագլցեցի ամբիոն և դարձա ընկերներիս մեծ ճառով։



— Պարոններ, — ճառաբանում եյի յես, — բավական ե, վորքան դասամիջոցներին ջարդվեցինք, թռչկոտեցինք և մնացինք ջոկ-ջոկ առանձնացած։ Մենք պետք ե ամենքս ել միասին լինենք, այսինքն միանանք։ Յեկեք մի այսպիսի կամպանիա, մի համերաշխ ջոկատ, մի խմբակ կազմակերպենք։ Սուտ չխոսենք, չծխենք, չհայհոյենք... Կանոնավոր քայլել կսովորենք խմբովին, ակումբ կսարքենք, ժողովներ կանենք, առաջնորդ կընտրենք, պատանի խուզարկուներ, բոյսկաուտներ կդառնանք։ Ի՞նչ եք կարծում... Ո՞վ ե ուզում բոյսկաուտ լինել։

Համարյա թե ամբողջ դասարանը կամեցավ բոյսկաուտ գրվել։ Անտանելի աղմուկ բարձրացավ։ Յեկավ Նիկոլայ Իլյիչը։ Իմանալով աղմուկի պատճառը, նա հայտարարեց, թե յեթե աղմուկը կշարունակվի, այդ դեպքում սկաուտ գրվելուց առաջ գրված կլինենք կոնդուիտում։

## ՅԵՐԵՔ ՄԱՍԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԿՈՄԲԻՆԱՑԻԱ

Հետևյալ կիրակի որը հարևան դպրոցում կայացավ բոյսկաուտների առաջին ժողովը։ Զարմացա, վոր շատ գիմնազիստներ եյին յեկել և՛ ուրիշ դասարաններից, և՛ մինչև անգամ մի քանի հոգի ել բարձր դասարանի աշակերտներից։

Մենք ժողովի եյինք նստած իսկական հասակավորների նման։ Ճառեր եյին ասում, աձանագրություն կազմում։

Կազմակերպվեց յերկու ջոկատ։

Գլխավոր շտաբի հրամանատար ինձ ընտրեցին։ Անասնաբուժի վորդուն՝ Շալֆերովին ընտրեցին գանձապահ։ Նա ամենաազնիվ տղան եր համարվում մեր մեջ։

Կանոնադրությունն ընդունվեց. արգելվում եր

խմել, ծխել, սուտ խոսել, հայհոյել. պետք էր քաղաքավարի լինել, բարի գործեր կատարել, միշտ ժըպտալ, ղեկավարներին փողոցում պատիվ տալ՝ յերեք մատը գլխարկին դնելով։ Յերեք մատը սկաուտի յերեք հիմնական պատվերների նշան էր, վոր սկաուտը հավատարիմ է աստծուն, իր խոսքին և ժողովրդին։ Գրքույկում իսկապես գրված էր. «...և թագավորին», բայց մենք փոխեցինք «և ժողովրդին» բառով։ Մի քիչ անախորժություն տեղի ունեցավ մեր մեջ նաև աստծու վերաբերյալ։ Ստյոպկա Ատլանտիդան հանկարծ հայտարարեց, վոր նա... չի հավատում աստծուն։ Ստիպված էյինք նրան համոզել, հավատացնել, թե աստված նույնն է, ինչ վոր մեր խիղճը և ընդհանրապես մի ձևականություն է։ Թե չէ, յեթե մի մատը ծալենք, տգեղ բան է դուրս գալիս, յերկմատանի խաչ է ստացվում։ Համոզեցինք։ Հանդիսավոր կերպով յերեք մատը վեր բարձրացնելով, Ստյոպկա Գավրիան արտասանեց յերդումը և խոստացավ մի շաբաթվա ընթացքում ծխելը թողնել։

Մենք վորոշեցինք աղջկերանց չընդունել։ Դա միաձայն վորոշում էր։

Ծնողներից շատերին մենք ցուցակագրեցինք վորպես մրցակից անդամներ։ Նրանք փող էյին մտցնում։ Այդ փողով մենք յեռագույն դրոշակ առանք և ավտոմոբիլի գնդակը կտրած մի հին շչակ։ Այս ահագին փողը պետք է փչեյինք, ինչքան ույժ ունեյինք։ Փողը մռնչում էր շատ անդուրեկան ձայնով։ Այս բանը կարող էր անել միայն Բինդյուգը։ Սրա համար էլ մենք նրան փողհար ընտրեցինք։ Բինդյուգն աշխատում էր. նա այնպես յեռանդով էր փչում, վոր ապրանքատար ավտոները շտապ մի կողմ էյին նետվում։ Իսկ շոգենավերն ուղղակի նախանձում էյին։



Մանկական գրադարանում մեզ սենյակ տվեցին։ Այդ ժամանակ այնքան շատ գիմնազիստներ անդամագրվեցին, վոր մենք նորից յերկու նոր ջոկատ կազմեցինք։

Ցես հիմա կոչվում էյի գումարտակի հրամանատար։ Տղաները փողոցում ինձ պատիվ էյին բռնում, և յես հպարտանում էյի։

## ՍԵՐ ՌՈԲԵՐՏԸ, ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԸ ՅԵՎ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ

Ամեն բան կատարված էր. սենյակը սարքել էյինք, դրոշակը կախել, յերդումն ընդունել. ղեկավարներն ընտրված էյին, կանոնադրությունն ուսումնասիրել էյինք, ամենքը գիտեյին, թե ով է սեր Ռոբերտ Բադեն-Պաուելը* և թե ինչ հարաբերություն ունի մեզ հետ սուրբ Գևորգ Պոբեդանոսեցը։

Այնուհետև թե ինչ պետք է անեյինք, այդ արդեն վոչ վոք չգիտեր։ Մի անգամ պահեստների քաղաքամասում ջոկատների մեջ պատերազմ կազմակերպեցինք, բայց քիչ էր մնում պահապանները մեզ ծեծեյին այս բանի համար։

Փորձեցինք բարի գործերով զբաղվել։ Տղաները պետք է շրջեյին քաղաքում, վորպես պահակներ, պետք է վերանորոգեյին նստարանները, շտկեյին ցանկապատերը, օգնեյին պառավ կանանց, նրանց զամբյուղները շուկայից տուն տանեյին։ Բայց գիմնազիստները քաղաքում շատ վատ հռչակ ունեյին։ Հենց առաջին պառավը, վորին Ատլանտիդան մոտեցավ և փորձեց զամբյուղը վերցնել, այնպիսի աղմուկ բարձրացրեց, վոր մարդիկ հավաքվեցին, և քիչ էր մնում Ստյոպկային ծեծեյին։

* Ռոբերտ Բադեն-Պաուելը անգլիական մի գեներալ է, սկաուտինգ սիստեմի հիմնադիրը։

Հետո պարզվեց, վոր մեր սկաուտները «բարի գործեր» են կատարում այս ձևով — նրանք գիշերով մտնում էին վորևէ անվնաս, կանգուն ցանկապատի և ջարդում այն, իսկ առավոտն այդ նույն տղաները հայտնվում էին բարեգործների դերում և լուրջ ու մռայլ դեմքերով շտկում ցանկապատը։ Սրա համար նրանց վարձատրում էին բարի գործերի մրցության ասպարեզում։

Գումարտակը ձանձրանում եր։ Մեր յերկնային շեֆից՝ Գեորգ Պոբեդոնոսեցից օգնություն սպասելը զուր եր։ Սեր Ռոբերտը պատկերի վրա ժպտում եր գլխարկի լայն յեզրերի տակից և չեր կարողանում վորևէ խորհուրդ տալ։

Արդեն սկսել եր տղաներից հաճախ ծխախոտի հոտ գալ։

## ԿՌՆԱՏ ԿԱՎԱԼԵՐՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՆԱՎԸ

Տասնյոթ թվի աշունը յեկավ։ Սա առաջին աշունն եր առանց թագավորի։ Այս աշունն էլ նման եր նախկին բոլոր աշուններին իր սեխերով, ծանծաղ ջրերով և վերաքննություններով։

Աշնանը Սարատով յեկավ Գեորգևսկի կավալերների մի ապրանքանավ։ Ապրանքանավի վրա տեղավորված եր «Ավարների թանգարանը»։

Ամբողջ գիմնազիան տարան այդ լողացող ազգասիրությունը տեսնելու։

Նավի կողքին կարմիր գույնով յերևում եր այս մակագրությունը. «Պատերազմը մինչև հաղթական վախճանը»։ Դրա տակից դավաճանաբար արտացոլում էին կեղտոտած «հավատի, թագավորի համար...» բառերը։ Ապրանքանավի բոլոր ծառայողները, ավագից սկսած մինչև նավաստիները, բոլորն էլ Գեորգևսկի



կավալերներ էին։ Ամենքն էլ համարյա կամ վոտք չունեին կամ ձեռք, վոմանք էլ թե այս, թե այն։ Տախտակամածի վրա թխթխկում, ճռճռում էին հենափայտերը։ Բայց ամենքի կրծքին Գեորգևսկի խաչեր էին ոլոռվում։

Յերեք ժամ թափառում էինք ապրանքանավի
վրա։ Մենք գուլֆներս կոխում էինք ավտորիտական բազ-
մազյուխմանոց թնդանոթների բերանը և շոշափում
տաճկական պատերազմական դրոշակների մետաքսը։
Մենք տեսանք գերմանական հսկայական «չեմոդանը»։
Այդպիսի մի «չեմոդանի» մեջ կարելի յեր ամփոփել
մի ամբողջ վաշտի մահը։ Յեվ վերջապես սիրալիր
առաջնորդը մեզ ցույց տվեց թանգարանի առանձնա-
պես ուշադրության արժանի մի իր։ Դա գերմանա-
կան մի սաղավարտ եր, վոր վերցրել էին սպանված
սպայի գլխից։ Դա նշանավոր եր նրանով, վոր վրան
կպած էին մնացել սպանվածի մազերը և չորացած
իսկական գերմանական արյունը... Առաջնորդն առան-
ձին հաճույքով եր շեշտում այս։

Առաջնորդն սպայական ուսադիրներ ուներ, յերկու բնական վոտքեր և շարժում եր իր յերկու առողջ ձեռքերը։

## ԳԵՎՈՐԳ ՊՈԲԵԴԱՆՈՍՑՈՒ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերադարձին Սոլոպկան վոչ մի խոսք չասաց։ Բայց այդ նույն օրը յերեկոյան նա յեկավ բոյսկաուտների շտաբը և հայհոյեց մեզ։

— Տղերք, նկատեցի՞ք, թե ինչ տեսակ օդ եր կանգնած այնտեղ... Ճիշտ այնպիսի հոտ, ինչպիսին լինում է մսավաճառների շարքում... արյան հոտ։ մարդու քիթ է ծակում հոտը։ Յեվ ինչ գլխներովն են տալիս այս բոլորը։ Ձե՞ վոր մարդիկ...

— Պետք է պատերազմել մինչև հաղթանակ,— կմկմաց մերոնցից մեկը։

— Հիմար ես դու, և ուրիշ վոչինչ,— հարձակվեց նրա վրա Սայոպան։— Լսել է զանգի ձայնը, բայց չգիտի, թե վորտեղ է այն... Իսկ ինչ օգուտ կունենանք մենք այդ հաղթանակից... Գրողը ձեզ տանի ձեր սուրբ Յեգորի հետ միասին... Զինվոր եք խաղում, Գեորգևսկի կավալեր... Բոյսկաուտ։ Յեթե պատերազմի կողմնակից եք, ել ինչո՞ւ անձնատուր յեղաք։ Հասկացա՞ք։ Ջնջիր ինձ։ Յերես եք առել։

Սայոպկան հանեց արգելված ծխախոտը և հանդըգնաբար սկսեց ծխել։ Ամենքն էլ շփոթված լուռ եյին։ Հետո Բինդյուգը կռնչաց, ծխախոտը հանեց ու մոտեցավ Ատլանտիդային։

— Սայոպա, թող ծխախոտս կպցնեմ,— ասաց նա,— խանութը փակեցի՞ք։ Հա՞յդա։

Սեր Ռոբերտ Բադեն-Պաուելը ժպտում եր պատի վրայից։ Ծիծաղելու վոչինչ չկար այդտեղ։ Բայց կանոնադրությամբ սկաուտը պետք միշտ ժպտա։ Սեր Ռոբերտն ատամները կրճտացնում եր, ինչպես Մոնոխորդովը, ինչպես հիմարը հուղարկավորության ժամանակ։

## ԱՏԼԱՆՏԻԴԱՆ

Մեկ որ աշխարհագրության դաս եր առաջին դասարանում։ «Կամչատկայից» վեր կացավ յերկրորդ տարվա աշակերտ Գավրիան, ձեռքը բարձրացրեց և հարցրեց.

— Ճի՞շտ է գրված գրքում, վոր իսկապես Ատլանտիդան* կա։

* Ատլանտիդան մի հին յերկիր է, վորն ըստ ավանդության, թաղվել է ովկիանոսի տակ։



— Ճիշտ է,— ժպտաց աշխարհագրության յեր-
կարաբեխ ուսուցիչ Կամիշովը,— ինչ է վոր։
— Նիկիտա Պալիչ, հենց այդ Ատլանտիդան յես
կգտնեմ։ Աստված գիտի։ Ովկիանոսում ճանապարհներ
կփնտրեմ և կգտնեմ։ Յես շատ խորն եմ խորասուզվում։
Ահա այս որվանից Սայոպկային Ատլանտիդա
եյինք կանչում։
Յեվ իրոք այս հանդուգն ադամխավորը, համար-
ձակ գործ ադամխին և թոկից փախած գյուղացին
մտածում եր փնտրել Ատլանտիդան։ Բարձրանալով
խոտաշրջիչ մեքենայի վրա, բուրալի փոշու մեջ փռըշ-
տալով, նա բացատրում եր ընկերներին իր ծրագիրը։
— Ջուրն այնտեղից դուրս կմղեմ, պալատները
կարգի կբերեմ և այնպիսի կյանք կկարգավորեմ վո՛ր։
Վոչ դիրեկտորներ կլինեն, վոչ լատիներեն լեզու։
վերջացավ։
Նա դժվարանում եր ապրել գիմնազիայի քարե
նեղ բնում։ Նա այնպիսի տաք գլուխ ուներ, ինչպես
բանջարանոցի ձմերուկը հուլիսին։ Շատ դժվարու-
թյամբ եր ըմբռնում գիտության իմաստությունները։
Իր հայրենի ագարակում ամբողջ տափաստանը նրա
համար մի բակ եր, վորի սկիզբն ու վերջը չեր յերե-
վում։ Նա սովորել եր գոռալ ուղտերի վրա և յեր-
կար ժամանակ նրա ուժեղ գոռգոռոցը վրդովում եր
գիմնազիական վայելուչ խաղաղությունը։
— Գա՛վրիա,— դուրս եր կանչում նրան ուսուցիչը։
— Հը՛,— թնդում եր նա ամբողջ դասարանովը
մեկ։ Յեվ հանդիմանություն եր ստանում։
Գաղաղած, նա փախավ «պատերազմի», բայց
նրան վերադարձրին հենց առաջին կայարանից։ Նորից
փախավ։ Բայց ելի բռնեցին։ Նա չեր սիրում այս մա-
սին վերհիշել։

*Նա կյանքի մասին տարօրինակ և ծիծաղելի հաս-
կացողություն ուներ։ Նախքան մի բան ուղիղ հաս-
կանալը, նա միշտ սկզբից այդ բանը տեսնում էր
«գլխիվայր»։ Պատմում են, թե նա սկզբում մինչև
անգամ գիրքն էլ էր «գլխիվայր» կարդում։ Յեվ այդ
առաջացել է այսպես։ Մեծ յեղբոր Սերգեյի հետ պա-
րապում էր մի վարժուհի։ Սերգեյը կարդալ էր սո-
վորում։ Ստյոպկան այդ ժամանակ շատ փոքր էր։
Նրան այբբենարան չեյին տալիս։ Վարժուհին այբբե-
նարանն առաջը դրած պարապում էր Սերգեյի հետ։
Իսկ Ստյոպկան մյուս կողմից արմունկներով բարձ-
րանալով սեղանի վրա ուշադրությամբ լսում էր դասը։
Նա տեսնում էր շուռ յեկած տառեր, այդպես էլ սպա-
վորում էր հիշողության մեջ։ Հենց այսպես էլ կար-
դալ սովորեց։ Նա կարդում էր աջից ձախ, գիրքը
շուռ տված։ Մեծ դժվարությամբ նրան հետո սո-
վորեցրին։*

*Գեորգևսկի հաշմանդամների ապրանքանավը այցե-
լելուց հետո Ստյոպկան շատ լրջացավ։ Շարունակ,
ուր որ կորչում էր, ինչ որ գիրք էր բերում։ Հա-
ճախ գալիս էր խոհանոց մեզ մոտ և զրույց անում
Աննուշկիու զինվորի հետ։ Այստեղ էր գալիս նաև
ավտորիացի գերի Կարդաշը։ Նրանք շատ տաք-տաք
վիճում էյին։ Մի անգամ Ստյոպկան մի քիչ ցրված
ինձ ասաց.*

*— Ա՛յ ձախորդություն։ Էլի պարզվում է, վոր
այս գործն առաջ վայրիվերո յեմ ծրագրել։ Փա՜հ, էհ...
իսկ ինչ վերաբերում է Ատլանտիդայի խնդրին, յես
կատարյալ տխմարություն եմ ցույց տվել։ Այնտեղ
էլ կարելի յե կյանքը կարգավորել հաջողակ։ Ահա քեզ
չորս գործողության վերաբերյալ մի փոքրիկ խնդիր։*





*Շուկայում կանայք հացի հերթում ծեծեցին քա-
ղաքագլխին։ Գիշերը շներն անհանգիստ վոռնում էյին։
Շատ թույլ էյին ճռռում ինքնապաշտպանության գի-
շերապահների ճռռանները՝ նրանց անփորձ ձեռքերում։
Սառատովանից քաղաքային դուման ժողովի յեր հա-
վ··քվել։ Վոլգայից անդուրեկան քամի յեր փչում։*

*Քամին ափին էր փչում ալիքների ցնցուղները։ Փողոց-
ներում փոշու պտույտների մեջ սավառնում էյին կո-
չերի թղթի կտորները. «Քաղաքացիներ, սահմանադիր
ժողով է լինելու...»։*

*Ժամի չորսին Վոլգայի այն կողմը, Սարատովում
մի ինչ վոր ծանր բան վայր գցեցին։ Քամին շառա-
չեց։ Պատուհանները զրնգզրնգացին։*

*...Բամմմ... էլի մեկ անգամ, կրկնապատկված.
բա-բմ... բա՛մմմմ...*

Թվում եր, թե հրեշավոր գրդնակով մի ինչ վոր չտեսնված, բազմավերստ յերկարությամբ գորգ են թափ տալիս: Պոկրովսկում մարդիկ կանգ եյին առնում, գլուխները վեր բարձրացրած յերկինք նայում: Յերկնքում թռչունններն այս ու այն կողմն եյին շպրտվում: Մի խումբ հետաքրքրվողներ բարձրացել եյին տանիքները, ինչպես միշտ անում են այն դեպքերում, յերբ հեռվում հրդեհ է լինում: Ներքևից աղաղակում եյին:

— Ե՛յ, դուք, ինչի՞ն եք նայում, ասացեք:

— Նայում ենք տեսարանին, — յուրջ պատասխանում են տանիքներից: — Ինչպե՜ս դղրդաց:

— Ո՞վ ումը:

— Դժվար է վորոշել: Կարծես յունկերներն են:

— Ե՜հ, պարզ է:

Գիմնազիայի տանիքից յերևում եր. Սարատովի գլխին յերևում եյին ծխի փոքրիկ սպիտակ քուլաներ: Հետո հանկարծ ուռչում եյին և դառնում մութ ու պատռտված ամպեր: Կես րոպեյից հետո դղրդյունը մեղմանում եր, տանիքի վրա իջնում եր ծանր հարված: Գիշերը Սարատովի գլխին բոսորագույն ցոլքեր հավաքվեցին. այդ գիշեր Պակրովսկում ճրագներ չվառեցին: Բորբոքված, մանիշակագույն գիշեր եր:

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

Առավոտյան ժամը 9-ին, ինչպես միշտ, հրապարակով վազեցին զինվորական վերարկուներ հագած յերկարափեշ դեմքեր: Պայուսակներում այս ու այն կողմն ընկնելով չրխկչրխկում եյին գրչամանները:

Դասարաններում սկսվեց մռայլ առավոտ: Ամբիոնը ճրճռաց քնատ պատմաբանի վոտքերի տակ: Որապահը, մեքենաբար յերեսը խաչակնքելով, գորգռաց աղոթքը:



Նա ցուցակը տալով, ինչպես պահանջվում էր հայտարարեց:

— Գավրիա Ստեփանը դասարանում չէ...

Պատմաբանը քնից չէր կշտացել. նա հորանջում էր և կզակը քորում:

— Յեվ ահա Մեծն Հուստինանոս կայսրը և.. մահ - հէ-հէ-հէ... Թեոդորոս...—հորանջը հաղթում էր նրան: — Յեվ Ֆեո - խաա - հա-հա դորին...

Շատ ձանձրալի յեր լսել հինմեռած կայսրների մասին, մինչդեռ մեր կողքին, Վոլգայի այն կողմը կենդանի մարդիկ պատմություն եյին ստեղծում: Դասարանն ագմկում էր: Ալեֆերենկոն վճռականաբար կանգնեց.

— Կիրիլ Միխայլովիչ, խնդրում ենք, բացատրեցեք, թե ինչ է կատարվում ներկայումս Ռուսաստանում:

— Պարոններ, — վրդովվեց մանկավարժը, — նախ վոր յես ձեզ համար լրագիր չեմ: Այս մեկ: Յեվ հետո դուք դեռ շատ յերիտասարդ եք և չեք կարող քաղա-

քականությունից բան հասկանալ։ Այ․ ու։ Այսպես, Հուստի...

— Դու չափազանց ծեր ես,— մրթմրթացին յետևից,— հին սովորություններ են։

— Ի՞նչ։ Վերկացեք և կանգնեցեք։

— Չկանգնես, Կոլկա,— հուզվեց դասարանը,— կարծես Հուստինիանոս Մեծը լինի։

— Դուրս կորիր դասարանից։

Բայց այդ միջոցին փողոցից ներս խուժեց նոր, հզոր, հոծ ու ամեն ինչ խլացնող մի ձայն։ Քամու հոսանքն էր բերում այն։ Շչում էր վոսկրաղաց գործարանը։ Յեվ իսկույն դեպոյի ձայնեղ սուլիչն արձագանքեց նրան։ Շչուրովա սարի վրա յեղած աղոցարաններն սկսեցին յերգել բարակ դիսկանաներով։ Սուլեց Ջրաղացը։ Հանածոների գործարանը հեռվից բարձրացրեց իշամեղուի դառոց։ Իսկ Վոլգայի վրա համարձակ ու ուրախ ճչաց փոքրիկ շոգենավը։

Առավոտը յերգով էր սկսվում։



Տեսուչը ներս վազեց դասարան։ Շփոթմունքը ճանճի պես խճճվել էր նրա մորուքի մեջ։ Դասարանում վոչ վոք չկար։

## ԿՈՆԴՈՒԻՏՈՒՄ ՉԳՐԱՆՑՎԱԾ ՈՐ

Աննուշկայի զինվորը — Խարկուշան գետափին ճառ էր ասում։ Նա կանգնած էր նավամատույցի տախտակամածի վրա և առողջ ձեռքը այս ու այն կողմն էր շարժում։ Կարելի յեր կարծել, թե նա կառավարում է շչակների համերգը։ Մենք ամբոխի արանքը ճղելով առաջ անցանք։

Ափին արագ մոտենում էր մի նավ։ Այդ նավը կոչվում էր «Թամարա»։ Նա յուր անիվների թաթերով վստահ շրըմփացնում էր ջրի յերեսին, իսկ նրա քթի առաջը բարձրանում էին գորշ-սպիտակավուն փրփուրի փափուկ թմբեր։ Կարմիր դրոշակն ուզում էր պոկվել կայմից։

Նավը մոտենում եր։ Նրա տախտակամածի վրա մարդիկ եյին կանգնած և գնդացիրներ շարված։ Մարդկանց դեմքերը հոգնածություն եյին արտահայտում, բայց նրանք այնպես ամուր եյին կանգնած, վոր կարծես մեխած եյին տախտակամածին։

Հեղափոխությունը մոտ եր լողում Պոկրովսկին։ Նավավարը, թևին կարմիր շոր կապած, ման եր գալիս նավի վերին փոքրիկ կամրջի վրա։ Նրա կողքին հրացանն ուսովը գցած, գլխարկը ծոծրակին քաշած կանգնած եր Ատլանտիդան։

— Լո՛ւյսը քեզ տեսնողին, Սոյոպկա, — աղաղակեցին գիմնազիստները։ Ատլանտի՛դա։ Ա՛յ թե վորտեղ ես յեղել։

Կարգապահ Պետյա Յաչմեննին մտահոգված շարժում եր գլուխը։

— Ա՛յ տղա, ախր ինչո՞ւ պարապմունքներին չեյիր յեկել... դրա համար կտանե՛ն։

— Կտանե՛մ, — ծիծաղեց Սոյոպկան, անցավ ցանկապատի վրայով և նավից թռավ նավամատույց։ — Չե, կներե՛ք։ Մեռավ ձեր կոնդուիտը, քար դրեք գըխին. հիմա ամեն ինչ վերջացա՛վ... Բավակա՛ն ե...

Նավը պարաններն ափ շպրտելով, փշշում ու թրպռում եր նավամատույցի առաջ։ Նավավարը փողի միջով հրամաններ եր արձակում։ Տախտակամածի վրա մարդիկ եյին շարվում կարմիր թևակապերով։

— Մերոնք են, — հպարտությամբ ցույց տվեց Ատլանտիդան։

— Բոլշևիկներն են, — շշնջացին ամբոխի մեջ։

— Պատրաստ ե, — ասաց նավավարը։

## ԿՈՆԴՈՒԻՏԻ ՎԵՐՋԸ

Գարնանը, վերջին յեռամսյակի վերջը մենք այրում եյինք դպրոցական որատետրերը։ Այդպես եր



գիմնազիայի սովորությունը։ Բակում հսկայական խարույկ եյինք վառում։ Այրվող միավորների, բոցավառվող հանդիմանությունների և մոխիր դարձող անցած ուսման օրերի շուրջը մենք հնդկական վայրենի պար եյինք բռնում ու թռչկոտում։

— Ուռա՛, — յերեք հարյուր կոկորդ միասին խըմբովին աղաղակում եր։ — Ուռա՛։ Մենք այրում ենք վերջին որատետրերը։ Այլես այդ տետրերը չեն լինի, վերջացան որատետրերը։ Մահ կոնդուիտներին, որերը հոտնի պատիժների։ Ուռա՛։ Այրվում են պատմության մեջ վերջին որատետրերը։ Կրակը լափում է խայտառակության և անմիտ թութակության եջերը։ Այրվում են որատետրերը։

Բինդյուգը և Սոյոպկան մտան դատարկ ուսուցչանոցը։ Կոնդուիտի պահարանը փակ եր։ Սկյուռն իր պոչով խաղում եր փոշոտ Վեներայի քիթը։ Պապին — մաշելից շինած մի վիթխարի աչք ապշած շեշտակի նայում եր գիմնազիստներին։ Բինդյուգը փոքով կոտրեց պահարանի տախտակը։ Հատակը ծածկվեց Վեներայի սպիտակ կտորտանքով։ Կոնդուիտը հանեցին։

— Կոնդուիտը կրակ գցենք, գոռաց Ատլանտիդան, հաստ կոնդուիտը ձեռքերին դուրս գալով։ — Այրենք, տղերք, Յապ-Յարապիչի վայրահաչությունները։

Ամենքն ել ուզում եյին տեսնել, ձեռք տալ «Աղավնագրքին», կարդալ այնտեղ իր մասին գրվածը, բաց անել նրա գաղտնիքները։ Խարույկի վրա այրեցին անցած բոլոր տարիների կոնդուիտական ցուցակները։ Իսկ վերջին կոնդուիտը բարձրաձայն կարդացին խարույկի մոտ ու շատ զվարճացան նրա չարամիտ եջերի բովանդակությամբ։ Վորոշեցին այդ պահել «պատմության համար»։ Կոնդուիտի պահպանությունը հանձ-

նեցին Ստոպկային։ Կոնդուիտի խայտառակ գրությունների ուղիղ մի քառորդ մասը պատկանում եր Ատլանտիդան փնտրողին։

Այրվում եյին հին կոնդուիտները։ Կրակի մեջ կըծկվում եյին նրանց դիմացկուն կազմերը։

Դուրս յեկավ բարձր դասարանի աշակերտ Ֆորսունովը, վոր քաղաքային խորհրդի պատգամավոր եր։

— Ընկերներ,— դարձավ նա գիմնազիստներին,— մի րոպե լռություն։ Պատգամավորների խորհուրդը վորոշեց հեռացնել գիմնազիայից հին ռեժիմի կողմնակիցներին՝ Ռոմաշովին, Տարականիուսին, Ուխովին և Մոնոխորդովին։ Մեզ նոր ուսուցիչներ կտան։ Մենք մեր տղաներից ներկայացուցիչներ կընտրենք մանկավարժական խորհրդի համար։ Կսովորենք նոր յեղանակով։ Կոնդուիտը վերջացավ։

Հաղթական գոչերով առաջից տանում եյին մերկացրած և անզոր «Ազամխագիրքը»։ Հանդչող խարույկի շուրջը գոռում-գոչյուններով քայլում եյին յերեք հարյուր վայրենիներ գորշ զգեստներով։ Մենք վերջին կոնդուիտի չտեսնված հուղարկավորությունն եյինք կատարում։ Սև փխրուն եջերը շարժվում եյին մոխրի մեջ։





## Մ. Ա. Դ.

Իմ բարեկամ Ստյոպկա Գավրիլան, վորին Ատլանտիդա մականունն եյին տվել, այս գրությունն ուղարկել եր ինձ — Կվասնոկովկա գյուղը, վորտեղ ապրում եյի ամառը. «Բարև, Լյոխա,— գրում եր նա.— ամսի մեկին յեկ գիմնազիա։ Տեղի կունենա Մ. Ա. Դ.-ի բացումը։ Լավ կլինի։ Ս. Գավրիլա»։

Յես յերկար ժամանակ աշխատում եյի մեկնաբանել այս «Մ. Ա. Դ» տառերը։ Մ. Ա. Դ. այսինքն, միակ ազատությունը... Ինչի՞... ես ինչ ե նշանակում։

Ստյոպկան, գիմավորեց ինձ հրճվանքով։ Ամառվա ընթացքում նա մեծացել և լըջացել եր։

— Շարժվո՞ւմ ես,— հարցրեց Ստյոպկան.

— Շարժվում եմ,— պատասխանեցի յես։

— Կենդանի՞ յես,— հարցրեց Ստյոպկան։

Կենդանի յեմ,— պատասխանեցի յես,— բայց դու վո՞րտեղից իմացար... Մ. Ա. Դ.-ի մասին։

— Վո՞րտեղից, բա՞ն ասաց,— քիթը վեր քաշելով ասաց Ստյոպկան։— Բոլոր տղերքն արդեն գիտեն... գիմնազիայի փոխարեն կլինի Մ. Ա. Դ — այսինքն միասնական աշխատանքային դպրոց։

## ՔՇԻ՝ ԳՆԱ

Լուսբաժնի գրասենյակում նստարանի վրա նըս-տած եյին ուսուցիչները՝ տեսուչը, պատմաբանը, շըլ-կահեր մաթեմատիկոս Մոնոխորդովը և լատիներենի դասատու Տարականիուսը։

Ոգոստոսյան արևը մրսուկ մանկավարժներին չեր տաքացնում։ Նրանց դուրս եյին արել։

— Ա՜-ա՜, բարև ձեզ, բարի որ, հարգանքներս, ինչպես եք, — իրար առաջ կորելով բարևում եյին ինձ մանկավարժները և քաղաքավարի ձեռք մեկնում։

— Բարև ձեզ, — չոր ու վայելուչ պատասխանում եյի յես։ — Ի՞նչ կկամենայիք։

Տեսուչն ինձ մի կողմ կանչեց։

— Անպիտաններ, յես ձեզ ինչ վատություն եմ արել, ներողություն համարձակությանս, — ասաց տեսուչը։ — Միթե յես մեղավոր եմ, վոր Թագավորն ու Կերենսկին հիմար են։ Նրանք են մեղավոր և վոչ թե յես։ Իսկ Խորհրդային իշխանության որով յես էլ լավը կլինեմ։ Չե՞ վոր յես համակրողներից եմ։

Յես տեսչին խղճացի։ Բայց ինձ իր մոտ կանչեց պատմաբանը։

— Լսեցեք, — ցածր ձայնով ասաց պատմաբանը, — վոր տեսչին դուրս եք արել, այդ հասկանալի յե։ Ինչպես վոր նա հին ռեժիմի կողմնակից ե և միապետական... Բայց ինձ ինչու համար։ Չե՞ վոր յես միշտ համակրել եմ։ Հիշում եք, վոր յես դասի ժամանակ ձեզանից մի կողմնակի գիրք վերցրի և վոչինչ չարեցի, միայն պատի տակ կանգնեցրի...

Այդ միջոցին ինձ աչքով իր մոտ կանչեց լատիներենի ուսուցիչը։



— Իհարկե, պատմաբանն ու տեսուչն անպիտան մարդիկ են, — համոզված հայտարարեց Տարականիուսը, — Բայց չե՞ վոր յես ձեր մարդն եմ։ Հիշում ես, վոր դու դերանունները խառնեցիր, իսկ յես քեզ միավորի փոխարեն յերկուս ու մինուս դրեցի... Չե՞ս միջնորդի ինձ համար, հը՞։

Մոնոխորդովը հրհռում եր նստարանին նստած։

Յես գնացի Ստյոպկի մոտ։

— Ստյոպկա, — ասացի, — չի՞ կարելի տեսչին թողնենք։ Նա յերբեմն լավություն անում եր։

— Ախ դու խղճոտ բարեկամս, — ասաց Ստյոպկան, — ինտելիգենտ։ Լավ ու վատ չի լինում։ Լինում են մերոնք և ոտար, լինում են կարմիրներ և սպիտակներ, կա պրոլետարիատ և բուրժուազիա, լինում են և հիմարներ, ա՛յ, որինակ քեզ նմանները։

Յես վիրավորվեցի։

## ՎԵՐՋԱԿԵՏ ՅԵՎ ՇԱ

Ամսի մեկին գիմնազիայի գլխին կարմիր դրոշակ եր փողփողում։ Մենք հավաքվեցինք բակում։ Ոգոստոսի պայծառ և կենդանի յեղանակ եր։ Վարիչը՝ Նիկիտա Պավլովիչ Կամիշովը դուրս յեկավ բակը։

— Վողջույն աղամիկներիս, — ասաց Նիկիտա Պավլովիչը։ — Շնորհավորում եմ ձեր կյանքի նորությունը։ Դուք այժմ այլևս գորշ գիմնազիստներ չեք, այլ խորհրդային միասնական աշխատանքային դպրոցի աշակերտներ։ Շնորհավորում եմ։

— Շնորհակալ ենք, — պատասխանեցինք մենք, — շնորհավորում ենք և ձեզ։

— Խորհուրդն ինձ ժողովրդական առողջապահության կոմիսար նշանակելու պատճառով, — ասաց Նիկիտա Պավլովիչը, ձեզ հետ կխոսի ձեր նոր վարիչը,

ընկեր Զուբարկովը, վոր միևնույն ժամանակ և զինվորական կոմիսար է։ Խնդրում եմ սեր ու հարգանք ցույց տալ։

Զուբարկովին ընդունեցին առանց ծափահարությունների։ Նա ասաց։

— Ընկերնե՛ր, դուք ուսում առած մարդիկ եք, իսկ յես յեղել եմ մի տգետ բեռնակիր։ Ձեզ գիրքն է սովորեցրել, իսկ ինձ դժբախտ կյանքը։ Յեվ ահա ուզում եմ բացատրել ձեզ, թե ինչ ասել է միասնական աշխատանքային։ Ընկերնե՛ր, ինչո՞ւ համար է դպրոցը. դպրոցը դպրոց է և վոչ թե մի ուրիշ բան։ Դպրոցը կրթության համար է։ Վերջակետ։ Ինչու յե աշխատանքային։ Վորովհետև նա բոլոր աշխատավորության համար է և սովորեցնում է ամեն տեսակ մտավոր և ֆիզիկական աշխատանքների։ Վերջակետ։ Իսկ միասնական է, վորովհետև այժմ այլևս չեն լինի ամեն տեսակ գիմնազիաներ, նախագիմնազիաներ և ազնվաբարո օրիորդների ինստիտուտներ։ Բոլոր տղաներն այժմ հավասար են և միատեսակ պետք է հաղթահարեն գիտությունը։ Յեվ վորպեսզի հեղափոխությունը սրանից օգուտ ստանա, հեղափոխական կարգապահության անունով խնդրում եմ շաղակրատություն չանել։ Վերջակետ։ Շա։

— Իսկ ա՞ռաջ ինչ եր, — աղաղակեցին բարձր դասարանի աշակերտները։ — Չե՛նք ուզում կոմիսարին։ Տվեք մեզ Նիկիտա Պավլովիչին։

— Հեղափոխության կարգապահության անունով, — ասաց Զուբարկովը, — խնդրում եմ ափեղ-ցփեղ դուրս չտաք։ Վերջակետ։ Խորհուրդը Նիկիտա Պավլովիչին պաշտոն է տվել։ Յեվ վերջակետ։ Այդ առաջ եր, վոր առողջություն եյին ցանկանում միայն ազնվատոհմ մարդկանց համար, իսկ այժմ առողջու-



թյունը ամբողջ ժողովրդի համար է։ Վերջակետ։ Մեծ պաշտոն է։ Վերջակետ։ Շա։

Դպրոցական խորհրդի անդամ նշանակեցին ընկեր Զուբարկովին, ընտրեցին Մոկեյիչ ծառային, Ստյոպկա Ատլանտիդային, Ցորուսնովին, վոր քաղաքային պատգամավորական խորհրդի անդամ եր, ուսուցիչ Գաուլիչին և յերկու հոգի յել բարձր դասարանի աշակերտներից։ Գիմնազիստները սուլեցին։ Հետո Զուբարկովը հայտնեց, թե կանացի տարրը կատարելապես հավասար իրավունքների տեր դարձնելու նպատակով, մենք պետք է այժմ աղջիկների հետ միասին սովորենք։ Վերջակետ։ Շա։

Տղայոց և օրիորդաց գիմնազիաները միացնելով՝ դասարաններն այնպես լցվեցին, վոր այլևս վոչ մի կերպ չեյին տեղավորվի նախկին սենյակներում։ Հարկավոր յեղավ դասարանները բաժանել յերկու մասի հիմնական և զուգընթաց, «Ա» և «Բ»։ Մենք հատուկ մի հանձնաժողով կազմակերպեցինք մեր դասարանի համար աղջիկներ ընտրելու։ Ինձ նախագահ ընտրեցին, իսկ Ստյոպային՝ օգնական։ Հանդերձարանում կես ժամ մեզ շտկում եյինք հայելու առաջ։ Մեր վերնաշապիկների բոլոր ծալքերը յետ հավաքեցինք և գոտկի տակ կոկեցինք։ Դասարանի ամենաուժեղ տղան՝ Բինդյուգը մեր գոտիները հուպ տվեց։ Կուրծքներս բարձրանում եյին աղեղնաձև, և համարյա թե շնչել չեյինք կարողանում։ Դիմանում եյինք։ Հետո Ստյոպկան խնդրեց, վոր մեզանից վորևե մեկն իր գլխին թքի։ Շատերն ուզեցին թքել, բայց Ստյոպկան միայն ինձ թույլ տվեց թքել։

— Վորքան կարող ես ջրալի թքիր, — ասաց նա, — բայց տես, վոր չխորխես։

Յես բարեխղճորեն թքեցի, և Ստյոպկան հարթեց մազերը։

— Ո՞չ, ինչ սիրուն եք, տո,— ասաց Բինդյուգը, հոգատար կերպով մեզ նայելով,— փասոն շիկ-մարե։ Նրանք ցմահ կսիրահարվեն ձեզ վրա։ Բայց աշխատեցեք սիրուններին ջոկել։

Հետներս առանք ելի հինգ հոգի, վորպես պատվավոր պահակ և գնացինք որիորդաց գիմնազիան։ Աշա-



կերտուհիները դասի էին նստած։ Միջանցքում տիրում էր լռություն ու խաղաղություն։ Դասարանների դռների տակից խեղդված ձայնով դուրս էին սողում գետեր ու լճեր, փոշանոթներ ու վարսանդներ, հոլո-



վումներ ու խոնարհումներ։ Մի անկյունում իրար վրա թափված էին հին նստարաններ, իսկ մոտը դրված էր մի նոր դաշնամուր, վոր բռնագրավել էին մի ինչվոր բուրժուայից։

— Դաշնամուրը տանենք, առաջարկեց Ստյոպան։

Չորրորդ դասարանում ռուսաց լեզվի դաս էր։ Մի փափլիկ գիմնազիստուհի առոգանությամբ կարդում էր.

«Ո՞վ է թռչում, ո՞վ է սլանում սառը միգում...»

— Այդ մենք ենք,— միջանցքից լսվեց մի ձայն։

Դասարանի դռները բացվեցին կրնկի վրա և հաղթական ձևով, դղրդյունով դասարան մտավ չտեսնված թա-

փորը։ Առաջից տանկերի նման սողում էին իրար յետևից յերկու նստարան։ Թանաքամանների համար բացված անցքերում դրոշակներ էինք դրել։ Յես ու Ստյոպան նստարանների վրա ներս յեկանք։ Իսկ մեր յետևից վեհությամբ ներս մտավ դաշնամուրը։ Հինգ

— Ո՞հ, ինչ սիրուն եք, տո,— ասաց Բինդյուգը, հոգատար կերպով մեզ նայելով,— փասոն շիկ - մարե։ Նրանք ցմահ կսիրահարվեն ձեզ վրա։ Բայց աշխատեցեք սիրուններին ջոկել։

Հետներս առանք ելի հինգ հոգի, վորպես պատվավոր պահակ և գնացինք որիորդաց գիմնազիան։ Աշա-



կերտուհիները դասի եյին նստած։ Միջանցքում տիրում եր լռություն ու խաղաղություն։ Դասարանների դռների տակից խեղդված ձայնով դուրս եյին սողում գետեր ու լճեր, փոշանոթներ ու վարսանդներ, հոլո-



վումներ ու խոնարհումներ։ Մի անկյունում իրար վրա թափված եյին հին նստարաններ, իսկ մոտը դրված եր մի նոր դաշնամուր, վոր բռնագրավել եյին մի ինչվոր բուրժուայից։

— Դաշնամուրը տանենք, առաջարկեց Ստյոպան։

Չորրորդ դասարանում ռուսաց լեզվի դաս եր։ Մի փափլիկ գիմնազիստուհի առոգանությամբ կարդում եր.

«Ո՞վ ե թռչում, ո՞վ ե սլանում սառը միգում...»

— Այդ մենք ենք,— միջանցքից լսվեց մի ձայն։

Դասարանի դռները բացվեցին կրնկի վրա և հաղթական ձևով, գլրդյունով դասարան մտավ չտեսնված թա-



փորը։ Առաջից տանկերի նման սողում եյին իրար յետևից յերկու նստարան։ Թանաքամանների համար բացված անցքերում դրոշակներ եյինք դրել։ Յես ու Ստյոպան նստարանների վրա ներս յեկանք։ Իսկ մեր յետևից վեհությամբ ներս մտավ դաշնամուրը։ Հինգ

հոգի յետևից բոթելով առաջ եյին գլորում։ Դաշնամուրի ճախարակները ճղճղում եյին խոզուկների նման։ Դաշնամուրի թեք գրակալի վրա դրված եր մեր «Ա» դասարանի աշակերտների ցուցակը։ Մոմակալներից կախված եյին մեր գլխարկները, իսկ ձախ պեդալին հագցրել եյինք մի տրեխ, որ գտել եյինք բակում։

— Ահա, յեկանք, — ասաց Սոյոպան։

Աղջիկները լուռ շվարել եյին։

— Ես ի՞նչ բան է, — ճչաց ուսուցչուհին։ Նա այնպես գոռաց, որ հնչյուն դաշնամուրի զգայուն լարերից մեկը յերկար նվում եր և չեր կարողանում հանգստանալ։

— Սա մի խաղաղ պատգամավորություն է, — ասացի յես և դաշնամուրի վրա «Մանջուրիայի բարձրություններում» պարերգը նվագեցի։

Ուսուցչուհին փակեց դուռը։ Աղջիկները մի քիչ հանգստացան։

— Համախրավատեր հարգելի օրիորդներ, — սկըսեցի յես։ — Համախրավատեր օրիորդներ, — կըրկնեցի հետո ավելի տաքացած։ — Յես ուզում եմ ասել, որ յես ուզում եմ պատմել...

Յեվ, դաշնամուրին մոտ վազելով, նվագեցի. «Յես ուզում եմ ձեզ պատմել, պատմել, պատմել, թե ինչպես օրիորդները...» յերգը։ Աղջիկներն արդեն ժպտացին։ Յես սիրտ առա և համարձակ բացատրեցի, որ այժմ մենք միասին կսովորենք և կլինենք «ինչպես ընկերներ ու ընկերուհիներ, ինչպես քույր ու յեղբայրներ, ինչպես Մինինն ու Պաժարսկին, ինչպես «Կավկազ և Մերկուրին», ինչպես Շապոշնիկովն ու Վայլցեվը, ինչպես Գլեզեր և Պեցոլդը, ինչպես Ռիմսկին և Կորսակովը...»

— Իսկ ինչպես պետք է նստենք, — հարցրեց մի



բարձրահասակ և խստադեմ աղջիկ, — տղաներն առանձի՞ն կնստեն, թե տղա ու աղջիկ միևնույն նստարանի վրա։ Յեթե միևնույն նստարանի վրա պիտի նստենք, յես համաձայն չեմ։

— Տղաները մեր մազերից կքաշքշեն, — ասաց բամբ ձայնով մի հաստ գիմնազիստուհի, — կամ կսկսեն համբուրվել։

Մեր պատգամավորությունը բուռն հուզմունք ցույց տվեց։ Յես բարկացած նվագեցի «Փոթորիկ Վոլգայի վրա»։

— Իսկ աչքախաղ կարո՞ղ ենք խաղալ, — հարցրին միասին յերկու աշակերտուհի, որ ամենից փոքրերն եյին և գլխներին ահագին ժապավինակապեր ունեյին։

— Աչքագո՞ղ, — մտածեցի յես։

— Ի՞նչ ես կարծում, Սոյոպա։

— Յես կարծում եմ, աչքախաղ կարելի յե, — գիջողաբար ասաց Սոյոպան։

Յերբ արդեն պարզվեցին և մի շաք ուրիշ բավական կարևոր մանրամասնություններ և հանդեսը վերջացավ, սկսեցինք մեզ համար դասընկերուհիներ հավաքել բավական անպատկառ կերպով։

Աղջիկները շտապով կոկվում եյին։

Յես ամենից առաջ ցուցակագրեցի Տայա Ոպիլովային, որ ուներ փարթամ վոսկեգույն մազեր։

Այսօր դեմքս փոխվել է, գոհացված եմ, — ասաց Տայա Ոպիլովան քթի տակ, — հարբուխ ունեմ։

Աղջիկներին ցուցակագրելով, հենց այստեղ էլ մեր ցուցակում խստադեմ աղջկա ազգանվան մոտ նշանակեցինք Բամբուկին, յերկու փոքրիկ աղջիկների մոտ՝ Ծպինգալեններին, հաստ աղջկա կողքին Մադամ Խա-Սոնիա-Պերսոյուպային։ Բացի սրանցից կային ելի Լյուլիա-Պինյունիան, Ցրիան, Ոգլոբլիան, Բուկսան, Լյուլիա-Պինյու-

լիան, Նիժուրմուրյան, Շլիպյան և Կլյակյան։ Իսկ չընտրված աղջիկները մեզ հիմարներ անվանեցին։

— Եհ, հիմա դասարանում պետք է շատ չհաջանք, մինչև վոր կընտելանան, — ասաց Սոյուպկյան, յերբ դուրս յեկանք։

Բակում պատահեցինք մեր «Բ» դասարանի պատգամավորությանը։ Լուրջ բացատրություն տեղի ունեցավ մեր մեջ այն մասին, վոր մենք նրանց առաջը կտրել յեինք։ Մեզ մասամբ վնասեցին մեր ուրախությունն ու տրամադրությունը։

## ՇՆԱՊԱՐ

Պահեստների քաղաքամասում աղավնիները կոտորվում են։ Քամին վզզում է դատարկ ամբարներում և շարունակ լսվում է «քարուքանդ» սարսափելի բառը։

— Ավերածությունը ձայն է տալիս մարդու ականջներում, — ասում եր Մոկեյիչը, վշտահար նայելով այն ամենին, ինչ վոր կատարվում եր դպրոցում։

— Իսկ դպրոցում տեղի եյին ունենում այնպիսի սոսկալի արարքներ, վոր փողոցով անցնող ձիերը խրտնած խեթ նայում եյին մեզ կամ փողոցի մյուս կողմը թռչում։

Ամբողջ որը դպրոցում վորսում է շնապարը, մի մասով խփում են։

— Դո՛, ռե՛, ռե՛, դո՛, ռե՛, ռե՛, սի՛, ռե՛, ռե՛։ Դաշնամուրը քաշ են տալիս միջանցքում։ Ազատ դասերին դասարանից դասարան են տանում։

Դասարանը պարապահի յե վերածվում։ Աշակերտներն ազատ աշխարա թողնում են դասերը, դուրս գնում։

Ուսուցիչը դասի զանգից հետո միջանցքում աշակերտներ է վորսում և աղերսում դասի գնալ։



— Ձե՞ վոր դուք լավ եյիք սովորում, — հուսահատված ասում է բարի մաթեմատիկոս Կառլիչը, բռնելով թեվից։ — Գնանք դասարան, յես ձեզ շատ հետաքրքիր բան կբացատրեմ անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաների մասին։ Այնքան հետաքրքիր է, վոր ուղղակի կշվարեք։ Իսկական գեղարվեստ։

Քաղաքավարությունից ստիպված գնում եմ։ Մենք մտնում ենք դատարկ դասարանը։ Դո՛, ռե՛, դե՛, դո՛, ռե՛, ռե՛, — լսվում է հարևան սենյակից... Կառլիչը նստում է ամբիոնի վրա, իսկ յես տեղավորվում եմ առաջին նստարանի վրա։ Ամեն բան կարգին է, միայն աշակերտներ չկան։ Ամբողջ դասարանը յես եմ։

— Խնդրում եմ, յեկեք գրատախտակի մոտ, — դուրս է կանչում ինձ Կառլիչը։ — Որեմն, սկսենք, — դառնում է նա դատարկ դասարանին։

— Տված է ալֆա անկյունը։

Գրատախտակի կողքին տեսնում եմ վաղվա դասերի ցուցակը։ Ոհո՛, վաղը ծանր որ է. հինգ դաս կա։ Առաջին դասը յերգեցողություն է, յերկրորդը նկարչություն, յերրորդը թեյ, չորրորդը ձեռարվեստ, հինգերորդը ազատ շարժողություններ։

Մեր դասարանը մի փոքրիկ գազանանոց է։ Բինդյուգը գրատախտակի յետևը ոձեր է բազմացնում։ Յերեկ մի ոձ դասի ժամանակ սողալով բարձրացավ ամբիոն և թանաքը խմեց։ Դասարանում աղավնիներ ու ճնճղուկներ են թռչկոտում։ Նստարանների արանքներում գորտեր են ցատկոտում և աղջիկներին վախեցնում։ Նստարաններից յերկսի մեջ ընտելացրած մկներ են ապրում։ Յերեկ ֆիզիկայի դասին ամբողջ դասարանը մեծ ուրախության մեջ եր։ Ալեքսեյենկոյի նստարանում մկան ձուտեր եյին ծնվել, չորս հատ։ Իսկ ես մոտ որերին Բինդյուգը դասարան եր բերել իր

Պուլկա շանը։ Պուլկան նստած էր նստարանի տակ և կամաց մռմռում էր իրեն շրջապատող կենդանական աշխարհի վրա։ Յերգեցողության դաս էր։ Յերբ ուսուցիչը ձայն տվեց (դո-լյա-ֆա), Պուլկան իրեն չըկարողացավ պահել և կամաց վոռնաց։ Ուսուցիչը վիրավորվեց և խնդրեց այդ հանդուգնին դուրս գնալ դասարանից։

— Նա ռուսերեն չի հասկանում,— ասացին դասարանում։

— Հա՛, եզ է հա՛,— վրդովվեց ուսուցիչը։— Ավելի վատ դրա համար, յեթե...

Մի քանի հոգի կռացան նստարանի տակ։

— Եզ է,— համոզված պնդեցին ուսումնասիրողները։

— Սուտ են խոսում,— ասում եյին ուրիշները,— արու յէ։

— Եզ է, թե արու, դո՛ւրս,— հանկարծ գոռաց ուսուցիչը։ Պուլկան վիրավորվեց և մռնչաց։— Դուրս, կրկնեց ուսուցիչը, Պուլկան բարկացավ և հաչեց։

— Բռնի,— գրգռում եյին նրան դասարանում։ Մեկը դիտմամբ պոչը կոխ տվավ։

Պուլկան կատաղած դուրս թռավ դասարանի մեջտեղը և հաչոցով հարձակվեց ուսուցչի վրա։ Վախեցած մանկավարժը վոտքերը վեր բարձրացրեց ամբիոնի վրա։ Պուլկան արահամարանքով լի հոտոտեց ամբիոնի անկյունը։ Նա ավելի արժանավոր տեղ գտավ, վոտքը բարձրացրեց և...

Դո՛-ռե՛-ռե՛... դո՛-ռե՛-ռե՛... Սի-ռե-ռե...

## ԲԱՐՁՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՆՀԱՄԱԶԳԵՍՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Մենք մեծացել և դուրս եյինք ցցվել մեր գիմնազիական վերարկուների միջից, ինչպես ցանկապատերից յերևացող ծառեր։ Մեր վերարկուների կրծքի



կոճակներն առանկան ճնշումից յետ եյին քաշվել մինչև կրծքափեշի ծայրերը։ Գոտկատեղին վեր եր թռել դեպի մեր թիկունքները։ Բայց և այնպես մենք համառորեն մաշում եյինք մեր հին համազգեստը։

Մեր խունացած գլխարկների ճակտին կապտին եր տալիս թիթեռնիկ՝ պոկած ճակատանշի տեղը։

Մի անգամ Զուբարկովը յոթ հոգի նոր աշակերտ բերեց դասարան։ Նրանք խայտաբղետ եյին հագնված, համազգեստ չունեյին և հավաքված կանգնած եյին կաշվե վերարկու հագած Զուբարկովի կռնակին։ Բայց բոլորի գոտիներն ել միատեսակ եյին։ Գոտկաթիթեղի վրա յերևում եյին Բ. Տ. Դ. տառերը։

Կոմիսարն ասաց աշակերտներին.

— Ցիմա, այսինքն խնդրում եմ հանգիստ մնաք։ Հետո, բարև ձեզ։ Վերջակետ։ Հետևյալ հարցը։ Ինր-կատի ունենալով, վոր այժմ դպրոցը միասնական է, դրա համար ել պետք է բոլորը սովորեն միասին, համերաշխ։ Վերջակետ։ Ծանոթացեք։ Սրանք բարձր տարրական դպրոցից են։ Բարեկամացեք։ Վերջակետ։

— Չենք ուզում բարձր տարրական դպրոցի աշակերտներին,— գոռացին յետևից,— չենք ուզում նրանց հետ սովորել։ Մենք միջնակարգ դպրոց ենք, նրանք տարրական։

Զուբարկովը շուռ յեկավ դռներում։

— Ով չի կամենում բոլորի հետ միասին,— ասաց նա,— նա ինքնագլուխ կարող է իր ծննդական վկայականը ստանալ։ Վերջակետ,— ասաց կոմիսարը և գնաց։

Տարրականի աշակերտները շվարած մնացել եյին կանգնած ամբիոնի մոտ։

— Բարև ձեզ, բուրժուազիա,— ասաց տարրականի աշակերտ Թխադեմ Կոստյա Ռուտենկոն՝ ժուկ մա-

կանոնով, վորի հետ ծանոթ եյինք առաջուց, յերբ փողոցում կռիվներ եյինք սարքում.— բարև՛ ձեզ, տղերք և աղջկերք,— քաղաքավարի շարունակեց Կոստիա Ժուկը:

— Իսկ քըթ հասցն չե՞ կամ, - - լուրջ հարցրեց Բինդյուգը:

— Իսկ քթիդ հասցնել չե՞ս կամենում,— թարգմանեցին յետևից:

— Իսկ ինչո՞ւ առա դուք ին ծեծ,— հանգիստ ասաց Կոստիա Ժուկը:

— Իսկ ինչո՞ւ առաջ դուք ինձ ծեծում եյիք,— բացատրեցին մեզ տարրականի աշակերտները:

Դասարանում արդեն սկսեցին ժամացույցները բաց անել ձեռներից, վոր կռվի ժամանակ չփչանան: Աղջիկները ժամացույցները առան պահպանելու:

— Եյ դու, անհամազգեստ,— ասաց Բինդյուգը, սպառնալի մոտենալով Կոստիա Ռուտենկոյին:— Դու ե՞լ ես այստեղ գալիս: Տարրական դպրոցից գիմնազիա յե խցկվում: Տո՛, խսկի դուք արծաթե կոճակներ ել չունեք, վոչ մի համազգեստ... Ո՞ւր եք գլուխներդ կոխում...

— Դուք միջնակարգ դպրոց եք, իսկ մենք, թեև տարրական, բայց բարձր դպրոց ենք,— խորամանկորեն պատասխանեց Կոստիա Ժուկը,— մենք ձեզանից շատ գիտենք... Հապա ասա՛ վո՞րտեղ ե լինում հիմքի գումարի կեսը:

Բինդյուգն իր կյանքում չեր լսել «հիմքի գումարի կեսը»:

— Թքել եմ յես քո հիմքի գումարի կեսի վրա,— պատասխանեց կատաղած,— այ, այս րոպեյիս անձնական վկայականիդ վրա կնիք կդնեմ, խելքդ գլուխդ կգա...



Բայց նա շփոթված եր: Յես տեսա, վոր մեր տղերանցից շատերն շտապով քրքրում եյին դասագրքերը: Յես գիտեյի, «վորտեղ ե լինում գումարի կեսը». ձեռքս բարձրացրի, վոր փրկեմ դասարանի պատիվը:

Սոյոպկա Սոլոմոնիդան ամուր խփեց բռիս և ցած իջեցրեց:

— Առանց քեզ ել իրենց գործը կտեսնեն,— կամաց ասաց Սոյոպկան:— Բինդյուգին այդպես ել հարկավոր ե: Ամա՛ քաջ տղա յե եդ տարրականի աշակերտը: Մերոնց նեղը լծեց: Տղերք, նստեցեք ազատ տեղերը,— բարձր ձայնով ասաց նա աշակերտներին:

Տարրական դպրոցի աշակերտներն անհամարձակ նստոտեցին: Դասարանի սառը լռությունը հանդիպեցին նրանք: Կոստիա Ժուկը նստեց Շպինգալետների կողքին:

— Անհամապատասխան ծանոթություն ե — ասացին միասին Շպինգալետները: Նրանք թափահարեցին իրենց ժապավինակալները և ամբարտավան կերպով հեռու քաշվեցին:

## ԱՉՔԱԽԱՂԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ

Աղջիկները դասարանում շատ նորություններ հրապարակ բերին: Դրանցից գլխավորն «աչքախաղն» եր: Այս գրավիչ խաղին մասնակցում եր ամբողջ դասարանը: Իսկ այդ խաղի եյությունն այն եր, վոր յերկու հոգի սկսում եյին շեշտակի նայել իրար աչքերի: Յեթե խաղացողի աչքերը ջրակալում եյին աչքը լարելուց, և նա հայացքը հեռացնում եր, այդ նշանակում եր, վոր նա հաղթվեց: Մեր մեջ կային ուռուցիկ աչքերով թե տղա և թե աղջիկ չեմպիոններ: Մինչև անգամ աչքախաղի տուրնիր եյինք կազմակերպել: Դասերն անցնում եյին աննկատելի և ուրախ: Յեթե

ուսուցիչը խաղացողներից վորևէ մեկին կանչում էր գրատախտակի մոտ, դասարանը վրդոված դոփում էր վոտքերով.

— Մի խանգարեք, — գոռում էր դասարանը, — տեսնում եք զբաղված է. մի այլ անգամ դուրս կկանչեք. շատ էլ շտապ չէ հո։ «Նայող հաղթողի» կոչում ձեռք բերելու համար մրցությունը մի որ տևեց շարունակ յերկու դաս և մեծ դասամիջոցի մի մասը։ Մրցում եյին Լիզա Սկանդալիզան և Վոլոդկա Լոբանդան։ Յերկու և կես ժամ նրանք աչքերը չհեռացրին իրարից։ Այդ որը մինչև անգամ ֆիզիկայի դասին պարեր տեղի չունեցան։ Ֆիզիկոսը զարմացել էր դասարանի անսովոր լռությամբ։ Բայց յերբ փորձեց խոսել մի ինչվոր բանի մասին, ձեռքերով նրան զգուշացրին, և նա լսեց սպառնական «ս-սս...»։ Ֆիզիկոսը յերկյուղած շշնջյունով բացատրում էր հարթաչափի կազմությունը։ Հետո նա վոտքերի մատների ծայրերով դուրս գնաց։

Մեծ դասամիջոցի վերջը Վոլոդկա Լոբանդան ձեռքով ծածկեց բորբոքված աչքերը։ Նա անձնատուր յեղավ։ Լիզան անշարժ շարունակում էր նայել հոնքերի տակից։ Աղջիկները հաղթանակելով սկսեցին «ընդհանուր ճղճղոց կամ մանկական ճիչ բացատում»։ Իսկ մենք ընկճված ականջներս խցեցինք։

## ՍՈՎՈՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՁՈՒՆԵՅԻՆՔ

Դասարանը համենայն դեպս աշխատում էր աղջիկների ներկայությամբ իրեն վայելուչ պահել։ Նստարանների և պատերի վրայից քերեցինք շատ խիստ արտահայտությունները։ Քթերը մատներով սրբելու համար քաղաքավարությամբ անցնում եյին գրատախտակի յետևը։ Դասերի ժամանակ դասարանում շրջում



եյին վայելուչ տոմսակներ, գաղտնի նամակներ, ծրարներ. «Բարի որ, Վա՛լիա։ Թույլ տվեք ուղեկցել ձեզ մինչև ձեր անկյունը մի կարևոր գաղտնիքի համար։ Յեթե այս տոմսակը ցույց տաք Սերյոժկային, յես նրա մռութը կջարդեմ, իսկ ձեր կողմից խոզություն կլինի։ Կոլիա»։

Ամեն գիշեր պարեր եյինք կազմակերպում «մինչև առավոտ»։ Այս յերեկույթներին մենք խիստ հետևում եյինք, վոր մեր ոխորդների հետ «Բ» դասարանի տղաները չպարեն։ Խանգարողներին քաշ եյինք տալիս դատարկ ու մութ դասարանները։ Կարճ, բայց աչառու հարց ու փորձից հետո հանցավորին ծեծում եյինք։

Տուժողի բարեկամներն աշխատում եյին վրեժ առնել, և այդպիսով շուտով դատարկ դասարաններում այդ գիշերային տուր ու դմփոցներն այնպիսի չափերի հասան, վոր բարձր դասարանի աշակերտները դռների մոտ հրացանավոր հերթապահներ նշանակեցին։ Հրացանները մնացել եյին «ինքնապաշտպանությունից»։ Յերբեմն հերթապահները հավաստիանալու համար տրաքտրաքացնում եյին խավար դատարկության մեջ։ Պարողները շատ շուտ ընտելացան այդ հրացանաձգությանը։

Բինդյուգը դասարանի վառարանը դարձրեց մի փոքրիկ նկուղ, վորտեղ կվաս էր պահում։ Նա շշերին մի ռետինե խողովակ հարմարացրեց, վորի ծայրը պահում էր իր մոտ նստարանի տակ։ Դասի ժամանակ ծարավ զգացողները սողում եյին սեղանի տակ և խողովակը բերաններն առնում։ Այս բանից չեր խորշում նաև Մադամ Խալուպան։ Նա մի գեր, տարիքով մորաքույր էր։ Նրանից վախենում եյին վոչ միայն աղջիկները, այլ և տղաները։ Իրեն վիրավորողներից մեկին բոլորի աչքի առաջ ծեծեց ամբիոնի վրա։ Իսկ

մի անգամ նա իմ գլուխն այնպես թրմփացրեց քարե հատակին, որ յես տասը րոպեից հետո միայն ինձ կենդանի զգացի և այն էլ կիսով չափ։ Սայոպկա Ատլանտիդան ժամ էր գալիս տխուր։ Աշակերտների ծնողները պատահելիս նրան նախատում էին։

— Հը, — ասում էին նրանք, — հասա՞ք ազատության։ Հիմա ուրա՞խ եք սովորելու ժամանակ։ Խայտառակություն է ամբողջ քաղաքի համար, ուրիշ ոչինչ։ Ներեցեք՝ ասեմ, որ սա ուսումնարան չէ, բայց թե ի՞նչ է, չգիտեմ։

Սայոպկան աշխատում էր խրատել ագարակներից յեկած սանձարձակներին։ Նրան օգնում էին տարրական դպրոցի աշակերտները և նրանց բարեկամները։ Մեզ չէին լսում։ Դասարանն զբաղված էր աչքախաղերով և պարերով։

— Հապա յե՞րբ պետք է սովորենք, — տխուր հարցնում էինք մենք։

— Հիմա ժամանակ չունենք էդ գործով զբաղվելու, — պատասխանում էր Բինդյուգը։ — Հին ռեժիմը չէ այժմ, բավական է։

— Հիմար, — ասում էր Կոստիա Ժուկը։ — Յեթե ուզում ես ուղիղն իմանալ, այժմ միայն ու միայն պետք է սովորենք։

— Այդ դուք եք, տարրական դպրոցի աշակերտներդ — բոլշևիկներդ, որ կրթություն քիչ ունեք, — ասաց Բինդյուգը, — իսկ մերոնք, հին գիմնազիստները գլուխ կհանեն։ Գիտունին սովորեցնել պետք չէ։

## ՄԵԾ ՄԱՐԴ, ԱՅՆ ԵԼ ԱՊԱՀՈՎ ՏԵՂ

Մեծ դասամիջոցին մեզ շաքար էին բաժանում։ Մեզ թեյ էին խմացնում։ Հին գիմնազիայում այսպիսի փարթամություն չէինք տեսել։



Ամեն մի աշակերտ ստանում էր մի մեծ գավաթ մուգ թեյ և յերկու կտոր շաքար։ Պոկրովսկում համարյա թե շաքար չկար։

Յես դպրոցում թեյը գցած չէի խմում և շաքարի թանկագին կտորները տուն էի բերում։ Ինձ ընդունում էր փոքրիկ յեղբայրս՝ Ոսկան, որին տալիս էի շաքարը։ Մենք հիանում էինք հատիկավոր ու ծակոտկեն խորանարդիկներով։ Դարսում էինք մի տուփի մեջ, որտեղ տեղավորված էր մեր շաքարի պաշարը։ Այդ պաշարն անձեռնմխելի յեր։ Պահում էինք ինչ որ ապագա խնջույքների համար։ Միայն կիրակի օրերին — ճաշին էինք մի-մի-կտոր ուտում։ Պաշարն աճում էր։

Մի անգամ շաքարն արյունհեղություն առաջ բերեց։

Ինձ ընտրել էին մեր դասարանի շաքարի պատասխանատու բաժանող։ Սա ոչ այնքան բարձր պաշտոն էր, որքան որ հարգված ամենքի կողմից։ Դասարանը հավատում էր իմ ազնվությանը։

— Տեսնո՞ւմ ես, — ասում էին ինձ, — պարենավորման կոմիսար ես... Մեծ մարդ ես, ապահով տեղ։

Բինդյուգը, որ մի հանդուգն ու ձեռներեց պատանի յեր, ինձ մի խորամանկ առաջարկություն արեց։ Խոսքն ավելորդ բաժինների մասին էր, որ տվել էին բացակայող աշակերտների համար։ Բինդյուգն առաջարկում էր այդ մնացած շաքարը չվերադարձնել, այլ պահեմ մոտս և կիսեմ իրեն հետ։ Իհարկե, այս գայթակղեցուցիչ կոմբինացիան խոստանում էր շատ ու շատ մեծացնել մեր տան շաքարի պաշարը։ Յեթե դա հին գիմնազիայում լիներ, յես ոչ միայն չէի տատանվի, այլ նույն իսկ պարտականություն կհամարեյի խաբել վարչությանը։ Բայց այժմ խորհր-

դում մեր տղերքն եյին նստած։ Նրանք հավատացել եյին ինձ, շաքարն ինձ եյին տվել, և յես չեյի կարող նրանց խաբել։

Յես հրաժարվեցի ազնվությանս հպարտությամբ։ Հենց նույն որը Բինդյուգը վրեժխնդիր յեղավ։ Շաքարը բաժանելիս մի քանի փոքր կտորներ ընկան հատակին։ Յես կռացա սեղանի տակ, վոր հավաքեմ։ Այդ միջոցին Բինդյուգը վզիցս բռնած ուժեղ թափով ցած հրեց։ Յես պինդ դիպա նստարանի անկյունին։ Ճակատիս չարագուշակ ուռուցք բարձրացավ, և սկսեց արյուն կաթել։ Յերկու կտոր շաքար կարմրեցին։ Աղջիկները կարեկցաբար նայում եյին ճակատիս և խորհուրդ տալիս սառը թաց շոր դնել։ Յես շարունակում եյի բաժանել և աշխատում եյի, վոր շաքարի վրա արյուն չկաթի։ Շաքարի կարմրած կտորներն ինձ բաժին վերցրի։ Տայա Ոպիլովան իր թաշկինակն ինձ տվեց։ Թև առած և արյունոտված յես մտա ուսուցչանոցի կողքի սենյակը։ Դռներին կարմիր կտոր եր կպցրած։ Սենյակում ծուխ ու աղմուկ եր կանգնած, հրացաններ եյին շարված։

— Ընկերներ, — ասացի յես ծխի ու աղմուկի մեջ, — յես տուժել եմ խորհրդային շաքարի պատճառով… Յեվ ընդհանրապես կանգնած եմ նույն պլատֆորմայի վրա… Բարի յեղեք խնդրում եմ, ինձ ել վորպես համակրող ցուցակագրելու։

Աղմուկը դադարեց, բայց ծուխը թանձրացավ։ Յեվ ինձ ասացին․

— Բայց համակրության համար հայրդ կպատժի, կկանգնեցնի անկյունում և դեռ ստամոքսդ մաքրելու խողովակ ել դուրս կգրի, վոր չհամակրես… Չե՞ վոր նա բժիշկ ե։

Ծուխը ծածկեց իմ վիշտը։



Բայց և այնպես յես ամբողջ մի շաբաթ ման եյի գալիս ճակատիս ուռուցքով։ Յես այդ ուռուցքը կրում եյի վորպես շքանշան։

## ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ 34 Ե

Այդ առավոտ յես սովորականից մի քիչ վաղ գնացի դպրոց։ Պետք ե շաքար ստանայի Լուսբաժնում։ Բրեչկայում «սպառողական խանութների» մոտ, վորտեղ նոր լրագրեր եյին կպցրել պատին, կանգնած եր մեծ և լուռ ամբոխը։ Նա ծածկում եր իր տեսողությունից լրագրի միջին մասը, և յես տեսնում եյի միայն ճմըրտված թուղթը, գունատված տառեր, «Իզվեստիա» վերնագիրը և «Խորհուրդ» բառը։

«Պատերազմը շարունակվում ե բոլոր ճակատներում», կարդացի վերևից։ Մարդկանց գլուխների արանքով յես տեսնում եյի սովորական հեռագրերի մի քանի հատվածներ։

«…Ուրալում հարձակումը շարունակում ենք և մի քանի գյուղեր գրավել ենք։ Կամա գետի վրա մեր զորքերը յետ քաշվեցին դեպի Ելաբուգա նավամատույցը։ Ամերիկական զորքերը ցամաք դուրս յեկան Արխանգելսկում․ Արխանգելսկում բանվորները հրաժարվում են պաշտպանել համաձայնողականների իշխանությունը… Ուկրաինայում ապստամբների կռիվը շարունակվում ե։

Բոլորովին ցածը, մեկի արմունկի տակով յես տեսա յերեկվա լրագրի մանր տառերը․

«Մոսկվայի բանվորների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհրդի մթերեղենների բաժինը տեղեկություն ե տալիս Մոսկվայի ազգաբնակությանը, վոր վաղը օգոստոսի 30-ին հիմնական հացի գրքույկներով հաց չի տրվի… Լրացուցիչ հացի

գրքույկի կոճղով և 2—12 տարեկան յերեխաների համար կտրոնով կտրվի 1/4 ֆունտ հաց...

Լրագրի առաջ կանգնած ամբոխին անսովոր լռություն էր պահում։ Ես չկարողացա հասկանալ, թե ինչ է պատահել։ Հանկարծ Ավստրիացի գերի Կարդաչը, ամբոխը ճեղելով, առաջ նետվեց։ Նա գունատ էր։ Նրա մի վոտքի փաթաթանը բացվել էր և քաշ էր գալիս յետևից։

— Կարդա, — ասաց նա։ Եվ մեկը բարեխղճորեն գլուխն որորելով կարդաց.

— «Ամենքի՛ն, ամենքի՛ն, ամենքի՛ն։

Մի քանի ժամ առաջ վոճրագործ մահափորձ է կատարվել ընկեր Լենինի դեմ... պետք է խաղաղություն պահել և կազմակերպվել։ Ամենքը պետք է հաստատուն մնան իրենց դիրքերում։ Պետք է շարքերը խտացնել։

ՀԿԳԿ-ի նախագահ՝ ՅԱ. ՍՎԵՐԴԼՈՎ.

1918 թ. ոգոստոսի 30-ին,
յերեկոյան 10 ժ. 40 րոպ.»։

Կարդաչը ապշած, թերահավատ աչքերով նայում էր կարդացողի բերանին։ Հետո բռունցքը խփեց այտին և բառաչեց.

— Հմ-մ-մ...

— «Գնդակներից մեկն անցնելով ձախ թիակի տակով...», շփոթվելով կարդում էր մեկը։

Մեկը խփեց մեջքիս։ Ես շուռ յեկա և տեսա Բինդյուգն է։

— Խփել են, — անվրդով ասաց Բինդյուգը և լրագրի մի անկյունը պատռելով, սկսեց ծխախոտ փաթաթել։ Կարդաչը հարձակվեց նրա վրա. բռնեց նրա ուսերից և սկսեց թափահարել։



— Ես հենց քեզանից ծխախոտ կփաթաթեմ, — գոռաց Կարդաչը։

... Դպրոցը դղրդում էր։ Դասարանում հատակին արմունկների վրա պառկել էին տարրական դպրոցի աշակերտները և մի քանի հոգի էլ մեր տղաներից։ Ուսուցչանոցից վերցրել էին մարդակազմության քարտեզը և բաց արել, փռել հատակին։ Վիմագրով նկարված յերակները, թոքերը, աղիքները, շնչերակը քրքրում էինք մատիտով և վորոշում՝ վտանգավո՞ր է, թե վոչ։ Կոստյա Ժուկը նստած էր նստարանի վրա՝ դեմքը ձեռքին հենած։ Մյուս ձեռքով գրչահատ ուներ բռնած։

— Իսկ յեթե հանկարծ... մեռնի՞, — տխուր հարցնում է Կոստյան և նստարանի յերեսին դանակով փորագրում. — Լենին... Լե...Լենի... Լենին...

Եկավ Մոկեյիչ ծառան, դպրոցական գույքի պահապանը։ Նա խստությամբ նայեց Կոստյային և արդեն բերանը բաց էր արել, վոր հանդիմանի նրան ժողովրդական գույքը փչացնելու համար, բայց ծանր հառաչեց, լուռ հեռացավ։ Սանդուխքների վրա լսվում էր ծանր քայլերի դղրդոց։ Կարմիր շոր կպցրած դռների առաջ բարձր դասարանի աշակերտները հրացանները, փայտերի նման, դարսում էին իրար վրա։

Մեծ դասամիջոցին դասարան մտան խորհրդի անդամներից Ֆորսունովը և Ստյոպկա Ատլանտիդան։ Ստյոպկան նոր էր վերադարձել Սարատովից և բերել էր վերջին հաղորդագրությունը.

— Ընկեր Լենինի առողջությունը, — կարդաց Ֆորսունովը և, չգիտեմ թե ինչու, ինձ նայեց, — նրա առողջությունը յերեկոյան բյուլետենի համաձայն զգալի չափով լավ է։ Տաքությունը 37,6 է. զարկերակը՝ 88. շնչառությունը՝ 34...։

— Լյոլկա,— դարձավ ինձ Աոլանտիդան,— Լյոլկա, քեզ մի բան ենք խնդրում։ Հայրդ բժիշկ է։ Հեռախոսով հարցրու, արդյոք ինչ է նրա կարծիքը Լենինի մասին... Ի՞նչպես են ասում... Դիագնոզ, թե պրոգնոզ...

Մի քանի վարկյանից հետո յես ականջիս դրի հեռախոսի փողը, վոր դեռ տաք էր նախընթաց խոսակցությունից։ Պատկառելի ամբոխը շրջապատեց ինձ։

— Հիվանդանոց,— ասացի,— խնդրում եմ, բժշկին կանչեցեք։ Հայրիկ, յես եմ։ Հայրիկ մեր տղաները և խորհուրդը խնդրում են, վոր հարցնեմ քեզ... Ընկեր Լենինի մասին։ Նրա շնչառությունը 34 է։ Ի՞նչ ես կարծում, վտանգավո՞ր է։

Հայրս պատասխանեց սովորական բժշկական ձայնով։

— Վերջնական անկասկած կարծիք հայտնել այժմ չի կարելի,— ասաց հայրս,— լուրջ դեպք է։ Բայց առայժմ վտանգ չկա, թե... Կարող է մահով վերջանալ։

— Մեր կողմից շնորհակալություն հայտնիր,— շշնջաց ինձ Ստյոպան։

Այդ որը յերգեցողության դասին մենք նոր յերգ եյինք սովորում։ Այդ յերգի գեղեցիկ, բայց դժվար արտասանելի անունն էր՝ «Ինտերնացիոնալ»։

## ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎԱԾԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

... Փոքր յեղբորս Ոսկային դպրոց ընդունեցին։ Ոսկան ստացավ փաստաթղթերը։ Մայրս յեկավ դպրոցից և ուրախ ձայնով կանչեց Ոսկային։

— Ընդունեցին,— ասաց հպարտ մայրս։— Միայն ափսոս, վոր այժմ համազգեստը վերացրել են։

— Ո՜, հիմա ինչքան շատ շաքար կունենանք,— յերևակայելով ասաց Ոսկան։— Ինձ էլ կտան։



Յես Ոսկային մի կարճ դասախոսություն կարդացի այս թեմայով՝ նոր ընդունված աշակերտը, նրա իրավունքներն ու պարտականությունները, կամ ինչպես անել վոր չծեծվի։

Ոսկան դրավ իմ հին գլխարկը և գնաց դպրոց։ Գլխարկը գլխին ազատ պտտվում էր։

— Ինչու յես եդ տեսակ գլխարկ դրել, հարցրեց Ոսկային ժամանակավոր վարիչը, գլխարկի տակից նրան նայելով։

— Վորպես համազգեստ,— պատասխանեց Ոսկան։

— Նորեկ, նորեկ,— աղաղակեց դասարանը, տեսնելով Ոսկային։

— Ջեռք չտաք, հնի յեք հանդիպել,— շտապով ասաց Ոսկան, հիշելով իմ խրատները։

Դասարանը զարմացավ։ Ոսկային չծեծեցին։

## ԴԻՄԱԿՈՎ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Մեր մարմնամարզության ուսուցիչը դպրոցում ըմբիշ Ռիչարդ Սինյագինն էր— Պողպատե Դիմակը, վոր մի նախկին բեռնակիր էր։ Այդ ժամանակ Սավոր մի նախկին բեռնակիր էր։ Այդ ժամանակ Սավորի կրկեսում տեղի ուներ ֆրանսիական ըմբշամարտի միջազգային չեմպիոնատ։ Ռիչարդ Սինյագինը գնում էր Սարատով ըմբշամարտելու. ըմբշամարտի դատավոր Բենեդետտոն հասարակության առաջ նրան անվանում էր «Ծպտյալ ըմբիշ Պողպատի Դիմակ»։ Ծանոթ աֆիշները հայտարարեցին ամենքին, վոր մեծ մենամարտ էր լինելու յեն Պողպատի Դիմակը և Մահվան Դիմակը, և այդ մենամարտը լինելու էր վճռական, առանց տևողությունը վորոշելու, առանց հանգստի ու դադարի, մինչև հետևանքի պարզվելը։

Իհարկե այս ամենը սարքված խաբեբայություն էր։ Ըմբիշները բարեխղճորեն հևացին առաջուց պայ-

մանավորված քառասուն րոպեն, և հետո Պողպատե Դիմակն զգուշությամբ ինքն իրեն պառկեցրեց թիակների վրա։

Երբ հանդիսականների թաթերն ուռան և կրկեսը հանգստացավ, դատավորը ձեռները զգուշությամբ տրորելով, հայտարարեց.

— Մահվան Դիմակը հաղթեց քառասուն և հինգ րոպեյում, կանոնավորապես... Պողպատե Դիմակն աշխարհի և Պոկրովսկ քաղաքի չեմպիոն Ռիչարդ Սինյագինն է։

Հետևյալ օրը դպրոցում Սինյագինն ամբողջ դասը արդարանում էր, թե իրեն անկանոն ձևով են վայր գցել։ Բայց և այնպես դասարանը նրան նախատում էր։ Այդ ժամանակ, վորպեսզի Սինյագինն իր ուժը ցույց տա, թույլ տվեց կամեցողներին մագլցել իր վրա։ Իննը հոգի բարձրացան Սինյագինի վրա։ Նրանք այնպես էին սողում նրա վրայով, ինչպես կապիկները ծառի վրայով։ Հետո Սինյագինը բարձրացրեց այն նստարանը, վորի վրա նստած էր մատամ Ծալուպան յերկու ոգնականներով։ Նա բարձրացրեց նստարանը իր բոլոր բնակիչներով և դրեց հարևան նստարանի վրա։

— Դեհ, տեսեք, — ասաց նա, — իսկ դուք ասում եք, թե...

Դասը վերջացավ։

## ԱՇԽԱՐՀԸ ՁԵՄՊԻՈՆԱՏ Է

Դպրոցը միշտ էլ հարգել է ուժեղներին։ Իսկ հիմա սկսել էր նրանց աստվածացնել։ Աչքախաղը մոռացվել էր, ֆրանսիական ըմբշամարտը կատարելապես տիրապետում էր դպրոցում։ Նա մեզ գրգռում էր դեպի «վճռական ու անժամանակակետ» ըմբշամար-



տերի․ դասարաններում ու միջանցքներում քաշքշվում էինք «սուպլեսների» և «տերդե-հանշերի» ձեռքին։ Նա մեր թիկունքներով սրբում էր հատակի քարերը։ Միայն Մարտինենկո Բինդյուգի թիակները չէին կպել հատակին։ Բինդյուգը բոլոր դասարանների չեմպիոնների չեմպիոնն էր, ամբողջ դպրոցի և նրա շրջակայքի անհաղթելի չեմպիոնն էր։

Ոսկան բոլորովին խելագարվել էր ֆրանսիական ըմբշամարտի վրա։ Իր դասարանում նա ամենից փոքրիկն էր։ Նրան ամենքը պառկեցնում էին, մինչև անգամ միայն «ձախ ձեռքով»։ Բայց տանն իր հպարտության վիրավորանքների տեղը վրեժխնդիր էր լինում։ Նա ըմբշամարտում էր աթոռների, բարձերի հետ։ Սեղանի վրա մրցում էին նրա սեփական ձեռները։ Ձեռները երկար ժամանակ իրար տրորում ու սեղմում էին։ Եվ աջը պառկեցնում էր ձախ ձեռքը բոլոր վոսկորներով։

Ոսկայի մշտական և ամենալուրջ ախոյանը մեծ բազմոցի երկար բարձն էր։ Հաճախ մանկանոցում այսպիսի տեսարաններ էին տեղի ունենում.— Ոսկան ձեռքերը տարածած, պառկած է հատակին՝ բարձի տակ, վորպես թե հաղթված նրանից։

— Անկանոն է, — գոռում էր Ոսկան բարձի տակից։ — Նա ինձ կրկնակի նելսոն արեց և վոտքը դրեց վոտքիս առաջ։

Հատուցման, վրեժխնդրության ժամանակ բարձը միշտ հաղթվում էր, և նրան պատժում էին բակում, ուր փայտով թափ էին տալիս փոշին։

Հետո Ոսկան առաջին աստիճանի չեմպիոն Կոլկա Անփիսովին կպցրեց Գրիշկա Ֆեոդորովի հետ։ Գրիշկա Ֆեոդորովը մեր դասարանի երկրորդ ուժեղ ըմբիշն էր։ Դրանց գոտեմարտը տեղի ունեցավ կիրակի օրը

մեր բակում։ Պատրաստությունները նախընթաց օրվանից սկսվեցին։ Բակում կավիճով «գորգ» գծագրեցինք։ Շրջանը ավլեցինք և ավազով ծածկեցինք։ Յերբ կիրակնօրյա հանդիսականները հավաքվեցին և բակում արդեն նեղվածք էր, Ոսկան հանեց փոքրիկ շվիկը. յես հայտարարեցի.

— Իսկույն տեղի կունենա յերկու ըմբիշների՝ Անփիսովի (առաջին աստիճան) և Ֆեոդորովի (յերկրորդ աստիճան) ըմբշամարտը։ Ըմբշամարտը կլինի առանց տևողությունը սահմանափակելու, ազնիվ, վճռական մինչև հետևանքը։ Կհանգստանան յուրաքանչյուր տասը րոպեյից հետո։ Յերաժշտապե՛տ, վողջույն նվագել... Ո՛սկա, մե՛կ էլ փչիր։ Արգելված հնարները հայտնի յեն։ Ժյուրի՛, այսինքն դատավորներ, տեղ բռնեցեք տակառի մոտ։

Ոսկան, Բինդյուգը և դռնապան Ֆիլիպիչը նստեցին նստարանի վրա, տակառի մոտ։ Յես մրցությունը հայտարարեցի սկսված։

Չեմպիոններն իրար ձեռք սեղմեցին և թեթև կերպով իրարից հեռու թռան։ Անփիսովը բարձրահասակ էր և վոսկրոտ։ Կարճահասակ ու թիկնավետ Ֆեոդորովը նման էր կիրգիզի ձիու։ Մի քանի վարկյան իրար հսկելով, պտտվում եյին իրար շուրջ։ Հետո Անփիսովը հանկարծ գրկեց Ֆեոդորովին և ձեռքերը սեղմեց։

Հանդիսականները քարացան, մինչև անգամ բակում քամին դադարեց։

— Ձեռքերս թո՛ղ, — գոռաց Ֆիլիպիչը։

— Ձեռքե՛րը, — գոռգոռացին յերկրորդ աստիճանին պատկանող տղաները։

— Կանոնավո՛ր է, — ասացին առաջին աստիճանին պատկանողները։



Յես սուլեցի։ Ոսկան շչաց։ Դատավորները սկսեցին վիճել։ Անփիսովն այս աղաղակի մեջ պառկեցրեց Ֆեոդորովին։

— Ուռա՛, — աղաղակեցին առաջին աստիճանի տղաները։ — Կանոնավո՛ր է։

— Թաթ է անցնում տակովը, — ասացին մերոնք։ — Անկանո՛ն է,

Բայց վորքան էլ աշխատում եյի, թաթս չէր անցնում մեր չեմպիոնի գետնին պինդ կպցրած թիակների տակով։ Խայտառակությունից, ամոթից վառվում եյինք ամբողջապես։ Ֆեոդորովը վեր կացավ և շփոթված թափ տվեց շորերը։

— Մի անգամ էլ պառկիր, — ծաղրելով ասաց Բինդյուգը, — հանգստացիր։

Ապագան մեզ թվում էր ամբողջապես ծաղր ու նախատինք։

Փոքրիկները հրճվում եյին։ Այդ ժամանակ Բինդյուգը հարձակվեց նրանց վրա։ Գետին փռեց նրանց չեմպիոնին և հետո սկսեց ծեծել փոքրերին։ Նա նրանց քշեց բակի մի անկյունը և իրար վրա պառկեցրեց փայտերի պես։ Այո, նա հերոս էր, և յես ներեցի Բինդյուգի հանցանքը, վոր ճակատիս ուռուցք էր բուսցրել և տարրական դպրոցի աշակերտների հետ կռվել.

## ՎՃՌԱԿԱՆ ՄԻՆՉԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԸ

Այս միջոցին փողոցից ներս մտավ Ստյոպկա Ատլանտիդան։

— Ներողություն եմ խնդրում, վոր ուզում եմ հարց տալ, — ասաց Ստյոպկան, — սա ինչ կռիվ է ձեր որակարգում.

Յես յեղելությունը պատմեցի Ստյոպկային։ Բինդ-

յուղը քանդեց փոքրիկների կույտը և թավալգլոր յեկող բուրգը մոտեցավ մեզ։

— Անհագին եշեր են, — ասաց Ստյոպան, — և ըմբշամարտով են զբաղված։ Զբաղմունք են գտել այսպիսի մոմենտին։

— Ինչ ես ափեղցփեղ դուրս տալիս, Ստյոպկա, շատ օգտակար է առողջության համար, — առարկեց Բինդյուգը։ — Հապա մի ձեռք տուր մկաններիս։ Պի՞նդ են։ Ա՛յ, այդ է բանը։ Ով վոր ուժեղ է, վոչ վոքի վրա չի թքի։ Ա՛յ, դուք ու Լենկան տարրական դըպրոցի աշակերտների մոտ եք վազում, վորոհետև վախկոտ եք։ Յերբ ուժդ չի պատում, մտածում ես, թե ընկերներդ կօգնեն։ Եհ, ինչ մարդիկ եք։ Իսկ ինձ հարկավոր չեն ձեր ընկերները։ Յես ինքս կտեսնեմ իմ գործը։ Տեսնո՞ւմ ես ես բռունցքը։

— Բռունցքդ ուժեղ է, բայց գլուխդ դատարկ— ասաց Ստյոպկան։ — Վո՛չ մի բանի պետք չես։ Մի ասա, տեսնեմ, դու ինչ կարող ես անել մեն-մենակ։ Իսկ մենք ընկերներով, կամ այսպես ասած ընդհանրությամբ, յեթե ուզենք, քեզ խսկույն... Ա՛յ մեր ույժը։

— Իհարկե, յեթե ամենքը մեկի դեմ են, — ասաց Բինդյուգը, — բայց այդ դեպքում ել պետք է ազնվաբար վարվել։

— Իսկ յերբ ամենքն աշխատում եյին մեկի համար, այդ լա՞վ եր, — հարցրեց Ստյոպկան։ — Քո փորն ուռած հայրն ի՞նչքան ծառաներ ուներ ագարակում։

— Իսկ դո՞ւ, ագարակից չե՞ս, ինչ է, — կատաղեց Բինդյուգը և բարկությունից սևացավ։

— Խնդրում եմ ինձ քեզ հետ մի համեմատիր, — հանգիստ պատասխանեց Ստյոպկան։ — Մեր ագարակը մի թիզ տեղ եր, իսկ ձերը՝ մի ամբողջ կալվածք։

— Եհ, ինչ անեմ, հիմա այնտեղ ձեր գրողը տա-



րած ընկերները կոմունա յեն սարքել և մեզ դուրս արել։

— Դուրս արե՜լ... Անհոգ կաց, գիտեմ, վոր ցորենը նկղում պահել եք։ Իսկ յես հորս ստիպեցի, վոր պահանջվող ռազվյորստկան ամբողջովին տա։ Ոհ, ինչ քաշեցի մորս ձեռքից... Յես Կոստյա Ժուկի մոտ եյի գիշերում... Իսկ հետո նա՝ ինձ մոտ... Մենք ամենքս իրար օգնում ենք։

— Ուրեմն դու հին ընկերոջդ կդիմադրե՞ս. — հանգիստ հարցրեց Բինդյուգը։

— Դու առաջ եյիր իմ ընկերը, — ավելի հանգիստ պատասխանեց Ստյոպկան։

Բակում տիրեց լռություն։ Հետո Բինդյուգը բարձրաձայն հառաչեց և դեպի դուռը գնաց։ Նա գնում եր կռացած, և թվում եր թե նրա անհաղթ չեմպիոնական թիկունքը հենց նոր է հաղթվել։

## Ե-ՄՅՈՒԵՆ ՅԵՎ ԱՅՐԱԲՆԱԿՆԵՐԸ

Հետևյալ որը դասարանը վճռեց հանրահաշվի դասը հատկացնել Բինդյուգի և Ատլանտիդայի մենամարտի քննությանը։ Բինդյուգը մռայլ հրաժարվում եր։ Բայց մաթեմատիկ Կառլիչի փոխարեն, վորին սպասում եյինք, դասարան մտավ մի անծանոթ ծերունի, մաքուր վերնազգեստով։ Նա քնքույշ կազմվածք ուներ, կարճատես եր և ճաղատ։ Ճաղատ գագաթի ծայրը ցից-ցից գորշ մազեր եյին բսել։ Նրա ճաղատ գագաթը կորալյան կղզու լճակի նման եր։

— Ե՞ս ով է, ես ճաղատը, — հոնքերը հավաքած ասաց Բինդյուգը։ Դասարանը հրհռաց։

— Եմ-ե... Ա՞յս է, — հարցրեց ծերունին, մատով ցույց տալով կռացրած ճաղատ գլուխը։ — Սա իմն է։ Ի՞նչ եք կամենում։

յուգը քանդեց փոքրիկների կույտը և թավալգլոր յեկող բուրգը մոտեցավ մեզ։

— Անհագին եշեր են, — ասաց Ստյոպան, — և ըմբշամարտով են զբաղված։ Զբաղմունք են գտել այսպիսի մոմենտին։

— Ինչ ես ափեղցփեղ դուրս տալիս, Ստյոպկա, շատ օգտակար է առողջության համար, — առարկեց Բինդյուգը։ — Հապա մի ձեռք տուր մկաններիս։ Պինդ են։ Ա՛յ, այդ է բանը։ Ով որ ուժեղ է, վոչ վոքի վրա չի թքի։ Ա՛յ, դուք ու Լենկան տարրական դըպրոցի աշակերտների մոտ եք վազում, վորովհետև վախկոտ եք։ Յերբ ուժդ չի պատում, մտածում ես, թե ընկերներդ կօգնեն։ Եհ, ինչ մարդիկ եք։ Իսկ ինձ հարկավոր չեն ձեր ընկերները։ Յես ինքս կտեսնեմ իմ գործը։ Տեսնո՞ւմ ես ես բռունցքը։

— Բռունցքդ ուժեղ է, բայց գլուխդ դատարկ — ասաց Ստյոպկան։ — Վո՛չ մի բանի պետք չես։ Մի ասա, տեսնեմ, դու ինչ կարող ես անել մեն-մենակ։ Իսկ մենք ընկերներով, կամ այսպես ասած ընդհանրությամբ, յեթե ուզենք, քեզ խկուլն... Ա՛յ մեր ուժը։

— Իհարկե, յեթե ամենքը մեկի դեմ են, — ասաց Բինդյուգը, — բայց այդ դեպքում ել պետք է ազնվաբար վարվել։

— Իսկ յերբ ամենքն աշխատում եյին մեկի համար, այդ լա՞վ եր, — հարցրեց Ստյոպկան։ — Քո փորն ուռած հայրն ինչքան ծառաներ ունի ագարակում։

— Իսկ դո՞ւ, ագարակից չե՞ս, ինչ է, — կատաղեց Բինդյուգը և բարկությունից սևացավ։

— Խնդրում եմ ինձ քեզ հետ մի համեմատիր, — հանգիստ պատասխանեց Ստյոպկան։ — Մեր ագարակը մի թիզ տեղ եր, իսկ ձերը՝ մի ամբողջ կալվածք։

— Եհ, ինչ անեմ, հիմա այնտեղ ձեր գրողը տա-



րած ընկերները կոմունա յեն սարքել և մեզ դուրս արել։

— Դուրս արե՛լ... Անհոգ կաց, գիտեմ, վոր ցորենը նկղում պահել եք։ Իսկ յես հորս ստիպեցի, վոր պահանջվող ռազվյորստկան ամբողջովին տա։ Ոհ, ինչ քաշեցի մորս ձեռքից... Յես Կոստյա Ժուկի մոտ եյի գիշերում... Իսկ հետո նա՝ ինձ մոտ... Մենք ամենքս իրար օգնում ենք։

— Ուրեմն դու հին ընկերոջդ կդիմադրե՞ս. — հանգիստ հարցրեց Բինդյուգը։

— Դու առաջ եյիր իմ ընկերը, — ավելի հանգիստ պատասխանեց Ստյոպկան։

Բակում տիրեց լռություն։ Հետո Բինդյուգը բարձրաձայն հառաչեց և դեպի դուռը գնաց։ Նա գնում եր կռացած, և թվում եր թե նրա անհաղթ չեմպիոնական թիկունքը հենց նոր է հաղթվել։

## Ե-ՄՅՈՒԵՆ ՅԵՎ ԱՅՐԱԲՆԱԿՆԵՐԸ

Հետևյալ օրը դասարանը վճռեց հանրահաշվի դասը հատկացնել Բինդյուգի և Ատլանտիդայի մենամարտի քննությանը։ Բինդյուգը մռայլ հրաժարվում եր։ Բայց մաթեմատիկ Կառլիչի փոխարեն, վորին սպասում եյինք, դասարան մտավ մի անծանոթ ծերունի, մաքուր վերնազգեստով։ Նա քնքույշ կազմվածք ուներ, կարճատես եր և ճաղատ։ Ճաղատ գագաթի ծայրը ցից-ցից գորշ մազեր եյին բսել։ Նրա ճաղատ գագաթը կորալյան կղզու լճակի նման եր։

— Ե՞ս ով է, ես ճաղատը, — հոնքերը հավաքած ասաց Բինդյուգը։ Դասարանը հրհռաց։

— Եմ-ե... Ա՞յս է, — հարցրեց ծերունին, մատով ցույց տալով կռացրած ճաղատ գլուխը։ — Սա իմն է։ Ի՞նչ եք կամենում։

— Ոչինչ... Հենց այնպես, — ասաց Բինդյուգը, որ չէր սպասում այդ հարցին։

— Գուցե այժմ ճաղատությունը... ե-եմյուե... արգելված է, — շարունակեց ծերունին։ Դասարանը հարգանքով նայում էր նրան։

— Ձե՛, խնդրեմ, ինչպես ձեզ հաճելի յե, — ասաց Բինդյուգը, չիմանալով ինչպես ազատվել նրանից։

— Լավ, շնորհակալ եմ, — շշնջաց ծերունին։ — Ցեկեք ծանոթանանք... Ե... ե-մյուե... յես ձեր պատմության ուսուցիչն եմ, Սիմեոն Իզնատյեվիչ Կիրիկով։ Ե-մյուե... Բարև՛ ձեզ, տրոգլոդիտներ։

Նոր և անծանոթ բառ էր։ Ցեվ մենք շվարեցինք, չեյինք իմանում, ծերունին մեզ գովեց, թե հայհոյեց։ Ստյոպկա Ատլանտիդան վեր կացավ և հարցրեց.

— Ուզում ենք հարցեր տալ. — առաջինը, վո՞ր պուճախից եք բսել։ Ցեվ յերկրորդ՝ ինչ անուն տվեցիք մեզ։ Տրոգլոդիտների մասին եմ հարցնում։

Տրոգլոդիտները գոփում եյին վոտքերը և պահանջկոտ կերպով թակում նստարանները։

— Նստեցե՛ք, ե՛յ դուք դեմքեր... ասաց Կիրիկովը։ — Տրոգլոդիտները... ե-ե-եմ... ե... այրերում ապրող նախաջրհեղեղյան մարդիկն են, նախամարդիկը, մեր, եեմյուե, նա-նա-նա-նախ-ա-հայրերը, մեր նախնիքներն են... Ցեվ ե-եմյուե, մայր-Ռուսաստանն այժմ նորից մտնում է նախնական վիճակը։ Վորից հետևում է, վոր դուք յերիտասարդ տրոգլոդիտներ եք։

Ուրեմն նշանակում է յես տրոգլոդիտուհի՞ յեմ, — բարկացած հարցրեց Մադամ Խալուպան։

— Ի՞նչ եք ասում, — քաղաքավարի շշնջաց Կիրիկովը։ — Դուք մի ամբողջ մամոնտուհի յեք կամ բրոնտոզավրուհի։

— Մեր խելքի յե՛, — խանդավառ բացականչեց



դասարանը։ Բանից յերևաց, վոր ծերունին կարողացավ գրավել։ Հենց առաջին դասի վերջը դասարանը խոնարհվել էր նրա առաջ։ Մինչև անգամ խստապահանջ Ստյոպկան էլ խոստովանեց, վոր «շարիգալը (հնություն) յաման բան է»։



Նոր պատմաբանի մականունը շատ շուտ գտան։ Նրան անվանեցին «Ե-մյուե», վոր ֆրանսերեն նշանակում է «համր է»*։ Կիրիկովը վոչ թե խոսում էր, այլ բառերը ծամում էր։ Նա բառերը ծամծմում էր և ամեն մի արտահայտության անվերջ «ե-մյուե»-ներ ավելացնում։

Ե-մյուեն տրոգլոդիտներից չէր վիրավորվում։ Նա ուրախ էր և բարեհոգի։ Մեր աղջիկները Կիրիկովին ոտմսակներով ռմբակոծում եյին, իսկ Շպինգալետները Ե-մյուե-ի յերրորդ դասին համբուրեցին նրա ճաղատ գլուխը և թաշկինակներով սրբեցին, վոր ավելի լավ փայլի։

* Ֆրանսերեն շատ բառերի վերջը դրվում «e» և չի արտասանվում

Ն-մյուսն մեզ ֆիզուր էր անվանում։

— Ալեֆերենկո ֆիզուր, — ասում էր նա, դուրս կանչելով աշակերտին.

— Վեր բարձրացիր։

Ալեֆերենկոն նստարանից վեր էր բարձրանում։

— Են, ֆիզուր, — ասում էր Ն-մյուսն, — հապա մի հիշենք, ն-մյուս, քարանձավի բնակիչ, անցյալ անգամ ինչի՞ մասին էինք խոսում։

— Մենք խոսում էինք քարե դարի մասին, — պատասխանում է տրոգլոդիտ Ալեֆերենկոն, — շատ ձանձրալի յե և նախապատմական. վոչ պատերազմ կա... վոչինչ չկա...

— Նստեցեք, ֆիզուր, — ասում էր Ն-մյուսն։ Այսոր, ն-մյուս, ավելի ձանձրալի կլինի։

Նա սոխպողական շուտասելուկի պես բոբռացնում էր նախապատմական յեղելությունների հաջորդ բաժինը։ Վերջացնելով, նա միանգամից ուրախանում էր և դասի մնացած կեսն անց էր կացնում 1912 թվի «Սատիրիկոն» ամսաթերթի բարձրաձայն ընթերցանությամբ կամ պատմում վորսորդական արկածները։ Կիրիկովին ուղղված հարգանքի նշաններից մեկն էլ ուշադիր լռությունն էր համարվում։ Նրա դասերին բոլոր աշակերտները ներկա էին լինում։ Գալիս էին և բարձր դասարանի աշակերտները։ Փառքն ու առասպելներն աստիճանաբար ծածկում էին նրա հրճվող ճաղատ գագաթը։ Չնայելով, վոր կարճատես էր, Ն-մյուսն լավ նկատեց դասարանի յերկպառակությունը։ Նա մեզ բաժանում էր յերկու մասի՝ տրոգլոդիտներ (գիմնազիստներ) և մարդանմաններ (տարրական դպրոցի աշակերտներ)։ Այս բանը վերջնականապես հմայեց գիմնազիստների հոգին։ Առաջին որերի ազնվահույզ վողևորությունը փոխվեց խաղաղ ու կա-



յուն աստվածացման։ Բայց յերբեմն ինձ թվում էր, թե այս բարեհոգի ծերունու մեջ ինչ վոր անհասկանալի չար ու ծանոթ բան է յերևում։ Նրա կատակների վերջն այս բանը գլուխ էր բարձրացնում ակնհայտնի, բայց համր կերպով, ինչպես «ն-մյուսն», ինչպես «համր են» ֆրանսերեն լեզվի ուղղագրության մեջ։

Մի անգամ դասի ժամանակ Ն-մյուսն մեզ մի յերկար ճառ ասաց։ Այդ որը նա մինչև անգամ սովորականից քիչ էր շվշվացնում։

— Տրոգլոդիտներ և մարդանմաններ, — ասաց
նա։ — Ցես ուզում եմ ձեր այրերում ճշմարտության
սուրբ կրակը վառել... Ցես կպատմեմ ձեզ, թե ինչու
ինձ ստիպում են ձեզ պատմել տրոգլոդիտների մասին,
իսկ կայսրների մասին խոսելն արգելում են... Լսեցեք
ինձ, նախնական յեղբայրներ, մամոնտներ և բրոնտո-
զավրիկներ... Ն--մյուս։ Պատմությունը վերջացավ։
— Չե, չե... Չի վերջացել... Դեռ զանգը չեն
խփել, — պատասխանեցին անկյունից։
— Ո՞վ էր եդ միամիտ վողորմելին, խոսողը, —
հարցրեց Կիրիկովը. — յես պատմության դասի մա-
սին չեմ խոսում, այլ ն-մյուս, մարդկության մասին։
Գեղեցիկ, իրական, շքեղ պատմության մասին։ Պատ-
մության շրջանն ընդհատվում է։ Բոլշևիկները Ռու-
սաստանը յետ դարձրին, ն-մյուս... դեպի նախնական
կոմունիզմը, դեպի սկզբնական խավարը... Քաոս,
ավերածություն... Նավթ չկա... Մենք կկորցնենք
կրակը, մենք կմերկանանք։ Կտորեղեն չկա.. Սկսվում
է գազանային պարզ կյանքը, հարգելի տրոգլոդիտներ։
Գնացքների յերկաթուղիները կանաչով կծածկվեն։
Ն-մյուս, կայրվի վերջին լուցկին և կսկսվի նախնական
գիշերը...

— Ի՞նչ գիշեր, քանի վոր ամեն տեղ էլեկտրականություն կանցկացնեն, — վեր թռավ տեղից Ստյոպկա Ատլանտիդան։

— Ձեռք քաշիր։ Ճի՜շտ է ասում, — ասաց Բինդյուգը։ — Մեր ագարակում կոմունան ամեն ինչ ավերեց։

— Ձե՛նք ուզում նախնական կյանքը։ Պատմեցեք ասպետների մասին, — աղաղակեցին անկյունից։ Դասարանը դղրդաց։ Տրոգլոդիտները թռչկոտում էյին նստարանների վրայից։

— Զորքոտանի կդառնանք, սիրելի տրոգլոդիտներ, — զվարճանում էր Ն-մյուեն, — բրդոտներս վոռնոց կբարձրացնենք հավիտենական գիշերից, ուր թաղվում ենք այժմ... Ո՜ւի։ Ո՜ւ-ու-ու՜-ի՜։

— Ո՜ւի-ուի։ Ո՜ւի-ուի-ուի, — դասարանը ուրախանում էր նոր զվարճությամբ։

Վոմանք մտան իրենց դերի մեջ և սկսեցին չորեքթաթ վազվզել նստարանների արանքներում։ Մնացածները ծիծաղից թուլանում էյին։

Կիրիկովն սվսվացնում էր ամբիոնի վրա։ Ելի ինչ վոր մի ծանոթ բան յերևաց նրա ծամածռվող կերպարանքին։ Բայց յես չկարողացա հասկանալ այդ կասկածելի «ինչ վորը»։ Դասարանի չարագուշակ ուրախությունն ինձ էլ համակեց։ Ուզեցի չորեքթաթ քաշ գալ և մի քիչ էլ վոռնալ. պոչի բացակայությունն ինձ վշտացնում էր, բայց տպավորությունը չէր թուլացնում։

— Տղերք, տղերք, բավական է, — գոռաց Կոստյա Ժուկը, սթափվելով — Ստյոպկա, հասկացրու դրանց, վոր նա դրանց կուրացնում է։ Ստյոպկա, քեզ եմ ասում։

Բայց Ստյոպկան անհայտացավ։ «Մի՞թե փախավ», վախեցա յես։

Դպրոցական խորհրդի նախագահ Ֆորսունովը դասարան վազեց նրա յետևից, ուշացած սովերի պես, յերևաց Ստյոպկան։ Տրոգլոդիտները վայրկենապես իրենց տեսան քանիերորդ դարում։ Ճաղատ Կիրիկովը մռայլվեց։

— Այդպիսի գործունեության համար կարելի յե և Չեկա գնալ, — հանգիստ ասաց նրան Ֆորսունովը։

— Քաչալ բուրժույ, — ասաց Ստյոպկան, գլուխը վեր բարձրացնելով Ֆորսունովի թիկունքից։

— Ե-եմյուե, — ասաց Կիրիկովը, — յես համառոտ բացատրում էյի անիշխանության, է-է եմյուե, գաղափարը. Մերկ մարդը մերկ յերկրի վրա, է-է-եմյուե, վոչ մի սեփականություն։

— Պի՜ղծ, — ուրախ գոռացի յես, անսպասելի նույնիսկ ինձ համար։

— Պի՜ղծ, — ուրախ գոռացի յես։ Այդ վարկյանին յես հանկարծ հիշեցի ճաղատ պարկավաճառին, վորին յես պատահել էյի ամառը։ Յես հիշեցի նրա «Պիղծ» մականունը և նրա խոսակցությունը մասնավոր սեփականության մասին։ Յեվ այսպիսով «համր է»-ն դարձավ «հայտնի յե»։ Պարզվեց նրա անձնավորությունը։ Կիրիկովին հեռացրին։ Մարդանմանները վողջունում էյին նրա վռնդվելը։ Բայց տրոգլոդիտները Բինդյուգի գլխավորությամբ չընկճվեցին։ Նրանք սկսեցին տարրական դպրոցի աշակերտներին պատժելու պատրաստություն տեսնել։ Տրոգլոդիտները հաջորդ օրվա համար գաղտնի կերպով «տիեզերական խայ» նշանակեցին։

— Վաղն առավոտյան մեզ մոտ «Բարդուղիմեոսյան գիշեր» է լինելու, — գիշերը շշնջյունով հայտնեցի Ոսկային։

Ոսկան, վոր արթուն ժամանակն էլ էր բառերն աղավաղում, քնաթաթախ հարցրեց.

— Պետք է հոտենտոտներին կոտորե՞նք. հա՞։
— Նախ հոտենտոտներին չէ, այլ հուգենոտներին, — պատասխանում եմ յես, — և վոչ էլ հուգենոտներին, այլ տարրական դպրոցի աշակերտներին, այն էլ վոչ թե սպանել մինչև մահ, այլ ծեծել...

## ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԽԱՅ

Տիեզերական խայը հին գյուտ էր։

Սա գիմնազիական խռովությունների ամենամեծ ու ամենահրեշավոր ձևն էր։ Տիեզերական խայ առաջ հայտարարվում էր միայն բացառիկ դեպքերում, յերբ վարչության դեմ կռվելու բոլոր այլ մեթոդներն ապարդյուն եյին անցնում։ Իմ օրոք գիմնազիայում դեռ վոչ մի անգամ տիեզերական խայ չէր տեղի ունեցել։ Միայն գիմնազիական բերանացի առասպելների մեջ հիշվում էր վերջին տիեզերական խայի մասին, վոր տեղի յեր ունեցել 1912 թվին։ Այն ժամանակ դրա առիթը յեղել էր յերեք հոգու հեռացնելը, վորոնք գլուխ եյին կանգնել դռնապանին պատժելու գործում։ Դռնապանը մատնում է աշակերտներին. նրան «դնդակահար են անում» հոտած ձվերով։

Այսպիսով տրոգլոդիտները վորոշեցին ընդհանուր մեծ տիեզերական խայ հայտարարել։ Հրամանատարը Բինդյուգն էր։ Նա դասարան մտավ մի քիչ մտահոգված, բայց հանգիստ։ Այդ օրը դպրոցում չարագուշակ անդորրություն էր տիրում։ Վոչ վոք շնապար չէր դրդռացնում դաշնամուրի վրա, վոչ վոք չէր ըմբշամարտում ու աչքաղաղով զբաղվում։ Մշտապես ալեկոծվող միջանցքը զանգից հետո միանգամից ամայացավ։ Նրա անսովոր ամայի յերկայնքով անցնում եյին մանկավարժները վարանմունքի մեջ։ Նրանք սովորել եյին զոռով անցնել մեջներովը և զգուշանալ



վտանգից։ Նրանք դասարանում այնպիսի լռության հանդիպեցին, վորպիսին լինում էր պատերազմից առաջ։

Մեր առաջին դասը ռուսաց լեզու յեր։ Գանգրահեր, շեկ մորուքով Մելկովսկին զգուշությամբ ներս նայեց դասարան։ Հենց վոր նա յերևաց դռներում, բոլոր տրոգլոդիտները, հին կարգով, վեր թռան տեղերից, ինչպես ծխախոտի տուփից զսպանակով դուրս թռչող քաջքեր և արձանացան նստարանների առաջ։ Վեր չկացան միայն մարդանմանները և Սոյոպկան։ Ընդհանուր հոսանքն ինձ էլ տեղիցս վեր բարձրացրեց, բայց յես իսկույն սթափվեցի և նըստեցի, վախենում եյի Սոյոպկայի յերեսին նայեմ։ Հետո տղաներից ու աղջիկներից մի քանիսն էլ նըստեցին տատանվելով։ Մնացածները վայելուչ կերպով ձգված, կանգնած եյին։

— Ի՞նչ բանի յեք։ Նստեցե՛ք, նստեցե՛ք, — ձեռքով նշան էր անում ուսուցիչը, վոր արդեն հետ էր սովորել այս տեսակ հանդեսներից։

Դասարանը դանդաղ նստեց։ Ուսուցիչը վոտքով խփեց ամբիոնին, փորձեց ամրությունը, — չէ վոչինչ, չէր պայթում, և անվստահ վեր բարձրացավ։

— Հերթապա՛հ, աղոթք ասա, — կարգադրեց Բինդյուգը։

— Գժվե՞լ ես, — հարցրեց Սոյոպկան։

Դասարանը լուռ էր և ճնշված։

— Ամենաբարի աստված, ուղարկիր մեզ քո սուրբ հոգու շնորհքը... շտապ կրկնում էր հերթապահ Վոլոտկա Լոբանդան։ Վոմանք էլ ըստ սովորության յերեսները խաչակնքում եյին։

— Գուցե յես լավ կանեմ, վոր դուրս գնամ, — կմկմաց ուսուցիչը, վոր բոլորովին գլուխը կորցրել

եր։ Բայց նրա առաջ տնկվեց հերթապահը, դասարանի ցուցակը ձեռքին։ Յեվ շփոթված մանկավարժը լսեց հերթապահի վրա տալը ինչպես գիմնազիայի «յերջանիկ» օրերին։

— Դասարանում բացակայում են, — կարդում եր Լոբանդան, — բացակայում ե Ստեփան Գավրիլին, Կոնստանտին Ռուդենկոն, Նիկոլայ Միկուլինը, — և նա կարդաց տարրական դպրոցի բոլոր աշակերտների ազգանունները։

— Սպասիր։ Եդ ինչ ես ասում, — վեր թռան բացակայողները, — մենք այստեղ ենք, չե՞։

— Շուտով կսկսեք բացակայել, — հանդուգն կերպով ասաց Բինդյուգը։ — Տրոգլոդիտներ, խայը բացված եմ համարում։ — Յեվ յերկու մատը բերանը կոխելով, Բինդյուգն այնպես սուր սուլեց, որ ականջներս ծակեց։ Պատի յետևից խուլույն արձագանք տվեց մեր «Բ» դասարանի սուլոցը։ Հետո միջանցքում լսվեցին ելի ութը հեռացող սուլոցներ ու դպրոցը լցվեց դղրդյունով։ Տրոգլոդիտներն ուսուցիչներին պաշարեցին ուսուցչանոցում։ Տարրական դպրոցի աշակերտներին քարշ եյին տալիս ոտքերից, գլորում դեպի դռները, շպրտում պատուհաններից։ Դասագրքերը թռչում եյին թերթերը խշխշացնելով խոշոր թիթեռների պես։ Աղջիկները կազմակերպում եյին «Մանկական ճիչ լճակի վրա»։ Դասարանում թանաքահեղություն եր կատարվում։ Միջանցքում սրբի պատկերի պես ման եյին ածում գրատախտակը։ «Ամենքին, ամենքին, ամենքին, — գրված եր գրատախտակի վրա։ Կորչեն մարդանմանները — տարրական դպրոցի աշակերտները։ Կեցցե Ս. Ի. Կիրիկովը, պահանջեցեք նրա վերադարձը»։

Հինգ րոպեյից հետո դպրոցում ոչ մի մարդա-



նման չմնաց։ Տրոգլոդիտների պահակները պահպանում եյին մուտքերը։ Նստարանները ծառացան։ Սկսվեց ընդհանուր մեծ տիեզերական խայը։

## ԿՌԻՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե ԲՈԼՈՐ ՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ

Կոմիսարը ձին կապեց մուտքի դռան բռնակից, հետո կոշկի ճտքերը վեր բարձրացրեց և վոտքի խթանները զրնգացնելով մտավ միջանցք։ Միջանցքը դատարկ եր։ Ամենքն ել արտակարգ ժողովի եյին գնացել։ Ժողովը տեղի ուներ ամենամեծ դասարանում, վորը հանդիսասրահ եյին դարձրել։ Բեմի վրա, սեղանի յետևը նստած եր նախագահը — Բինդյուգը։ Նրա յերկու կողմը նստած եյին Ֆորսունովը և բարձր դասարանի աշակերտ Ռոտմեյլերը, վորը մի հարուստ յերշիկ շինողի վորդի յեր։ Ռոտմեյլերը հենց նոր եր վերջացրել խոսքը։ Ֆորսունովը նայում եր սեղանին։

Մուտքը պահպանում եր տրոգլոդիտների պահակը։ Տարրական դպրոցի աշակերտները ծեծված, կեղտոտված և համարյա թե արդեն վոչ մարդանման՝ պաշարել եյին դուռը։ Տրոգլոդիտները ճանապարհ տվին կոմիսարին։ Ստյոպկա Ատլանտիդան ուզում եր նրա լայն թեկունքի յետևից առաջ թռչել, բայց տրոգլոդիտներն Ստյոպկին յետ քաշ տվին։

— Խոսք ե տրվում կոմիսար Զուբարկովին, — հայտարարեց Բինդյուգը։

— Վերջակե՜տ. — խմբովին աղաղակեցին դահլիճում ներկա յեղողները։

— Այս ինչ խայ ե, — հարցրեց կոմիսարը։

— Տիեզերական, — միասին պատասխանեցին նրան։

— Ընկերնե՛ր, — ասաց կոմիսարը։

— Մենք քո ընկերները չենք, — հեգնանքով պատասխանեցին ամենքը։

— Ուրեմն, պարոններ, — բարկացավ կոմիսարը։
— Հիմա պարոններ չկան, — գոռացին ամենքը։
— Ուրեմն ինչ եք բարեհաճում կարգադրել, ինչպես մեծարեմ ձեզ, — անձնատուր յեղավ կոմիսարը։
— Տրեգ-լո-դիտ-ներ, — խմբով պատասխանեց դահլիճը։
— Կոկորդիլոսներ, — ասաց կոմիսարը, — կարծում եմ, ժամանակն է վոր վերջ տաք։ Վերջակետ։
— Ե՜հ, առաջ ել այդպես չե՞յին վարվում, — հարցրեց դահլիճը հանդուգն ու խայթող կերպով։
— Ինչպե՞ս չե, առաջ այդպես կանեյին, — գոռաց հանկարծ Զուբարկովը։ — Առա՜ջ։ Հիմար բան եք ասում։ Առաջ դուք վերատեսչի առաջը ծպտուն հանել չեյիք համարձակվի։ Ինչպես չե՜, ձեզ հետ ծանր ու բարակ ժամանակ կկորցներ։ Իսկույն կոնդուկտ կկոխեր և ձեններդ կկտրացներ։
— Յեվ վերջակետ, — աղաղակեց դահլիճը։ — Բավական է։ Տվեք մեզ Սեմեոն Իգնատյեվիչին։
Տրոգլոդիտներն ալեկոծվում եյին, աղաղակում, բայց բեռնակիր Զուբարկովի կոկորդը խլացնելը հեշտ չեր։
— Յես զարմանում եմ ձեզ վրա, և վերջակետ, — ասում է կոմիսարը։
— Միթե չեք կարողանում հասկանալ։ Չե՞ վոր ձեզ նոր ուսում են տալիս։ Ի՞նչ հետաքրքիր բան կարող են ձեզ սովորեցնել թագավորների մասին։ Առաջ դրանց մասին միայն սուտեր եյին հերյուրում։ Յեվ վերջակետ։ Իսկ միասնական աշխատանքային դպրոցում դուք ամբողջ ժողովրդի մասին կսովորեք, թե վորտեղից է իր ծագումն առել, ինչպես է գոյացել և նրա ամբողջ զարգացումը։ Վերջակետ։ Այնպիսի կյանք կսկսվի, կափսոսաս։ Իսկ Կիրիկովը, այդ պարկավաճառը, վաշխառուն միայն վայրահաչություններ եր դուրս տալիս շուն շան վորդին, ներեցեք անքաղաքավարության համար։ Ի՞նչ խավար, քանի վոր ուսումը լույս է։ Յեվ վերջակետ։ Յերևակայում եք արդյոք, թե վորքան ժողովուրդ այժմ կուզի սովորել։ Այ որինակ, — Զուբարկովը ամաչեց, — յես ել, հենց վոր մի քիչ կարգի ընկանք, կերթամ Մոսկվա սովորելու։ Գրող դառնալու... Յեվ վերջակետ։ Ընկերներ... այսինքն կոկորդիլոսներ, ինչու՞ յեք արգելում ուրիշ տղաներին նախապատմական խավարից դեպի լույս դուրս գալու։ Ինչո՞վ են նրանք ձեզանից պակաս։ Ի՞նչ է, նրանց հայրերի փորն ավելի փոքր է։



## ԿԱԼԻԳՈՒԼԱՅԻ ՁԻՆ

Այդ ժամանակ միջանցքում լսվեց Մոկեյիչի ականջ խլացնող դուփյունը, աղաղակն ու ճիչը... «կանգնիր, ու՞ր ես գնում»։
Տրոգլոդիտների պահակը դռան մոտ հանկարծ մի կողմը քաշվեց, և Ստյոպկա Ատլանտիդան կոմիսարի ձին հեծած ներս արշավեց դասարան. Նրա յետևից, մնացած պահակներին այս ու այն կողմը շպրտելով, դահլիճ ներս խուժեցին տարրական դպրոցի աշակերտները, բայց տրոգլոդիտների բարկությունն արդեն նստել եր։ Ծիծաղելուց քիչ եր մնում նստարաններից վայր թափվեյին։
— Տպրուու, — ասաց խարդախ Ստյոպան։ — Ընկեր կոմիսար, ձին բացվել եր, հազիվ հազ բռնեցի։
Ձին թեթև վրնջաց։
— Ներողություն եմ խնդրում, — ասաց կոմիսարը, յերևի դառնալով ձիուն, — իսկույն կվերջացնեմ և վերջակետ։ Յես կարծում եմ, տղերք, ինչքան աղմուկ արիք, բավական է։ Ձևականորեն քվեարկենք։

Բինդյուգն անհանգիստ փսփսում էր Ռոտմելլերի հետ։ Ստյոպկան վայր չիջնելով կոմխարի ձիուց, քննող հայացքով նայում էր տրոգլոդիտների դեմքերին։ Ձին քնքշությամբ վոտքերն այնպես էր շարժում, վոր կարծես թե վախենում էր վորևէ մեկի վոտքի կոշտը կոխել։ Սեղանի յետևը բեմ բարձրացավ Բինդյուգը։ Առաջվա հավակնությունը նրա մեջ այլ ևս չկար։ Ստյոպկան ելի որվա հերոսը դարձավ։

— Ձեզ հիմարացրին ինչպես յերեխաներ, — ասաց Բինդյուգը։

Դահլիճն անտարբեր վերաբերմունք ցույց տվեց այդ խոսքերին։ Բեմի վրա սեղանին մոտեցավ մաթեմատիկոս Ադոլֆ Կառլիչը լուրջ դեմքով, ինչպես միշտ։

— Բարեկամներս — ասաց Կառլիչը և հուզմունքից ակնոցները կորցրեց։ Մի քանի վարկյան նա կույր-կույր ձեռների թաթերով բարկացած տփտփում էր սեղանի յերեսը, կարծես մորեխ լիներ վորսալիս։ Վերջապես Կառլիչն ակնոցը գտավ, և աշխարհը նորից պարզվեց նրա համար։ Նա շարունակեց. — Բարեկամներս, յես անկուսակցական մարդ եմ, քաղաքականությամբ չեմ պարապում և ձեր միտինգներին էլ սովոր չեմ... Յեթե այժմ յես խոսք վերցրի խոսելու, այդ միայն զուտ գիտական տեսակետից։ Բանն այն է, վոր Սեմեոն Իգնատյևիչը, թող վիրավորանք չհամարվի նրա համար, ձեզ անթույլատրելի անհեթեթություններ է հրամցնում, անմիտ բարբաջանք։ Դա պարզապես ցնդաբանություն է և տգիտություն, վոր զուտ գիտական տեսակետից վոչ մի քննադատության չի դիմանա։ Հեղափոխությունն ընդհանրապես դեպի առաջադիմություն է տանում, նա գիտության հաղորդակից է անում մարդկանց նոր, թարմ, խոշոր խավեր... Իսկ դուք, բարեկամներս, ուզում եք նրանց



խանգարել։ Դուք իրավունք չունեք։ Ինչպե՞ս կարելի է։ Դա գիտական տեսակետից հանցանք է։ Տարրական դպրոցի աշակերտներից շատ ընկերներ օժտված են, որինակ հազվագյուտ մաթեմատիկական ընդունակություններով... Որինակ Ռուդենկոն։ Հիանալի կերպով յուրացնում է։ Իսկ դուք, բարեկամներս թունավորված եք հին գիմնազիայի արմատացած վոգով և սովորել եք դասերն անմիտ զբաղմունք համարել։ Ամոթ է։ Վորպես վերջաբան թույլ եմ տալիս ինձ մի պատմական անեկդոտ պատմել ձեզ։ Մի ժամանակ Հռոմի կայսր Կալիգուլան յուր ձին ներս բերեց սենատի ժողովը և բոլոր սենատորներին հրամայեց վողջունել նրան։ Բարեկամներս, յես վոչ մի պայմանով չէյի վողջունի այդ ամբարտավան ձիուն։ Բայց յեթե այսոր ընկեր Զուբարկովի ձիու ներկայությունը մեր ժողովում նպաստում է դպրոցում կարգ ու համերաշխություն հաստատելուն, այդ դեպքում այսոր, գիտության անունով, յես հաճույքով գլուխս խոնարհեցնում եմ մեր չորքոտանի հյուրի առաջ։

Յեվ Կառլիչը վողջունեց ձիուն։ Ձին ծափահարություններից խլացած, խրտնած յետ գնաց։ Զվեարկությամբ Բինդյուգը և նրա տրոգլոդիտները կատարյալ պարտություն կրեցին։ Բոլորն էլ յերդվեցին, վոր վաղվանից կսկսեն սովորել, ինչպես վոր հարկավոր է։ Հետո Ստյոպկան ձիու վրայից մի կարճ ճառ ասաց, վոր վերաբերում էր վոնդված պատմաբանին։

— Ե-մյուեն, — ասաց Ստյոպկան, — ֆրանսերեն լեզվի ուղղագրության մեջ նույնն է, ինչվոր ռուսերեն լեզվի կոշտ արտասանության նշանը, վորը գրվում է, բայց չի կարդացվում...* Այդպես կարելի

* Հին ուղղագրությամբ բառերի վերջը գրվում էր կոշտ արտասանության նշան, բայց այդ նշանը չէր կարդացվում։ Ծանոթ. թարգ.

յե պոչ կարել մատակ ձիուն (Սայոպկան այս ասելով թամբի վրա շուռ յեկավ դեպի յետ և, որինակով ասածը ցույց տալու համար կոմիսարի ձիու պոչը վոլորեց)։ Կոշտ արտասանությանն նշանն այժմ վերացնում են։ Յես մի առաջարկություն ունեմ. մեր գործն էլ կթեթևանա, նրանց համար էլ օգտակար կլինի։ Մեր կողմից նամակ գրենք Ֆրանսիա՝ բանվորներին կամ նրանց տղերանցը, վոր նրանք էլ իրենց ե-մյուեն-դեն գցեն։

Ե-մյուե-ի վերացման խնդիրը պարունակող ֆրանսերեն նամակը տղաները վոգևորությամբ ընդունեցին։ Յերբ արդեն մենք ուզում եյինք ցրվել, դահլիճի դռնով մի խումբ զինվորականներ շտապ ներս մտան։

— Ըհ՛ը։ Տեսնո՞ւմ եք, մեզ ուզում եյին զինվորական ուժով ճնշել, — գոռաց Բինդյուգը։ Ամբողջ դահլիճը քարացավ։

— Հանգիստ յեղեք, հանգիստ, — ասաց ներս մտնողներից մեկը։ Հասկացեք բանի եյությունը։ Ընկերներ, վորովհետև կռվի ճակատը մոտ է, ստիպված ենք պատերազմական դրություն հայտարարել քաղաքում։ Դպրոցի շենքն անհրաժեշտ է չորրորդ բանակի շտաբի համար։ Ընկեր Զուբարկով, կարգադրեցեք, վոր վաղը դատարկեն։

Կատարելապես հանդարտություն տիրեց։ Յեվ հանկարծ կոմիսարի ձին բարձրաձայն օդ ներշնչեց և քընքշաբար վրնջաց։ Մուտքի մոտ նրան պատասխանեցին չորրորդ բանակի ձիերը։

## ԴՊՐՈՑԸ ԹԱՓԱՌՈՒՄ Ե

Քաղաքը դարձել եր մի մեծ ճամբար։ Թաղամասերում անվերջ խռնվում եյին պատերազմական սայլաշարքեր. այդ շարքերը խճճվում եյին խաչաձև իրար կտրող փողոցների անկյուններում, և մազակալած



զինվորական վերարկուներով մարդիկ։ Իրարից ջոկում եյին այդ խճճված սայլաշաքերը։ Նրանք տիրել եյին քաղաքը։ Թղթատարները ձիերով սլանում եյին ուղղակի մայթերի վրայով և ծրարներ ստանում կամ հանձնում հաստատությունների պատուհաններից։

Հեկեկում եյին սայլաշարքերի ուղտերը, գլուխները յետ ծալում և մածուծիկ փալինք թափում Բրեշկայում։ Ուղտապանները խուպոտ ձայնով գոռգոռում եյին. «Տրատր... տրատր... չոգ... չոգ...»։

Վոլգայի վրա վայրկենապես, պայթյունների ջրային կիպարիսներ եյին բարձրանում և հետո թուլացած նստում։ Դրանից անմիջապես հետո քաղաքի վրա մի դանդաղ հարված եր փլվում։ Վոլգայի վրա ձեռնառումբեր շպրտելու վարժություններ եյին կատարում։

Փղանման գրահապատը թնդանոթի կնճիթը վեր բարձրացրած, այս ու այն կողմն եր ընկնում հրապարակի վրա։ Կենդանի ուղտերի յետևից վեր-վեր թռչելով վազում եյին յերկաթե ջայլամները՝ պոչատ յերկանիվ սայլերը, բարձր ծխնեզույգներով, այսինքն ճանապարհորդական խոհանոցները։ Յեվ յես ու Ոսկան կարծում եյինք, թե հրապարակի վրա խաղում են մեր սիրած «Ձիարշավ Կամերունում» լոտոն։ Այնտեղ քարտեզների վրա յել շտապում եյին փղերը, ուղտերը և ջայլամները... Իսկ ռազմամթերանոցի առաջ մարդիկ տակառների թմբեր եյին շուռումուռ տալիս, վորոնց հատակին սև գույնով թվեր կային գրված։ Մի գեր մարդ գոռում եր համարը, մի ուրիշը նայում եր թղթերին և մեծ դրամանիշի նման կնիք դնում։ Յերբեմն քրտինքում կորած ձիավոր եր մոտ արշավում։

— Բնակարա՞ն պատրաստել — հարցնում եյին նրան, ինչպես վոր հարցնում են լոտո խաղալիս։

— Բոլորը հիշեցի, — պատասխանում էր բնակատեղի համար յեկողը։ Յեվ տանուլ տվողները նորից մտնում էին ապրանքատար ավտոների տակ։

Ուսումնարանից արդեն կախված էր մի տախտակ՝ տարօրինակ «Տրավտոչոկ»* մակագրությամբ։ Ասում են, թե այդ բառի ռուսերեն թարգմանությունը նշանակում է մոտավորապես «առանձին զորամասի ավտոբաժնի փոխադրական միջոցներ»։ Բայց և այնպես «Տրավտոչոկ» հանելուկային բառի իսկական նշանակությունը վոչ վոք չգիտեր։ Տրավտոչոկն ընդամենը յերկու-յերեք ավտոմոբիլ ուներ։ Բայց դրա փոխարեն նախկին դպրոցի բակը զարմացնում էր ուղտերի առատությամբ։ Յեվ Պոկրովսկի բնակիչները շատ շուտով Տրավտոչոկի անունը փոխեցին Տրատրչոկի։ Յեթե ուղտերեն լեզվից թարգմանենք ձիերեն լեզվի այդ բառը կարտասանվի ի «տպրու» և «նո»։

Անտուն դպրոցը թափառում էր։ Առաջ մեզ տեղափոխեցին թեմական դպրոցի շենքը։ Մի որից հետո տեղավորեցին բարձր աշտարակով մի փոքրիկ տան մեջ։ Իհարկե աշտարակը մեզ համար մատչելի և գայթակղեցուցիչ մի տեղ էր։ Դա հենց ինքն էր խընդրում, վոր մենք իրեն օգտագործենք մեր անմեղ չարությունների համար. օրինակ այնտեղից կթքեյինք մեկի գլխին կամ առաջ կբերեյինք հրդեհի վտանգի իրարանցում։ Բայց մենք այդպիսի կատակներով զբաղվելու տրամադրություն չունեյինք։ Ուրիշ, մի անսովոր իրարանցում էր թափանցել մեր նեղվածք դասարանները և ալեկոծում էր յետին նստարանները։ Տինգերական խայից մի որ հետո Վալոդկա Լոբանդան փողոցում կանգնեցրեց Կառլիչին։

— Ադոլֆ Կառլիչ, — ասաց Լոբանդան, — գլուխը

* «Транспорты авточасти особой колонны»



քաշ գցած և ձիու նման վոտքով հողը քանդելով, — Ադոլֆ Կառլիչ, — այ, դուք ասացեք, թե Կոսկան, Ռուդինկոն... Ընդունակ է... Բայց չէ՞ վոր յես էլ առաջ խնդիրները հաջող եյի վճռում։ Հիշո՞ւմ եք, Ադոլֆ Կառլիչ... Դուք ասում եյիք, վոր յես էլ ընդունակ եմ...

— Հիշում եմ, Լոբանդա, — ասաց Կառլիչը։ — Շատ լավ եմ հիշում։ Անպայման դուք մաթեմատիկոսի ջիղ ունեք... Բայց դուք անհոգ եք...

— Ի՞նչպես թե անհոգ եմ, — վիրավորվեց Լոբանդան։ Վորովհետև այժմ ազատություն է, ուզեցինք խենթություն անել, ուրիշ վոչինչ... Բայց պետք է ասել, վոր ձեր կողմից անարդարություն է այն, վոր միայն տարրական դպրոցի աշակերտներին եք գովում... Այ, այժմ նրանք յերես են առնում... Գոռոզանում են։

— Ըհ՜ը, սրտներիդ դիպել է, — ասաց Կառլիչը։ — Այ, աշխատեցեք նրանց հասնել։ Միայն նախազգուշացնում եմ, վոր կդժվարանաք։ Նրանք արդեն սկսել են քառակուսի հավասարությունները սովորել։

— Կհասնենք, — վճռաբար ասաց Լոբանդան, — Հենց կպած մնամ տեղն ու տեղս, թե չհասնենք։

## ՀԱՆՐԱՀԱՇԻՎԸ ԱՇՏԱՐԱԿԻ ՎՐԱ

Հենց նույն որը դասարանում վորոշեցինք, վոր դպրոցականները յերես են առել և գոռոզացել, վոր այլևս համբերել չի կարելի, անհնարին է և պետք է նրանց հասնել։ Աղջիկները խոստացան յետ չմնալ։ Մենք ձեռք բերեցինք մեր մոռացության տված դասագրքերը, և մեր ծնողներն անչափ ապշեցին, յերբ տեսան վոր մենք նստել ու գրքերով և տետրերով ենք զբաղվում։ Ինչպես պարզվեց, մենք բավական յետ եյինք մնացել։ Հասնելու համար ստիպված եյինք պարապել թ

ուսումնարանում դասերից հետո և թե՛ տունը մինչև ուշ գիշեր։ Քաղցած Կառլիչը, որ իր ուսուցչական աղքատիկ պարենաժնով նիհարել էր, անձնազոհությամբ ավելորդ ժամեր էր պարապում մեզ հետ։ Մենք նրա համար զինվորական պարենապահեստից հաց էինք գողանում և դնում ամբիոնի վրա։ Կառլիչը հպարտությամբ հրաժարվում էր, բայց հետո տարվելով որևէ խնդրով սկսում էր մեքենաբար հացի միջուկը քչփորել և անսպասելի կերպով ուտում բոլորը…

Բինդյուգը մեզ ծաղրում էր։

— Լա՛վ ազատություն է, ի՜նչ խոսք,— ասում էր նա։— Սարի նման տղաներ էիք, իսկ հիմա անգիր անող նահատակներ եք։ Դուք դեռ թվանշաններ էլ կխնդրեք, որ դնեն… Թո՜ւհ։

Առանձնապես նա Ստյոպկայի հոգին էր հանում։ Բայց Ստյոպկան, ինչպես ասում էր, ամենևին ուշադրություն չէր դարձնում և բանի տեղ էլ չէր դնում, պարապում էր անխոնջ յեռանդով, որովհետև նա հայտարարել էր, թե հեղափոխականներն ուսման ասպարիզում էլ պետք է բարրիկադների վրա լինեն կանգնած։

Յերկու շաբաթվա ընթացքում մենք այնքան առաջ գնացինք հանրահաշվից, որ Կառլիչին խնդրեցինք մեզանից որևէ մեկին կանչել գրատախտակի մոտ։ Յեվ Կառլիչը Լոբանդային դուրս կանչեց։ Դպրոցականները զարմացել էին։ Յերբեք դասարանն այդպիսի լարված ուշադրությամբ չէր հետևել։ Լոբանդան վճռում էր յերկու խողովակ ունեցող ավազանի վերաբերյալ մի խնդիր։ Ամեն ինչ հաջող էր անցնում։ Մի խողովակով ջուրը ներս էր թափվում, մյուսով դուրս թափվում։ Պարզվեց, որ յեթե յերկու խողովակն էլ միաժամանակ բացվեն, ավազանը վեց ժամում կլցվի։ Բայց հանկարծ խողովակները խցվեցին. ավազանը բոլորի աչքի առաջ սկսեց ցամաքել։

Լոբանդան մնացել էր ծանծաղուտում։ Նա կըրծում էր յեղունգները։

— Լավ մտածեցեք,— ասաց Կառլիչը։

— Յես մտածում եմ,— ճնշված պատասխանեց Լոբանդան,— որ յեթե չորս դույլից հանենք յերկու խողովակ…

— Նախ՝ լսելի ձայնով ասացեք ձեր մտածածը,— ասաց Կառլիչը։

Մենք սխալը տեսնում էինք։ Հենց սկզբում Լոբանդան մի գործողության մեջ պլյուսի տեղ մինուս դրեց։ Հիմա այդ մինուսը գլուխ բարձրացրեց և խողովակը խցեց։ Մենք տեսնում էինք սխալը և մեռնում էինք, որ մի կերպ հուշենք Լոբանդային։ Բայց անհարմար էինք համարում Լոբանդայի թուլությունը հրապարակ բերել դպրոցականների առաջը։

Բայց և այնպես մենք լսեցինք, որ մեկն սկսեց շշնջյունով հուշել Լոբանդային։ Նայեցինք շուրջներս և տեսանք, որ հուշողը Կոստյա Ռուդենկոն — ժուկն է… Այդ ժամանակ դասարանը, որ հռչակված էր իր հուշելու ճարպիկությամբ և արտագրելու հանդգնությամբ, այն դասարանը, որ մեծագույն հանցանքն էր համարում ապորինի ոգնություն ցույց տալուց հրաժարվելը, այդ դասարանն այժմ կատաղի դոփում էր ոտքերը, որ խլացնի հուշումը և գոռում.

— Լռի՛ր, Ռուդենկո։ Մի՛ հուշիր։ Թող ինքը գտնի իր սխալը։

Լոբանդան ապավինել էր իր ուժերին։ Նա մի քիչ ջանք գործ դրեց, գտավ սխալը և խնդրի խցանը հա-

նեց։ Յեվ վորպեսզի այս բանն իմանա Պոկրովսկը, մենք դպրոցի աշտարակի գլխին դրոշակ կախեցինք։

Դրոշակի վրա գրել եյինք. X = 18 դույլի։

## „Բ“ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ուրախությունն յերկար չտևեց։ Յերկու որից հետո Լոբանդան դասարան վազեց և հայտնեց, թե մեր «Բ» դասարանում, վորի մասին մենք արդեն մոռացել եյինք, վորովհետև այժմ ուրիշ տան մեջ եր տեղավորված, արդեն բարձր աստիճանի մի քանի անհայտներով հավասարումներ են անցնում։ Այս բանն անհավանական եր։

— Սուտ է ասում, — գոռաց դասարանը։

— Բռնիր, — ասաց Ստյոպկան և իր ծալած մատը մեկնեց Լոբանդային։ — Բաց արա և մի կռացնի։

— Նստած տեղս չորանում, թե ճիշտ չեմ ասում, — ասաց Լոբանդան յերեսը խաչակնքելով։

Մենք բոլորս ընկճվել եյինք։ Այդ ժամանակ Ժուկը հայտարարեց, վոր ինքն այդ հավասարումներն անցել է և պատրաստ է գնալ «Բ» դասարանը և լուծել վոր խնդիրն ել ուզում է լինի։ Բայց Ստյոպկան լսել անգամ չեր ուզում այդ մասին։ Նա հայտարարեց, թե այդ հեշտ ծամելու մաստակ չի, յեթե միայն մեկը կարող է վճռել, այդ նշանակում է, վոր ելի առաջվա դրությունն է, վճռում է առաջին աշակերտը, պետք է այնպես անել, վորպեսզի ամբողջ դասարանը կարողանա վճռել։ Այն ժամանակ նորից ամենքը դասագրքերը ձեռք առան։ Յերեկոները հավաքվում եյինք դպրոցում։

Կոստյա Ժուկը մեզ առաջ եր քաշում, առաջ եր քաշ տալիս։ Բինդյուգն այս պարապմունքներին ներկա չեր լինում։ Նա հավատացնում եր, թե «քաղցած փո-



րով դժվար է սովորելը, հիմա սովորելու ժամանակ չե, և նա առանց մեզ ել ամեն մի պատահած խնդիր վճռում եր։

Յերբ բոլոր անհայտներն ել մերկացրել եյինք, մենք մեր զուգընթաց «Բ» դասարանին առաջարկեցինք փորձել մեր ույժերը հանրահաշվի ասպարեզում։ «Բ»-ի տղաներն ընդունեցին մեր հրավերը։ Վորոշեցինք ընդհանուր գրավոր աշխատանք կատարել։ Հանրահաշիվ լավ իմացող տղաներից ղեկավար խմբեր կազմակերպեցինք։ «Ա» դասարանի ղեկավարների մեջ մտան նաև Ստյոպկա Գավրիլան — Ատլանտիդան, Վալոտկա Լոբանդան, Կոստիա Ժուկը, Զոյա Բամբուկյան և յես։ Վերջին որը մեր խմբի մեջ մտավ և Բինդյուգը։ Մենք նրան մեծ դժկամակությամբ ընդունեցինք։ Նա յերդվում եր, թե խոսքի տերը կլինի։

## ՇԱՆ ԲՆՈՒՄ

Մրցման նախընթաց որը «Ա»-ի ղեկավար խումբը հավաքվեց դպրոց՝ վերջին վարժությունները կատարելու։ Յեկավ հոգնած Կալիչը և կես ժամից ավելի մեզ հետ պարապեց տեսությամբ։ Հետո տվեց խորամանկ ձևով կազմած մի քանի խնդիրներ։ Մենք յերկար քրտնեցինք այդ խնդիրները լուծելիս, բայց վերջի վերջո վճռեցինք։ Կալիչը շատ գոհ եր «զուտ գիտական տեսակետից»։ Հետո նա նայեց ժամացույցին և գլուխը բռնեց. տասներկուսին մոտ եր, իսկ քաղաքում պատերազմական դրություն եր հայտարարված և ման գալ թույլատրվում եր մինչև ժամի տասնմեկը։

— Ուրեմն, ընկերներ, — ասաց Կոստյա Ժուկը, — պետք է գիշերը շան բնում անցկացնենք։ Փաստ է։

— Կանցնենք — հանգստացնում եր Լոբանդան։ —

նեց։ Յեվ վորպեսզի այս բանն իմանա Պոկրովսկը, մենք դպրոցի աշտարակի գլխին դրոշակ կախեցինք։

Դրոշակի վրա գրել եյինք. X=18 դույլի։

## „Բ“ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ուրախությունն յերկար չտևեց։ Յերկու օրից հետո Լոբանդան դասարան վազեց և հայտնեց, թե մեր «Բ» դասարանում, վորի մասին մենք արդեն մոռացել եյինք, վորովհետև այժմ ուրիշ տան մեջ եր տեղավորված, արդեն բարձր աստիճանի մի քանի անհայտներով հավասարություններ են անցնում։ Այս բանն անհավանական եր։

— Սուտ ե ասում,— գոռաց դասարանը։

— Բռնիր,— ասաց Ստյոպկան և իր ծալած մատը մեկնեց Լոբանդային։— Բաց արա՛ և մի կռացնի։

— Նստած տեղս չորանում, թե ճիշտ չեմ ասում,— ասաց Լոբանդան յերեսը խաչակնքելով։

Մենք բոլորս ընկճվել եյինք։ Այդ ժամանակ Ժուկը հայտարարեց, վոր ինքն այդ հավասարություններն անցել ե և պատրաստ ե գնալ «Բ» դասարանը և լուծել վոր խնդիրն ել ուզում ե լինի։ Բայց Ստյոպկան լսել անգամ չեր ուզում այդ մասին։ Նա հայտարարեց, թե այդ հեշտ ծամելու մաստակ չի, յեթե միայն մեկը կարող ե վճռել, այդ նշանակում ե, վոր ելի առաջվա դրությունն ե, վճռում ե առաջին աշակերտը, պետք ե այնպես անել, վորպեսզի ամբողջ դասարանը կարողանա վճռել։ Այն ժամանակ նորից ամենքը դասագրքերը ձեռք առան։ Յերեկոները հավաքվում եյինք դպրոցում։

Կոստյա Ժուկը մեզ առաջ եր քաշում, առաջ եր քաշ տալիս։ Բինդյուգն այս պարապմունքներին ներկա չեր լինում։ Նա հավատացնում եր, թե «քաղցած փո-



րով դժվար ե սովորելը, հիմա սովորելու ժամանակ չե, և նա առանց մեզ ել ամեն մի պատահած խնդիր վճռում եր։

Յերբ բոլոր անհայտներն ել մերկացրել եյինք, մենք մեր զուգընթաց «Բ» դասարանին առաջարկեցինք փորձել մեր ույժերը հանրահաշվի ասպարեզում։ «Բ»-ի տղաներն ընդունեցին մեր հրավերը։ Վորոշեցինք ընդհանուր գրավոր աշխատանք կատարել։ Հանրահաշիվ լավ իմացող տղաներից ղեկավար խմբեր կազմակերպեցինք։ «Ա» դասարանի ղեկավարների մեջ մտան նաև Ստյոպկա Գավրիլան—Ալյանտիդան, Վալյուկա Լոբանդան, Կոստյա Ժուկը, Զոյա Բամբուկյան և յես։ Վերջին որը մեր խմբի մեջ մտավ և Բինդյուգը։ Մենք նրան մեծ դժկամակությամբ ընդունեցինք։ Նա յերդվում եր, թե խոսքի տերը կլինի։

## ՇԱՆ ԲՆՈՒՄ

Մրցման նախընթաց որը «Ա»-ի ղեկավար խումբը հավաքվեց դպրոց՝ վերջին վարժությունները կատարելու։ Յեկավ հոգնած Կառլիչը և կես ժամից ավելի մեզ հետ պարապեց տեսությամբ։ Հետո տվեց խորամանկ ձևով կազմած մի քանի խնդիրներ։ Մենք յերկար քրտնեցինք այդ խնդիրները լուծելիս, բայց վերջի վերջո վճռեցինք։ Կառլիչը շատ գոհ եր «զուտ գիտական տեսակետից»։ Հետո նա նայեց ժամացույցին և գլուխը բռնեց. տասերկսին մոտ եր, իսկ քաղաքում պատերազմական դրություն եր հայտարարված և ման գալ թույլատրվում եր մինչև ժամի տասնմեկը։

— Ուրեմն, ընկերներ,— ասաց Կոստյա Ժուկը,— պետք ե գիշերը շան բնում անցկացնենք։ Փաստ ե։

— Կանցնենք — հանգստացնում եր Լոբանդան։—

Յեթե դեմդ կտրեցին, ասա, թե դեղատուն ես գնում, ուրիշ վոչինչ։

Յես ու Ստյոպկան միասին եյինք գնում։ Պրոժեկտորը լուսավորում եր ծանր ու ցածր յերկինքը։ Մի տեղ «Մութ գիշերից յես վախենում եմ...» եյին յերգում։ Անկյունում պահակը մեզ կանգնեցրեց։

— Մենք դեղատուն ենք գնում, — ասաց Ստյոպկան։ Ա՛յ, սա բժշկի վորդին ե։ Թույլ տվեք մեզ անցնել։

— Հա՛, դեղատուն, — ծիծաղեց կարմիր բանակայինը, — արդյոք լուծողականն եք ուզում։

— Այո՛, հենց ճիշտ լուծողականի համար ենք գնում, — պատասխանեց Ստյոպկան։ — Գիտե՛ք, ինչ կա…

— Իսկույն քեզ համար կգրեն, — ասաց կարմիր բանակայինը։ — Լավինին, տար սրանց, առաջնորդիր։

Մեզ շտաբ տարան։ Այնտեղ մենք պատահեցինք լուծողականի ուրիշ գիշերային սիրահարների։

Շուտով բերեցին և Կառլիչին։ Նա բարկանում եր ամեն տեսակետից։

— Բարի յերեկո, Ադոլֆ — վողջունեց նրան Ստյոպկան, վոր չեր ընկճվել։

— Բարի գիշեր, — բարկացած պատասխանեց Կառլիչը — Շնորհակալություն կոմպանիայի համար։

Հետո ներս բերեցին մի ինչ վոր մռայլ պարկավաճառի։

— Ո՞վ ե այստեղ վերջին յեկողը, — գործնական տոնով հարցրեց պարկավաճառը։

— Յես, — ասաց Կառլիչը, — ի՞նչ ես ուզում։

— Յես ձեզանից հետո յեմ, հիշեցե՛ք, — խստությամբ ասաց պարկավաճառը, պառկեց հատակին և իսկույն խռմփացրեց։

Ծխախոտի ծուխը տատանվում եր և լապտերի տակ ծալքեր կազմում։ Պահակ զինվորն ուշադրու-



թամբ նայում եր կոշկատակերն կարերին և թեթև կերպով սեղմում հրացանի կոթով։ Անհեթեթ մտքերով լի անքուն գիշեր եր գրավոր աշխատանքի նախորդ գիշերը։

Յերկու ժամից հետո Զուբարկովը հեռախոսով մեզ ազատեց։ Կառլիչն արդեն դռների մոտ եր, ինչ վոր բան հիշեց և յետ դարձավ։ Մեծ դժվարությամբ նա զարթեցրեց պարկավաճառին։

— Ներեցե՛ք, — ասաց Կառլիչը, — յես գնում եմ… Հիմա դուք պետք ե մի ուրիշից հետո լինեք։

Բրեշկայում պատահեցինք պահակների, վորոնք «Բ» դասարանի ղեկավար խմբին շան բունն եյին տանում։ Նրանք ել եյին գրավոր աշխատանքի պատրաստվում։

— Հը, — հարցրեց Ստյոպկան, — լուծողականի՞ եյիք գնում,

— Չե՛, — պատասխանեցին նրանք, — յոդի եյինք գնում։

## ՀԻՆ ՌԵԺԻՄՈՎ

— Մասնակցողները նստեն տեղները, — հանդիսավոր կերպով ասում ե Ֆորսունովը, վոր գլխավոր դատավորն ե։

Քնատ հանրահաշվագետները նստում են տեղները։ Մեզանից յուրաքանչյուրին նստեցնում են մեր հակառակորդներից մեկի կողքին, վորպեսզի դաշնակիցները չկարողանան իրար ոգնել։

Մեր Կառլիչը և «Բ» դասարանի մաթեմատիկոսը հուզվում են. Նրանք նման են այն մարզող ղեկավարներին, վորոնք առաջին անգամ են հրապարակ բերում իրենց բոքսյորներին։ Կառլիչը մոտենում ե մեզանից ամեն մեկին և շշնջյունով ասում.

— Գլխավորն այն ե, վոր մտածեք… Մի՛ շտա-

պեք... Նշանները դնելիս մի՛ շփոթեք։ Յեթե տակառների վերաբերյալ խնդիր տան, անպայման նրանք կխայտառակվեն։ Դա նրանց թույլ կողմն է, յես գիտեմ... Բայց գլխավորն այն է, վոր մտածեք։

Ֆորսունովն ուսուցիչներին առաջարկում է նստել։ Կառլիչը և «Բ» դասարանի ուսուցիչը նստում են մեծ սեղանի յետևը։ Այնտեղ նստած եր արդեն և Մոկեյիչը, մի աթոռ էլ ազատ եր, վոր պահել եյին կոմիսարի համար։ Մեր հանրահաշվագետ չեմպիոն Զոյա Բամբուկովան սովորականից ավելի յեր լուրջ յերևում։ Չմասնակցող աղջիկները հոգատար դեմքերով նայում եյին նստարաններին։ Նրանք թանաք եյին ավելացնում թանաքամաններում, գրիչները փորձում եյին, մատիտների ծայրերը սրում և մեզ հաջողություն ցանկանում։ Հետո մտնում են միջանցք, վորտեղ դռների առաջ կանգնած եյին հանդիսատեսները՝ «հանգիստ մնալու» խոստումով։

Մոկեյիչը հանում է կոնդուկտորական մեծ ժամացույցը։ Ֆորսունովը դնում է առաջը։ Դրանով պետք է հաշվեն, թե ամեն մի աշակերտ վորքան ժամանակ է գործ դնում խնդիրը լուծելու համար։ Յեթե յերկու խումբն էլ խնդիրը վճռեց, այն խումբը կհամարվի հաղթող, վորի բոլոր անդամների գործ դրած ժամանակի գումարը քիչ կլինի։ Այդ խումբը, վորպես մրցանակ, շաքարի կրկնակի բաժին կստանա։ Բացի դրանից, խնդիրն ամենից առաջ վճռող աշակերտը կպարգևատրվի ամենալավ մաթեմատիկոսի կոչումով։

— Տղե՛րք, — ասում է Ֆորսունովը։ — Յես հավատում եմ ձեր ազնվությանը։ Դիրեկտորի որով յես ամենաառաջին արտագրողն եյի, ուստի և նախազգուշացնում եմ. սատանան էլ չի կարող իմ ներկայությամբ արտագրել։ Պա՛րզ է։



— Բա՛ն ասաց, — վիրավորվում է Ստոյպկան։ — Մենք մերո՞նց պետք է խաբենք, ի՞նչ է։

Մենք ամենքս էլ անկեղծ կերպով վիրավորվեցինք։ Յեվ իրոք, ցարական ռեժիմը չեր, վոր արտագրեյինք։

— Պատրա՛ստ եք, — հարցրեց Ֆորսունովը։ — Ուշադրությո՛ւն... Կալվածատերը ծախեց տասը չետվերտ հաճար և մի քանի...

— Հիմա կալվածատերեր չկան... Նրանց դարուդատարկ են թողել, — ասում է Բինդյուգը։

— ... և մի քանի չետվերտ վարսակ, — շարունակում է Ֆորսունովը։

— Այ վաշխառու, — ելի ընդհատում է Բինդյուգը, վորը շատ է ուզում դասարանի համակրությունը նորից գրավել։

— ... յոթանասուն ինը ռուբլի հիսուն կոպեկով, — կարդում է Ֆորսունովը։

— Եժանացրե՛լ է, — հայտարարեց Բինդյուգը։

Ամենքը ծիծաղում են։ Այդ խնդիրը պատվից ընկավ։ Հետաքրքիր խնդիր չէ։ Մրցող խմբերը խնդրում են ուրիշ խնդիր տալ։

— Ուրի՞շ, — բազմանշանակ տոնով հարցնում է Ֆորսունովը։ — Լա՛վ։ Ինկույն ուրիշ խնդիր կտամ ձեզ։

## ԽՆԴԻՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐՈՎ

— Պատրա՛ստ եք։ Ուշադրություն։ Յերկու քաղաքից դուրս են գալիս յերկու ճանապարհորդ, միևնույն ուղղությամբ, մեկը մյուսի յետևից։ Անցնելով այնքան որ, վորքան վոր յերկսի մի որում անցած վերստերի թվերի գումարն է, նրանք հանդիպում են իրար և իմանում, վոր յերկրորդ ճանապարհորդն անցել է 525 վերստ։ Յերկու քաղաքների միջի տարածու-

թյունը 175 վերստ է։ Որական քանի՞ վերստ է անցնում նրանցից յուրաքանչյուրը։

Ժամանակը նշանակված էր։ Ճանապարհորդները դուրս են յեկել, ամենքը խորասուզվում են խնդրի մեջ։ Լռությունը ծանրացել էր նրանց ծածրակներին և կառչել նստարանների վրա։

Գրավոր աշխատանք էր կատարվում։

Բայց բացակայում էր մեզ ծանոթ այն խեղդող յերկյուղը, վոր շփոթում էր աշակերտների մտքերն ու թվերը հին գիմնազիական քննությունների ժամանակ, յերբ տագնապի մեջ անցնող ժամանակն ուզում եյինք սեղմել ձեռքերով, ատամներով. իսկ աչքերիս առաջն արդեն յերևում էր վերջնական և խայտառակ սյունը, բարտու ցիցը, ուղղակի «ցիցը» — միավորը։

Չէ։ Գրավոր աշխատանք ենք կատարում։ Յեվ սարսափելի չէ։ Կալիչը սեղանի յետևից խրախուսական շարժումներ է անում։ Մենք հիշում ենք, հիշում ենք։ Մենք մտածում ենք։ Ամեն ինչ ընթանում է շատ հասարակ կերպով։ Յերկու ճանապարհորդներ, Ա և Բ։ Ա և Բ-ն նստած եյին խողովակի վրա... (այդ չէ, այդ չէ)։ Ա-ն հասնում է Բ-ին։ Պետք է հասնել «Բ» դասարանին։

Ջուբարկովը խթանները գրնգրնգացնելով մտնում է դասարան։ Կալիչը բարկացած սը՛սս անելով և կատաղած աչքերով ձեռքը մեկնում է նախ դեպի նրա վոտքերը և հետո մեզ։ Կոմիսարը շփոթվում է։ Նա բաց է անում խթանները և զգուշությամբ, վոտքերի մատներով գնում իր տեղը։

— Ո՞վ, ումը, — շշնջյունով հարցնում նա Ցորսունովին։

— Հենց նոր են սկսել, — ավելի ցած ձայնով պատասխանում է Ցորսունովը։



Կոմիսարը հարգանքով նայում է մեզ։ Անցնում է տասնևհինգ րոպե բոլորովին լուռ։ Իմ աշխատանքը լավ է առաջ գնում, վոչ մի փորձանք ճանապարհին։ Բամբուկյան արդեն յերկու թերթ գրել էր։ Ստյոպկայի առաջի թերթը մաքուր էր։ Կոտյա Ժուկը, վոտքի կանգնելով, վերջին անգամ արագ ստուգում է արդեն լուծած պատրաստ խնդիրը։ Նա առաջինն է...

Մեկ էլ հանկարծ սեղանների արանքով արագ առաջ է անցնում Բինդյուգը։ Նա իր հսկա մարմնով առաջ է նետվում դեպի դասարանական սեղանը՝ հաղթական կերպով գլխից վեր բռնած պահելով պատրաստ աշխատանքը։ Ցորսունովը կասկածելով առնում է թերթը։ Լուծումը ճիշտ էր։

— Վերջակե՞տ, — հարցնում է կոմիսարը։

— Շա, — պատասխանում է Բինդյունգը, — և միջանցքը վոգևորված ծափահարում է։

Բինդյուգն էլի հաղթող հանդիսացավ։

Զանգից հետո դատավորները գրավոր աշխատանքներն ստուգում են և հայտնում մրցման հետևանքը։ «Ա» խմբից խնդիրն ուղիղ են վճռել ութ հոգի, իսկ «Բ» խմբից՝ միայն յոթ հոգի։ Մենք հաղթել եյինք. վոչ միայն հասել եյինք, այլ և անցել եյինք մյուս դասարանից։ Իսկ մեր Բինդյուգը հանրահաշվի չեմպիոնն էր։ Թեպետ նա շատ ծանր էր, բայց վեր-վեր եյին թռցնում։ Բինդյուգը հասնում էր առաստաղին։ Մի ինչ վոր բան է ընկնում նրա գրպանից։

Բամբուկյան կռանում, վեր է առնում և գոռում.

— Իսկ սա՞ ինչ է։

— Հիմա՜ր, — ասում է Բինդյուգը և ուզում է խլել նրա ձեռքից։ — Հիմա՜ր, ախր յես մեզ համար եյի աշխատում։ Ե՜հ, չեք ուզում, գլխներդ քարը, դե տանուլ տվեք։

Բամբուկայի ձեռքինը մի փոքրիկ գրքույկ էր։ Նրա վրա գրված է. «Բանալի։ Շապոշնիկովի և Վալցևի խնդրագրքի II մասի բոլոր խնդիրների մանրամասն լուծումը»։

— Մեզ համար, — գոռում է Լոբանդյան և հասցնում Բինդյուգի յերեսին։

Նստարանի վրայից Լոբանդային հարվածով պատասխանում է Բինդյուգը։ Դասարանը յետ է քաշվում։ Զուբարկովը և Մոկեյիչը դժվարությամբ են զսպում Բինդյուգին։

Ցորսունովը հայտարարում է, թե «Ա» դասարանը չի անցել «Բ» դասարանից, բայց արդեն հասել է նրան։ Փառքն ու շաքարը հավասարապես բաժանեցին յերկու դասարանի մեջ։

Հենց նույն օրը դպրոցն ելի հեռացրին այդ շենքից։ Մենք հավաքեցինք խնդիրներն ու գնացինք նոր շենք փնտրելու։ Թափառում էյինք քաղաքում՝ ճանապարհորդներով խնդիրները ձեռներիս։ Հենց մենք ինքներս խնդիրներով ճանապարհորդներ էյինք։

## ԿԱՐՄԻՐ ՊԱՏԺՎԱԾՆԵՐԸ

Յեվ այսպիսով դպրոցը ման էր գալիս քաղաքում։ Մենք տեղափոխվում էյինք տնից տուն։ Յերբեմն մի օրվա ընթացքում գաղթում էյինք մի քանի անգամ։ Գաղթում էյինք մեծ դասամիջոցին։

Դպրոցը թափառում էր։ Պատահում էր, որ առավոտյան գալիս տեսնում էյինք՝ դպրոցն իր երեկվա տեղը չէ. փնտրում էյինք ամբողջ քաղաքում։

Փողոցներով քաշ էյինք տալիս նստարանները և պահարանները, գլոբուսները և գրատախտակները։ Մեզ հանդիպում էյին պատգարակներով և դիակառքերով հիվանդապահներ։ Դիակառքերին լծված էյին միա-



սապատ ուղտեր։ Սա IV բանակի ապրանքներ փոխադրող բաժնի տրատրոչկան էր։

Փողոցներում կանգնած էր կարբոլյան թթվուտի հոտ։ Բծավոր տիֆ կար։

Կոմիսար Զուբարկովը բոլորովին հալից ընկել էր։ Նրա չածխլված այտերն այնքան էյին ներս ընկել, որ թվում էր, թե պետք է ատամների տակն ընկնեն և նա պարտավորված պետք է կծի։ Նա հիվանդանոցները տեղափոխում էր, հաստատությունների բնակիչներին խտացնում էր, դպրոցական կայքը մեզ հետ քաշ էր տալիս։ Նրան տեսնում էյին բոլոր փողոցներում միանգամից՝ Պիսկունովայում, Կոբզարեվոյում, Բրեշկայում...

— Շա՜, — լսվում է Պիսկունովայում, Կոբզարեվոյում, Բրեշկայում։ Պետք է դիմանալ և վերջակետ։ Մի քիչ էլ նեղություն կքաշենք։ Իսկ այնտեղ տղերքը «սարեր, ձորեր կդողացնեն»... Ինչպես ասում են՝ մինչև այժմ մեր կաշին էյին քերթում, հիմա հակառակն է, մենք ենք քերթում նրանց կաշին՝ փաստ է։

Մեկ անգամ դասերից հետո նա յեկավ ժամանակավորապես բնակություն հաստատած մեր դպրոցը։ Նրա ձայնը խզվել էր, վրայից կարբոլյան թթվուտի հոտ էր գալիս, գորշ շրթունքները դեղնել էյին ծխախոտի ծխից։

— Ընկերներ, — խզխզացնելով ասում է կոմիսարը։ — Խնդրում եմ ձեզ օգնության հասնեք։ Շատերն այս մասին ինձ ակնարկ արեց, իսկ յես նրանց ասացի, թե իմ տղերանց համար դա դժվար գործ չէ։ Նրանք հանրահաշիվը չամիչի պես են ուտում։ Բոլոր անհայտները հայտնիներ են դարձնում, և վերջակետ... ուրեմն, տղերք... ով է ուզում հեղափոխությանն օգուտ տալ։

— Պատրաստ ենք, — աղաղակում են աշակերտները։

— Նայելով թե ինչ օգուտ,— ասում է զգույշ Բինդյուգը և նայում ժամացույցին։

Այդ ժամանակ կոմիսարը բացատրում է, թե բծավոր տիֆի մասին պետք է շտապով մեծ պլակատներ կպցնել զորանոցում ու Բրեշկայում։ Սարատովից դեռ չեն ուղարկել, իսկ շտաբում յեղածը վերջացել է։ Պետք է մենք ինքներս նկարենք։ Պետք է գրել խոշոր տառերով և մի մեծ վոջիլ նկարել։

Կոմիսարը բերեց փաթաթելու գորշ թղթի մի մեծ փաթեթ և չոր ներկ։

Դասարանում սաստիկ ցուրտ եր։ Դպրոցը չեյին տաքացրել։ Ժամացույցը ժամի հինգն եր ցույց տալիս։ Վաղուց պետք է տուն գնացած լինեյինք։

— Յես ինքս կխզբզեյի, և վերջակետ,— ասում է Զուբարկովը,— բայց ինչ անեմ, տաղանդ չունեմ, իսկ առանց տաղանդի վոջիլ ել չես կարող խազմզել։ Ա՛յ, Զոյան, Ստյոպկան և Լյոլկան կարողանում են։ Յես տեսել եմ, թե ինչպես նրանք իմ ծաղրանկարը նկարել եյին գրատախտակի վրա։ Իսկական իմ պատկերը, կետ առ կետ։

— Յեկեք պատկերը բնականից նկարենք,— ասաց չարաճճի Ստյոպան։

— Ով հիշողությամբ չի հիշում, Բինդյուգը նրան իրեն վոջիլները կտա. նրանք շատ կուշտ են։

— Գավրիա, անհամ հանաքներ ես անում,— զզվելով ընդհատում է նրան Կաուլիչը։— Ավելի լավ է գործի անցեք. այդ ավելի օգտակար է։

— Տղերք,— գոռում է Ստյոպկան,— հայտարարում եմ նկարչության հարվածային դաս հատուկ նպատակով։

— Արդեն ուշ է,— յետեվից լսվում են ձայներ,— և սաստիկ ցուրտ է այստեղ։



— Պետք է տուն գնալ,— անբավական քրթմնջում են անկյունում։

— Սա ինչ է. կարծես հին գիմնազիայում ենք, «առանց ճաշի» պատժված, նստած դասարանում։

— Ուրեմն այդպես։ Յես բարձրանում եմ սեղանի վրա։— Տղերք,— գոռում եմ,— ով ուզում է այսօրվա համար ցուցակագրվել վորպես կարմիր կամավոր, անճաշ մնացող պատժված, նա թող մնա պայքարի համար նկարելու։ Իսկ ով մտածում է, թե ինքը գիմնազիայում է և վարիչները նրան դասարանում են թողել՝ թող հեռանա։ Դեհ։

Շատ ցուրտ է։ Շատ քաղցած եմ։ Ժամը վեցն է։ Բինդյուգը վերցնում է գրքերը և գնում։ Նրա յետեվից դեպի դուռն են գնում նաև ուրիշները, գլուխները կախ գցած, աշխատելով չնայել մեզ։ Բայց շատ չեն դրանք։ Մնացին Լոբանդյան, Կոստիա Ժուկը, Զոյա Բամբուկյան։ Մնացին ամենալավ տղաներն ու աղջիկները։

Մենք վառեցինք ձեթի ճրագները։ Կոմիսարը տաքցրեց յերկաթե կոնդ վառարանը՝ «Բուրժույկան»— և պահածոյի թիթեղյա տուփի մեջ ներկ յեփեց։ Հատակին թուղթ փռեցինք. գեղարվեստն սկսվեց։ Վրձիններ չկան. Նկարում ենք պինդ վոլորած թղթերով. իսկ մանրամասնությունները լրացնում եյինք ուղղակի մատներով։ Մեր տառերը շատ ել ամուր չեյին վոտքի կանգնած։ «Բծավոր» բառի մեջ օրինակ «վ» տառի ծունկը շարունակ թուլացած ծալվում է։ Միջատներն ավելի հաջող են դուրս գալիս։ Բայց Ստյոպկան վեճ է սկսում Կոստիա Ժուկի հետ վոտների ու բեխիկների քանակի մասին։

— Եխ դու, Ժուկ,* — հանդիմանում է Ստյոպկան

* Ժուկ՝ ռուսերեն նշանակում է բզեզ։

— Նայելով թե ինչ ոգուտ, — ասում է զգույշ Բինդյուգը և նայում ժամացույցին։

Այդ ժամանակ կոմիսարը բացատրում է, թե բծավոր տիֆի մասին պետք է շտապով մեծ պլակատներ կպցնել զորանոցում ու Բրեշկայում։ Սարատովից դեռ չեն ուղարկել, իսկ շտաբում յեղածը վերջացել է։ Պետք է մենք ինքներս նկարենք։ Պետք է գրել խոշոր տառերով և մի մեծ վոջիլ նկարել։

Կոմիսարը բերեց փաթաթելու գործ թղթի մի մեծ փաթեթ և չոր ներկ։

Դասարանում սաստիկ ցուրտ էր։ Դպրոցը չեյին տաքացրել։ Ժամացույցը ժամի հինգն էր ցույց տալիս։ Վաղուց պետք է տուն գնացած լինեյինք։

— Յես ինքս կխզբզեյի, և վերջակետ, — ասում է Զուբարկովը, — բայց ինչ անեմ, տաղանդ չունեմ, իսկ առանց տաղանդի վոջիլ էլ չես կարող խազմզել։ Ա՛յ, Զոյան, Ստյոպկան և Լյոլկան կարողանում են։ Յես տեսել եմ, թե ինչպես նրանք իմ ծաղրանկարը նկարել եյին գրատախտակի վրա։ Իսկական իմ պատկերը, կետ առ կետ։

— Յեկեք պատկերը բնականից նկարենք, — ասաց չարաճճի Ստյոպան։

— Ով հիշողությամբ չի հիշում, Բինդյուգը նրան իրեն վոջիլները կտա. Նրանք շատ կուշտ են։

— Գժվրիա, անհամ հանաքներ ես անում, — զզվելով ընդհատում է նրան Կալինը։ — Ավելի լավ է գործի անցեք. այդ ավելի ոգտակար է։

— Տղերք, — գոռում է Ստյոպկան, — հայտարարում եմ նկարչության հարվածային դաս հատուկ նպատակով։

— Արդեն ուշ է, — յետեվից լսվում են ձայներ, — և սաստիկ ցուրտ է այստեղ։



— Պետք է տուն գնալ, — անբավական քրթմնջում են անկյունում։

— Սա ինչ է. կարծես հին գիմնազիայում ենք, «առանց ճաշի» պատժված, նստած դասարանում։

— Ուրեմն այդպես։ Յես բարձրանում եմ սեղանի վրա։ — Տղերք, — գոռում եմ, — ով ուզում է այսորվա համար ցուցակագրվել վորպես կարմիր կամավոր, անճաշ մնացող պատժված, նա թող մնա պայքարի համար նկարելու։ Իսկ ով մտածում է, թե ինքը գիմնազիայում է և վարիչները նրան դասարանում են թողել՝ թող հեռանա։ Դե՛հ։

Շատ ցուրտ է։ Շատ քաղցած եմ։ Ժամը վեցն է։ Բինդյուգը վերցնում է գրքերը և գնում։ Նրա յետեվից դեպի դուռն են գնում նաև ուրիշները, գլուխները կախ գցած, աշխատելով չնայել մեզ։ Բայց շատ չեն դրանք։ Մնացին Լոբանդյան, Կոստիա Ժուկը, Զոյա Բամբուկյան։ Մնացին ամենալավ տղաներն ու աղջիկները։

Մենք վառեցինք ձեթի ճրագները։ Կոմիսարը տաքցրեց յերկաթե կոնդ վառարանը՝ «Բուրժույկան» — և պահածոյի թիթեղյա տուփի մեջ ներկ յեփեց։ Հատակին թուղթ փռեցինք. գեղարվեստն սկսվեց։ Վրձիններ չկան. նկարում ենք պինդ վոլորած թղթերով. իսկ մանրամասնությունները լրացնում եյինք ուղղակի մատներով։ Մեր տառերը շատ էլ ամուր չեյին վոտքի կանգնած։ «Բծավոր» բառի մեջ որինակ «վ» տառի ծունկը շարունակ թուլացած ծալվում է։ Միջատներն ավելի հաջող են դուրս գալիս։ Բայց Ստյոպկան վեճ է սկսում Կոստիա Ժուկի հետ վոտների ու բեխիկների քանակի մասին։

— Եխ դու, Ժուկ,* — հանդիմանում է Ստյոպկան

* Ժուկ՝ ռուսերեն նշանակում է բզեզ։

Կոստյային։ — Ազգանունդ միջատի անուն ե և չգիտես, թե քանի վոտք ունի նա։

Ձայների մեծամասնությամբ մենք վորոշեցինք վոտքեր չխնայել։ Վորքան շատ լինեն վոտքերը, այնքան ավելի սարսափելի և համոզիչ կլինի։ Յեվ ահա մեր պլակատների վրա յերևում են բազմոտանիներ,



քառասնոտանիներ, հարյուրոտանիներ։ Մենք քաշ ենք գալիս սառը հատակին. ամբողջ որվա ընթացքում հոգնած կոմիսարը ոգնում ե մեզ։ Նա խառնում ե ներկերը, թուղթ ե կտրում, լոզունգներ ե հեղինակում։ Անտանելի գլխացավ ունի։ Լսվում ե, թե ինչպես ամեն րոպե խուլ տնքում ե։ Կոմիսարն անձնատուր չի լինում և չի գնում քնելու, վորքան ել նրան ստիպում ենք։ Նա մինչև անգամ քաջալերում ե մեզ



և հիանում ե մեր պլակատներով։ Այդ պլակատները կատակով «վոջլանկարներ» ե անվանում։

Յես և Ստյոպկան անկյունում, նստարանի յետևը վոտանավորով պլակատ եյինք հեղինակում։ Մենք յերկար տանջվում եյինք անճոռնի բառերի վրա։ Բայց հետո անսպասելի կերպով ամեն ինչ կարգի յե ընկնում, և պլակատը պատրաստվում ե։ Մենք շատ եյինք հավանում։ Կոմիսարն ել պետք ե գնահատեր այն։ Մեր ստեղծագործությամբ հպարտացած, ցույց տվեցինք Զուբարկովին։

Ահա թե ինչ եր գրած պլակատի վրա.

Ուր մաքրություն լինի,
Այնտեղ վոջիլ չի լինի։
Վոջիլը տիֆ ե տարածում,
Վերջակետ, շա յեմ ասում։

Բայց կոմիսարը պաղած աչքերը հառել եր պլակատին։ Նա նստել ե նստարանի վրա, տարորինակ կերպով որորվում և ինչ վոր բան եր փնթփնթում քթի տակ։

— Ինչո՞ւ նրանք իրար չեն հանդիպում, — անհանգիստ շշնջում ե կոմիսարը։ — Թող հանդիպեն իրար... Յեվ վեջակետ...

— Ո՞վքեր չեն հանդիպում, ընկեր Զուբարկով, — հարցնում եմ յես։

— Նրանք ելի, Ա և Բ... ճանապարհորդները...

Կառլիչն անհանգիստ մոտենում ե նրան։ Կոմիսարը հևում ե տիֆի կործանարար տաքությամբ։

Այդպես ել կոմիսարն չտեսավ այդ պլակատը, վորովհետև քամին պատից պոկեց այն մի շաբաթ առաջ այն որից, յերբ կոմիսարն ասաց բժշկին.

— Շա, հիվանդացա — և վերջակետ...

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարցեր վիկտորինայից . . . . . . . . . . . . . . 5

Մաս I. «ԱՂԱՎՆԱԳԻՐՔ»

Ընդունելություն։ Կոկեցի՛ն, կնդեցի՛ն։ Կոճակներ։ «Նապալեոնը» և կոնդուիտը։ Գ. Գ.-Գորշ ազամիներ։ Դիրեկտորը։ Ուսուցչանոցը։ Կոնդուիտի հեղինակը։ Տեսուչը։ Գառներն ու այծերը։ «Անլուծված հարցեր»։ Ավանդություն Աֆոնացի Ռեկրուտի մասին։ Առաջին զանգը։ Շալմանը։ Սատանան ու չերեխաները։ Այդում թե...։ «Գա՛լի՛ս ենք ձեր դեմ»։ Մանիֆեստ։ Ընդհատված ձայներ։ Շրջանապետն ու վորդին։ Համարյա կինեմատոգրաֆիկ մի գլուխ է այս, վորտեղ ընթերցողը վերևը վոտքեր տեսնելով, ներքևը գլուխ, կարող է ազադակել հեղինակին՝ «Շրջանա՛կ»։ Փարավոնը կանչում է Հովսեփին։ Բայլերի ձայն միջանցքում։ Հանդույցի լուծումը։ Ուխը։ Ցոսկայի բենեֆիսն է։ Կռունկներն ու կարապները։ Ցերեք «Ե» և Տարականխուս։ Պատմական գվարդիան։ Թափառող նստարանների մեջ։ Կայսերական տոն . . . . . . . . . . . . . . . . . 7

Մաս II. ՏՈՒԳԱՆՎԱԾ ԲԱԶՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի դաշտը։ Պատերազմի տեսարանը պատուհանից։ Փուշտոցի առաջին թնդանոթը։ Դասարանական հրամանատար և վաշտի ղեկավար։ Մեր զինվոր չեղբայրները։ Ամբոխը քիչ է, բայց... Թուշնամին Պոկրովսկում։ Ժամանակի վոգին։ Մեզ վարժեցնում եյին պատերազմի . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 76

Մաս III. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԿՈՆԴՈՒԻՏԸ

Նոր չերկրագնդի, մեծ հեղափոխության ու փոքր ծովի մասին։ Խոզակցություն անմիջական հաղորդակցությամբ։ Ցապ-Ցարապկինը վազում է լուսնի չետևից կամ ինչ ասաց կոնդուիտը սրա մասին։ «Ազատ եք», ասում է զինվորը։ Ազգությունների ինքնորոշումը։ «Տեր պահպա՛ն զկայսր, տուր հաջորդին։ Բարիկադների վրա։ Մեծ դասամիջոցը։ Հեղափոխության լատինական վերջավորությունը։ Նիկոլայ Ռոմանով, դո՛ւրս կոլի դասարանից։ Սոլդատիկան ազիտատոր է։ Վազրիկը։ Դավաչրություն։ Բրեշկայում։ Դիրեկտորի կրկնակոշիկները։ Ցերբեմն ինչ բանի չեն պետք գալիս կոտրած խեցամանները։ Ի մխիթարություն ծնողների։ Անասնաբուժի մոտ ընդունելության ժամանակ։ Դիրեկտորը և Ոսկան։ Հայրերը, հայրիկները, ծնողները։ Դիրեկտորի կոնդուիտը։ Մի դեպք Մաղագասկար կղզու վրա։ Վոգու ներկայությունը։ Ցապ-Ցարապկինը վերջակետ է դնում։ Միավորի ռեֆորմը։ Կանանց կոմիտեյի հովանավորածը։ Պլյուս մինուս Լյուսիան։ Նամակը։ Ուրախ Մոնոխորդովը։ Շուշանները կոնդուիտում . . . 100

Մաս IV. ԿՈՆԴՈՒԻՏԻ ՎԵՐՋԸ

Ուզում եմ ժողովի նստել։ Ցերեք մասից կազմված կոմբինացիա։ Սեր Ռոբերտը, սուրբ Գեվորգը և բարի գործեր։ Կանատ կավալերների ապրանքանիվը։ Գեվորգ Պոբեդանոսցու պարտությունը։ Ատլանտիդան։ Գլխիվայր Նախորյակ։ Պատմության դասը։ Կոնդուիտում չըգրանցված ու։ Կոնդուիտի վերջը . . . . . . . . . 160

ԹԱՓԱՌՈՂ ԴՊՐՈՑ

Մ. Ա. Դ. Քշի՝ գնա։ Վերջակետ և շա։ Շնապար։ Բարձր տարրական դպրոցի անհամազգեստ աշակերտները։ Աչքախաղի մեցություն։ Սովորելու ժամանակ չունեյինք։ Մեծ մարդ, այն էլ ապահով անդ։ Շընչառությունը 34 է։ Նոր ընդունվածի իրավունքներն ու պարտականությունները։ Դիմակով ուսուցիչը։ Աշխարհը չեմպիոնատ է։ Վճռական մինչև հետևանքը։ Ն-մյուսն և տրոգլոդիտները։ Տիեզերական խայտ Կոփվը շարունակվում է բոլոր ճակատներում։ Կալիգուլայի ձին։ Դպրոցը թափառում է։ Հանրահաշիվը աշտարակի վրա։ «Բ» դասարանի առաջադիմությունը։ Տան բնում։ Հին ռեժիմով։ Խնդիր ճանապարհորդներով։ Կարմիր պատժվածները։ . . . . . . . . . . . . . 177

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հարցեր վիկտորինայից . . . . . . . . . . . . . . . 5

Մաս I. «ԱՂԱՎՆԱԳԻՐՔ»

Ընդունելություն։ Կոկեցի՛ն, կնդեցի՛ն։ Կռճակներ։ «Նապալեոնը» և կոնդուիտը։ Պ. Գ.-Գորշ ազամբլիներ։ Դիրեկտորը։ Ուսուցչանոցը։ Կոնդուիտի հեղինակը։ Տեսուչը։ Գառներն ու այծերը։ «Անիծված հարցեր»։ Ավանդություն Աֆոնացի Ռեկրուտի մասին։ Առաջին զանգը։ Շալմանը։ Սատանան ու յերեխաները։ Այգում թե...։ «Գալի՛ս ենք ձեր դեմ»։ Մանիֆեստ։ Ընդհատված ձայներ։ Տրջանապետն ու վորդին։ Համարյա կինեմատոգրաֆիկ մի գլուխ է այս, վորտեղ ընթերցողը վերևը վոտքեր տեսնելով, ներքևը գլուխ, կարող է աղաղակել հեղինակին՝ «Տրջանա՛կ»։ Փարավոնը կանչում է Հովսեփին։ Քայլերի ձայն միջանցքում։ Հանգույցի լուծումը։ Ութը։ Ցոսկայի բենեֆիսն է։ Կռունկներն ու կարապները։ Յերեք «ե» և Տարականխուս։ Գաամական գվարդիան։ Թափառող նստարանների մեջ։ Կայսերական տոն . . . . . . . . . . . . . . . . 7

Մաս II. ՏՈՒԳԱՆՎԱԾ ՔԱՋՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի դաշտը։ Պատերազմի տեսարանը պատուհանից։ Փոլշտոցի առաջին թնդանոթը։ Դասարանական հրամանատար և վաշտի ղեկավար։ Մեր զինվոր յեղբայրները։ Ամբոխը քիչ է, բայց... Թըշնամին Պոկրովսկում։ Ժամանակի վոգին։ Մեզ վարժեցնում եյին պատերազմի . . . . . . . . . . . . . . . . . . . . 76

Մաս III. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԿՈՆԴՈՒԻՏԸ

Կլոր յերկրագնդի, մեծ հեղափոխության ու փոքր ծովի մասին։ Խոսակցություն անմիջական հաղորդակցությամբ։ Ցապ-Ցարապիչը վազում է լուսնի յետևից կամ ինչ ասաց կոնդուիտը սրա մասին։ «Ազատ եք», ասում է զինվորը։ Ազգությունների ինքնորոշումը։ «Տեր պահպա՛ն զկայսր», տուր հաջորդին։ Բարիկադների վրա։ Մեծ դասամիջոցը։ Հեղափոխության լատինական վերջավորությունը։ Նիկոլայ Ռոմանով, դո՛ւրս կորի դասարանից։ Ստոյալկան ագիտատոր է։ Վագրիկը։ Դավաճանություն։ Բրեշկայում։ Դիրեկտորի կրկնակոշիկները։ Յերբեմն ինչ բանի յեն պետք գալիս կոտրած խեցամանները։ Ի մխիթարություն ծնողների։ Անասնաբուժի մոտ ընդունելության ժամանակ։ Դիրեկտորը և Ոսկան։ Հայրերը, հայրիկները, ծնողները։ Դիրեկտորի կոնդուիտը։ Մի դեպք Մադագասկար կղզու վրա։ Վոգու ներկայությունը։ Ցապ-Ցարապիչը վերջակետ է դնում։ Միավորի ռեֆորմը։ Կանանց կոմիտեյի հովանավորածը։ Պլյուս մինուս Լյուսիան։ Նամակը։ Ուրախ Մոնոխորդով։ Շուշանները կոնդուիտում . . . 100

Մաս IV. ԿՈՆԴՈՒԻՏԻ ՎԵՐՋԸ

Ուզում եմ ժողովի նստել։ Յերեք մասից կազմված կոմբինացիա։ Սեր Ռոբերտը, սուրբ Գեվորգը և բարի գործեր։ Կանատ կավալերների ապրանքանավը։ Գեվորգ Պոբեդանոսցու պարտությունը։ Ատլանտիդան։ Գլխիվայր։ Նախօրյակ։ Պատմության դասը։ Կոնդուիտում չըգրանցված ու։ Կոնդուիտի վերջը . . . . . . . . 160

ԹԱՓԱՌՈՂ ԴՊՐՈՑ

Մ. Ա. Դ. Քշի՛ գնա։ Վերջակետ և շա։ Շնապար։ Բարձր տարրական դպրոցի անհամազգեստ աշակերտները։ Աչքախտի մեծություն։ Սովորելու ժամանակ չունեյինք։ Մեծ մարդ, այն էլ ապահով տեղ։ Տըն-չառությունը 34 է։ Նոր ընդունվածի իրավունքներն ու պարտականությունները։ Դիմակով ուսուցիչը։ Աշխարհը չեմպիոնատ է։ Վճռական մինչև հետևանքը։ Ե-մյուսն և տրոգլոդիտները։ Տիեզերական խայտ։ Կռիվը շարունակվում է բոլոր ճակատներում։ Կալիգուլայի ձին։ Դպրոցը թափառում է։ Հանրահաշիվը աշտարակի վրա։ «Բ» դասարանի առաջադիմությունը։ Տան ընում։ Հին ռեժիմով։ Խնդիր ճանապարհորդներով։ Կարմիր պատժվածները . . . . . . . . . . . . . 177


ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0398154

3612

[redacted]

ԳԻՆԸ [illegible] 25 Կ.
ԿԱԶՄԸ 55 ԿՈՊ.

891.715
Կ-26